



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ

армен Зарян




---

СОВРЕМЕННАЯ  
АРХИТЕКТУРА  
ЗАПАДНОЙ ЕВРОПЫ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН  
1979


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ  
ԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## ԱՐՄԵՆ ԶԱՐՅԱՆ



ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ  
ԱՐԴԻ  
ՃԱՐՏԱՐԱԴՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
1979



Աշխատության մեջ քննության են առնվում ինչպես Արևմտյան Եվրոպայի արդի ճարտարապետության և քաղաքաշինության զարգացման ընդհանուր ուղղությունները, այնպես էլ առանձին ճարտարապետների դորձիքը և տեսարանների առաջդրած զաղափարները Պատմաքննական և գեղագիտական վերլուծության են ենթարկված այն տիպական կառուցվածքները և քաղաքաշինական համակարգերը, որնք բնորչում են ժամանակակից Արևմտյան Եվրոպայի ճարտարապետության առանձինահատկությունները ՀՀ դարի համբուղջանուր ճարտարապետության պատմության մեջ:

Պատախանառու խմբագիր  
Զ. Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Կերպ նրանք հրաշարակության են երաշխավորել գրախոսներ ճարտարապետության բեկածու Մ. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ և Լ. Մ. ԲԱԲԱՅԱՆԻ

Զ.  $\frac{4902010000}{703(02)-79}$  75-77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1979

Ամեն մի երևույթ հաստատելու կամ ժխտելու համար ամենից առաջ պետք է ճանաչել տվյալ երևույթն ըստ ամենայնի:

Այս ճշմարտությունը վերաբերում է մարդկային գործունեության բոլոր ասպարեզներին, այդ թվում նաև այնպիսի բարդ և մեծահարուստ ասպարեզի, ինչպիսին է ճարտարապետությունը: Ժամանակակից արևմտյան՝ եվրոպական և ամերիկյան ճարտարապետության մակներսային ճանաշողությունը շատ դեպքերում հանգեցնում է նույնպիսի մակներսային եզրակացությունների՝ և բացասման, և հաստատման առումով: Ուժանք գլխովին բացասում են ժամանակակից արևմտյան ճարտարապետական արվեստը՝ այնտեղ մեզ համար ուսանելի ոչինչ չգտնելով: Ուժանք էլ, ընդհակառակը, տուրք են տալիս այդ ճարտարապետությանն այնպիսի շափերով, որ երբեմն բանը հանգեցնում են ընդօրինակումների՝ առանց հաշվի նստելու մեր հասարակական պայմանների, բնական ու կլիմայական միջավայրի, շինանյութի, մեր ճարտարապետության ազգային յուրահատկությունների հետ:

Ենթելով մեր ճարտարապետության զարգացման շահերից, տրամագծութեն հակադիր այս երկու վերաբերմունքն էլ պետք է համարել անօգտակար, ուրեմն և անընդունելի:

Խնդիր ամենուրեք, այստեղ ևս մեզ համար ուղեցույց պետք է ծառայի դիալեկտիկական մոտեցումը:

Մենք, իրավամբ, մերժում ենք արևմտյան ճարտարապետության այն սկզբունքները, որոնք արտահայտում են բոլորու կան հասարակության բուն կառուցվածքն իր անհաշտելի հակասություններով, ինչպիսին են, ասենք, միակենտրոն քաղաքաշինության կամ քաղաքն ըստ վերհախավի շահերի կառուցապատելու սկզբունքները: Սակայն դա չի նշանակում, թե արևմտյան ճարտարապետության մեջ մեզ համար ոչինչ չկա ուսանելի: Ճարտարապետությունը ոչ միայն արվեստ է, այլև արտադրություն, դիտություն, տեխնիկա: Եվ քիչ չեն պրոբեմներ, որոնք ընդհանուր են և սոցիալիստական, և արևմտյան ճարտարապետության համար: Գիտատեխնիկական հեղափոխությունը, շինարարական տեխնիկայի բուռն աճը շատ դեպքերում երկուսին էլ կանգնեցնում է համանման խնդիրների լուծման անհրաժեշտության առաջ: Այդ նույն է կատարվում, երբ հարցը վերաբերում է կառուցապատման տարածության նվազմանը, ուստի և բազմահարկ կառուցների անհրաժեշտության՝ դրանից բխող տեխնիկական ու գեղագիտական անխուսափելի պահանջներով: Ժամանակակից բնակարանն ավելի ու ավելի է հագենում տեխնիկական հնարանքներով ու հարմարություններով, և դա թելադրում է բնա-

կարասի նախագծման նորանոր ձևեր, որոնք ևս ընդհանուր ընուլիթ են կրում։ Սա վերաբերում է նաև այնպիսի բարդ մի երեսութիւն, ինչպիսին է արդի բաղաբաշխության սկզբունքներն արագորեն զարգացող տրանսպորտի պահանջների հետ համապերելու խնդիրը։

Եվ այսպիս՝ նաև ուրիշ խնդիրներ։

Այդ ընդհանություններով պետք է բացատրել, որ 20-ական թվականներին արևմտյան ճարտարապետության հայտնի գեմքերից շատերը համագործակցել են սովետական ճարտարապետների հետ, ստեղծել են մրցութային կամ պատվիրված նախագծեր, մի որոշ ժամանակ աշխատել մեր երկրում։ Այստեղ բավական է հիշել Կորրյուլիեի, Գրովիուսի, Մենդելսոնի, Տառտի, Մայի, Մայերի անունները։

Զննել, տեսնել այն իրոք առաջադիմականը, որ կա արևմտյան ճարտարապետների ձեռք բերած փորձի մեջ, քննադատարար յուրացնել այն, ինչ կարող է օգտակար և ուսանելի լինել բովանդակ հասարակության շահերին ծառայող մեր սոցիալիստական ճարտարապետության զարգացման համար, — սա սովետական ճարտարապետների կարևոր խնդիրներից մեկն է։

Ահա այս նպատակն է հետապնդում ճարտարապետ Արմեն Զարյանի աշխատությունը, որ հանձնարարվում է մեր ճարտարապետներին և առաջարակ ճարտարապետության հարցերով հետաքրքրվող ընթերցողներին։

Ճարտարապետության արդի շրջանի հարցերը շարադրելիս նկատի ենք առել *XIX* դ. կեսերից ի վեր եվրոպական արվեստում հայանի երևույթները, առանց անտեսելու, սակայն, Վերածննդից հետո առաջացած այն հայեցողությունները, որոնք նպաստել են արվեստի հետագա զարգացմանը, Պատմական իրականության պատկերը շխախտելու համար պահպանել ենք ժամանակագրական պայմանավորվածությունը, փորձել ենք պարզել բազմազն ոճերն ու մշակութային ուղղությունները ղեկավարող սկզբունքները:

Կարեռ է մասնավորից հասնելով՝ ընդհանուրին, հայտնաբերել պատկերման սկզբունքը՝ կապված ավելի ընդհանուր ոճական սկզբունքների հետ: Նշելով արվեստի ասպարեզում եղած հաջողությունները, հիմնականում փորձել ենք վեր հանել արվեստագիտության ավելի ընդհանուր հայացքների հետ կապված խնդիրներ:

Արվեստի փաստերի պատմության ուսումնասիրությունը և գիտական տեսությունը իրար լրացնող, նրա էությունը բացահայտող մոտեցումներ են: Արվեստի գործը խնդիր չի մատուցում դիտողին, այլ տալիս է որոշ խնդիրների պատասխանը, այդ իմաստով՝ արտացոլում է, թե կուզել հատվածարար, աշխարհնկալումը, միշտ մնալով հայեցողությանը հավատարիմ: Սյատեղից առաջանում է առանձին գործի կամ երևույթի և ընդհանուրի կապակցության հարցը:

Արվեստի մասնակի երևույթները (նկարչություն, քանդակագործություն և այլն) կարելի է ընկալել՝ վեր հանելով այդ բնագավառին վերաբերող համկացությունները: Սակայն ոճը, ունենալով համընդհանուր նշանակություն, հասկանալի կդառնա, եթե միևնույն կետին ուղղենք մասնակի բոլոր երեւույթները: Այսպես, ոճի բնութագրումը չի կարող բովանդակալից լինել, եթե մասնակի մի խնդրի քննության ժամանակ պատմական զարգացման ընթացքում նոր ներդրումներով հարստացած նույն այդ երևույթը դիտվի իրեն ոճն իր ամբողջությամբ բնորոշող արտահայտություն: Պարզենք մեր միտքը հետևյալ օրինակով. Յ. Ցողիկեն շարադրում է իր ՇԱՐԴԻ ճարտարապետության պատմությունը<sup>1</sup> համաձայն ելակետային այն դրույթի, ըստ որի ամեն շրջան գտնում է իր ոճին հատուկ շինանյութը, իսկ ոճերը իրարից տարրերվում են շինարարական տեխնիկաների տարրեր եղանակներով: Ցողիկենի կարծիքով՝ արդի ճարտարապետության գլխավոր հատկանիշը արհեստական շինանյութերի օգտագործման և նրանցից հետեւած նոր տեխնիկան կիրառելու մեջ է: Նման հասկացության համաձայն ճարտարապետության ամրող պատմությունը հարկ է բաժանել երկու ընդհանուր շրջանների: բնական շինա-

<sup>1</sup> Jürgen Joedicke, Geschichte der Modernen Architektur, Stuttgart, 1958.

Նյութեր օգտագործող անցյալ շրջան և արհեստական շինանյութերով կառուցվող արդի շրջան, Զնայած այդ տեսության մակերեսային լինելուն, այն պարզում է տարածում գտած որոշ թյուրիմացություններ: Այսպես, Հին ձեփերով արդի շենքեր կառուցող ճարտարապետը հարազատ կմնա իր մտահացմանը, եթե օգտագործի բնական շինանյութեր և կիրառի համապատասխան տեխնիկա: Հինը արհեստական շինանյութերով վերարտադրելը ժամանակավեպ վերաբերմունք է: Այդպես պատահեց Վիուել-Դրյուի հետ, երբ, գոթականով հրապուրված, նա խորհուրդ էր տալիս ճարտարապետներին քարե շիլերը փոխարինել պողպատե խողովակներով: Մեր կարծիքով, ժամանակավեպ են նաև այն ճարտարապետները, որոնք այսօր թեկուզ վերաբերմունք են ցուցաբուում էնդադականի հանդեպ:

Արվեստի գործի իմացական բովանդակությունը շաղկապում է նախագծումը և արվեստի տեսությունը: Պատկերված առարկայի անցյալից եկող (պատմական տվյալ) կամ մեր ունեցած (նոր մեկնարանություն) նեթակայական ճանաշումը ստանում է իր ամրողական իմաստը, երբ ծանոթանում ենք տվյալ առարկայի պատմական նշանակությանը, այլ կերպ ասած, երբ անդրագանում ենք առարկայական իրողությանը տրված իմաստային բովանդակությանը: Այդ հիմունքներով արվեստի պատմությունը վերարժեքավորում է էական այն հասկացությունները, որոնց միջոցով կառուցվում է տվյալ շրջանի տեսական-իմացական հասկացությունների ընդհանուր շենքը: Հետեւաբար, վերագտնել պատկերված առարկայի իմաստային նշանակությունը, նշանակում է պարզել ձեւ-պարունակություն շաղկապումը, այդ երկու հարաբերությունները ղեկավարող հայացքները և վերհանել նրանցից կերտակած համակարգը: Այդ բոլորը կարողանալ արտարերել և համակարգել, ահա թե որն է արվեստաբանության նպատակը:

Ճարտարապետության բնագավառում ձեւ-պարունակություն համադրանքը արտահայտում է սոցիալական կարգի և ստեղծված մշակութի իրականությունը: Ճարտարապետական հորինվածքում տարածությունների, տարբեր տարրերի ներհամակարգային հարաբերություններն ունեն գործանական (ֆունկցիոնալ) նշանակություն, իսկ ձեք՝ իմաստային (սեմանտիկա): Այս երկու գորութեները հատուկ են թե՝ անցյալ և թե՝ նոր ձեռքին: Սրանից հետեւում է, որ կառուցելու ընթացքում ավանդականի կամ ավելի ճիշտ, անցյալի կապը վերահաստատվում է ձեւ-քովանդակություն շաղկապի նոր համադրությունների առաջարկումով և ոչ թե անցյալի, թեկուզ վերամշակված ձեփերի վերարտադրությամբ:

Զեակերտել նորը և հետազոտել անցյալը՝ հակառակ ուղղությամբ տարփող, բայց իրար ամրողականացնող գործուննություններ են, որոնք կարող են ժամանակավեպ արդյունքի հասնել, երբ պատմադիտական՝ հասկացությունը խափանում է ստեղծագործական թափը: Մի հանգամանք, որը բնորոշ էր XIX դարի ճարտարապետությանը և հարատևեց XX դարում:

Արդի ճարտարապետության ուսումնասիրությունը նշպատակ ունի վերհանել ճարտարապետության և հասարակարգի ներկապակցությունը: Զեաբանական առումով ստեղծված արժեքները կապված են տեխնիկայի, սոցիալական, տնտեսական գործունների, իրրե իրենց առաջարկան հիմնապատճենությունների համապատասխանությունների, հետո

Էմպիրիկմն ամենապարզ իմաստով փորձառության վրա հիմնված հանաչողության եղանակ է, ավելի լայն առումով՝ ուսմունքների համագրությունն Մինչդեռ գիտական ճանաչողությունը հիմնված է փորձարկումների և սահմանափական հաշվարկների վրա և ամենալայն առումով վերլուծական է: Այդ միտքը բնորոշ կերպով արտահայտել է XVII դ. մեծագույն մաթեմատիկոսներից մեկը՝ Բռնավենուուրա Կավալիերին (1596—1647), իր «Անբաժանելիների երկրաշափություն»<sup>1</sup> գրքում: Հստ Բ. Կավալիերիի, մեծությունները «անբաժանելի» տարրեր են՝ ենթակա հոսանուած (flussione) մի ընթացքի, որը ղեկավարվում է թվարանական օրենքներով: Այդ օրենքներով կարելի է անբաժանելիներից կազմված երկարությունների, մակերեսների և կոր պատկերների հաշվարկումներ կատարել: Սա նշանակում է, որ էմպիրիկ մեթոդով ստեղծագործող ճարտարապետը տարածության պատկերը վերարտադրում է ձեզնկալման եղանակով, իսկ գիտական վերլուծական մոտեցումով փոքր տարրերի օգտագործմամբ կազմակերպում է ձեզ տարածության մեջ: Պողպատե, չուգունե կամ փայտե կառուցվածքները իրագործվում են՝ իրար ամրացնելով առանձին տարրեր, այսինքն՝ անբաժանելիները համարելու հոսանուածներով: Առաջին հասկացությունը՝ էմպիրիկը, կայական է (ստատիկ), երկրորդը, գիտականը՝ շարժումնակ (դինամիկ):

Այդ շրջանում զարգացում գտավ երկրաշափությունը:

Ժերար Դեսարգը (Gerard Desargues) 1642-ին մշակում է արտածիք երկրաշափության հիմունքները, արտնումնետրիան, Բրուկ Թեյլորը (Brook Taylor)<sup>2</sup> կենտրոնական արտագույթյունը (1719), Գասպար Մոնժը (Gaspar Monge) 1794-ին հրատարակում է իր նկարագրական (դեսկրիպտիվ) երկրաշափության դասական տրակտատը: Ճարտարապետներն իրացրին այդ նոր մեթոդները և պատրաստեցին ճարտարապետական տրակտատներ: Հայտնի են Ֆ. Դյուրանի<sup>3</sup>, Գ. Գուարիինիի<sup>4</sup>, Ֆ. Միլիցիի<sup>5</sup> գործերը:

Գալիլիեական հայեցողությամբ ճանաչողության բացարձակ արժեքը կարելի է ընկալել հայտնաբերելով բնությունը ղեկավարող օրինաշափությունների համակարգը: Ելակետային նման հասկացությունից բխեց հետագա մի ըմբռնում, բայց որի ճարտարապետական գործը բնության նման կառուցված է մաթեմատիկական նույն օրինաշափություններով: Ճարտարապետներ Գուարիինիի, Վենենի և Նոյմանի կառուցվածքների հանդինությունը հիմնված էր գիտական իմացությունների վրա, որոնք արգասիք էին փորձնական նոր մեթոդների:

<sup>1</sup> Bonaventura Cavalieri, Geometria degli Indivisibili, Milano, 1635.

<sup>2</sup> F. Durand, Architecture des voûtes ou l'art des traits et coupes des voûtes, Paris, 1643.

<sup>3</sup> G. Guarini, Architettura Civile, Milano, 1737.

<sup>4</sup> M. Milizia, Opere complete, Bologna, 1826—29.

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԵՎԻ ԶԼԱՏՈՒՄԸ

1671 թ. Կոլբերը հիմնեց «Ճարտարապետության Թագավորական Ակադեմիան», ուր կենտրոնացրեց դաստիարակության և շինարարության մեծածավալ զործունեության կազմակերպության ղեկավարությունը։ Թագավորը դառնում էր Ֆրանսիայի միակ պատվիրատուն, արվեստի գործերի ամբողջ շուկան այսուհետեւ այլև թագավորական մենաշնորհ էր։ Այս դրվաժքը հրապուրեց եվրոպական այլ երկների թագավորներին, որոնք շտապեցին իրենց մայրաքաղաքներում ևս նոր ակադեմիաներ բանալի ճարտարապետը, հատկապես կաթոլիկ միապետություններում, պետական պաշտոնյա էր, բայց միաժամանակ ճանդես էր գալիս որպես արվեստի գործերին և ընդհանուր ճաշակին ուղղություն տվող անձնավորություն։ Բողոքական երկրներում, ուր կապիտալիզմն ավելի զարգացավ, ճարտարապետը նվիրապետական ընդհանուր ճամակարգի մի մասն էր և գործում էր որպես պաշտոնյա<sup>1</sup>։

XVIII դարում տեխնիկայի զարգացմանը զուգընթաց առաջացավ մի նոր սերունդ, որն ավելի գիտակ լինելով շինարարական նորագույն եղանակներին, բնականարար, մեծ ինքնուրույնություն ձեռք բերեց։ Նրանց պատվիրատուները ոչ թե ազնվականներն էին, այլ արդյունաբերության և առևտուրի միջոցով հարստացած քաղաքացիները։ Սակայն ստեղծված իրադրության հետեանքով ճարտարապետները մնացին մեկուսացված ակադեմիաների պետական շրջանակներում։ Տեխնիկան ծնից իր մասնագետները, այսուհետեւ գործարաններ, ցուցահանդեսներ, կամուրջներ կառուցելու համար պատվերները տրվում էին նրանց, իսկ տվյալ պատվերների մնույթը՝ պալատական չէր։ Պատվերների բաժանումը իր հետ բերեց ճարտարապետություն-հասարակություն խնդիրը, որը զարգանալով վերածվելու էր քաղաքաշինության խնդրի։ Իրականության և ճարտարապետական ընկալումի միջև շլատում առաջացավ<sup>2</sup>։ Ջլատումը առաջացել էր ոչ միայն ճարտարապետության մեջ, այլև տեսական-իմացարանական հայեցողություններում։ Լուսավորականությունը և առմանտիզմը հանդիսացան հոգեկան և սոցիալական իրադրության երկրաարտահայտությունները։ Այդ վիճակը, հակադրությունների օրենքով, խթանում էր գիտության զարգացումը, հասունանում էր հասարակական կարգերի դեպի ժողովուրդը ընթացող բնաշրջումը։

<sup>1</sup> Այդ շրջանում գոյություն է ունեցել հետաքրքիր մի փորձառություն, Ավստրիայի Վորավորեր զավառում շարունակել են գործել շինարարների կորպորացիաներ, որոնք մի աշխատանքից մյուսին անցնում էին ամբողջ կազմով։

<sup>2</sup> XIX դ. առաջին կեսերին Սեմպերը, ապա և Լաբրուատը փորձեցին միասնություն առաջացնել և վերականգնել ճարտարապետության՝ արվեստը և տեխնիկան համարող, վաղեմի դերը։

Արդյունաբերության դեմ նոր գասականների և ռոմանտիկների ունեցած նախապաշտումները բնորոշ էին նաև XIX դ. մտավորականների մեծամասնությանը: Դրանցից և ու մեկը շփորձեց վերականգնել խառնաշփոթ ձևով ծավալվող քաղաքների կարգը կամ առաջարկել նոր հիմնված արդյունաբերական կենտրոնների հատակագիծ, չնայած այն բանին, որ Անգլիայում Ռ. Օսւենի նման բացառիկ մարդիկ դիտակցում էին ոչ միայն գոյություն ունեցող իրադրությունը, այլև նրա դրավագանառները:

Ֆրանսիական հեղափոխությունը, որը սկիզբ էր առել որպես լուսավորության գաղափարների իրագործող, ավարտվեց քարոզած գաղափարներին հակառակ արդյունքով: Արդարության, եղբայրության և ազատության իդեալները՝ լուսավորության այդ նոր հումանիզմը հանդեցրեց գիլտափնին և նապոլեոնյան արկածախնդիրը արշավանքներին: Բնության հետ ներդաշնակ ապրեու մարդու ցանկությունը խափանվեց նոր ավերումների, դրանցից հետեւած աղքատության և մեծ կամ փոքր բռնականների պատճառով:

Լուսավորականների գաղափարական գործոնը՝ բանականությունը, չկարողացավ կարգավորել քաղաքական նման իրագործությունը: Հեղափոխությունից վհատված մարդը՝ հուսախար սոցիալական իրավիճակից, դարձավ ինքնամփոփ, իր ևսի և անցյալի պատմության խորքում սկսեց փնտրել այն միսիթարությունը, որը կօգներ նրան հաղթահարելու իր առաջ ծառացած դրվարությունները:

XIX դարի առաջին տասնամյակներում քաղաքաշինության մարզում արված առաջարկներում ունակ քաղաքին հակադրվում էր իդեալ քաղաքը. թողնել ապագայում անելու այն, ինչ հարկ էր իրագործել այդ նույն ժամանակաշրջանում: Այդպես էր Անգլիայում և Ֆրանսիայում, ուր Շ. Ֆուրիեն փիլիսոփայահոգեբանական սկզբունքների հիմունքներով առաջարկում էր «Փալատակար»՝ քաղաքների հակա խտացումներին հակադրվող փոքր բնակավայրերից կազմված բնություն-մարդ ներդաշնակ փոխկապակցությունը պահպանող հակա-քաղաքը: Այդպիսին էր նաև է. Կարեի «Իկարիան», որը բաժանված էր լինելու վաթուու տարբեր ազգերի ոճերով նախագծված հատվածների, նպատակ ունենալով բնակիչների մեջ առաջացնել փոխադարձ հասկացություն և եղբայրություն: Հետաքրքիր է նշել, որ Կարեի առաջարկը՝ մեր գարի երեսնական թվականներից սկսած, կիրառվեց, այսպես կոչված, համալսարանական քաղաքներում (Փարիզի Սիտե Յունիվերսիտերը), ինչպես և երիտասարդության համաշխարհային որոշ ճամբարներում, Վենեսաիկի Բիեննալեի տաղավարներում, արդյունաբերական նույշների ցուցահանդեսներում, այսինքն՝ այն բոլոր վայրերում, ուր հարկ եղավ ցույց տալ աղդային դեմքը<sup>3</sup>:

Խնդիրն այն էր, որ այս նախագծերի հեղինակները համոզված էին, թիհասարակական նոր համակարգն իրագործելու արդելքը ազիտությունն է, նրանի գտնում էին, որ հարկ է կրթել ծողովրդին, համոզել իշխող դասակարգին, բայց շղիմել դասակարգային պայքարի:

Ուսուպիկ սոցիալիզմի հասկացության հարապուրը արգելում էր այդ մարդկանց գտնել քաղաքի լուծումը իրականության միջոցով: Նրանք փոր-

<sup>3</sup> C. Fourier, Traité de l'Association domestique agricole, 2 v. Paris, 1822. Idem, Le Nouveau Monde Industriel, 2 v. Paris, 1829. L. Mumford, The Story of Utopia, New York, 1922.

ձում էին իդեալականի շրջանակներում պարփակել իրականությունը, այլ կերպ ասած, ոռմանտիկ մարդու ևսի ճանապարհով վերականգնել նոր գասականների բացարձակ գեղեցիկի գաղափարը: Հիշատակելի է Կանովայի վըշտալի բացականչությունը՝ ծերության օրերին կոնդոնի թրիտանական թանգարանում Պարթենոնի արևելյան ճակտոնի խմբաքանդակը՝ Ֆիդիասի երեք աստվածութիւնները, տեսնելիս:

Իտալացի մեծ արվեստագետը դաստիարակված Վինկելմանի գեղազիտությամբ, Ֆիդիասի գործում հայտնագործեց հոնական դասական արվեստի կանոնները, որոնց մինչ այդ ժամով էր հոռմեական ընդօրինակություններից:

Անգլիացի և ֆրանսիացի ուսուպիստ սոցիալիստները իրականությունը վերածում էին սիսեմայի և այդ մտապատճերի միջոցով փորձում հաղթահրեւ բաղաքների պատմական հոլովությունը:

Մի կողմից գեղագիտական հասկացությունը, մյուս կողմից արդյունաբերությունն ու տեխնիկան իրենց ազդեցության ներքո էին պահում ճարտարապետությունը:

Վինկելմանը առաջարկում էր բացարձակ գեղեցիկի զաղափարը և նոր դասականները ղեկավարվում էին այդ շափանիշով<sup>4</sup>: Լեստինգի համար բանդակագործությունն էր կատարյալ արվեստը և մերկությունը պատճերում էր այդ կատարյալը: Իդեալ այդ պատճերից ենելով, լեստինգը արվեստները բաժանում էր ճարտարապետության, երաժշության և մարդու կերպարը պատճերող «կերպարվեստների» (die Bildenden Künste), այսինքն՝ նկարչություն, քանդակագործություն: Այդ հասկացությունն այսօր դեռևս կիրառություն ունի<sup>5</sup>: Արվեստները իմաստային ըմբռնմամբ ստորոտությունների բաժանելը նոր երևույթ էր: Վերածնության դարաշրջանում արվեստներն աստիճանավորված էին անկատարից կատարյալ: Վերջինս ճարտարապետությունն էր, իսկ բոլորին շաղկապող՝ գծագրությունը<sup>6</sup>:

XIX դարում արվեստները բաժանվեցին երկու խմբի՝ մեծ և փոքր (կամ կիրառական արվեստներ), իսկ վերջիններիս կապը արդյունաբերության հետ հաստատվեց գծագրության<sup>7</sup>, այսինքն՝ ժողովրդի առօրյային կապված կիրառական արվեստների միջոցով:

XIX դարի սկզբներին արդյունաբերության արտադրած առօրյա օգտագործման առարկաները իրականացնում էին անժանոթ նախագծողները: Դրանց անդրադառնալիս արվեստաբանները իրենց արհամարհանքն էին արտահայտում, մինչեւ հիացմունքի խոսքը էին ուղղում ֆրանսիացի Շ. Պերսիին, Պ. Ֆ. Ֆոնտենին, նապոլեոնյան տիրակալության երկու ճարտարապետներին, որոնք արվեստի պատմության մեջ հիշատակվում են որպես կայսերական ոճի հիմնադիրներ: Աղամսի նոր դասականության և ոռկոկոյի

<sup>4</sup> Յ. Յ. Վինկելման, դասական հետագիտության հիմնադիր, առաջ քաշեց ստորագան հակարգերի ըլրնումը արվեստաբանության բնագավառում: *Skizze J. J. Winckelmann, Geschichte der Kunst des Altertums*, Dresden, 1764.

<sup>5</sup> G. E. Lessing, *Laokoon oder Über die Grenzen der Malerei und Poesie*, Berlin, 1766.

<sup>6</sup> B. Celsini, *Discorso sull'Architettura*, Venezia, 1776, pubb. da I. Morelli.

<sup>7</sup> Այսօր սովորական է գարձել գծագրություն բառը նույն իմաստով, բայց, ընդհանացած, օգտագործել անլերենի բարգանությամբ՝ գեղային (design):

դարդարվեստի հիմունքներով ստեղծվեց, այսպես կոչված, նապոլեոնյան ոճը, որը հետագայում դարձավ շատ տիրակաների նախանձի առարկան:

Պերսիի և Ֆրանսի գործունեությունը ընդգրկում էր բաղաքաշինությունը (Փարիզի Միվոլի փողոցը) մինչև ազնվականների պալատների կահալորումը՝ նախագծերը կատարվում էին նրանց արհեստանոցում: Ենարության ղեկավարման և նախագծման աշխատանքները մի վայրում կենտրոնացնելը նոր երևույթ էր և վճռականապես տարրերվում էր բարոկկոյի շրջանում ընդունված դրվագքից, երբ ճարտարապետը պետական պաշտոնյա էր: Այս երևույթը սկիզբ էր զնում նախաձեռնող ճարտարապետի կերպարին: Անձնական նախաձեռնություն հանդիս բերելը, սակայն, գնալով տեղի էր տալիս կոլեկտիվ շահերին, որի հետևանքով ճարտարապետը դորժում էր ոչ անհատապես, այլ խմբերով, նախագծման մեծ հիմնարկներում:

Այդ նույն շրջանում առաջ եկավ արվեստագետի նոր կերպար՝ կահավորող և նոր մասնագիտություն՝ ներքին հարդարանքների ճարտարապետություն (Innenen-architektur): Արդյունաբերությունը ճարտարապետությունը շլատում էր մասնագիտությունների, միաժմանակ, սակայն, նախապատրաստում մասնագետների կոլեկտիվ աշխատանքը, ճարտարապետին մղում դեպի ժողովուրդը:

1851-ին Լոնդոնում բացված համաշխարհային ցուցահանդեսը շրջադարձին նշանակություն ունեցավ ոչ միայն Պակստոնի կառուցած մետաղե և ապակե հակա շենքի, այլ հատկապես կիրառական արվեստի համար: Անզիայում սկիզբ առավ, քննադատաների կարծիքով, ցածր ճաշակի հասած, կիրառական արվեստների ուժորմը, որն իրագործվեց երեք փուլերի ընթացքուի: Առաջին փուլ՝ Սըր Հենրի Կոլը հիմք դրեց արդյունաբերական դիզայնին (Industrial design), երկրորդ փուլ՝ Զոն Ռասկինը և Ուիլյամ Սորրիսը առաջարկեցին լրել մեքենայացված արտադրությունը և անցնել ձեռագործ արտադրությանը, երրորդ փուլ՝ Մորրիսի հետևորդները՝ Կրեյնը, Էշքինը, Վոյդեյինը հիմնում են Արտո ընդ Կրաֆտ ընկերությունը, որտեղից պիտի ծագեր երկիրացիներ Վան դե Վելդեի և Հորտայի հիմնած Ար Նուվոն:

Արվեստի վերափոխումը սկիզբ էր առնում այնտեղից, որտեղ ստեղծվեց մեքենայի և արվեստի առարկայի կապը, որտեղից ընդարձակվելով հետագայում վերափոխվեց կիրառական արվեստը: Խակ ինչ վերաբերում է ճարտարապետությանը, նորի առաջացումը այդ ոլորտում մի բարդ պրոցես էր, որն ընթացավ XIX դ. նոր դասականության և ուժանախզմի ուղիներով:

<sup>8</sup> H. Read, Arte ed Industria, Milano, 1961. S. Gledion, L'Era della Meccanizzazione Milano, 1967.

Իլլումինիզմի շրջանում առաջացած արվեստի այս ուղղության մեծագույն ներկայացուցիչներից մեկը, Կենտրոնական Եվրոպայում, Կարլ Ֆրիդրիխ Շինքելն է (1781—1841), որը եղել է ճարտարապետ, նկարիչ, փորագրող և քաղաքաշինարար: Աշակերտել է Դավիթ և Ֆրիդրիխ Գիլ եղբայրներին: Նրա բազմակողմանի, բեղմնավոր գործունեությունը ընթացել է էկլեկտիզմի շրջանում, առանց սակայն, ենթարկվելու ոճականացված արտահայտչականություններին: Նկատի ունենալով ճարտարապետական լեզվի տարրեր գոյացումները, ձևերի բազմիմաստ ինքնատիպությունները, նաև ստեղծագործել է դասական ձևի խստության և ոռմանտիկ վեհության ոգով: Քաջատեղյակ իր դարաշրջանի արվեստի խառնաշփոթ դրույթյանը, Շինքելը համոզված էր, որ անկասելի է բարոյական, սոցիալական և տեխնիկական վերակառուցման պահանջը: Սկզբունքային այդ գույքի, որ նրա ողջ կյանքի գերազույն նպատակն էր, դարձավ նաև ստեղծագործական գործունեության ուղիգիծ: Կ. Ֆ. Շինքելի կյանքը և գործունեությունը կարելի է ստեղծագործողի բարոյական կայունության օրինակ համարել, հատկապես եթե նկատի առնենք, որ այդ դարաշրջանում գաղութների հաշվին հարստացած պատվիրատունները քմահանդորեն իրենց կամքն էին թելադրում ճարտարապետին: Եվ վերջինս սովորաբար որոշակի որևէ համոզմունք չունենալով, այլ հարազատ մնալով պատվիրատուի ճաշակին և որոշակիորեն շվանազանելով ոճների տարրերությունները, գտնում էր տրամարանորեն համատեղելի ճշմարտություններ՝ ոճի ընտրությունը կատարելով պատվիրատուի ճաշակի համաձայն:

Երբ հասարակության կարծիքին համահնչուն է նաև արվեստագետների կարծիքը, այդ միասնության բարոյական առողջ հիմունքներից զարգանում է ոճը: Դիբրոյական այս պնդումը տարբերվում է Վինկելմանի քրացարձակ դեղեցիկից զաղափարից, արվեստը մոտեցնում է հասարակությանը, արվեստի գործում մասնակից դարձնում այն բոլոր արվեստագետներին, որոնք կարող են սմասածել, ողգալ և դիտել բնությունը<sup>1</sup>:

Գաղութատիրությունը ճաշակը վեր էր ածել անհատական քմահանդության: Ուստի իսկական արվեստագետի դիտող աշքն ու նուրբ զգայնությունը կարող էին նպաստել հասարակության ճաշակին ավելի, քան նախապաշար-

\* Նոր դասականուրյան կամ նեոկլասիցիզմ: Եվրոպայում XVIII դարի II կեսից մինչև 1830 թ. զարգացում դատած սոցիալական, զաղափարախռուսական, արվեստ և ճարտարապետության անվանում: Կլասիցիզմը առաջացել է XVII դ. և ճարտառել մինչև XVIII դ. առաջին կերպ:

<sup>1</sup> D. Diderot, Salons, 1759—81, Oxford, 1957.

ված գաղափարը: Քմահաճությունը զրկել էր ոճը ճշգրիտ բռվանդակությունից և նրան հակադրել ոճականացված արտահայտությունը, որը ոճի համեմատությամբ հիմնականում այլ է:

Ուն ավանդաբար հաստատված, ժամանակադրականորեն սահմանված կանոնների, համաշափությունների, տեխնիկական միջոցների ամրողական արտահայտություն է, որի սկզբնաղբյուրը, կազմավորման ոլորտը ազգային է: Արդ, եթե ոճը, պահպանելով հանդերձ ձեւի ազգային ինքնատիպությունը, կորցնում է, սակայն, նորեւ արտահայտելու ունակությունը, այն վերածվում է գեղագիտական ընդհանուր համակարգի: Եվ այս պարագայում մենք գործ ունենք ճարտարապետական արտահայտությունների ոճականացման հետ, քանի որ առկա է խզումը կերպարի և իրականության միջև, հետևաբար, իմաստաղորկված է ձեզ: Իրագործումից իրագործում ճարտարապետական ոճը ստանում է հարակից նշանակություններ, նրան փոխարինում է ոճականացված արտահայտությունը. գեղագիտական լեզուն միտք է թելադրում, խափանում նորը ստեղծելու հանդպնությունը:

Ծինքելը ձգտում էր ճարտարապետության ընդհանրական հասկացությունների գրական կիրառման: Կիրառում, որի եղանակը արմատապես հակասում էր էկլեկտիզմի մեկնարանություններին: Լուսավորչականներին հատուկ խիստ տրամարանությամբ, Ծինքելը հետապնդում էր հետեւյալ սկզբունքները՝ ձեզ ուսցիոնալ է, արվեստը ճանաչողության ուսմունք է, արվեստը հասարակության դաստիարակության միջոց է:

Նախագծողներին նա խորհուրդ է տալիս հատակագծել պարզ և անմիշական, շինանյութերը օգտագործել ճիշտ (ոչ մի կեղծիք), իսկ զարդերը՝ շափակուր:

Կ. Ֆ. Ծինքելի գործունեությունը հիմնականում ծավալվեց թեոլինում: Այստեղ նա կառուցեց Գլխավոր թատրոնը (1818), Հին թանգարանը (1822—28), Պոտսդամի նիկոլայի եկեղեցին (1830—37) և Բեռլինի Ճարտարապետության ակադեմիան (1832—35): Այս վերջինում շենքը ուղղաձիգ բաժանված է ամբողջ բարձրությամբ վեր սլացող որմնասյունների, իսկ հարկերը շեշտված են թեթևակի դուրս ցցված հորիզոնական գոտիներով: Շեշտված քառանկյունի հատվածներում բացվում են զրեթե մինչև առաջնակ առաստաղը հասնող պատուհաններ: Ծինքելն այստեղ օգտագործել էր ուղղաձիգ և հորիզոնական գծերի ցանցը, իսկ ճակատների լույսի և ստվերի շեշտված հակադրությունները ստացել էր պատուհանների ճոխությամբ: Ճակատները հոբինելու ցանցի համակարգը, զարդարանդակների այնքան զուսպ օգտագործումը նախորդեցին Զիկագոյում Դ. Հ. Բրնձնմի և լ. Սլիվանի 50 տարի ուշ իրագործված մետաղակառուց բազմահարկ շենքերի հորինվածքներին:

Հիմնական ուղղություններով շենքերի հարկայնության գաղափարի շետումը նոր չէր, բավ է հիշել լ. Բ. Ալբերտիի՝ Ռուչելլայի պալատը: Նույնը կարելի է ասել ամբողջ ճակատով բարձրացող որմնասյունների մասին (Միքելանջելոյի Կոնսերվատորների պալատը Հռոմում): Բայց պատի թանձրությունը վերածել կրող ատրիբերի և դրանով սահմանափակել ճարտարապետական արտահայտչականության միջոցները՝ այս եղանակը հարազատ լինելով հանդերձ գոթականին, նոր էր և թելադրեց պողպատե և երկաթբետնե շինարարական համակարգը: Հետևաբար, ճշմարիտ են արվեստի այն տե-

սաբանները, որոնք Շինքելի թողած ավանդի հետ են կապում Միզ վան դեր Ռուի և Ա. Լոոզի ստեղծագործությունները<sup>2</sup>:

Ճարտարապետական ձեր իրականության հասկացություն է, նրա նշանակությունը արտահայտվում է իրար շաղկապված ճարտարապետական բազմազան տարրերի առկայությամբ, որոնց միջև հաստատված ներհամակարգային հարաբերությունները պայմանավորված են երկրաչափական մոդելի օրինաշափությունների հիմունքներով: Կառուցյալ այդ մոդելի մատային արտապատկերն է: Մեր կարծիքով կառուցյալ կարելի է բաժանել հարաբերականորեն ինքնուրույն երկու բաղադրիչների, որոնցից ամեն մեկն ուրույն նշանակություն ունի: Առաջին բաղադրիչը հորինվածքային է և վերարտադրում է ճարտարապետական պատկերը, երկրորդը՝ կառուցվածքային է և արտացոլում է ուժերի հավասարակշռված կարգը: Արդ, ճարտարապետության պատմության մեջ միշտ չէ, որ այդ երկու բաղադրիչները համընկել են իրար: Նրանց խիստ հազվագեց զուգակցումը կատարվել է լավագույն ձեռք Հունական արվեստի դասական շրջանում՝ IV—VII դդ. Հայաստանում և Վերածննդի շրջանում:

Ճարտարապետական իրագործմանը հարաբերված կառուցվածքային փոխհարաբերություններն ամրողությամբ առնվազում են շենքի կրող համակարգի և ձևային մոդելի հետ: Ճարտարապետական ձեր պայմանավորող այս դրույթները որոշչի են և տարրեր արժեքավորումներով առկա են մասնակից ճարտարապետության ամեն մի ստեղծագործության մեջ: Սույն բանաձևի համաձայն ձևային մոդելը, որպես էական դրսեւորով մտահղացում, ստանում է շենքն ամբողջությամբ բնորոշչի շենքների նշանակությունը:

Համաձայն Վերածննդի հումանիզմի հասկացության, շենքի կրող համակարգը երեսպատվում էր ներքին և արտաքին մակերեսների վրայով ծավալվող մեկ այլ համակարգով, որը բաղկացած էր սյուներից, կամարներից, խորաններից և գոտիներից: Վերածննդի ճարտարապետական միտքն արտահայտող այս հասկացությունը դրսեւորում էր ձևային իմաստների մի ըմբռնում, որը հատուկ նպատակադրումով հարաբերված էր հումեսական օրդերին: Այդ շրջանում ստեղծված դասական օրդերները և նրանց հարակից տարրերը համակարգող կանոնները կազմում էին ճարտարապետական պատկերագործությանը ուղղություն տվող գեղագիտական կարգը: Կառուցվածքի համեմատությամբ, պատկերագրականին տրված առավել ցայտուն նշանակությունը հանգեցրեց Պիրանեզի և Բիրիենայի ստեղծագործություններին հատուկ թատերականությանը:

Նոր դասականները հալպահարեցին ճարտարապետական ձեր շլատելու Վերածննդից մինչև մանեկերդմ հարատեսղ ձգտումը: Դա եղավ լուսավորականների տրամարանական մտքի և դասական ոգու գեոթեական հասկացության արգասիքը: Ռ. Աղամմի՝ լոնդոնում կառուցած Աղոլֆի շենքերի շարքի (1766—72), բայց հատկապես Կ. Ֆ. Շինքելի թողած ժառանգության կարևորությունն ամենից առաջ ճարտարապետական ձեր և կրող կառուցվածքի միասնության պահպանման մեջ էր: Դավիթի, էնդրի և Կանովայի նման, Շինքելը շնամիտեց դասական ձեր սահմանները և այդ իդեալ շրջա-

<sup>2</sup> K. H. Klasen, Schinkel, Berlin, 1952, p. 51—52.

<sup>3</sup> Ռ. Աղամմի այդ նշանակալից գործը, որի ճակատները հանրաճանաչ էին նվազագույն, զո՞յ զնաց 1928-ին՝ տեղացիների շահագիտական անբարենպության:

նակում հարազատություն ստեղծեց ձեկի ու կրող տարրերի միջև։ Նրա ստեղծագործությունները զուսպ են, անմիշական, դասականորեն ուղղինալ, իսկ բաղաբաշխության բնագավառում թե՛ Եինքելը նորարար չեր, բայց դասականի ոգով ազնվացը բաղաբայի միշակայրը<sup>4</sup>։

Ժամանակակից ճարտարապետության մեջ նոր դասականի գիծը զարգացավ շինքելյան հասկացության հիմոնքներով, իսկ նոր գոթականն ընթացավ Վիոլել-լը Դյուոկ<sup>5</sup> կառուցվածքային (տեխնիցիզմի) և Ա. Մեսսելի հարթած ճանապարհով։ Մինչեւ իտալական Կուատրոչետոյին (XV) սատարած Գ. Սեմպերի գեղագիտական ընկալումը կանգնած է այդ երկու հիմնական ուղղությունների կենտրոնում։ Սեմպերի ըմբռնմամբ ճարտարապետական միտքը վերագտնելով դասական արվեստի իր հզորությունը և տեխնիկայի ու արվեստի միասնությունը՝ կստեղծի ճարտարապետականացված միշավայրի տեսողական նոր կարգը։

Արդի արվեստի տեսության սկզբնավորման գործում Գ. Սեմպերի (1803—1897) ունեցած վաստակը նշանակալից է։ «Անը տեխնիկական և տեկտոնիկ արվեստներում»<sup>6</sup> իր հանրահայտ աշխատության մեջ Սեմպերը կատարեց ոճերը բնորոշելու և նրանց շրջափուլային ընթացքը պարզաբանելու առաջին փորձը։ Գիտական խստությամբ կատարված այդ ոսումնասիրությունը ստացավ համընդհանուր նշանակություն։

Սեմպերի տեսության հիմնական դրույթն առնված է Եինքելից և վերաբերում է նախագծի և օգտագետության փոխհարաբերության խնդրին։ Նման հարցագրումը այսօր թվում է պարզ, բայց XIX դ. պատմագիտացված ճարտարապետության ոլորտում հարկ էր թոթափել տարրեր ոճերի բեռը և ազատադրված ձեր շաղակապել իրականության հետ։

Ուժմանտիզմը հարուստ էր գրական, պատմական և նշանաբանական այլազան հետաքրքրություններով։ Նման դրվածքից ազդված՝ ճարտարապետության ուսցինալ միտքը տեղի էր տալիս երեսակայական ոճականացումներին, որոնց իմաստն ավելի գրական էր, քան ճարտարապետական։ Սեմպերի խոսքերով՝ «դարաշրջանին բնորոշ ոճը արտահայտում է տվյալ շրջանի իմացությունը։ Եվ հարկ է կամենալ վերականգնիլ այդ իմացությունը»<sup>7</sup>։

Սեմպերի կարծիքով՝ կառուցյների տիպերը, նրանց կրած փոփոխությունները և ընդհանուր առմամբ՝ ոճի կավազմորման խնդիրները, առնվազում են տվյալ դարաշրջանի և ժողովրդի հետ։ Նկատենք, որ Սեմպերը չի ակնարկում ելլորպակենտրոն գաղափարը, այլ ճարտարապետական իրականությունը ներկայացնում է ավելի լայն հասկացությամբ՝ որպես ստեղծագործողի և հասարակարգի միջև առաջացած բարդ կապերի արգասիք։ Նման փոփոխավածությունների ոլորտում բնորոշելով ճարտարապետի դերը, նա դրանով իսկ հեղաշրջում է ճարտարապետության պատմությունը արվեստագետների կենսագրություններով։ Մինչ այդ գերիշխող վազարիի տեսակետը։

<sup>4</sup> P. O. Rave, K. F. Schinkel, Berlin Stadtbaupläne, Berlin, 1948.

<sup>5</sup> Նաև Վիոլել-լը-Դյուոկ (այսուհետև՝ Վիոլել-լը Դյու)։

<sup>6</sup> Gottfried Semper, Der Stil in den technischen und tektonischen Künste, Frankfurt am Main, 1860.

<sup>7</sup> Նախագաղացության Կոռուպ բառի իմաստը (կարենալ, ի վեճակի լինել) գիտելիքների շափանիք է և կախում ունի նոր տեխնիկայի ստեղծած հարավորությունները կիրառելու ունագությունները։

Նարտարապետությունը մյուս արվեստների համեմատությամբ ավելի սերտորեն է կապված տեխնիկայի և գործառնությունների, բնական պայմանների և մշակութային հայացքների, սոցիալ-տնտեսական կազմի և տրվյալ շրջանում գերիշխող քաղաքական դրվագքի հետ: Ուսումնասիրելով արվեստ-մշակույթ, արվեստ-հասարակարգ փոխառնչությունները, ճարտարապետական քաղաքակրթությունը ստանում է մարդու ապրած միջավայրին ձեւվային արժեք հաղորդելու իմաստ:

Գ. Սեմապերը հեղինակ է մի շարք կարևոր գործերի: 1838—41-ին նա Դրեզդենում կառուցեց օպերայի շենքը<sup>6</sup>, 1847-ին՝ Պատկերասրահը (ավարտեցին ուրիշները), Վիեննայում հեղինակակից դարձավ Բուրգթեատրի, Հռուրոցի և Հոֆմուլցենումի նախագծերին: Քառասունական թվականներին Ավագների ստեղծած նոր թատրոնի ծրագրով կառուցվեց Բայրեոպահ օպերայի շենքը, իսկ Վիեննայում՝ քաղաքապետարանը, Ցյուրիխում՝ պոլիտեխնիկումը և աստղագիտարանը:

Էկլեկտիզմը Եվրոպայում սկիզբ առավ 1815-ին և հարատեսց մինչև 1890 թվականը: Այն գործում էր XIX դ. արժեքները դասակարգելու, շենքները տիպարանական կարգերի բաժանելու, դրանք նորմաներով բնորոշելու հասկացության հիմունքներով: Անցողակի նշենք, որ նատուրալիստական այդ տեսակետը կազմում է արդի ճարտարապետությանը, ինչպես և պատմագրությանը հատուկ տիպային մշակույթի գլխավոր գործուներից մեկը: Զերք և պարունակության ճարտարբությունների դետերմինիստական ընկալումը ճարտարապետներին մղեց ընտրելու շենքի պարունակությանը համապատասխան ոճ: Այդ ըմբռնման համաձայն հոգեսր շենքերը պետք է լինեին գոթական, վարչականները՝ Վերածննդի ոճով, զվարածության վայրերը՝ արեվելյան: Տիպարանությանը հաջորդում էր ոճաբանությունը: Կերպարի իմաստային նշանակության և գործնական պահանջների միջև առաջանում էր ժամանակավորեպ հարաբերություն: Մինչդեռ հարցը այն էր, որ ձեն ու իմաստը զողվեին նոր տեխնիկայի գործակցությամբ: Սեմապերի պողիտիվիզմը, Վերածննդի հայեցողությունների հանդեպ նրա ունեցած նախընտրությունը արտացըլում են անցյալ դարի հիսունական թվականների արվեստաբանությանը բնորոշ միտումը: Սույն դրվագքը հատուկ էր եվրոպական ճարտարապետության ոչ այնքան հայեցողական (գործառնական պահանջների և կերպարի իմաստային կախվածություն), շինարարական նոր եղանակները անտեսելու, հնին հառելու ձգտումը: Պողպատը, ապակին, ավելի ուշ երկաթբետոնը թելադրում էին նոր ձեռքի մշակումը: Ուստի հարկ էր մի կողմ թողնել կամարները, սյուները և կառուցել կիրառելով նորաստեղծ կառուցվածքներ՝ մի բան, որ առաջարկում էին Շինքելը, Պակստոնը և Հորոն:

Հարկ էր արդյունաբերության առաջընթացին զուգընթաց նոր թափ հաղորդել շինարարական արվեստին: Սեմապերը, որը հավատարիմ էր նոր դասականությանը, այդ հարցին անդրադասնալիս պատկերավոր ձևով գրում էր: «Թողող ճարտարապետն իշնի իր գաճից և գնա շուկա, որտեղ պետք է սովորել և սովորել»:

<sup>6</sup> 1859 թ. Դրեզդենի օպերան այրվեց, 1878 թ. Գ. Սեմապերի զավակը՝ Մանֆրեդ Սեմապերը, վերակառուցեց օպերալի շենքը՝ Դրեզդենում իշխող բարոկկո ոճի երանավորումներով: Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ նորից այրված օպերայի այդ շենքը վերակառուցվել է վաթսունական թվականներին:

Չնայած արվեստի խնդիրների ողջ բարդությանը և այն հանգամանքին, որ այդ շրջանի ճարտարապետները չէին ցանկանում հրաժարվել անցյալի ձևերից, Յ. Յ. Հերարտը (1776—1841) իր փիլիսոփայությամբ հստակ դարձրեց արվեստագետների շփոթ մտքերը: Նրա հակադիդելիստական հայեցողությունը ձևը նկատում է որպես անփոփոխ, միարժական էություն, Հերստարի բառերով՝ ուեալ միավոր: Արվեստի պատմությունն իր հերթին, ուրեմն, կազմված է ձեերի, այսինքն ուեալ միավորների բաղմությունից: Կարելի է ձևը շարունակ մշակել, ենենլով միմիայն իրականության կապվածությունից, այսինքն փորձառությունից: Հետևաբար, ձևը, ըստ Հերարտի, իրականության վերաբարումն է, պատմական տվյալ շրջանի աշխարհը նեկարությունը անփոփոխ միավոր՝ պայմանավորված է մի կողմից գիտական հայեցողության, մյուս կողմից՝ տեխնիկայի հետ: Զեր և տեխնիկայի վերաբարապետված կապը ուեալ հնարավորություններ ստեղծեց ճարտարապետության առաջընթացի համար:

Սեմպերը նպաստեց այդ միասնությանը և իր «Դեր ստիլ» գրքում հաստատեց դրա աեստիլունը, դառնալով ճարտարապետության աեխնիկական էվոլյուցիոնիստական հայեցողության հիմնադիրը:

Վերածննդի նկատմամբ Սեմպերի ունեցած վերաբերմունքը նշված աշխատության մեջ կարենոր տեղ է զբաղեցնում: Հեղինակը պարզ և հստակ մտքերով մեկնարանում է անցյալի ոճը ժամանակակից ճարտարապետության մեջ կիրառելու խնդիրը: «Նոր ոճը, — գրում Սեմպերը, — չպետք է բիսի այն բոլորից, որ մեզ է հասել անցյալից, փլատակ այդ հուշարձանները կարող են ուրվականների նման անհասկանալի լինել և բռնությամբ մեզ մատուցվել», նոր ոճի «մննծ առավելությունը կդառնան բազմաթիվ այն նորարարությունները, որոնք ժամանակի բերմամբ կարելի կլինի անելու»: Դժվար չէ կուահել, որ Սեմպերի ըմբռնումով գլխավոր խնդիրը կայանում է անցյալի ոճի պոտենցիալ ունակության և ճարտարապետի՝ նոր ձե մշակելու կարողության մեջ: Այս կապակցությամբ Սեմպերի հարցադրումը պարունակում է այնպիսի համոզմունք, որին հետաքայում, ինչպես ցույց է տալիս XIX—XX դդ. պատմությունը, գեռևս պետք է վերադառնան շատ ճարտարապետներ, դրանց թվում նաև Ա. Թամանյանը Անցյալի արվեստի այդ խնդիրները պարզաբնելու համար ամեն մի նոր սերունդ կդանի իր պատասխանը:

Ոճի պատմական ժառանգության սեմպերյան հայեցողության մասին պատկերացում կազմելու համար հատկանշական են Հռոմաստանի արվեստին նվիրված նրա դիտողությունները: Քննության առնելով դորական տաճարը, նա հանգում է այն եղանակացության, ըստ որի տաճարը հունական ճարտարապետության բարձրագույն արտահայտությունն է: Սակայն գտնում է նաև, որ դորական տաճարը հետագա զարգացում չի կարող ունենալ հենց դորական սյունի պատճառով: Այդ հանգամանքը արդեն նշել էր Վիտրուվիոն, ցույց տալով, որ դորական սյունաշարը կապված է մեթոպաների շարքին և նման կախվածությունը դժվարացնում է կառուցելու եղանակը: Իր կազմած ոճերի ցուցակից Վիտրուվիոն հանել էր դորական սյունը, նույնը արել էր Վինյոլան:

Սեմպերը հունական ճարտարապետությունը հանարեկով դասական ոճի առաջին արտահայտությունը՝ ի հակադրություն XVIII և XIX դդ. նոր դասականների, որակում է այն ոչ թե դրական օգտագործման նպատակով, այլ

Հատկապես նրա ներկայացրած զեղագիտական բարձր արժեքների համար: Հոռմեացիք շարունակեցին ստեղծագործել այդ ողով և հաղթահարելով հունականի դրական կարելիությունների սահմանափակությունը, ստեղծեցին դասական արվեստի նոր արտահայտչառարրեր՝ կամար, թաղ: Նոր տարրերի հնարավորություններն անսահման էին, արգլունիները ռացահայտ: Դրանք հոռմեացիներին հնարավորություն ընձեռեցին կառուցելու քաղաքացիական ու հոգեւոր շենքերի բազմազան տիպեր: Իր հերթին իտալական Վերածնունդը ժառանգելով՝ հոռմեական ճարտարապետությունը, հունական վիլիսոփայությունը՝ իտալացի արվեստագետների մաքերի հարատությամբ, երևակայության ուժգնությամբ գերազանցեց Հունաստանին և Հոռմին:

Խսկ նոր արվեստը, արդյո՞ք, ընթանալու էր անցյալին համախոչ, անշուշտ՝ ոչ: Սեմպերը էվոլյուցիոնիստ էր, նրան չէին հետաքրքրում ձևականության ներկապակցությունները: Ժառանգությունը, ըստ նրա, փոխանցվում էր պատմության միջոցով, խսկ պատմությունը ընթանում է իրեւ արվեստի զարգացման փուլերի հաջորդում: Ուստի կարևոր են ոճի պոտենցիալ ունակությունը, որն առկա է դասականի մեջ և մշակութային միջավայրի պայմանները, որոնք Սեմպերի կարծիքով վերակազմավորվել էին XIX դ. կեսերին, որը ըստ Սեմպերի, պետք է կազմի արվեստագետի աշխարհընկալումը: Անվանում, որի մեջ Սեմպերը զնում էր ոչ միայն եվրոպական դասական մշակույթի միասնությունը արտահայտող իմաստ, այլև նոր ոճ կերտելու հանդինության պահանջ: Իր շրջանի մշակույթը կապելով Վերածննդի, հետեւար Հոռմի և Հունաստանի հետ, Սեմպերը զնաց այն ճանապարհով, որտեղից Գյոթեն, որպես նոր Փարիզ, Գերմանիա բերեց Հելենային:

<sup>7</sup> G. Semper, Die vier Elemente der Baukunst, Braunschweig, 1851. H. Sorgel, Einführung in die Architektur Ästhetik, München, 1918, p. 12. G. Semper, in Dizionario Enciclopedico di Architettura e Urbanistica, Roma, 1969, v. V, p. 475—476.

(Նոր գոթականը)\*

Ճարտարապետության մեջ կառուցվածքի և ծավալի փոխապակցություններին տրված գնահատականը՝ մեկի կամ մյուսի առավել արժեքավորություններով, մշտապես կախված է եղել այն փաստից, թե ինչ սկզբունքով է պատկերվել տարածությունը՝ տեխնո-կառուցողական, թե ծավալանշանաբանական:

Արդ, կոնգրեսի պալամենտի շենքում<sup>1</sup>, Պյուժեն պահպանելով հանդերձ շենքը կրող կառուցվածքի ճակատային բաժնումները, գեղազարդականի իմաստով զարգացնում է կրող տարրերի շանցը, շենքի հսկա ծավալի ճակատները պատելով զարգաբանդակներից հյուսված քարարակներուց մանյակներով:

Հարդարանքային մշակումը ճարտարապետական ձեզ զգայաբար ընկաւելու արգասիք է, իսկ շենքի պատմական բնորոշումը, մեր օրինակում գոթական, հետեւանք է ստեղծագործողին հատուկ այն նրբազգացության, որը հնարավոր է զարձնում պատմության խորքից արտաքերել ոճի անխառն էությունը:

Այն զաղափարը, ըստ որի արգեստի էությունը կարելի է ընկալել պատմության միջոցով, իսկ պատմությունը մի բնագավառ է, ուր արգեստի գործը պատկերվում է իրեն հարազատ միջավայրում, հատուկ է ոռմանսիկ հասկացությանը:

Պյուժեն խորապես ոռմանսիկ էր, գոթականի ընկալումը նրա մոտ վերափոխվում է ստեղծագործ եռանդի, այժմեականը անցյալի վերաստեղծ արժեքներով հարստացնելու ձգտման: Այս առումով կոնգրեսի պալամենտի շենքը գլուխգործոց է, գասական գոթականին հարաբերված ճարտարապետական հանդուգն իրագործում:

XVIII դարի վերջերին, երբ Արմատյան Եվրոպան վերջնականապես կը զարդարուած էր դեպի նոր դասականությունը, Անգլիան կանխելով մյուս երկրներին, արդեն հետաքրքրվում էր ոռմանստիգմով, լհրաժարվելով նաև նոր դասական ուղղությունից: Հակադիր միտումների միաժամանակյա գո-

\* Կեղծ գոթական, պեսուզ գոթական և նոր գոթական համազոր տերմինները օգտագործվում են գրականության մեջ:

1 Շենքը կառուցել է Զ. Թերրին, 1840—68 թթ., իսկ հարդարանքներն իրագործվել են Ա, Ա, Ա, Ա, Պյուժեն նախագծերով:

յատեռումը բնորոշ էր այդ շրջանին: Անգլիական այդին, օրինակ, ստանդարտ էմպիրիկ-լուսավորական հայեցողությունների ոլորտում<sup>2</sup>: Զնալած ոռման-տիկների և դասականների միջև մզկող բանավեճերին, ճարտարապետության մեջ իշխում էին ոռմանտիզմի և դասականի ոճերը: Պալլադյան ուղղության ներկայացուցիչ Ռ. Մորիսը (1695—1749) նոր գոթականի ոճով 1745 թ. կառուցեց Այնվերի դղյակը: Ուստանափելը մեծ նշանակություն էր վերագրում ստեղծագործողին հատուկ ազատ արարչությանը, բնության պատմության գաղտնիքները ներթափանցելու նրա ունակությանը: Ուստանափելի ճարտարապետի համար նախընտրելի էր վերահիմնաստավորել պատմականորեն վալերացված արվեստի արժեքները կամ ըմբռուս բողոքով հակադրվել ընդունված ուղղությանը և կերտել ուսուպիան:

Արտաքին և երեսակայական աշխարհների հարաբերումը միմյանց, որն առավելապես գրական երևույթ էր, թափանցեց ճարտարապետության մնաց և նորույթ եղավ ճարտարապետության պատմության համար: Այսպիս, ճարտարապետ Զ. Ույետը՝ ներշնչված Հ. Ուալպոլի հանրահայտ «Օթրանոտոյի դղյակ» խորագիրը կրող պատմվածքներից, 1796-ին կառուցեց Ֆոնտիլերի բին՝ նպատակ ունենալով արտապատկերել Ուալպոլի նկարագրած դղյակը: Երեսակայական ալդ պատմվածքներով է ներշնչված Թ. Լենգլիի, Ռ. Հըրդի և Ենֆուտրիի բնապատկերային ճարտարապետությունը: Այս ճանապարհով արվեստի բնագավառում տարածում գտավ պանթեիստ-կորանտիպ հասկացությունը:

Այդպիս Անգլիայում գրականությունն իր աղքեցությամբ օգնեց միջնադարի հոգեկան աշխարհը վերականգնելուն: Եվ, այսուամենայնիվ, գոթականը, որ ծայր էր առել գեռևս XI դարում, երբեք շդադարեց աղջային ու լինելուց, և շնայած պալլադյան և դասական ոճերին, հարատեկեց մինչև XX դարը:

Ճարտարապետ, գծանկարող, արվեստաբան՝ Առուստա Պյուտերի (1812—52) գեղագիտական հավատամքը ուղղված էր գեպի անգոն-նորմանական և իլ գը Ֆրանսի միջնադարյան արվեստը: Նա դաստիարակված լինելով կրոնապանթեիզմի և գերմանական իդեալիզմի գաղափարներով, իր կյանքի կոչումը համարեց նպաստել գոթական արվեստի վերածննդին:

Ֆրանսիական հեղափոխության շրջանում Պյուտեն հեռացել էր ծննդավայրից, ապաստանել Անգլիա, ուր գեռ պատանի՝ հոր հետ միասին նախագծել էին Ուինստոնի պալատի նոր կահույքը, Քովենթ Քարդնի բազմաթիվ բեմանկարները (1831): Անսաելի աշխատասեր, ուսումնատենչ, բազմաթիվ ձիրքերով օժտված Պյուտեն մեծաքանակ շննդերի, գծագրերի, գրքերի հեղինակ է, Կարճատե, բայց անհավատալիորեն բեղմնավոր իր կյանքում նա կառուցեց 65 եկեղեցի (թիրմինհամի և. Զելս և Գերբիի և. Մարիամ), մի քանի վանք, մենաստան և բազմաթիվ եկեղեցներ անգլիական գաղութներում: Մեծ ոգակությամբ նա ուսումնասիրեց միջնադարը և ենելով այդ արվեստի ձևական-էթիկական նախադրյալներից, հոգեկան սնունդ և նոր թափ հաղորդեց ոռմանտիզմին: Օքսֆորդի և Քեմբրիջի հոգեկոր հեղինակությունների հովանավորությամբ Պյուտեին հաջողվեց «Կոնտրաստ... սուր կամարի կամ

<sup>2</sup> E. Halbaum, Der Landschaftsgarten, 1927.

<sup>3</sup> A. W. Pugin, Contrasts; or a Parallel between the Architecture of the 15-th and 19-th centuries, London, 1836. A. W. Pugin, An Apology for the Revival of Christian Architecture, London, 1843.

քրիստոնեական ճարտարապետության ճշմարիտ սկզբունքներ» աշխատությունների ուժով մարտնչել հանուն ազգային ռահ՝ գոթականի ինքնատիպության և նրա ունեցած համընդհանուր նշանակության։ Ստեղծագործական աշխատանքի կատարելագործման հարցում Պյուտեն հատուկ նշանակություն էր տալիս մշակված գործի և տվյալ ճարտարապետի բարոյական էության, այսինքն, գեղագիտական-էթիկական հարաբերակցությանը։ Պայքարելով կարիերիզմի գեմ, նա ճարտարապետներին առաջարկում էր նմանվել միջնադարի վարպետներին և անձնուրացությամբ, հավատքով նվիրվել կողեկտիվ աշխատանքին, հետեւ լով միջնադարյան պատգամին՝ լինել ռառաջինը հավասարների մեջ։ (Primus inter pares):

Նոր գոթականը Անգլիայում տարածում գտավ, որով և բնորոշվեց վիկտորյան երկրորդ շրջանը<sup>4</sup>: Պաշտոնականացված այդ ոճի համաձայն, գոթական պիտի լինեն ոչ միայն եկեղեցիներն, այլև բնակելի շենքերը, նույնիսկ գործարանները՝ թեկուզ միայն սուր կամարների օգտագործման միջոցով։ Նման դրվագներին Պյուտեն ժամանակակից Զ. Զ. Սկոու (1811—1878) նոր շունչ հաղորդեց։ Գործարար, բայց միջակ բնդունակությունների տեր այդ ճարտարապետը կառուցեց յոթ հարյուրից ավել բազմատիպ շենքեր։

Ինչպես նապունյան շրջանում, այնպես էլ վիկտորյան Անգլիայում ոճի պաշտոնականացումը իր հետ բերեց կարիերիզմ և ճարտարապետական ձեփերի նենգափոխում։ Ընդհանրապես, երբ ձեզ մշակելիս հիմնական է դառնում միայն ազգայինի ավանդույթների շարունակման միտումը, առաջանում է կեղծիք, Այսօրինակ նախապաշարմունքը տարրալուծում է ձեզ և թեկուզ անշան շափով, բայց ձգուում է պահպանել ազգայինը կամ այլ կերպ սասած պետականացված ոճը։

Այսպես, թեև Սկոու իր կառուցած շենքերը պատեց գոթականի գունագեղություններով, սակայն շկարողացավ լնկալել ձերին ներհատուկ հիմնական միտքը՝ կառուցվածքը, ինչպես և լընկալեց արվեստի հանդեպ Պյուտեն ունեցած էթիկական գիրքորոշումը։

Միապետական դարաշրջանին հատուկ ըմբռնումների այս ոլորտում էկլեկտիզմը հանդես եկավ իրեւ արվեստի գնմոկրատացման ճանապարհ։ Նա նպաստեց բազմապիսի ոճերի գործածությանը՝ առանց պարտադրելու, սակայն, դրանցից որևէ մենքի միագիմի ընտրությունը<sup>5</sup>, Այս բազմաեղիղությունը արտացոլվեց և ճարտարապետի մեջ, համապատասխանելով վիկտորյան՝ գաղութատիրության, արդյունաբերության շրջանի ունեոր դասակարգի հասկացությանը, նոր հարուստների գերլասաւանին պատմական հիմնավորում տալու, նրանց հնագետ-կոլեկցիոնիստ հակումները բավարարելու պահանջներին։

<sup>4</sup> Անգլիական ճարտարապետությունը սկսած 1830-ից բաժանվել է հետևյալ շրջանների։ 1830—37 թթ.<sup>5</sup> Գուփիեմյան շրջան (Գովիելմ I V-ի անունով) և Վիկտորիա թագուհու երկարաժակալության շրջան, որը բաժանված է առաջին (1837—1850), երկրորդ (1850—1875) և երրորդ (1875—1901) փուլերի։

<sup>5</sup> Էկլեկտիզմը որպես պատմական երեսը շատ հին է. այն բնորոշ էր արեմենյան արվեստին, Հնդկաստանի հելլենիստական շրջանին, Խոպանիայի մողարար ճարտարապետությանը։

Նշենք նաև, որ ճարտարապետական հիմնական թեմաների պահպանումը, նրանց հետագա մշակումը բացասաւում է էկլեկտիզմի առաջացումը։ Այս հասկացությունը հարազատ է հայ ճարտարապետությանը։

Միակեզրության գործոնները այլ իմաստավորում ունեն. 1860-ի մոտ անցյալում բազմապետական, մշակութային տեսակետից բազմակենտրոն իտալիան և Գերմանիան հասան ազգային միավորման Արդ, ոճական միալեզրության հետապնդումը իտալիայում սկիզբ առավ Լոմբարդիայում և Վենետոյում (լուսավորականության կենտրոններ), իսկ Գերմանիայում՝ Պրուսիայում: Հարավում գործականը, ոոմանականը և դասականը բաժանվեցին չորս ազգերի միջև և ստացան ազգային ոճի նշանակություն:

Ճարտարապետությունը ստեղծում է ժողովուրդը, իսկ իշխանությունը ձգտում է ոճականացնել իր գետքը: Պատկերելով աշխարհիկ կամ հոգերո իշխանությունների գաղափարական կերտվածքը, ճարտարապետությունը ներկայանում է որպես մոնումենտալի լիարժեք հասկացություն: Ճարտարապետությունը որպես հուշարձան զաղափարը առաջացավ լուսավորականների դասական արվեստին արված մեկնաբանությունից և հատկապես ֆրանսիական հեղափոխության առաջին սերնդին պատկանող է. և. և. Բուլլեի (1728—1799) և իր աշակերտի՝ Ժ. Ն. և. Դյուրանի տեսությունից:

Բուլլեն ժխտում է «Ճարտարապետությունը կառուցելու արվեստ է» ափորիզմը և հանգում այն եպրակացության, որ ճարտարապետական լեզուն պետք է խորհրդանշական լինի: Այս առումով ձեզ ճշմարիտ է այն գեպրում, երբ կառուցված է համաշափության և ներդաշնակության կանոններով:

Բուլլեի գեղագիտությունը հիմնվում էր սիմետրիայի օրինաչափությունների վրա: Նրա հասկացությամբ, երկրաշափականորեն հաստատված բնություն-ձեկ կառուցվածքային համակարգը կարող է ստանալ ճարտարապետական նշանակություն, եթե երկրաշափական պարզ ձեզ անպայմանորեն կրի որևէ գաղափար: Գաղափարականությունը ճարտարապետականորեն բնորոշելը տրամաբանության հստակ, բայց իր էությամբ խիստ արտահայտված ոռմանտիկ հասկացություն է: Իր տեսության և ֆիզիկական աշխարհի միջև ընդհանրություն հաստատող ամենակատարյալ ձեզ Բուլլեն համարում էր գունդը: Գնդաձեւ են նրա հանրահայտ նախագծերում՝ Փարիզի օպերայի շենքը (1780), Նյուտոնի գերեզմանը (1784):

XVII դարի արևմտյան եվրոպացու պատկերած աշխարհը կամայական էր, պարմենիդյան իմաստով ներդաշնակ, ապապատմական, նրա ստեղծագործ սկիզբը բազկացած էր էնտելեկիան կրող հավերժ էություններից: Ֆրանսիական հեղափոխությունը և ոոմանտիզմը հեղաշրջեցին պառնասյան այդ աշխարհը և խթանեցին բուռն զարգացման, հոսունության հավերժ ընթացքին մասնակից լինելու գիտակցության ու ուժին:

Աշխարհի նման պատկերին հարաբերված ճարտարապետական ձեզ ենթարկվեց ոոմանտիզմի հեղաշրջող ուժերին: Դրան հետևեց ձեզ զլատելու ձգտումը, որի ընթացքում զարգացավ եվրոպական էկլեկտիզմը:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Զարյան, Զեկ պահանջը ճարտարապետության մեջ, Հայկագեան՝ Հայագիւական Հանդես, հատ. Դ, Պէյրով, 1973:

<sup>7</sup> Զուտ գեղագիտական կամ գեղագիտագաղափարական իմաստավորմամբ, երկրաշափական պարզ ծավաներն այսօր էլ այժմեական են, օրինակ, Օսկար Նիմայերի կառուցված Բրազիլիայի եռանկյունաձև հրապարակի «երեք իշխանությունները»՝ որենսդրություն, զատավարություն և գործադիր իշխանություն խորհրդանշող հանրահայտ շենքերը, կամ Վլրչերս Ֆինլանդիայում կառուցված կիսագմբեթ, հողին հառած եկեղեցին. J-N-L. Durand. Précis des leçons d'architecture, Paris, 1802—05.

Ճարտարապետության մեջ ոռմանտիկական մոտեցման հիմնական դրույթներից մեկը հետևյալն է. հարկ է, որ մշակված շենքի հիմնական տարրերը թեկուղեւ ունական կիրառումների սահմաններում, բացահայտվեն գեղագիտական-էթիկական իմաստով: Գոթականը, օրինակ, որպես ձեփ մշակման փոխառյալ եղանակ կարող էր ստանալ ոռմանտիկական հայեցողությանը հատուկ իմաստալին նշանակություն:\*

Ճարտարապետական իմաստով ձեր ճշմարիտ է, իր ներդաշնակ է շինարարական տարրերի և կերպարային լուծումների համակարգումը: Ընդուում, ոռմանտիկների կործիքով ներդաշնակության կարելի է հասնել, եթե ստեղծագործողը օժտված է հավատքի ուժովով Պյուտերի կարծիքով, գոթականությունը՝ ներշնչումների այդ հիմնաղբյուրը, կրոնք էր, յուրատեսակ մի կաթոլիկություն: Զ. Ռասկինը (1819—1900) համակարծիք չէր Պյուտերի այս տեսակետին: Նրա համոզմամբ արվեստը չպետք է ընթանա կոռոնագեղադիմուական ուղիղով, այլ պետք է գնա դեպի իրականությունը: Մտեղագործությունը իր բովանդակությունը ստանում է ոչ թե կրոնքից, այլ հասարակարգի հակագիր իրագրությունների իրավականից: Ռասկինի համար հիմնականը արվեստի զործում արտահայտված գեղագիտական և էթիկականը ըմբռուումներն են:

Ֆրանսիայում և Իտալիայում ստացած տպավորությունների ազդեցությամբ, նա պանթեզմով մնված իր նկարչական հետաքրքրությունը ընդարձակեց կերպարային նկարչությամբ<sup>9</sup>, Պիզայում և Լուկայում նա հայտնաբերեց Տոսկանայի ոռմանտկան ճարտարապետությունը, իսկ Վենետիկում՝ բյուզանդականը: Դասականությամբ տարված արվեստաբանների կողմից արհմամարհված արվեստի նշանակալից այդ շրջանը, թեև նկարչականի առավել մանրամասն քննությամբ, բայց հանձին Ռասկինի, ունեցավ իր առաջին մեկնաբանը<sup>10</sup>:

Վկիտորյան պաշտոնական մշակություն և արդյունաբերության դարդացման մեջ Ռասկինը տեսնում էր արվեստի անկումը բնորոշող բոլոր նախադրյալները և որպես փրկարար միջոց առաջարկում էր միջնադարը՝ արվեստի առարկաների արտադրության և միջավայրի ներդաշնակության հասած այդ շրջանը:

Եթե Դիդրոյի համոզունքով ճաշակը հասարակարգի մշակութային միջավայրի աստիճանավորում է, ապա Ռասկինի համար միջավայրը՝ սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական այն իրողությունն է, ուր բովվում, զարգանում է ճաշակը և դրսերիզում է արվեստը: Այս առումով նկարչությունը, քանդակագործությունը և ճարտարապետությունը գեղագիտական-էթիկական (իմա՞ ճաշակի) դրվագի՝ արվեստի միասնացած գաղափարի տարրեր արտահայտություններն են: Ռասկինի համոզմամբ ճիշտ չէ հույների այն տեսակետը, ըստ որի բնությունը չպետք է վերցնել իր ամբողջությամբ, այլ պետք է ընտրություն կատարել և մտային արտապատճերներով՝ արտահայտել բնության կոնցեպտուալ միջուկը: Ռասկինի համար բնությունը գեղեցիկ է իր ամբողջությամբ, չկա գեղեցիկ և տգեղ, ձևավոր և տձե, այլ

\* A. Lindsay, Sketches of the History of Christian Art, London, 1847. A. Rio, De l'Art chrétien, Paris, 1855.

<sup>9</sup> J. Ruskin, Modern Painters, 4 vol. London, 1852.

<sup>10</sup> J. Ruskin, The Stones of Venice, London, 1852.

կա անհրաժեշտություն, որը պահանջում է բնական այդ արտահայտությունները վերաիմաստավորել այնպես, որ չխախտվի բնության ամբողջականությունը: Արվեստի ողջ պատմության<sup>11</sup> զարգացումը, ըստ Ռասկինի, ձգտում է դեպի ամբողջականություն, իսկ մարդը պետք է հասարակական կյանքում իրագործի այդ միասնությունը բնության օրինակով: Տարբեր տարրերի (կետ, մակերես, ծավալ, լուս և գույն) շաղկապումների համակարգերով Ռասկինը բացատրում էր արվեստի աստիճանական զարգացումը<sup>12</sup>: Դասական ճարտարապետությունից մեզ հասած փլատակների «վեհ լուսությունը» XVIII—XIX դր. եվրոպական միաբար մղում էր դեպի դասականություն: Միջնադարի միստիցիզմից հեռանալու, ոռմանտիկների հնթակայությունից պոկվելու և լուսավոր, հստակ ու ներդաշնակ ձևերի արվեստին հասնելու նպատակով՝ Վինկելմանը, Լեսսինը, Գյոթեն, ֆրանսիացի Էնցիլուպեդիստները, նապուլիոնյան շրջանի արվեստագետները, ժխտում էին միջնադարը ու ձգտում վերականգնել հոմա-հումնեական արվեստների դասական ոգին: Անգլիան, որ պալատիանների հետ սկիզբ էր դրել նոր դասականությանը, վիկտորյան շրջանում հառել էր գոթականին որպես արվեստների, հասարակարգի և հավատքի միասնությունը արտահայտող հասկացության: Նույն ճանապարհով էին ընթանում գերմանացի ոռմանտիկ կաթոլիկները (նովալիս):

Գոթականի վերակարծը, որ պատմական առումով վերապրում (ուկիւլ) էր, Անգլիայում ստացավ վերականգնման (ոեստորացիոն) նշանակություն, ի հայտ բերելով մի նուրբ տարրերություն, որի արմատները հարկ է փնտրել աղքային գիտակցության կամ ինքնորոշման հարցում:

Ռասկինը զուտ անզիմական մշակութից սերված անձնավորություն է: Նրա թողած ազգեցությունը նվրոպայում մեծ էր: Նա չկառուցեց արվեստի ամբողջական տեսություն, բայց «ճշմարտության ճրագը ձեռքին», ոգևորությամբ պայքարեց արվեստի համար և գտավ, որ նրա էությունը «կարելի է հայտնաբերել ներքնապես հաղորդվելով բնության հետ», իսկ բնությունից մինք ստանում ենք համակրանք և հարկ է մեր հերթին բնությանը համակրանք հատուցելու: Ռասկինի կարծիքով, ստեղծագործողի նպատակը «դատելը, պատճառաբանելը կամ ճանաչելը չէ, այլ տեսնելը և զգալը», որովհետև «անհունը, հիմաքանչը՝ այն, ինչ մարդը կարող է ստուգել առանց հասկանալու, սիրել առանց սահմանելու, կազմում է արվեստի ամբողջ նպատակը»: Արվեստը արտահայտվում է գծագրության, նկարչության միջոցով, բայց արտահայտվում է ոչ թե այդ արվեստին հատուկ հնարքներով այլ սահրուկանությունով»:

Արվեստին խորապես հավատացող մի անձնավորություն, որպիսին էր Ռասկինը, լրավարարվեց քննական և պատմական աշխատություններով: Նա առանց ձեռնամուկ լինելու հասարակական-տնտեսական կազմակերպու-

<sup>11</sup> J. Ruskin, The Seven Lamps of Architecture, London, 1848.

<sup>12</sup> Նշենք Ռասկինի արվեստի զարգացման աստիճանավորումների սխնդան.

ա) Դիմ (արթմիտիկ արվեստ):

բ) Գիծ և լուս (հունական կերամիկա):

գ) Գիծ և գույն (գրիգական ապակեներ):

դ) Սավալ և լուս (լուսարդող զա Վինչի և Հետեռդիներ):

ե) Սավալ, լուս, գույն (Տիցիան և դավրոց):

զ) Սավալ և գույն (Ջիորջոնե և դավրոց):

թյունների գիտական ուսումնասիրմանը, ելնելով «սիրո սկզբունքներից» և հուզ դնելով մարդու անձնվեր համագործակցության վրա, իր իսկ միջոցներով հիմնեց Սենտ Ջիորջ Գիլդ արտադրական-տնտեսական կոռպերատիվը (1871), ուր միջնադարի վարպետների օրինակով փորձեց ստեղծել արվեստի ձեռագործ առարկաների արտադրություն։ Մեքենայացված արդյունաբերության հակառակ ուղղությամբ ընթացող այդ կազմակերպությունը երեք տարի անց կազմակերպությունը, լուծված թողնելով կարենոր այն խնդիրը, թե արվեստի առարկան ի վերջո ձեռագործ աշխատանքն է. թե՝ մեքենայով արտադրված<sup>13</sup>։

Թասկինը խորապես համոզված էր, որ ուեքենան քանդել է հասարակության հավասարակշռված կարգը։ Նա գտնում էր, որ արվեստի և արդյունաբերության միջև հաշտություն չի կարող լինել և քանի որ մարդու ստեղծած ուեքենայացված գործունեությունը բացասական է, ապա հարկ է վերադառնալ բնականին։ Այս իրողությանը իրեն հակամիջոց և իդեալ նեասկինը առաջարկում էր միջնադարը։ Արվեստը, ըստ Թասկինի, տվյալ ժողովրդի քաղաքակրթության մակարդակի ցուցանիշն է. աշխատանքը, հարստությունը և մշակութային արժեքները զեկավարվում և զարգանում են հասարակական-տնտեսական դրվագքին հատուկ օրինաշափություններով։ Նեասկինի կարծիքով, սույն հիմունքների գիտակցումը պետք է կազմեն արվեստագետի բարոյական դիրքորոշման էությունը, նրա գեղագիտական-էթիկական հայեցողությունների հիմնաբարը։

Թասկինի ստեղծած տեսական-քննադատական մտքերի անհիջական, տաղանդավոր ժառանգորդը եղավ Ուիլյամ Մորրիսը (1834—1896)։

Մորրիսի ամրող գործունեությունը ուղղված էր արվեստի ճանապարհով ժողովրդի կենցաղը ազնվացնելու գործին։ Այդ իմաստով նա ոռմանափիկ էր, միաժամանակ, սակայն, մարմնավորում էր արվեստագետ-հասարակական գործի այն կերպարը, որը ծնունդ առավ փորձնական պողիտիվիզմի՝ զուտ անգիտական այդ հասկացության, ոլորտում։ Ըստ այդ հասկացության, մարդու և արվեստի պատճառական կապերը արհեստավորին կամ արվեստագետին ստիպում են առարկայի կերպարը մշակել ոչ թե նրա ուրույն նշանակության, այլ մշտկած առարկայի կյանքը բնորոշող՝ հասարակական իրաստով։ Սակայն ստեղծագործությանը հասարակական իրաստ կարելի է հաղորդել միայն ձեռք բերված փորձնական իմացություններով։ Թասկինը պատկերավոր ձեռվ նշում էր, որ արվեստի գործը նման է այս բերդի լողացող սառցալեռան։ «Մենք, —գրում է նա, —տեսնում ենք ժողի մակերեսութից դուրս ծավալվող նրա մի հատվածը, իսկ սառցալեռը հպատակում է ժողի խորքը գնացող հսկա հատվածին։ Արվեստի ամենափոքը, ինչպես և ամենամեծ գործի խորքում գոյություն ունի մարդու պահանջները արտացոլող կյանքի նույն իրողությունը»։

Թասկինի կարծիքով, ճարտարապետության բնագավառում իրականությունը վերարտադրելը նշանակում է խուսափել «ճարտարապետական երեք կեղծիքներից»։ Դրանք են՝ շենքը կրող համակարգի քողարկում, շինանյութերի կեղծում և գեղազարդական տարրերի մեքենայացված մշակում, իսկ կեղծիքը ձևի և կառուցվածքի միջև առկա անհամաձայնության արդասիք

<sup>13</sup> Այդ խնդրի լուծումը տրվելու էր XX դարի առաջին տասնամյակում, Գերմանիայում։ J. Ruskin, *Fors Clavigera*, London, 1874.

Է: Այս վիճակից դուրս գալու ելքը այն էր, որ արվեստագետը պետք է ձեւակեր բնության օրենքներին և օրգանական միասնությամբ կերտեր ձեռն ու նրա բաղկացուցիչ բոլոր տարրերը: Այս միտքը այլևս ոչի ըմբռնում չէր, այլ ձեզ իրականության հետ կապելու համոզվունք<sup>14</sup>: Ռասկինը, Մորրիսը, Կոլեն, ձերին տալով հասարակական նշանակություն, կարողացան հաղթահարել ոճական հասկացությունը, մի իրողություն, որին ձարտարապետական երը հասան միայն մեր դարի տասական թվականներին:

Մորրիսի կարծիքով, ձարտարապետության նկատմամբ պահանջները մասնագետներին հանձնելը անհիմաստ է, որովհետև նրանք կառուցում են տները, ենելով իրենց տեսակետներից, իսկ ընակիշը, մտնելով նորակառուց իր տունը, պետք է սովորի, թե ինչպես է կազմակերպված իր տնաշխին կյանքը և ինչպես է ինքը ապրելու այդ տան մեջ: Հետևաբար, Մորրիսի խորհրդով, հարկ է մասնագետների և բնակիչների մասնակցությունը, ամեն մեկնե՞ ոփով ու իր ձեռքերովվէ: Արվեստի գործը ծնվում է իրականությունից՝ արտահայտելու համար այն միասնությունը, որին կարող է հասնել մարդը հասարակության և կոլեկտիվ աշխատանքի մասնապահով:

Արվեստագետ Մորրիսի նկարած կտավները, պապկիները, գրերը, մանրանկարները, գորգերը թանգարանային առարկաներ են, դրանցից մի քանիսը պահպանվում են «Վիկտորյա և Ալբերտ» թանգարանում, իսկ թողած ուսումնասիրությունները հավաքված են 24 հատորներում:

Քաղաքական, գաղափարական և արվեստի համար տարած պայմանագործությունը մարդու աշխատանքի միջազգով մշակությունը կապել կանքին և եթե իր հետապնդած սոցիալիզմը հանդեց ուսումնայի, ապա մեծ աշխատողի ստեղծագործ գործունեւթյան բարոյական օրինակը և այն իդեալը, ըստ որի արվեստը ստեղծում է «ժողովրդով՝ ժողովրդի համար», պահպանում են իրենց այժմեականությունը<sup>15</sup>:

Բնության և մարդու փոխապակցությունը արվեստի հիմնական խընդիրից է: Ժամանակակից արվեստում բնության ըմբռնումը ձգտում է Վերածննդի մարդակենարոն հայեցազրությունը՝ մինչև անգլիական պանթեզմը, ասել է թե մարդու գերիշխանությունից մինչև բնության գերիշխանությունը: XVII դ. կը նոտրը կառուցում է Վերսայի այգիները և ստեղծում մարդու և բնության կապը արտահայտող հավասարակշռված կերպար:

Այգիների ճարտարապետությունը եղավ ազատ տարածությունը բարեկարգելու և բնակավայրերի սահմաններում ներդրավելու քայլ: Դեպի բնությունը շարժվելու միտումը եվրոպայում արտահայտվեց XVIII—XIX դարերում: Այդ շրջանում ստեղծվեցին այդիների գեղեցկագույն օրինակներ: Քաղաքների գլխավոր ուղիներում բնությունը, թեկուզեւ ծառերի շարքերով, մտավ փողոց, և ստեղծվեցին պուրակները XIX դ. երկրորդ կեսի ըմբռնմամբ դեմոկրատիան առաջարեց բնության և մարդու միջև հաստատվելիք նոր բնտերություն, որը, սակայն, կորիզմից հետո հեղաշրջվեց, երբ բնությանը փոխարինելու հկավ արհեստական միջավայրը<sup>16</sup>:

<sup>14</sup> S. Langè, Problemi di storiografia e progettazione architettonica, Milano, 1969, p. 14—19.

<sup>15</sup> W. Morris, Collected Works, 24 v London, 1910—14.

<sup>16</sup> Այս ձգտումը փնտու գերիշխող է դառնում այսօրվա քաղաքաշինության մեջ: Տե՛ս A. e P. Smithson, Struttura urbana, Bologna, 1971.

Եթե Վերածնունդն արտահայտվեց արվեստի միջոցով, իսկ լուսավորականությունը ձգտեց դրսերվել փիլիսոփայության ուղիով, ապա ոռմանտիզմը իր հերթին փորձեց հասնել այդ երկու հայեցողությունների հավասարակշռման՝ մարդկային զգացմունքների ոլորտում։ Այդ իմաստով Յ. Շելինգի գեղադիտական իդեալիզմը որոշ ազդեցություն թողեց արվեստի պատմության զարգացման գործում։

Եելինգի համար արվեստը իմացություն է, փիլիսոփայական անսահման ուսմունք, որին պետք է ձգտել շարունակ ստեղծագործելով։ Արվեստի գործն անսահման արտահայտող սահմանում է, հետևաբար ստեղծագործությունը բնությունը, Եելինգի խոսքերով, այդ «քարացած իմացությունը» հայտնաբերելու անընդհատ ձգտում է։

Նոր գասականները էվոլյուցիոնիստներ էին։ Ելնելով գեղեցիկի գաղափարից, նրանք մասնատում էին արվեստի պատմությունը և իդեալ չափանիշի հիմունքներով արժեքների աստիճանավորված կարգ էին հաստատում<sup>17</sup>, նման ըմբռնման համաձայն հունական դասական և իուլական Վերածնունդի արվեստները համարվում էին արվեստի բարձրագույն արտահայտությունը, մինչդեռ միջնադարը և բարոկկոն մութ շրջաններ էին, որովհետեւ արվեստը շնորհել էր ճիշտ ճանապարհից։

Յ. Շելինգը դասականների բացարձակ գեղեցիկի գաղափարը փոխարինեց անսահմանի իմացության գաղափարով, իսկ արվեստի պատմության շրջափուլերը՝ իմացության ձգտման անընդհատությամբ։ Դինամիզմի նման հասկացությամբ Եելինգը փշրեց կլասիցիստների գեղագիտության իշխանությունը ու պատմաբանների առաջ բացեց միջնադարյան արվեստների, ինչպես և նախնադարյան շրջանների, արևելյան ժողովուրդների ստեղծած մշակույթի այնքան հարուստ աշխարհը<sup>18</sup>։

1830-ի և 1848-ի հեղափոխություններում ձեռք բերված քաղաքական ազատության մինուրատում լուսավորականությունն ու ոռմանտիզմը կողմնորոշեցին XIX դ. տեսական-իմացական մորթի հիմնական ընթացքը։ Ճարտարապետական առումով տվյալ ուղղություններից առաջինին բնորոշ եղան ռացիոնալիզմը և տեխնիկան, երկրորդին՝ արվեստին մշտնշենական կենդանություն հաղորդող էներգիան։

Իսկ ինչպես էր մեկնաբանվում ոռմանտիզմը։ Այդ հարցին Յ. Բոդերը տալիս է հետևյալ պատասխանը. «Ով ասում է ոռմանտիզմ՝ ասում է արդի արվեստ, այսինքն մտերմություն, ոգմորություն, գույն, արվեստի բոլոր միջոցներով արտահայտված ձգտում դևալի անհունը»<sup>19</sup>։ Բոդերի համար արվեստը զգայնություն է, ամենալայն առումով՝ ազատություն։ Նա գտնում էր, որ արվեստագետը բացարձակապես պահանջ չունի ինչ-որ փիլիսոփայական հասկացությունից ներշնչվելու։ Այնինչ օգյուտ Կոնտը այդ շրջանում հրապարակած իր «Փիլիսոփայության դասընթացներ» և «Խոսք պողիտիվ իմացության մասին» գրեթեով հաստատում էր հակառակը։ Կոնտի կարծիքով, բնական գիտությունները իրականությունը քննելով, հաստատում են

17 Իդեալ գեղեցկության չափանիշը վերկելանի համար պատկերված է Բելկեդերյան Ապոլոնի արձանով, ևսախնդի համար՝ լառոկոնի խմբաքանակով։

18 Ստրասբուրգի ճենեցեցուն նվիրված Գյուլեթի ուսումնասիրությունը առաջին հավաստումն է, որտեղից սկիզբ է առնում միջնադարյան արվեստի վերագնահատումը։

19 Charles Baudelaire, Oeuvres complètes, Paris, 1868—80.

օրենքներ, որոնց հիմունքներով փիլիսոփայությունը կառուցում է ընդհանուրացված համակարգ, որի ոլորտում հնարավոր է զարգացնել արվեստը:

Ուժանատիկների հասկացությունը, ինչպես նշնցինք, այլ էր. ըստ նրանց բնության հետ կապը պետք է լինի անմիջական՝ արվեստի զգայնությամբ հաստատված և գիտության միջամտություններից զերծ: Ճարտարապետության մեջ համեմատ գեղեցիկին, ըստ նոր դասականների և ոռմանտիկների, նշանակում էր ընթանալ անցյալի արվեստի ճանապարհով: Մինչդեռ այդ նույն շրջանում առաջանում էր նոր տեխնիկա, որը հանավորում էր շինարարական արվեստի արդեն լայն բացված, ինքնուրույն ուղի: 1801-ին անգլիացի ճարտարապետ Տելֆորը ներկայացրել էր Լոնդոնի հակա կամուրջի նախագիծը, Փարիզում կառուցվել էին Մալբենի (1824), Լոնդոնում՝ Հիջերֆորի (1835) շուկաների լայնաթոփիշ ծածկերը, կարուստի ընկեր Հ. Հորոն առաջարկում էր մետաղյա հանդուգն կառուցվները<sup>20</sup>:

Այդ շրջանում Արվեստի ակադեմիայի պահպանողական դիրքերում հնացած տեսարաններն առաջարկում էին նոր տեխնիկան ձևայնորեն կաղապարել անցյալի արվեստի մեջ: Էկլեկտիզմի այդ խառն շրջանում արդյունաբերությունը գեպի արվեստ ուղղելու ծառումը կապված էր ճարտարապետական ձևերի տարրակուման հետո: Այս երեսույթը չի կարելի պայմանավորել օգտագործման նպատակների կամ ձևերի առաջացման հատուկ գործոններով: Պարզենք այս միտքը. բրոնզե և չուփունե ճակտոններ, խոյակներ, տրիդիֆներ էին տեղադրվում մամուների, շոգեքարշերի, մերենաների և կահույքների վրա, իսկ պատրաստված զիպսը օգտագործում էին որպես ներքին պատերի հարդարանք:

Ճարտարապետական ձևի տարբաղադրված տարրերից գեղազարդումները հորինելու փորձից բխեց մի այլ երեսույթ՝ մետաղաշեն, ապակեապատշերմոցների, տաղավարների առաջացումը: Կլիմայական պայմաններում շերմոցներում պահպանված էկղոտիկ բույսերը ցուցարաններում մեկուսացված ափրիկյան կամ ասիսկան բնության հատվածներ են: Մինչդեռ հակա տաղավարներում սրբէ երկրի արտադրած, աշխարհում տարածում գտած ապրանքների ցուցադրումը եկլոպապու հնարամտության, նրա գյուտարար սնակությունների, տարրեր ժողովուրդներին որակյալ ապրանքներով ապահովելու գիտակցման արտահայտությունն էր: Արհեստականորեն միջազգային կենտրոն ստեղծելու նման միջավայրում մարդը կարող էր իրեն զգալ կարծես աշխարհի կենտրոնում կանգնած անհատ: Ֆ. Լը Պլեյը 1867-ին կառուցեց Փարիզի միջազգային ցուցահանդեսի շենքը, կենտրոնից զեպի դուրս աճող, ալիքածե, ութ օղակածե տաղավարների հաջորդականությամբ: Կենտրոնը և բոլոր ուղղություններով տարածվելը արտահայտում էին պետականության ուժը և անհատի նախաձեռնությունը<sup>21</sup>:

Շրջանակը, գոմնդը և բուրգը տվյալ հասկացությանը հարազատ երկրաշափական ձևեր են, որոնց վերահմաստավորումը (ուացիոնալիզմի առումով) կազմավորվել է Բուլլեյի ու հատկապես Լոռույի տեսությամբ և տարածում գտնել նախագծերի միջոցով: Լոռույի տեսության հիմնական երեք դրույթները հստեյալն են. Երկրաշափական և ճարտարապետական ձևերը իրար համապատասխան են, ճարտարապետական ձեզ «խոսուն է»

<sup>20</sup> Ֆրանսիայում «երկաթի ճարտարապետության» ստեղծողները եղան Ա. Պոլանսոն և Հ. Հորոն:

<sup>21</sup> G. Piccinato, L'Architettura contemporanea in Francia, 1965, pp. 12—16.

(architecture parlante), այսինքն շենքի կերպարը դրսէորում է իր պատղամը և վերջապես՝ մոնումենտալ կերպարը հնարավոր է կիրառել բոլոր տիպի շենքերում։ Արդյունաբերութիւնը իր նոր հնարավորություններով նպաստեց կրուզի գրութիւնների ընդարձակմանը, ճարտարապետական մոնումենտալ հասկացությունը վերածեց գաղութատիրական կապիտալիզմի հզորությանը, նրա համընդհանուր արժեքը արտահայտող ձևային միջոցի։ Քաղաքական և տնտեսական սույն դրվագին նվիրված ամենամեծ հուշարձանը կառուցեց Գ. Էյֆելը 1889-ին՝ իր անոնքը կրող փարփական աշտարակով։

XIX դարի երկրորդ կեսին շատ ճարտարապետներ մշակեցին պողպատյա հանդուզն կառուցվածքներ նրանք էական համարեցին ոչ թե պատրաստի ձևը ինքնին, այլ կառուցի վրա ազդող ուժերի, նրանց հակադրվող-կրող համակարգի սահմաններում առաջացած նոր ուժերի, դրանք հավասարակշռելու, նյութի և ուժերի փոխկապակցությունները սահմանելու հապուրիչ խնդիրները։ Տիպարանական առումով նրանք նորություններ շառաչարկեցին, ցուցահանդեսային այդ շենքերը կրկնեցին հինգ կամ երեք նավերի բաժանման կենարունից վեր բարձրացող, բրգաձև, ընդերկայնական դահլիճների բազիթիկան տիպը։

Ճարտարագետների առաջ դրված տեխնիկական խնդիրը եղավ միշտ ավելի հանդուզն, լայնաթոփից ծածկեր հորինելը։ Պակստոնի հանրահայտ շենքում (1851) կենտրոնական դահլիճը հենակից հենակ ունի 22 մետր լայնություն, 1885-ին Փարիզում կառուցված շենքում դահլիճի թոփշքը հասնում էր 48 մետր լայնության, իսկ 1889-ին Ֆ. Դյուֆերի և Կոնտամենի կառուցած Մեքենաների ցուցահանդեսի շենքում կենտրոնական տարածության ծածկը հասնում էր 115 մ թոփշք ունեցող լայնության<sup>22</sup>։

Մածկի տարրեր լուծումներն ունեն երկու նշանակություն, որոնք կարելի է ձեւակերպել հետեւյալ կերպ, տեխնիկայի առումով ծածկը ստանում է միշտ ավելի ընդարձակ տարածություններ սահմանելու նշանակություն, ճարտարապետական իմաստով, սակայն, ծածկն ունի տարածությունը կերպարելու, իր սահմաններում անսահմանը արտահայտելու իմաստ։ Զեր կենդանի է, երբ ներդաշնակորեն կապված է դրսից և ներսից ազդող ուժերին, դրանցից առաջնը միշտավայրն է, շրջապատը, իսկ երկրորդը՝ գործառնությունը և պատուակությունը։

Արժեքների հավասարակշռման ահա այս ոլորտում է գործել ֆրանսիացի ճարտարապետ Հանրի Լաբրուտը (1801—1875): 1830-ին վերադառնալով Հռոմից, նա հիմնեց Փարիզում հանրահայտ դարձած արվեստանոց-դրապրոցը և որպես ստեղծագործող անհատ, ձգտեց իրար համագորել շինարարական նոր տեխնիկան (ուցինալը) և ոճականը (ոռմանտիկը)<sup>23</sup> ստեղծելով մետաղյա կառուցվածքով և քարակերտ պատերով իրականացվող շենքեր։ Այսպես, անցյալ դարի կեսերին լաբրուտը սկիզբ դրեց օրգանական տեխնիցիզմի և նոր դասականի մի համատեղման, որը հետագայում մեծ ազդեցություն էր թողնելու թրյուաելի և Ամստերդամի ճարտարապետական դպրոցների վրա։ Լաբրուտը իր տեսակետը հիմնավորում էր հետեւյալ կերպ։ շենքի կայունությունը, հետեւաբար կառուցվածքի ընտրությունը կախված է շինանյութերի ընտրությունից և ոչ թե կրող տարրերի ծավալից, գեղազարդումը

<sup>22</sup> S. Giedion, Bauen in Frankreich, Eisen, Eisenbeton, Leipzig-Berlin, 1928, p. 42.  
P. Beaver, The Crystal Palace, London, 1970.

պետք է համապատասխանի տվյալ շինանյութի բնույթին և լինի հարազատ շենքի ընդհանուր կերպարին<sup>23</sup>,

Լաբրուստը կառուցել է ընդամենը սրկու շենք՝ Փարիզի Սենտ-Ժնկին (1843—1850) և Ազգային գրադարանները (1858—1868)<sup>24</sup>:

Սենտ-Ժնկին գրադարանի ծավալը պարփակում է ներքին ամրող տարածությունը գրավող միակ դաշտին: Մեկը հինգի հարաբերություններ ունեցող քառանկյունի դաշտին ազատ թողնելու նպատակով գրավաճոցները տեղադրված են պատերի երկայնքով՝ երկարկ շարքով: Պալատական գրադարաններին հատուկ գասավորմանը համաձայն, ընթերցասեղանների շարքը կրկնում է ներքին տարածության քառանկյունի պատկերը: Խիստ սիմետրիկ այդ կարգը տարածական առումով շեշտակիորեն ընդգծված է երկայնական ուղղությամբ ընթացող, ներքին տարածությունը երկու հավասար հատվածների բաժանող, հավասարաքայլ սյունաշարքով: Սյուններից դեպի եղրապատերը ձգված են թաղակիր ընդլայնական կամարներ, որոնց միջև բացվում են կամարակապ, մինչև դրավաճոցների բարձրությունը հասնող խոր լուսամուտներ:

Անցյալի տիրապետության հետ առնչվող հատակագծային նման լուծավումը հիշեցնում է Պետումի, այդպես կոչված, բազիլիկան (530 թ. մ.թ.ա.), ուր նասոս երկայնական առանցքով ձգվող ութ դորական սյունների շարքով քաժանված է երկու հատվածների, իսկ շենքի ծավալը ծածկված է մինչև պերիպտեր հասնող երկթեք տանիքով: Նշենք նաև, որ հունական տաճարները ընդհանրապես միանալ են կամ հսանավ, բացառություն են կազմում դիտարկվող Պետումի բազիլիկան և կակնոսի տաճարը, որոնք երկնավ հն:

Լաբրուստը եղել էր էկոլ-դե-Բոզարի ուսանող և արժանացել Հոռմի մհծ մրցանակին (1824): Նա քաշածանոթ էր Կամպանիայի, Սիցիլիայի հունական տաճարներին: Արդ ակադեմիական ձևական ըմբռումին համաձայն Լաբրուստը նախագծեց Սենտ-Ժնկինի գրադարանը՝ օրինակ ունինալով դորիական տաճարի երկնավ նասոս արխակի համակարգը, իսկ երկթեք ծածկը, ձևական նշանակություն ունեցող երկու թաղերը, ինչպես և կամարներն ու սյունները իրագործեց այս շրջանում տարածում գտած մետաղե կառուցվածքներով<sup>25</sup>: Դաշտին ամբողջությամբ առավ աղյուսաշար, արտաքուստ քարապատ պատերի մեջ, որոնց վրա հենեց ու ամրացրեց մետաղակապ թաղերը և կամարները: Տարբեր շինանյութերով իրականացված արտաքին և ներքին կառուցվածքները իրար հետ կապված են շենքի ընդհանուր համակարգը հաստատող գասական կանոնների օրինաշափությունների հիմունքներով: Տեսողական և զգայական տպավորությունների առումով, շենքը կերպարող գործոնների (քար, մետաղ, գեղազարդում) նման հորինվածքը ի ցույց է դնում ներքին տարածությունը և արտաքին շրջապատը ձևավորող ճաշակի այն շափակված կարգը, որին ենթարկված է ճարտարապետական ձևը:

Փարիզի ազգային գրադարանը բաղկացած է ընթերցարանից և գրապահոցից: Երկու դաշտիների բարձրությունը նույնն է, այն տարբերությամբ,

<sup>23</sup> Th. Labrouste, Souvenir d'Henri Labrouste, Paris, 1928.

<sup>24</sup> Վերջինս ավարտել են լաբրուստի աշակերտները՝ նրա մահից հետո:

<sup>25</sup> 1853-ին կառուցվեց Փարիզի կենտրոնական Սահմանական շուկան՝ կե Հալ Սանտրալ Հալ կառուցվը մետաղից էր և ապակեպատ նախագծել էր Վ. Բալտարը: Հալը այսօր գոյություն չունի:

միայն, որ գրապահոցը կառուցված է շորս հարկ իրար վրա տեղադրված դրբերի շարահարկերով: Գրապահոցի ամբողջ կահուզքը մետաղյա է: Երկթեր, ապակեպատ տանիքից լուսը նիրթափանցում է գրապահոցի բալոր համաձաները: Ընթերցարանի քառանկյունի դահլիճը, գրապահոցի ուղղությամբ, վերջանում է արսիդով, նրա կենտրոնում տեղադրված ապակե պատր իրար հաղորդակից է դարձնում երկու դահլիճները: Ընթերցարանը շուգունի սյուներով բաժանված է ինը քառակուսի ենթահատվածների, դասանցից ամեն մեկը ծածկված է առագաստած գմբեթով, որի կենտրոնում բացված ջրանակածն լուսամուտից ներս է խուժում բնական լուսը: Դահլիճը, ինչպես և գրապահոցը, լուսամուտ չունեն, լուսավորությունը առաստաղից է:<sup>26</sup> Լուսավորված գմբեթը ստեղծում է ներքին տարածությունը դեպի լուսատու աղբյուրը ընդէայնելու տպավորություն: Նման հակադրվում է ընդհանուր հորինվածքի դասական խստությանը: Կամի այլ խնդիր. անցյալի և հատկապես արևելյան մոնումենտալ շենքերում լուսամուտների քանակը չափավոր է, որովհետեւ արևելյան հասկացությամբ տարածությունը կերպարող նյութը պետք է պահպանի իր միասնությունը: Խսկ լուսամուտը, այս առումով, առաջացնում է ընդհանուրը, հատկապես այն պարագայում, երբ տեղադրված է դուստ գործառնական նպատակով: Գլխավոր առանցքների ուղղությամբ և հատկապես ուղղածիք և ծավալի կենտրոնում բացված լուսատու աղբյուրը շեշտում է շենքի մոնումենտալիզմը<sup>27</sup>: Լաբրուստին կառելի է քննադատել այն առումով, որ նա մոնումենտալ ճարտարապետությանը վերաբերող հարցերին տվեց զուա գործառնական նշանակություն: Խսկ եթե, ելնենք գործառնության նկատառումներից, այդ պարագայում շեն արդարացվում Ազգային գրադարանի ընթերցարանում կառուցված գմբեթները և ոչ էլ դրանց լուսանցուց բացվածքները: Ճարտարապետը, անշուշտ, աշխատել է իր շրջանին հատուկ արվեստի հասկացությամբ: Սակայն այդ նույն շրջանում արդեն հայտարարում էր նկարչական ուսալիզմը, Դոմյեն հեգնանք էր ուղղուա քաղենիների հասցեին, Հ. Հորոն տեսականորեն նախապատրստատում էր պողպատյա կառուցվածքների նոր, ավելի հանդուզն համակարգեր, իսկ 1848-ի հեղափոխությունը արվեստի, գիտության և քաղաքականության միասնացման հույսեր էր ներշնչում: Լաբրուստը շունեցավ նման միասնություն իրականացնողի հանդիպությունը: Նրա նախագծերով իրագործված Փարիզի Սենտ-Ժնիվեի և հատկապես Ազգային գրադարանի շենքերում, Լաբրուստը դիմեց երկլեզու արտահայտամիջոցների: Արդի տեխնիկայով նա կառուցեց գրապահոցը, խսկ իսլամական ճարտարապետությունը՝ հատուկ գմբեթավոր, առանձին ծավալների շարքով տարածությունը կերպարելու հասկացության հիմունքներով հորինեց գրադարանի գլխավոր դահլիճը:

Ծինքելը, Սեմպերը և մասամբ Լաբրուստը առաջ քաշեցին ճարտարապետության գլխավոր հարցերից մեկը՝ կրող համակարգի և կերպարի միաս-

<sup>26</sup> Առագաստային լուսավորությունը կիրառել է Ա. Աւլոտոն, իր նախագծած Վիֆուրիի գրադարանի համար, այն տարբերությամբ, սակայն, որ լուսը առաստաղից ներս է թափանցում պանաձն, լուսատու բացվածքներից: Դանաձն կայ քառանկյունի լուսատու հորին միշտով մեծ դահլիճներ լուսավորելու եղանակը օգտագործել էին լը Կորրուպիեն և Քենցո Թանգնեն:

<sup>27</sup> S. Giedion, Spazio, tempo ed architettura, Milano, 1954, pp. 208—219.

նության հարցը: Ընդ որում միասնություն ասելով, առավել շափով հասկացվում էր կերպար, իսկ կերպարին տրվում էր ոռական իմաստ<sup>28</sup>:

Որքան էլ ճարտարապետական ձևի մտավոր պատկերը միասնական լինի, սակայն, եթե շնչերի կրող կառուցվածքը անջատված է կերպարից, միասնությունը չի իրականացվի: Իսկ երկատումը սկիզբ առավ այն ժամանակ, երբ ոճը՝ գերազանցորեն միասնական այդ երեւութը, ոճականացվէց, դարձավ անցյալի պատրանք, իսկ լավագույն իմաստով՝ կառուցվածքային հասկացություն: Ինչպես տեսանք, իբրև ներկան Սևմակերը ժամանակակից ճարտարապետության համար առաջարկեց վերածննդյան կառուցվածքը, իսկ Պյուտեն՝ գոթական ճարտարապետությանը հատուկ կառուցվածքային ըմբռումումը:

Վերջինիս ճանապարհով ընթացավ ճարտարապետ, գրող, հնագետ Վիլել-լը-Դյուն (1814—1879): Իր կյանքի նշանակալից մասը նա նվիրեց գոթական շենքերի, միջնադարի մոնումենտալ համակառուցյաների վերակաղմությանը, հետեւլով, սակայն, ոչ թե այսօրվա հասկացությամբ գիտական վերակաղմությանը, այլ «մեկնարանմահ» եղանակին: Ռացիոնալ ըմբռումով Վիլել-լը-Դյուն մեկնարանեց ու ընդհանրացրեց գոթական ճարտարապետության շինարարական եղանակն ու տեխնիկան, դեղուկտիվ եղանակով վերլուծության ենթարկեց ճարտարապետության մյուս ոճերը և հետևողականորեն նվաճեց արվեստի տեսության բնագավառը:

1833-ին Ֆրանսիայի հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ՝ գրող Պրոսպե Մերիմեի առաջարկով Վիլել-լը-Դյուն ուսումնասիրում է Ֆրանսիայի պատմական շենքերն ու իր իսկ կազմած ցուցակի համաձայն և Պ. Մերիմեի կարգադրությամբ, 1840-ին ձեռնամուկի է լինում միջնադարյան շենքերը վերակաղմելու մեծածավալ գործին: Մինչև 1853 թ. նա վերակաղմում է Նարբոնի, Ամիենի, Շարֆրի, Մանի, Ռեյմսի, Փարիզի կաթողիկեները, ի վերջո՝ Կարկասոնի միջնադարյան ամբողջ քաղաքը:

Հավաքած նյութերով, Վիլել-լը-Դյուն կազմեց XI—XVI դդ. ֆրանսիական ճարտարապետության բացատրական բառարանը<sup>29</sup>:

Նոր դասականությունը առաջարկեց արվեստի համընդհանուր նշանակություն ունեցող սկզբունքներ: Դրանցից հիմնականը՝ իդեալ գեղեցիկի գաղափարը, ստացավ վերապատմական նշանակություն և մեծ ճանաշում գտավ հատկապես Վինկելմանի տեսության շնորհիվ<sup>30</sup>: Ամբողջ խնդիրը, սակայն, այն էր, որ հոնական դասական արվեստի ուսումնասիրությունից քաղած, ասենք, ներդաշնակության կամ համաշափության օրենքներն ինքնին թելադրում էին ձեռնակման եղանակը՝ հասցնելով մինչև իսկ կերպարի հոնականացված պատկերացման: Հիշենք Լ. Դավիդի՝ Սարբինների նկարը (Լուլը) կամ Ա. Կանովայի՝ Պաուլինա Բորգենի քանդակը (Հոռմ): Պարզ է, որ ավանդությունը չի կարելի դիմել որպես արժեքների վերաժամանակային պա-

<sup>28</sup> Մինչդեռ այսօր կերպարը միշտավայրին փոխապակցելը այն խնդիրն է, որը պետք է հարաբերել կիմայական-աշխարհագրական պայմաններին, ազգային երանգավորումներին կամ ափելի խստապահան մոսեցումով՝ էկուուգային:

<sup>29</sup> E. Viollet-le-Duc, Dictionnaire raisonné de l'architecture Français du XIe au, XVle sc., Paris, 1854—68. E. Viollet-le-Duc, Entretiens sur l'architecture, Paris, 1872.

<sup>30</sup> Այսօր ևս, որպես գեղեցիկի վերացական ենթակապական շափանիչ, առնց որոշակի հիմնավորումների, արժատացած է ճարտարապետական ձևի գեղագիտական հատկանիշները բացահայտելու գործում:

հեստ, պատմությունը նոր իմաստներով շարունակ վերափոխում է ավանդական արժեքների նշանակությունը: Հետևաբար, արվեստի անցյալի գործերին ներհակ տրամաբանական կառուցվածքը կարող է ուսանելի լինել, բայց չի կարող թելագրել նոր պահանջներին համապատասխան ձևի մշակում, հատկապես գեղեցիկի հասկացության առումով:

Վիլն-լը-Դյուն շքչեց զասականների գեղագիտական տեսությունը և իդեալ գեղեցիկի զարդարքի փոխարքն առաջարկեց կառուցվածքային հասկացությունը, որը համբգհանուր է ոչ միայն տեսականորեն, այլև կապված է կառուցելու իրականության հետ, բխում է կառուցելու օրենքներից և այդ հիմունքներով հարաբերվում ճարտարապեսական ըոլոր ոճերին, այսինքն ստանում է պատմական վավերականություն: Մեկնելով կառուցվածքային շինարարական իրողությունից, Վիլն-լը-Դյուն կերտեց ձևի մշակման հետ առնչվող կանոններ և տեսական առումով հնարավոր դարձրեց նոր տեխնիկայի կիրառումը: Մնալով հանդերձ պատմականի, իր նախընտրությամբ՝ գոթականի սահմաններում, նրան հաջողվեց վերացնել անցյալի հանդեպ ոռմանտիկների ունեցած զգացմունքային վերաբերմունքը և հասնել ճարտարապետությունը խթանող սկզբնապատճառների գիտական հիմնավորման<sup>31</sup>: Նրա կատարած վերակազմություններում ճշգրտության շափանիշ է ծառայել ճարտարապետական արարերի գիտական, հնագետի փորձառությամբ արված ստույգ գնահատությունը: «Ճշգրտանական բառարանուա» ամեն մի տարրին տրված ստուգաբանությունից զատ, բացահայտված են նաև առանձին տարրերի միջև առաջացող շաղկապները, հնարալոր հորինվածքային հարաբերությունները: Ձևի համապատասխանությունների սկզբունքներով կատարած իր բոլոր քննությունները Վիլն-լը-Դյուն ի սպաս դրեց գոթական շենքի տրամարանական շարահյուսությունը հայտնաբերելու գործին:

Արվեստի գործը մարդու գեղագիտական ընկալումը առարկայացնող, պատմականորեն տարրերակած իրողություն է: Ըստ էության արվեստի հիմնական ինդիքրն իր մեջ առնում է արվեստի ուղղությունը բնորոշող երկու արժատական հասկացություն. ա) բնությունը, նրա ձևերը, զրափուլային ընթացքը և կոսմիկական կառուցվածքը վերաբետադրելու դասական սահմանումը, բ) հասարակարգը, նրան հատուկ դասակարգային հակադրունների գինամիզը: Այս հասկացություններից առաջնը այսօր կորցրել է խորհրդանշական իմաստը: Ճարտարապետական նախագծման մեթոդաբանությունը այսօր նպատակ ունի գիտականորեն հիմնավորել և տրամարանական միասնություն հաղորդել ճարտարապետական տարրերին ու կառուցվածքի բոլոր հատվածներին:

Երկրորդն ունի հասարակարգային նշանակություն, նրա բնուկթը, ինչն նշվեց, դինամիկ է, հետևաբար փոփոխական և հակադրվում է անցյալում բնությանը տրված կայուն, ներդաշնակ կառուցվածքին: Արդի արվեստի հեղաշրջումը հնաց այն էր, որ մարդը բնության հանդեպ ունեցած իր հայեցողական դիրքորոշումից անցավ հասարակարգի զարգացմանը մասնակից դառնալու, գործնականորեն նրա վրա ազդելու դիրքորոշման: Արդեն ասվեց, որ XIX դարի երկրորդ կեսի ճարտարապետները ձգտում էին ներգաշնակել դասական արվեստի (կամ գոթական) սահմանումն ու տեխնիկա-

<sup>31</sup> I-L. Benevolo, Storia dell'architettura moderna, Bari, 1960, p. 158.

յի զարգացումը, նրանք փորձեցին դասական գեղագիտական օրինաչափություններով իրար համատեղել շենքի ներքին մետաղյա կառուցը և արտաքին քարաշին պատերը, Վիոլե-լը-Դյուն, որը համաձայն էր Լաբրուտի այս մոտեցմանը, ենթադրում էր, որ այդ ուղղությամբ ընթանալով, հնարավոր է նոր տեխնիկան ենթարկել արվեստի դասական հասկացությանը և այդպիսով կերպագունել կերպարի ու տեխնիկայի միասնությունը, Վիոլե-լը-Դյուն կարծում էր նաև, որ հնարավոր է գոթական հատվող կամարների համակարգը, ցանցակերպ չիլերով հյուսված ծածկերը օգտագործել մետաղյա շինարարության մեջ Այս առումով հայտնի են Վիոլե-լը-Դյունի մի բանի նախագծերը, որտեղ մետաղյա կառուցվածքը և կրող պատր օգտագործված են միաժամանակ, ինչպես, օրինակ, 1864-ին նախագծած «Շածկած շուկան», «Ամֆիթատրոնաձև սրահը»<sup>32</sup>:

Մոժանտիկական այս ըմբռնումը, որը հարատևում է մինչև այսօր և ստացել է ազգայինը արտահայտելու նշանակություն, ժամանակավրեալ է: Անցյալ դարի ճարտարապետների կողմից առաջադրված հարցի էությունն այն էր, որ տեխնիկան և օժտված է կերպար ստեղծելու, առել է թի նյութին (մետաղ՝ հետագայում երկաթքեառն) տարածական-ժամանակային նշանակություն հաղորդելու հնարավորություններով<sup>33</sup>: Հարցը, հետեւարար, ոչ թի նոր տեխնիկան ոճական հասկացությանը ենթարկելուն էր, այլ նորամշակ առարկաներին մշակութային բովանդակությամբ օժտելու: Սեմպերը թեև վերագունել էր տեխնիկայի և շինանյութի իսկական իմաստը, բայց նրանց հնատակ զարգացման ընթացքը փակել էր կերպարը կաղապարող դասական գեղագիտության սկզբունքներով: Վիոլե-լը-Դյուն, որը պարզել էր կառուցվածքի նշանակությունը, նա էլ կանց առավ գոթականի առաջ ու գոթական կառուցվածքը շփոթեց նոր տեխնիկայի հետ:

Թացահայտ է, որ արդի ճարտարապետությունը հիմնավորող խնդիրննը պատմական են, ուստի նրանց էությունը արմատացած է անցյալում, առավել շափով լուսավորչականության և ոռմանտիզմի հասկացություններում: Այս առումով ուցիոնալիստական ուղղության ակունքները պետք է փնտրել ֆրանսիացի տեսաբան ճարտարապետներ Կ. Ն. Լըտուի, Է. Օ. Բուլիեի և Ժ. Ն. Լ. Դյուլանի ուսումնասիրություններում, նրանց նախագծերում: Ճարտարապետ, գրող և դաստիարակ՝ Ժ. Ն. Լ. Դյուլանը (1760—1834) այսօրվա արվեստաբանների կարծիքով իր «Ճարտարապետության դասախոսությունների համառոտակի բովանդակություն» երկատոր աշխատության մեջ մասամբ կանխել է արդի ուցիոնալիզմի արծարծած՝ հատկապես կառուցվածքին և գործունեալությանը վերաբերող, խնդիրների բնորոշումը և նշել նրանց կարեւորությունը<sup>34</sup>: Դյուլանի տեսակետը պարզ էր, ըստ նրա հինգ օրդերների հիմունքներով շենքեր հորինելը ձևամուլություն է, որը գործնականում շենքը գրկում է հասարակական բովանդակությունից: Նախագծողը իր ուշադրությունը պետք է ընենի անհատի, ընտանիքի և հասարակարգի

<sup>32</sup> E. Viollet-le-Duc, Entretiens sur l'architecture, Paris, 1872.

<sup>33</sup> Պ. Սելվատիկո Էստենսի (1803—1880) և Կ. Բոյուլի (1836—1914) նախաձեռնությամբ Պաղպալի և Միլանի արվեստի ակադեմիաների ճարտարապետության բաժնում պարտագիր դարձան շինանյութերի, կառուցելու տեխնիկայի և շենքի ճարտարապետական նախագծման ուսմունքները:

<sup>34</sup> J.-N.-L. Durand, Précis des leçons d'architecture, Paris, 1802—05.

վրա նեղեղով աշխատանքի և բնակվելու պահանջներից, Դյուրանը շենքերը դասավորում է բատ այդ գործունեությունների և առաջարկում շենքի նոր տիպեր: Գործառնությունների հիմունքներով շենքերը տիպերի բաժանելը, օգտավետության առումով դրանց հասարակական-բարոյական բովանդակություն հաղորդելը դարձավ արդի ճարտարապետության մեջ պատմական նշանակություն ունեցող տիպայնացման առաջին փորձը:

Նապոլեոնյան հաղթանակների պատմական այս շրջանում Դյուրանի համեստ խոսքը էնցիկլոպեդիստների իդեալների ճանապարհով տարածում դաշավ Ֆրանսիայում և հասկապես Գերմանիայում: Դիպի բացարձակ գեղեցիկը մզված ճարտարապետների ուշադրությունը Դյուրանը ուղղեց դեպի մարդու, խորհուրդ տվեց մի կողմ թողնել ճարտարապետական օրենքները, ուսումնասիրել առօրյան: և այդ իրողությունից հանգել շենքի նախագծման:

Այս ամենից կարելի է հետեւնել ճարտարապետական կառուցվածքը հասարակարգի կառուցվածքի հետ համատեղելու այդ շրջանի ուսցինալիքունությունը դարձացավ ուստոպիական սոցիալիզմում, ոեալ բովանդակություն ստացավ գերմանական ռզախլիխկայտի ոլորտում և մուտք դորձեց արդի բաղաքաշինության բնագավառը: Ըստ այդ մեկնաբանության, կառուցվածքը կորցրեց բացարձակին հարաբերվելու դասական ըմբռնումը և ստացավ ինքնուրուցն էություններից բաղադրված համակարգի նշանակություն: Պետք է նշել նաև, որ տվյալ համակարգի սահմաններում էություններից ամեն մեկը ստանում է իր նշանակությունը այն դեպքում միայն, եթե հարաբերվում է մյուսներին: Փոխարերակցման այս գաղափարն իր հետ բերեց առարկայի և իրականության շաղկապի, այսինքն՝ գործառնության գողափար:

Գործառնականությունը (ֆունկցիոնալիզմ) ժամանակագրական առումով համեմատարար նոր հասկացություն է և հանգամանորեն չի օգտագործվել անցյալի ճարտարապետությունը մեկնաբանող արվեստաբանների կողմից: Այդ հասկացությունը իմաստավորվեց XVII դարի երկրորդ կեսերին, երբ վենետիկից մի քանի մտավորականներ պայքար էին մղում բարոկկո ոճի գերիշմանության դեմ: Բարոկկոն և նրա ճյուղավորումները կաթոլիկների կողմից համարվում էին պաշտոնական ճարտարապետություն, կրում էր Վատիկանի հովանավորությունը: Այդ շրջանում հակառակորմիստ Հռոմը մեծ հեղինակություն չէր վայելում ո՛չ Վենետիկի հանրապետությունում, ո՛չ էլ Անգլիայում և Գերմանիայում: Պատահական չէ, որ հենց այս երկրներում առաջացավ պատմականորեն կայունացած արժեքները՝ արվեստի պաշտոնական հայեցագործությունները, վերաբնության ներարկելու, այլ կերպ ասած, արվեստը գենուկրատացնելու ձգումը<sup>35</sup>, Փարիզը, Վայմարը, Վիեննան և Վենետիկը եղան այդ շրջանի մշակույթի ամենագործուն կենտրոնները: Ըստ էության Ֆ. Միլիցիայի և հատկապես վենետիկիցի Կ. Լոդոլիի, Ա. Մեմմոյի և Ֆ. Ալգարոտտիի տեսությունները կարելի է համարել ուսցինալիղմի և ֆունկցիոնալիզմի սկզբնաղբյուր: Դրանք զգալի ազդեցություն ունեցան ֆրանսիացի Լըգուի, Բուլլեյի և Դյուրանի վրա: Արդի ճարտարապետության պատմության մեջ նշանակալից դեր է ունեցել տեսաբան-իմաստասեր Կարլը Լոդոլին (1690—1761), որը համարվում է ժամանակակից գործառնականության հիմնադիրը: Լոդոլին չի թողել և ոչ մի աշխատություն: Նրա մըտ-

<sup>35</sup> Վենետիկում համբավի էր հասել Զակարիա Սեբաստիան (Սեբաստիան, Նոր Զուզա, 1708—1784), հայացն զրողն իր «Ճանապարհորդություններ» գրքով:

քերին, Հայացքներին տեղեկանում ևնք Մեմմոյի և Ֆ. Ալգարոտտիի գրություններից<sup>36</sup>:

Վենետիկիցի արվեստաբանի քննադատությունը ուղղված էր Վերածննդից հետո զարգացում գտած ճարտարապետության, հատկապես հոոմեական ճարտարապետության բերնինյան ուղղության և ոռոկոյի գելոց<sup>37</sup>: Քաղաքականացված գեղագիտության տարածումը կանխելու նպատակով Լոդոլին գեղեցիկի գաղափարը կապեց շենքի գործառնային նշանակության հետ: Կարևոր այս միտքը ոչ միայն հաստատում է այնպիսի մի դրույթ, որն այսօր ստացել է համընդհանուր կիրառում, այլև վկայում է գործառնության պատմական հիմնավորումը Հետաքրքիր է, որ Վենետիկի հանրապետության անկախության այդ վերջին տարիներին Լոդոլին, Ալդարոտտին, Մեմմոն (Գոլդոնին) պայքար էին մղում հանուն արվեստի ազատության և մինչև իսկ դիմադրում էին շենքի ճարտարապետությունը թելադրելու հավակնություն ունեցող ազնվականներին:

Լոդոլին ձգտեց ճարտարապետությունը ուղղել դեպի իրական կյանքը: Նա խորհուրդ էր տալիս ազատագրվել բարոկկոյի սկզբունքներից, չկիրառէլ Վերածննդից հետո առաջացած հորինվածքային կանոնները, ձևածշակման և շենքերի տիպերի ավանդական սկզբունքները:

Արվեստի բնագավառում վենետիկյան գպրոցի հետապնդած «վերիզմը» բացահայտորեն արտահայտված է Գոլդոնիի «Ճիշգողությունների» հետևյալ տողերում: «ամբողջ շանասիրությունը, որ ներդրել եմ իմ կատակերգությունները կառուցելու համար, նպատակ են ունեցել շաղավաղել բնությունը: Լոդոլին ևս, որ Գոլդոնիի ժամանակակիցն էր, ուղում էր ճարտարապետությունը տանել դեպի «բնությունը»՝ ուցիոնալիստ հասկացութիւմը, դեպի իրական կյանքը: Նրա կարծիքով, իրականության և ձեր միջև եղած կապը կարող է հաստապել զործառության ճանապարհով: Ինչպես տեսանք, գործառնության գաղափարը իր տեսական առաջին հիմնավորումը ստացավ բարոկկոյի դեմ մղված գաղափարական պայքարում: Մշակույթի և հաստիակարգի դրանից առաջ գոյություն ունեցող համեմատաբար միահամուռ կազմում գործառնությունը դիսկում էր որպես ճարտարապետական հասկացությանը վերաբերող անբաժանելի մի գործոն, որը շուներ իր ուրուն նշանակությունը: Ականա ՏԻ դ. գործառնության գաղափարը, տեսականի և գործնականի առաւմով կապվեց շինարարության լայնածավալ գործունեության: Հետ որպես գիտության և ճարտարապետության միջև ուցիոնալ հիմունքներով համադրություն առաջացնող գործոն:

<sup>36</sup> A. Memmo, Elementi di Architettura Iodoliana, Roma, 1786. F. C. Algarotti, Lettere sopra l'architettura, Roma, 1742—63. F. C. Algarotti, Saggio sopra l'architettura, Roma, 1756.

<sup>37</sup> Բարոկկոյի մյուս խոշոր ներկայացուցիչ Բորրոմինին նվազ շափով էր քննադատվում Լոդոլիի կողմից, և պատճառը հետևյալն է: Բորրոմինիի ճարտարապետությունը հինգամ է գծային և երկաշափական ձևերի իմաստավորմաների վրա, որոնց նշանակությունը ոչ թե յանակի էր, այլ համընդհանուր: Խելոր շափով ավելի հնարամիտ, քան Բերնին, նա հորինվածքային կանոնների օգտագործման առաւմով ավելի ազատ էր, անհատական: Բորրոմինիի ճարտարապետությունը մեծ տարածում գտած լինելով հանդերձ, չէր կրում պաշտօնական արվեստի ընույթ:

<sup>38</sup> Այդ շրջանում Վենետիկում, որն ապրեց պետական անկախության կործանումը, ստեղծագործում էին Պիացցատան, Տիեպոլոն, Գուարդին, Կանալիտոտոն, ինչպես և Վիվալդին, Կ. Գոցցին: Գոլդոնին:

Ուստինը Կարլայլից ժառանգեց լիբերալիզմի և արդյունաբերության ուժած պայքարի փաստարկումները։ Դա բողոք էր՝ ուղղված վիկտորյան շրջանի ակադեմիստ կոնվենցիոնալիզմի դեմ։ Նշենք նաև, որ ակադեմիզմն ավելի հարազատ է ազնվականությանը, քան բուրժուազիային։ Նոր դասականության կանոններում, ինչպես և նարտարապետական հորինվածքային հարաբերությունները թելադրող օրենսգրքում բուրժուազիան գտավ արվեստի իդեալի, պորտատան բարոյականության ինքնազնաշտումը։ Անցյալ դարի հիսունական թվականներին գերիշխող այս դրությունից խուսափելու համար սկսեցին հարազատ արտահայտչամիջոցներ փնտրել անցյալի արվեստում։

Գուցե այս ըմբռնումն էր պատճառը, որ ոռմանտիզմի գերիշխանության այս շրջանում պրեռաֆայելիզմը հակադրվեց կերածննդին ու նրան հաջորդող ուղղություններին և առաջարկեց վերադարձ դեպի իտալական պրիմիտիվների նկարչական դպրոցը։ Նման գիրքորոշումը բարոյականացված գեղագիտություն էր, որ գալիս էր Կարլայլից, այն տարբերությամբ, սակայն, որ եթե Կարլայլի կարծիքով ստեղծագործ ուժը վերագտնելու համար ժողովուրդը պետք է ծննդր իր «հերոսւ», ապա պրեռաֆայելիստներն առօրյան ազնվացներու միառնյալ տարված՝ առաջարկում էին «գեղեցիկ» հավատամքը։ Եվ պրեռաֆայելիզմը հակադրվելով հանդերձ Անգլիայում իշխող հոլանդական դպրոցի նկարչությանը, չկարողացավ գտնել իր ուրույնությն։ Պրեռաֆայելիստները գործելով բանաստեղծագործական ուղարկություն ուղարկում էին աշխարհի աշխարհին, որը հանդիպում հանդես եկավ տարբեր ըմբռնումներով և ելակետային նշանակություն ունեցավ թե՛ արհեստների, թե՛ նարտարապետության մեջ, հատկապես Ալ Նուվոյի և սեցեսիսիոնիստների շրջանում<sup>1</sup>։

Նարվիկում, Լոնդոնում, ինչպես և Գերմանիայում ակվարելիստները<sup>2</sup> բոլորից անկախ, որոշակի հասկացությամբ և տեխնիկայով հանդես եկան Գերմանիայում, ինչպես ցուց են տալիս Դյուրերի ակվարելները։ Ավելի ուշ Անգլիայում ստեղծվել էր արդեն ջրանկարչության դպրոցը։ XIX դ. երկրորդ կեսերին ջրաներկն ապրեց իր նոր վերելքը նաև այն պատճառով, որ այդ

<sup>1</sup> XIX դ. կեսերին Անգլիայում առաջացած արվեստի ուղղություն. զիսավոր մասնակիցներն են նկարիչներ՝ Դ. Գ. Բուստատի, Ու. Հ. Հնտ. Ջ. Է. Միլե, Թ. Ուոլներ։

<sup>2</sup> Այդ տեխնիկան, որ իտալացիների համար միշտ էլ երկրորդական նշանակություն է ունեցել, օգտագործվել է գծագրերում՝ լուսաստվերային արժեքները շեշտելու նպատակով։

շրջանում ավելի հրատապ էր դարձել արտահայտչամիջոցների անմիջականության խնդիրը: Գծագրության կառուցղական պարտադրումներից ավելի ազատ գործող շրաներկը նպաստեց վերաբարելու ոչ թե ձև իր ամբողջ կառուցղաժքով, այլ լուսերի և ստվերների խաղերը, բնության հոսունությունը, թափմությունը, մթնոլորտի հստակությունը: Ավելարելիստները, թե կուզե հովվերգական զգայնությամբ, մոտեցան բնությանը, առանց արհամարելու նկարեցին պարզ մարդու առօրյան, վերաբարեց պատկերներ ազատությունը, առարկան նկարչականորեն բնորոշելու հատկությունը: Դրանք նկարչական այն դրույթներն են, որոնք կիրառում դուն իմպրեսիոնիստների կողմից: Մոնեի, Սիմեի, Պիսսարոյի 1870-ին դեպի Լոնդոն կատարած ճանապարհորդությունը այս առումով նշանակալից եղավ:

Այդ շրջանի նկարությունը՝ թեկուզե ճարտարապետությանը զուգահեռ ընթացքով, առավել որոշակի դեր ստանձնեց նոր արտահայտչամիջոցներ որոնելու գործում: Այս տեսակետից ոչշագրավ է այն, որ նկարիչների մեջ առաջացած անմիջական լինելու ձգտումը և դրանից հետևած տեխնիկայի նոր ձևեր փնտրելու պահանջը համընկան շինարարական տեխնիկայի զարգացման, ինչպես և շենքերի բովանդակությանը առավել շափով հասարակական նշանակություն տալու ձգտումների հետ: Սակայն ճարտարապետությունը համար դժվար էր այդ հասկացությամբ գործելը. հարկ էր փոխել ոչ միայն պատկիրատուի մտախությունը, այլև ստեղծել նոր մշակույթ:

Ակսած XIX դ. երկրորդ կեսից որոշիլ նշանակություն ստացան հարաբերակցորեն իրար պարտադրված, բայց նպատակադրումների առումով իրար հակագրված երկու երկույթ՝ կառուցղական արվեստը և ոճականացված ճարտարապետությունը: Երջապատը ճարտարապետականորեն բնորոշելու մինչև այդ հարատեսող ձգտումը փոխվել էր. այժմ կառուցել, նշանակում էր առաջնահերթ նշանակություն տալ կամ տեխնո-կառուցղական տեսակետին և կամ արվեստի միջոցներ օգտագործելու ուղղությամբ: Ճարտարապետական ձևեր զլատաման հիմնապատճառները կարելի է փնտրել լուսավորական և ոռմանտիկ հասկացությունների հակադիր դրվածքում, որտեղից առաջացան՝ ճարտարագիտության աննախընթաց զարգացումը և ոճականացված ճարտարապետության տարրեր անվանումներ կրող ուղղությունները:

Տելֆորդի, Բրոնելի, Պակստոնի, Կոնստոնտինի, Այֆելի, Վայսի, Հեններիփի կառուցած ցուցահանդեսների, ջերմոցների շենքերը, կամուրջները, աշտարակները, զույգները, կայարանները, գործարանները իրագործվեցին՝ պահպանելով տնտեսական իհսու պայմանները և օգտագործելով գործարաններում արտադրված հավաքովի տարրերը: Ավանդական նախատիպերից անկախ, գործառնականորեն ճշգրիտ, երկաթբետոնն և մետաղ կրող տարրերից բաղադրված ապակեպատ այլ շենքերը հասաւատում են XVIII դ. վերջերի և XIX դ. անգիտական, ֆրանսիական, գերմանական ճարտարապետության դպրոցների մեծությունը և արդի ճարտարապետության առաջացման մեջ ներբերած վիթխարի նպաստը:

Ոճականացված ճարտարապետությունը գեղագարդումների միջոցով թղարկված կառուցղաժքի ընկալում է: Նման հասկացությամբ կառուցված շենքերում խախտվում էր գործառնության և բովանդակության համապատասխանությունը, կարևորություն էր տրվում շենքի ներկայացուցական իմաս-

տին, որն արտահայտվում էր շենքի մակերեսներին ոճական արտահայտչամիջոցների դրոշմումով: Այս առումով դիպոլ օրինակ է Ա. դը Բոգոնի և Կոնտումենի 1897-ին Փարիզում կառուցած ֆան-դը-Մոնմարդի, երկաթբետոնների շիլերով, հատվող կամարներով և սլուներով կառուցված կեղծ գոթական եկեղեցին<sup>3</sup>:

Զեր ձեմարիտ է, երբ ուրուկն ուղիներով է հասնում իր էության բացահայտմանը: Կառուցվածքային նոր համակարգերի հայտնարերումը կառուցվող իրականության այն հանաշումն է, որին կարելի է հանգել ձևային կաղապարումներից աղատված ստեղծագործ աշխատանքով:

Նոր ճարտարապետություն առաջացնող նախապայմաններն անցյալ դարում մշակվեցին երկու հասկացությունների հիմունքներով. առաջինի համաձայն շենքի մակերեսներով ընթանում են կառուցվածքը քողարկող գեղադարգային կամ ոճական տարրեր: Պատմական միջավայր ստեղծելու նման ձգումը հաստուկ էր ոռմանտիկներին: Երկրորդ հասկացությունը՝ դասականը, օգտագործեց ոճականը, համաձայն կառուցվածքի ուցիչոնալ իրողությանը:

Արվեստը և տեխնիկան գործելով մարդու շափանիշի, ինչպես և նրա հասարակական գործունեության սահմաններում, զուգահեռ կամ փոխարարերված ընթացքով սերտորեն առնչվեցին ճարտարապետական մտքի կաղմավորման, մարդու կերտած ճարտարապետականացված իրողության հետ: Արհեստական այդ միջավայրը ձեսկանորեն և կառուցվածքային առումով ամրողացված իրողություն է և կառուցվում է բնությանը զուգահեռ կամ նրան պարտադրված: Այս առումով, ուտոպիստները և ուսցիունալիստները ոռմանտիկներ են: Նրանց պատկերած քաղաքները, կառուցած թաղամասերը երկրաշափականորեն կարգավորված, հմտորեն սահմանված ծավալատարածական իրագործումներ են, ուր անտեսված է արդի կյանքը բնորոշող, խթանող գործոնը:

Բնությունը, Ֆ. Եելինգի խոսքերով, «քարացած իմացություն է», ենթադիտակցություն և զիտակցություն: Այդ հակադիր դրվածքը ոռմանտիկները փորձեցին հաղթահարել իմացության բարձրագույն աստիճանին հասնող արվեստի ճանապարհով<sup>4</sup>: Մարդը ստեղծագործելու ընթացքում իրար է շաղկապում իմացության բացահայտ: և անմեկին հություններ ու մեկից մյուսին անցնելով, ձգում հասու դառնալ բնության խորհուրդներին: Այս առումով արվեստը նշմարտություն է, իսկ իմացությունը զուտ զգայական ըմբռնողություն, որին կարելի է հանգել ստեղծագործական ուժ գործադրելով: Ռումանափառմը կրթեց և սնեց արվեստագետի անհատականությունը: Մակայն ճարտարապետության բնագավառում, եթե զոյլություն ունի ոճերի ոռմանտիկ մեկնարանություն, ապա ոռմանտիկ ոճ գոյլություն չընի:

Ռումանափառմը իրականությունը պատկերացնող ձգտում է, իրականությունը որակավորող, մշակութային միջավայր ստեղծող հասկացություն: Այդքանով հանգերձ, բացասական էր ոճականացված ճարտարապետության առաջացումը, ինչպես և արվեստարանների կողմից անցյալի արվեստը ոճական

<sup>3</sup> H. Sedlmayr, Verlust der Mitte, Salzburg, p. 64—65.

<sup>4</sup> Մեր զարի երեսնական թվականներին, նման ողբուժում խարսխված անցյալի կազմ Գերմանիայում և Խոալիայում ճարտարապետությունը հանգեցրեց «Հայմատքունստին» և կենարիզմին Տե՛ս Ա. Զարյան, Խոալիական արդի ճարտարապետությունը, Երևան, 1975, էջ 15—47.

կաղապարումների միջոցով մեկնարանելու՝ ոռմանտիկ շրջանին Հատուկ պատմագիտության ձգտում:

Արդի ճարտարապետությունը չի ժխտում անցյալի կապը, այլ կողմնորոշվում է գեղի անցյալը՝ ենելով երկու հասկացություններից՝ պատմական և ապապատմական: Երկրորդ մոտեցման ռահվիրաներ եղան՝ Գրոփիիւսը, Մոնդրիանը, Վան Դոեզբուրգը: Իսկ ձևամոլությունից սահմանապատված պատմական կապը հատուկ է գրքին բոլոր ստեղծագործ ճարտարապետներին: Լը Կորրյուգիի կազմած Զանդիգարի հատակագծում ընկած է Պրիենեի ճանապարհների ցանցը և նրա կենտրոնում տեղադրված կապիտոլը: Լը Կորրյուգիի մշակած մակերեսները, բաժանումները և տրիգլիֆների հրատակությունը և ծավալ-պիլոտի հորինվածքը առնչվում են հունական սյունաշար տաճարի հետ:

Աթենքի Դիոնիսիոսի թատրոնը, նրա առջև բացվող քաղաքային բնապատկերը, հին Հոռոմի կառուցյաներում արտահայտված տարածական հասկացությունը կամ Ստոնէիչի նախապատմական շրջանի արևի տաճարը ստեղծագործական ոգի են ներշնչել և. Քանին, Ա. Ալլուցին և այլ ճարտարապետների: Աֆրիկայի կամ արաբական բնակավայրերի բջջային կառուցվածքը քաղաքի օրգանական հասկացություն է և այդ առումով այսօր միանգամայն այժմեական:

Պատմական հասկացությունը անցյալի ձեին հազորում է նորը թելադրելու դեր, ապապատմական դրվածքը հակադրում է այդ տեսակետին, ձեզ դիտելով որպես զործնթացքում առաջացող, շարունակ կազմավորման մեջ գտնվող, իրականությունից վերարտադրված, առարկայացված բնորոշում: Հակադրի նման դրվածքում ճարտարապետության նշանաւության շափանիցը կապված է իրարից տարբեր հարթությունների վրա գտնվող, հարաբերականորեն ինքնուրույն տեխնիկայի և արվեստի հետ: Տեխնիկան և արվեստը կարող են համարժեք լինել, երբ նպաստում են առարկայացված իրականությունը ճարտարապետականացված իրականության վերափոխելուն: Այս ձգտումի վավերականության հնտագուռումը կազմում է ոչ միայն արվեստաբանության բնագավառը, այլև ստեղծագործական խթան՝ է հատկապես նախագծողի համար՝ անկախ այն բանից, թե որն է պատմության հանդեպ նրա ունեցած վերաբերմունքը:

Կարողանալ տեսողական եղանակով ըմբռնել իրականությունը և արտահայտել առարկաների, երևոյթների փոփոխականությունը՝ կապված ժամանակի հարաբերությունների հետ՝ այս թե ինչն էր բնորոշ իմպրեսիոնիստներին։ Դինամիկ հայեցողությունը<sup>1</sup>, որ նկարչության մեջ զարդացում ապրեց էքսպրեսիոնիստների, կուբիստների, ֆուտուրիստների շանքերով, այսօր նշանակալից դեր ունի քաղաքաշինության մեջ տարածական-ժամանակային նախադրյալների հիմունքներով՝ բաղաքի կերպարը ձևակերպելիս, հիմունքներ, որոնք հնարավոր են դարձնում բաղաքի կերպարը հորինել հավաքովի միավոր տարրերի, բնակելի միավոր ծավալների միջացով, և կառուցվածքի վերածել նրա շարունակական զարդացումը։

Առաջադիր հարցը քննարկելուց առաջ հարկ է անդրադառնալ XVII—XVIII դարերի այն ժամանակահատվածին, որը ծնունդ տվեց արդի ճարտարապետությունը կազմավորող և հիմնական նշանակություն ունեցող այնպիսի նախադրյալների, որպիսիք են՝ ֆոնմկղիոնալիզմը, ուսցիոնալիզմը, քաղաքացիական շննդերի տիպարանությունը և, վերջապես, խնդրո առարկա հարցը՝ դինամիզմը։

Պլատոնի «գաղափարների աշխարհը» և Արիստոտելի «փորձառությունների աշխարհը» երրեմն հակադրվելով, երրեմն ներդաշնակելով իրար, դարսերի ընթացքում իշխեցին քրիստոնեական ծվորապայում, և հատկապես Վերածննդի ժամանակ կլակետային նշանակություն ունենալով արվեստի բոլոր արտահայտչածեկերում, նրանք մասնավորապես բնորոշեցին ճարտարապետական ամբողջ հայեցողությունը։

Ինչ վերաբերում է Պլատոնի «գաղափարին»՝ նոր դասականները փոխեցին նրա բովանդակությունը և առաջարկեցին բացարձակ գեղեցիկի դադափարը, ոռմանդտիկները՝ բացարձակ էությունը, եսը, անհունը, այսպիսով, մշտնչենականության դաղափարը մնաց անփոփոխ։ Անփոփոխ մնաց նաև փորձառությունը, անշուշտ այնքանով, որքանով առնչվում է ճարտարապետության հետ։ Եվ դա այն պարզ պատճառով, որ շարունակվեցին օգտագործել նույն սյուները, կամարները, թաղերը և գմբեթը։ Այն ինչ փոխվեց, եղավ սարածության հեռանկարային հասկացաւթյունը։

Մեր կարծիքով, հեռանկարը իրականությունը վերարտադրելու պիթագորյան ըմբռնում է, չնայած այն բանին, որ Պիթագորը ոչ մի ուղղակի կապ չունի հեռանկարի հետ։ Պարզենք մեր միտրը։ Ինչպես ասվեց, ճարտարա-

<sup>1</sup> A. Dorner, Il superamento dell' «arte», Milano, 1964, p. 127—148.

պետական տարրեր հորինելու օրենքները մասամբ սահմանված էին ավանդաբար՝ տրակտատիստների կողմից: Ենարարական տեխնիկայով պարմանավորված օրինաշափովթյուններն արտահայտվում էին մարդու համաշափությունների հարաբերություններով: Այս հիմունքներով զարգացվեց ամբողջ մի հասկացություն, որը կարող էր տարբերակվել ստեղծագործող սակացություն, բայց որպես հորինելու եղանակ՝ մշտապես մնում էր անփոփոխ: Մինչեւ հեռանկարը ընձեռում է, թե կուպէն հարաբերական իմաստով, տարածությունը պատկերելու ինքնուրությունն Առարկայական տարածությունը վերածել հեռանկարային պատկերի նշանակում էր ունեալը վերացրել «մաթեմատիկական առարկայացված»<sup>2</sup>, թվերի օրինաշափովթյուններով կառուցված մի պատկերի, որի միջնադարյան հասկացության համաձայն, պարունակում էր նաև տիեզերագիտական ընկալում: Աշխարհը և տիեզերքը զեկավարող օրենքների այս նույնությունը հետագայում հաստատեց նաև նյուունը (1687): Ամբողջ խնդիրը այն էր, որ Վերածննդին բնորոշ տարածության պատկերման կայական (ստատիկ) հասկացությունը վերափոխվեց դինամիկ տարածական ժամանակային հասկացության: Մի բան, որ գերազանցորեն արտահայտվեց Պիացետայի կամ Վերոնեզի նկարչության մեջ, ուր ամեն ինչ շարժման մեջ է և, կարծնս, աննյութնեն դարձած լողում է եթերում: Այդ նկարներում կերպարները ուղղված են դեպի տարածության մեջ ազատորեն ընտրված (Վերածննդի նկարներում դրանք պարտագիր կետեր են) մի քանի կետեր, որտեղ և հանդիպում են նկարի բոլոր զուգահեռները: Ինչպես ասացինք, անհունի կիզակետերը տարրեր են, տարրեր են նաև կերպարներից կազմված խմբավորումները, այսինքն այսօրվա տեսական թվարանության իմաստով՝ բազմությունները: Իսկ «բազմությունը պատկանում է հիմնական, անսահմանելի հասկացությունների թվին»<sup>3</sup>: Արդ, այդ նկարներում մարդու կերպարը ինքնուրույն նկարագիր չոնի, նրան շի կարելի անձնավորություն համարել, ինչպիսին է Ռաֆայելի «Աթենքի դոպրոց» որմնանկարում պատկերված փիլիսոփան: Վերոնեզի նկարներում մարդը ուսախից բացարձակված, գրեթե առարկայացված էակ է, մասնակից է մաթեմատիկական ընդարձակության, և նրա ճշմարիթ լինելը հեռանկարային է և ոչ թե ունեալ, պիթագորյան իմաստով՝ թվային: Հեռանկարը արվեստի գործի և դիտողի միջև գեղագիտական կապակցություն ստեղծելուց զատ, դիտողին հաղորդակից էր դարձնում պատկերված անհուն տարածությանը, որն իր էությամբ է այսինքն՝ դիտում:

Այս առումով առնվազն շափազանցություն է թվում այն կարծիքը, ըստ որի ճարտարապետության մեջ արտաքին և ներքին տարածությունների փոխկապակցության հասկացությունը դիտվում է որպես Ռայտի մտահղացում, որը հետագայում ներմուծվեց Եվրոպա և ամբողջականացավ Միս վան դեր Ռուի չանքերով: Այս թեման իր էությամբ և ճարտարապետական հորինվածքի նորանոր զյուտերով առկա է գերմանախոս երկրների ճարտարապետության մեջ: Հիշատակենք, այսպես կոչված, անգլիական Կրեսենտները Ռագուցինիի և Ինյացի հարաբերակի (Հռոմ) շենք-փողոց կապակցության լուծումը, Ֆ. Յուլարայի (1678—1736) Ստոպինէջիում կառու-

<sup>2</sup> Ա. Հ. Ավելասիյան, Իմացարանականի և արամարանականի փոխարարերությունը՝ մաթեմատիկայում, Երևան, 1973, էջ 25—26.

<sup>3</sup> Ա. Հ. Գարտաշյան, Տեսական և գործնական թվարանություն, Երևան, 1969, էջ 6:

շած որսորդության պալատի» (1730—31), Բ. Ալֆինրիի (1700—1767) կարինանոյի ժողովրդապետարանի հորինվածքները, և Վանվիտելիի (1700—1773) ամբողջ ճարտարապետությունը: Ունական առումով այս շենքերը հորինված են հատված գծերով, անկյունները կլոր են կամ սյունաշար: Պատերի խոլ հատվածների համեմատությամբ բացվածքները գերիշտող են, զարդերն ալելի գծադրային, բան բանդակային, ճարտարապետությունը լուսասավերացին է, նկարչական<sup>4</sup>, գեղատեսիլ, սահուն, երածշտական, հատկապես երածշտական, որովհետև ճարտարապետական թեման ընկալվում է իբրև տարրերի հաջորդական; մեկը մյուսին հետևող շարժունակ երևուով:

Շարժունակության արդասիք պետք է նկատել նաև բնեպացումների խընդիրը:

Արդ, միջնադարի քաղաքներում քաղաքապետարանի շենքերը արտահայտում էին փողուական հասարակարդի քաղաքաշինական կերպարը: Վերինիս երկրենուացած կազմը հետագայում հաղթահարվեց քաղաքների դինամիկ աճման հետևանքով: Թաղմարենուացումը ի հայտ եկավ միայն XVII դ. (Հոռոմ), բայց հատկապես արտահայտվեց XVIII դ., երբ քաղաքների թաղանթում բացահայտորեն ցայտուն դարձան ճարտարապետական հատուկ արժեք ներկայացնող շենքերը, նրանց իրար շաղկապող ճանապարհները: Քաղաքի կազմում հատուկ նշանակություն ունեցող շենքն իրեն էր ենթարկում շրջապատի զարգացումը, նույնիսկ նրա կերպարային հորինվածքը, և պայմանավորում քաղաքի ներկայացուցական ամբողջ կառուցվածքը: Երկրենուացվածից բազմարենուացված կազմին անցումը հետևանք էր դինամիկական ալդ իմաստով է, որ այսօրվա տեսական միտքը բներացումը բնորոշում է որպես քաղաքների կառուցվածքի տրամաբանական կազմը բացահայտող քննական ստորոգություն:

Մի հատկորշ փաստ ևս. եթե XVIII դ. կառուցվեցին թատրոնների նշանակալից մասը<sup>5</sup>, ապա 1860—1890 թթ. կառուցվեցին Եվրոպայի և Ամերիկաների բոլոր օպերա-թատրոնները՝ տարածա-գործառնական առումով երկրենուանի այդ դահլիճները: XVIII դ. վերչերին քաղաքական-սոցիալական հեղափոխիչ գաղափարների հետևանքով հունական թատրոնը կիրառվեց որպես պառակմենտային դահլիճի նախատիպ: Երկենուարն այդ կազմը՝ առնիթատրոն և բեմ, արտահայտելու էր XIX—XX դդ. նորակառուց պառլամենտների, հավաքույթների դահլիճների ճարտարապետականորեն լուսորշված, գործառնորեն տրամաբանական կազմը, տարածական տվյալ հասկացությունը հատկանշող կերպարային կառուցվածքը<sup>6</sup>:

<sup>4</sup> Դեռևս ուշ բարոկկոյի շրջանում նկարչական ճաշակը նկատելի է ճարտարապետական գծագրություններում: Կարոյ Յոնտանան (1638—1714) սովորեցնում է իր աշակերտներին՝ շենք գրաֆիկական կատարումը և գծագրությանը տալ լուսատվերային ազդեցիկ պահպատճենությունների: *Sic et Carolo Fontana, Studio di Architetture, Torino, 1737.*

<sup>5</sup> XVII դարում թատրոնի ավելի զրական հասկացությունը փոխվեց, դարձավ ներկայացում, որը պալատների սահմանափակ միջավայրից ծավալվեց ճարտարապետության և բեմանկարչության միջաներով ստեղծված եռևակայական տարածություններում: Այդ շրջանում ելքրապայում կառուցվեցին մի շարք թատրոններ, Ֆրանչեսկո Բիբինան (1659—1739) կառուցեց Հռոմի գ'Ալիբրոտ թատրոնը, Վիեննայի հին օպերան, Նանպիի թատրոնը, Վերոնայի ֆիլարմանիայի թատրոնը, իսկ Անտոնիո Բիբինան (1700—1774)<sup>7</sup> Ֆլորենցիայի Թերոգլաւ և Բոլոնիայի քաղաքային թատրոնները:

<sup>6</sup> Անգլիական պառակմենտի դահլիճը նման է գոթական եկեղեցու խորանին: Քառանկյունի դահլիճի կենտրոնում կառավարության կազմը և հակառակ ուղղության ներկայացուցիչները

Ճարտարապետական արտահայտությունը որպէս կապակցության համակարգի միտք-ձեռ, մեր այս տեխնիկայի շրջանում դեռ պահպանում է իր վավերականությունը: Անցյալի ճարտարապետությունը բնորոշող կարևոր այդ իրողության մեջ, հակամը դեպի քաղաքաշինացված կամ ճարտարապետականացված ձեզ, ի հայտ է գալիս առավել կամ նվազ չափով այն դեպքում, երբ ձեզ դիտվում է որպես գործառնությունների վերարտադրված արտահայտություն, մի հանգամանք, որը ծալրանել դեպքում տանում է ձեզ չեղոքացմանը: Հիշենք, այսպես կոչված, պարունակիլ շնորհերի տիպը մասնավորված է որպես մտքի, ուստի և գործառնությունները բովանդակող կերպընկալված արտահայտություն: Այս ինդրի ամենաառաջարկ կողմն այն է, որ անցյալի հասկացությամբ ձեզ հայեցողստիյուն էր, ուներ գեղագիտական-նշանաբանական իմաստ, մինչդեռ այսօր տեխնիկայի շարունակ փոփոխում է նրա բովանդակային, ուստի և կառուցվածքային բնույթը, միասնական կերպարը վերածում տարածություն-ժամանակ գործոններին ենթարկված՝ ձեզ շարունակական լինելիության: Շարունակությունը, որը սկիզբ առավ լուսավորչականության և ոռմանտիզմի շրջանում, իր ցայտուն արտահայտությունը գտավ իմպրեսիոնիստական նկարչության մեջ, իսկ հետագայում՝ նաև ճարտարապետության բնակավառում:

Արվեստի տարբեր տեսակների փոխադարձ ազդեցության և որոշ սկզբնապատճառների զուգահեռ գոյության փաստը օգնում է կապակցությունների այդ ոլորտում պարզել ճարտարապետության առաջընթացի տարբեր փուլերի իմաստը և թելացրում ելակետային որոշ ճշգրտումներ անելու դիցուք, շարժունակության խնդրի ըմբռնման մեջ: Այդ իմաստով հարկ է անդրադառնալ առաջին հերթին իմպրեսիոնիստների ուղղությանը, իմպրեսիոնիստ<sup>7</sup> նկարիչների հասկացությամբ ձեզ ստանում է ակնթարթային նշանակություն: Իմպրեսիոնիստները ձգտեցին կյանքը պատկերել վաղանցիկ տպավորությունների և անվերադարձ բոպենների արձանագրումով և այդանով նրանք եղան նաև նաև նաև առավարականությունը, նրանց գրավում էին առարկաների վրա արտացոլող լույսի խաղը, առարկաների միջև առաջացած կապակցությունը և հիմնականում արվեստագետի զգայությունից բխող նկարչական երևույթը: Այսպիսի զգայության տեր արվեստագետների համար միմիայն գույնը կարող էր դառնալ լավագույն արտահայտչամիջոցը:

Իմպրեսիոնիստներն իրենց նկարներից վերացրին գրական բովանդակությունը, խուսափեցին նկարչական թեմաներում հատկանշել հերոսական

նստում են դեմքմաց: Կենտրոնից և հակադեմ, աստիճանաձև բարձրանում են պառամենտի անդամների նստատեղերը:

7 Իմպրեսիոնիսմ (Փրանսերեն էպրեսիոն) Impression բառից տպագրություն: Արվեստի ուղղություն, կազմակործել է Ֆրանսիայում, 1860-ից հետո, մի խումբ նկարիչների՝ Մոնե, Բնուար, Սիսլե և Պիսարո, որոշ շափով նաև Մանեի և Դեգայի մասնակցությամբ: Նրանց կուկտիվ առաջին ցուցահանդեսը բացվեց 1874-ին՝ Նադարը լուսանկարի սրահներում (Փարիզ): Արձագանքը հակասական էր. քննադատներից մեկը, օգտագործելով Մանեի էկմպրեսիոն, արևածագը վերնագրված նկարի առաջին բարը, ընդհանրացրեց այդ արտահայտությունը, նկարիչների արվեստն անվանելով էմպրեսիոնիստական:

իմաստավորումը, ինչպիսինն առկա է ոռմանսիկների մոտ, խուսափեցին ինչպես Պյուլի ոք Շավանի ալլարնությունից, այնպես էլ Արևոլդ Բենկլինի նշանաբանությունից: Նրանց հետաքրքրում էր բնության կարծես պատահարար գիտված ու վայրկենապես անհետացող պահը: Վերացվեց տարածուկանությունը բնորոշող երրորդ մեծությունը, առարկաների ծավալյին պատկերումը վերածվեց մակերեսների, ալլաստիկ կերպավորումը տեղի ավելց զուտ տեսողական արտահայտությանը:

Իմպրեսիոնիզմը, ինչպես հաճախ ասվում է, քաղաքացիական արվեստ է: Կ. Մոնեն, Ա. Ռենուարը, Տուլուզ-Լոտրեկը նախընտրում էին նկարել Փարիզի բուլվարներում մաս եկող ամբոխը, քաղաքից ստացած տպավորությունները, կյանքի գրավագները: Թուլվարների սարքավորումները, շենքերը, ծառերը, ամբոխը նրանց նկարներում ստանում էր նույնանման նշանակություն: Առարկան կորցնում է ինքնուրույն իմաստը ու մնում է նրանից արտացոլված գույնների տպավորությունը: Այս իմաստով իմպրեսիոնիստները շատեղեցին նոր աշխարհայացք, այլ առաջարկեցին միայն նոր վերաբերմունք կյանքի հանդեպ: Շ. Բոդերի այն խոսքերը, թե «իսկական ճամփորդները նրանք են, որոնք մեկնում են մեկնելու համար», իմպրեսիոնիզմի առումնով նոր նշանակություն է ստանում: Վերապրել առօրյա կյանքը դյուրագրի ու վաղանցուկ կերպով, փնտրել միայն այն, ինչը կարելի է նկարչականացնել, այս էր իմպրեսիոնիստների թողած ժառանգությունը:

Ճարտարագետության համար իմպրեսիոնիզմը նշանակություն չունեցավ: Սակայն ուշագրավ է հետեւ հանգամանքը: Իմպրեսիոնիստները շըրջապատող իրականության առարկաները վերարտադրել են պատկերի անշարժ: Արդուկտուրայի սահմաններում, իսկ նրանց իմաստային տարրերությունները հետեւընթաց են՝ փոփոխելով առարկային շրջապատող մթնոլորտը: Կ. Մոնեն թողել է «Ծուենի տաճարի» քառասուն տարբերակ, որոնք նկարված են օրվա տարբեր ժամերին և զանազան լուսավորությունների ժամանակ: Այդ նկարներում պատկերված առարկան նույնանում է մթնոլորտի հետ, հասկացողական նշանակություն է ստանում շրջապատող միջավայրի կենսատուուրացից: Ռեալորեն պատկերված առարկան՝ ենթարկված մթնոլորտի փոփոխությանը, թողնում է շարժականի տպավորությունը: Կերպարի և շրջապատիփոխակացությունների ոլորտում առարկան պահելով անփոփոխ, իսկ մըթնոլորտը փոփոխական, իմպրեսիոնիստներն շարժումն արտահայտեցին տարածության մեջ և կենսատու լինելու ունակությամբ իմաստավորեցին շըրջապատը: Դա վերադարձ էր դեպի բնությունը, վերադարձ, որին ձգտում էր գործարանների, շենքերի և օրեցօր աճող երթևեկության մեջ իւեղդվող քաղաքը:

Քաղաքի կերպարի և կառուցվածքի միասնացումը կատարում է մարզը, այդ գործում մասնակից է, սակայն, գերագույն նշանակություն ունեցող միգործոն և բնությունը: Կանաչ առածությունը մտել է քաղաք՝ սկիզբ առնելով նախ որպես պալատների այգի, ապա որպես մենատների պարտեզ և, վերջապես, XIX դարից սկսած, քաղաքի օրգանիզմում տեղադրված կանաչապատ տարածությունները ընդգրկվել են քարձել են քաղաքի սեփականությունը: Քաղաքներում ներդրված բնությունը՝ այդին, պարտեզը, պուրա-

<sup>8</sup> A. Hauser, Storia sociale dell'arte, Torino, 1959, v. IV, p. 257 e sg.

կը հիմնականում կազմակերպված են երկու հայեցալությունների հիմունքներով, որոնք հասել են մեզ ժառանգաբարք: Մնկը բնությունից բնական թողնելու ընապաշտական մոտեցումն է, մյուսը՝ բնությունը ճարտարապետականացնելու հասկցությունը Առաջին մոտեցման համաձայն, քաղաքի օրդանիկը ընդունակելու ձգուումը մշտապես պայմանավորվելու ու շաղկապվելու է երկրամասի մակերևութարանական կառուցվածքի հետ: Այդ իմաստով վերանում է քաղաքը շրջապատից անջատելու անցյալի ձգուումը, միամանակ, քաղաքացին վերագտնում է բնության հետ ունենալիք կապը, բավարարում կենսատու աղբյուրից սնվելու իր պահանջը: Եյուս մոտեցումը բոլորովին այլ է Այն արտահայտվում է այգիների, պարտեղների մշակումներում, ուր գերիշխում է ճարտարապետական միտքը: Այդ իմաստով հարդարված բնության հատվածն ավելի սերտորեն է առնչվում՝ քաղաքի կառուցվածտան հետ: Այգիները, պարտեղները քաղաքի զարգացման ընթացքում ստեղծված ճարտարապետական արժեքներ են, իսկ բնական թողնված հատվածները, եթե չեն աղավաղվել անխնա նոյն կառուցումներով, մասամբ կարող են ուղղություն տալ քաղաքի ընդացմանը, թելափել հողամասերի ընտրությունը և, որ հիմնականն է՝ ապահովել շրջապատի՝ և քաղաքի բնական կապը:

Ինչպիս իմպրեսիոնիստների նկարներում, այնպիս և հոսմանյան Փարիզում առարկան, շենքը, տարածությունը մշակված են երկրաշափական պայմանական միջնդեռ բնության ներգրավումը քաղաքի սահմաններում առաջացնում էր մինուլորտային այն միջավայրը, որի կենսատու ոլորտում մարզը կարող էր կազմակերպել իր աշխատանքն ու հանգիստը: Այս իմաստով ուսցիունալ մտածողությամբ կազմակերպված առօրյան ընթանում էր փոփոխականության, այսինքն շարունակության օրինաշափությունների հիման վրա: Ռացիոնալիստ ու ոռմանտիկ այս հակադիր հայեցալություններից հետեւած դինամիզմը գնալով գերիշխելու է քաղաքների կազմավորման, ուստի և նրա կերպարը բնորոշելու խնդրում:

Հիշատակենք XIX դ. վերջիրում և XX-ի առաջին տասնամյակներում նկարչության և ճարտարապետության մեջ փոխարարձարար արտահայտված հիմնական մի քանի երևությներ ևս, որոնք ելակետային նշանակություն ունեցան արդի ճարտարապետության կերպընկալման բնագավառում:

Պուանտիզմը<sup>9</sup>, ետիմպրեսիոնիստական այդ ուղղությունը նկարչության մեջ նոր արժեքավորում տվեց լուսին:

Քիչ երանգավորված կամ մաքուր գույնի օգտագործումը, որ կիրառում էին Վան Գոգն ու Գոգենը, չեր բավարարում դեպի լուսը մղվող պուանտիստների հույզը, ուստի նրանք ձգուում էին ձեռք բերել տեխնիկական նոր հնարքներ: Այդ նպատակով նրանք դիմեցին գիտությանը ծանոթ մի սկզբունքի, ըստ որի լուսը բաժանելով յոթ հիմնական տարրերի և նորից քաղաքիով դրանք, գիտողը ստանում է լուսի ավելի ուժեղ տպավորություն: Գույներն իրար գումարելու այս փորձին դեռևս 1855—65 թթ. արդեն գիմել էին Տուկանայի մակարիչովի նկարիչները՝ հանձին Ֆատորի, Լեգայի, Սինիորինի, Կոստայի<sup>10</sup>: Գույների բաժանման և քաղաքիման հիմնական սկզբ-

<sup>9</sup> Տվյալ արտահայտությունը կազմված է ֆրանսերեն պուան (point)՝ հետ բառից:

<sup>10</sup> Խուակերեն մակարիչ (macchia) բառից, որ նշանակում է արատ, ստվեր և նկարչության մեջ՝ լայն քաված լուսավոր կամ մուգ գույն:

բունքները ներկայացվել էին քանդակագործ Ա. Գեշիոնիի տեսական գործում (1836—86), իսկ Զ. Սեգանտինին (1859—99) ստեղծել էր արդեն, այսպես կոչված, «գիլիպիոնիստ» ուղղությունը: Սակայն, եթե իտալացի նկարիչները ընտարել էին մուգ և լուսավոր մակերեսները իրար հակադրելու եղանակը, ապա պուանտիստները և հատկապես այդ ուղղությունը հիմադրող Զ. Մոռան (1859—91) ընտրեց մի նոր մոտեցում՝ դիմելով գոնավոր կետերի և սառակետերի, իմպրեսիոնիստների կողմից մասսամբ գործածված հնարիխն: Այդ կետը, որ ներկայացնում է գույնի ամենափոքր մակերեսը, թույլ է տալիս լույսը տարածել նկարի բալոր հատվածներում, նույնիսկ ամենամուգ գույներին կից: Միմյանց հետ սերտորեն առնչվող կամ իրար հակասող կետերի, ստորակետերի եղանակով Սյորան իր նկարներում առաջին և ետին պլանների միջև ստեղծում էր լուսավոր մակերես, իսկ պատկերված կերպարը տեղադրում առաջին կամ երկրորդ շերտում, նրան տալով նվազ կամ առավել լուսավոր երանդավագորում:

Սյորան իր կյանքի վերջին տարիներին սկսեց օգտագործել համաշափությունների հանրածանոթ կանոններ, ինչպիսիք են ոսկե հատումը և եղիպատկան եռանկյունը (տե՛ս նրա «Եվլուպական համերգ» կամ «Պարագը» նկարները): Սա միանգամայն հասկանալի կողմնորոշումն էր, հիրավի կետը, ստորակետը ինքնին շունեն երկրաշափական կայունություն, հետևաբար, հարկ էր նկարը հորինել հարաբերությունների տրամարանական կառուցածքի հիմունքներով: Եվ, սակայն, պատկերված ձևը իմաստով մասնավորելու պահանջը պուանտիստների արվեստում կորցրել էր իր ամբողջականությունը, նրանք չեն կարողանում հասնել այդ նպատակին, որովհետեւ կիրաւող աեխնիկայում դժագրությունը և գույնը մնում են իրարից անշատ՝ մեկը որպես կառուցող տարր, մյուսը որպես նկարը պատող լուսավոր բոլոր:

Լույսին ձգտելու պահանջը<sup>11</sup>, անցյալ դարի կեսերին բացահայտվեց հատկապես լոնդոնում և Փարիզում կառուցված, արդյունաբերության արտադրանքների համաշխարհային ցուցահանդեսների ապակեպատ, պողպատաշեն տաղավարների մեջ: Այդ տաղավարները հիմնականում իմաստավորված են բնության և ապակեպատ բոլոր ճակատներից ներս խուժող լույսի առկայության հանգամանքով և այնուամենայնիվ այդ տաղավարներն առավելապես ճարտարագիտական են, ուստի արվեստի իմաստով՝ բավական շեղոք: Պողպատաշեն, ապակեպատ տաղավարը շունի իմաստավորված, ուրույն ձև, հետևաբար որպես կրավորական երևույթ ապրում է լույսի և բնության միջնորդական օրվա բոլոր ժամերին փոփոխվող իմպրեսիոնիստական միջավայրում:

Այս խնդրի առումով ուշագրության է արժանի կերպարագծված (պլաստիկ) տարածության, ուստի և հեռանկարային ընկալման հարցի հատկապես Սեղանի, Վան Գոգի և որոշ շափով Գոգենի ըմբռնումը: Եթե Վերածննդի վարպետներն առարկայական և հոգեկան աշխարհը վերարտադրում էին տարածության երկրաշափական, մտային պատկերի սահմաններում, ապա իմ-

<sup>11</sup> Այս երեսությունը կապված է XII դ. ճարտարապետության, հատկապես գոթականում զարգացում գտած «լույսի ճարտարապետության» (Licht-Architektur) հասկացությանը (տե՛ս Sach's-Badstübler-Neumayr, Christliche Ikonographie in Stichworten, Leipzig, 1973 S. 236).

պրեսիոնիստները զանց առնելով որևէ նախադրյալ հայեցողություն, տարածությունը պատկերելու նղանակը հետևյանում էին իրողությունից ստացած անմիջական տպագորությունից: Այդպիս կերպարագծված ավանդական տարածությունը փոխարինվեց ամեն մի նկարում ստացվող, հետևաբար և փոփոխվող տարածության հասկացությամբ:

— Հաղթաշարվեց բնությունը բնականորեն պատկերելու դեռևս պանտեկիզմից հարատևեղ նատուրալիստական մոտեցումը և ելակետային նշանակություն ստացավ իրականության գդայական հակասությունից ելնող կերպավորման սկզբունքը: Տվյալ շրջանին բնորոշ էր արվեստագետի մեկուսացումը: Նրանցից ամեն մեկը կառուցեց պատկերների իր աշխարհը, նրանցից ամեն մեկը պայքարեց մյուսի գեմ, իրեն տեսավ իրեւ ժամանակից դուրս գործող արվեստագետ (Մեզան) կամ բոլորից անշատ ընտրյալ (Գոգեն): Մինչդեռ Վան Գոգը կրելով իր մեջ անձնական ողբերգությունը, փորձում էր օճնել բոլորին՝ մարդուն պարզեցնելով իր նկարների, գույների երշանկությունը: Արվեստը ընտրանիների հատուկ շնորհը դարձնելու փարիզյան դպրոցի ձգտումին Վան Գոգը հակադրեց Ֆլաման դպրոցին հատուկ (տե՛ս 8. Բոշ և հետեազյում զարգացած Բրյուգսելի, Անվերսի «սոցիալիստ ուելիստների նկարչական դպրոցը») ժողովրդի համար ստեղծագործիլու պատգամը: Իմպրեսիոնիստների նկարներում առարկան վերաբերագովում էր դուռային արժեքների միջոցով, որոնք համընկնում էին գծային պատկերի հետ, հետեաբար գիծը կորցնում էր տարածությունը երկրաշափորեն կառուցելու գերիշխանությունը և նույնանում էր գույնի հետ, երբեմն էլ կորցնում իր արժեքը: Մինչդեռ Վերածննդի ժամանակ ուացիոնալ կերպով պատկերելու հասկացությանը հատուկ էր գիծը և գույնը լուսի միակենտրոն ալգրուրին հպատակեցնելու միտումը: Այդ հասկացությունը ընդունելով՝ անցյալ դարի 90-ական թվականների նկարիչները առաջարկեցին բազմակենտրոնացման գաղափարը: Վան Գոգը հայտնարերեց գույնի հեռանկարային նշանակությունը, հստակ գույնի՝ հեռավորությունը արտահայտելու ունակությունը: Այսպիս, եթե կապույտը նկարներում առաջանում է խորություն, ապա դեղինը առաջին պլան է մղում կերպարը: Գույնն ստանում է ինքնուրուցնություն, վերանում են երանգավորումները, ստվերները: Անցումը մեկ պլանից մյուսը կատարվում է մաքուր, հստակ գույների կիրարկումով՝ առանց նըրբերանգային փոխակերպումների: Վան Գոգը իմաստավորեց գույնը տարածականությունը արտահայտող նշանակությամբ, իսկ Մեզանը իր հերթին վերաբերավ պարզ ծավալների կարեռությունը: Ահա հենց դրանք՝ պարզ ծավալը և հստակ գույնը պետք է դառնային արդի ճարտարապետության ձեր ընկալելու, նրա ինքնուրուցնությունը ապահովելու դրույթներ<sup>12</sup>:

Այսպես, դարավերջին նկարիչների և ճարտարապետների զուգահեռաբար և փոխադարձ ազդեցություններով իրականացված հայտնաբերումները բերում են հետևյալ եղրակացության:

<sup>12</sup> Միավոր ծավալների միջոցով աշխարհը պատկերելու հասկացությունը հատուկ էր միշտակարի հայ ճարտարապետությանը. հեռանկարը պատկերվում էր միխավոր արժեքների հորինվածքային հարաբերությունների, առավել կամ նվազ լափով շեշտված ծավալների, դրանց միջև և դրանց ու բնության միջև հստատված կապակցությունների միջոցով: Նույն առումով նշնորդ, որ միակներունացումը հատուկ էր ամեն մի ծավալին, իսկ ծավաներից կազմված համակառուցը ստեղծվում էր բազմակենտրոն տարածության հասկացությամբ:

— Վերանում է Հեռանկարի տեսողական կենտրոնը, փշրվում է տարածության և ուսագափառությանը (ֆուտուրիզմ):

— Հեռանկարին հատուկ կարձացման երևությը և խորությունների արժեքավորումը արտահայտվում է՝ հակադրելով միմյանց հիմնական գույնները և, այսպես կոչված, «ոչ գույնները» (Դե Ստիլ, Սալկիլ՝ սուպրեմատիզմ):

— Բաղադրյալ ծավանները չեն գտնվում նույն դիտադաշտում, դրանք ընկալվում են դիտողի շարժման ընթացքում և ստացված տպավորությունների շարքը ստեղծում է ամբողջության գաղափարը: Ապակենտրոն հեռանկարի նման շարժունակ հասկացությունը բնորոշ էր վիեննական Սիցեսիոնին, իսկ մակերեսների միջոցով արտահայտվածը՝ կորիստներին:

— Թաղաթաշինության ընագավառում բազմակենտրոնությունն արտահայտվեց անգլիական՝ թաղաթ-այգու (1898), ամերիկյան Գրինբրելդ-Թաունի (1928), Բերլագեի շենք-փողոց միավորների (Ամստերդամի ընդացնում, 1902—1917) իրագործումներով: Հոռուարդի և Բերլագեի առաջարկները որոշի պետք է դառնային են: Սաարինեի նախագծած (երբեք չիրագործված) Հելսինկի գլխավոր հատակագծի համար (1918):

Տարածությունը պատկերող խստորեն սահմանված եռաչափի կազմի հաղթահարումը հետևանքն էր այն շարժիչ ուժերի, որոնք բխում էին սոցիալ-տնտեսական իրադրության փոփոխություններից, զարգացումը խթանող հակադիր հասկացությունների դրվածքից: Դրվածք, որը սկիզբ առավ նախ Միջնադար-Վերածնունդ երկրայությունից, ապա լուսավորչականության և ոռմանտիզմի հակամետ իրողություններից:

Վերը նշված տարրեր անսակետների ճշմարիտ լինելու գնահատության մեջ վճռական են դառնում ինչպես արդի արվեստի ստեղծած բազմարժեք տարածության հասկացությունը, այնպես էլ շարժունակությունը: Վերջիններից էլ սկիզբ առավ այսօրվա ճարտարապեսությունը բնորոշող՝ սոցիալական տարածության գաղափարը, պատմականորեն թելադրված ու արդարացված այդ հասկացությունը:

Ուն ըստ էության արվեստի գործում արտաբերվող՝ նշանաբանորեն (սեմանտիկա) և տեխնիկապես միասնական, պատմականորեն ուրվագծված այն երևույթն է, որը երբ արտահայտում է տվյալ շրջանի աշխարհներակալումը, ստանում է համընդհանուր նշանակություն։ Ոճը, եթե այն գերազանցութեն ճարտարապետական է, իրեն է ենթարկում կերպարվեստը և կիրառական արվեստները։

Հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրներում զարգացում գտած Ար Նովոյի բնորոշիչ ասրը թե՛ իմաստային, թե՛ ոճական առումով համարվում է ազատ գիծը։ Դեռևս 1870—80 թթ. Անգլիայում ընդհանուր գործածություն գտած ոլորապտույտ ազատ գիծը տարածվեց նաև ճարտարապետության մեջ՝ նախ որպես հարզարանք, այնուհետև ամենալայն իմաստով օգտագործվեց որպես արվեստների լեզվական ձևակերպմանը միասնություն հաղորդող ելակետային գործոն։ Այս առումով Ար Նովոյի առաջատար գործերից է բելգիացի ճարտարապետ Վիկտոր Հորտայի (Victor Horta 1861—1947) Բրյուսելում կառուցած Տասսել տունը (1892—1893)։

Ազատ գծի միջոցով ձեզ իմաստով հատկանշելու հակումը խոր արմատներ ունի արվեստի պատմության մեջ։ Այս իմաստով պրեռաֆայելիզմը, Արտ Շառ Կրաֆտը, օրինատալիզմը, սիմվոլիզմը, նոր գոթականությունը մեծապես նպաստել են Ար Նովոյի առաջացմանը։

Կա, սակայն, կարենոր մի հանգամանք։ Առարկաների մակերեսները գեղազարդող տարրից մինչև եռաչափ հորինվածքի մակերեսներին և ծավալներին շարումակություն հաղորդող ինքնուրույն էլություն՝ այսպես մեկնարանեց Ար Նովոն ազատ գիծը։ Գծի՝ գեղազարդականից մինչև կառուցողականի հասցված դերը, անշուշտ, չէր կարող համապատասխանել ճարտարապետության սկզբանքին, այլ կարող էր գոյատել գեղագիտական որոշ հասկացության ոլորտում միայն։ Այս առումով Ար Նովոն ոճ չէ, այլ Արևմտյան Եվրոպայում մեծ տարածում գտած արվեստի մի երևույթ։ որը ելակետային

<sup>1</sup> Ար Նովո (Art Nouveau) ֆրանսերեն նշանակում է նոր արվեստ և սկզբնապես օգտագործել է բնորոշելու համար կիրառական արվեստների ոճը։ 1895-ին Փարիզում Սամուել Բրինգի խանութը ցուցադրել և վաճառքի է հանել արվեստի առարկաներ և որովհետև դրանք չորահատուկ ոճով են պատրաստված եղեն։ Ս. Բրինգը խանութի ցուցասահմանի վրա արձանագրել էր Ար Նովո, այսինքն՝ նոր արվեստի գործեր։

Ար Նովոն հետագայում (1890—1910) հատկանշական դարձավ հատկապես կերպարվեստի և ճարտարապետության համար։

նշանակություն ունեցավ ճարտարապետության և կիրառական արվեստների հետագա զարդարման համար:

Վերլուծենք այս ուղղությանը բնորոշ ակունք՝ պրեսաֆայելիզմը:

Դ. Զ. Ռուսետտին, Ու. Հ. Հենտր, Ջ. Է. Միլլեն և թ. Ռուլները 1848-ին հիմնեցին «Պրեռաֆայելիստների եղբայրությունը», և ինչպես հուշում է անվանումը, նրանց նպատակն էր վերադառնույթ Ռաֆայելին նախորդած XIV-XV դդ. իտալական արվեստին: Նման կողմնորոշումը զուտ ձաշակի հարց էր, այլ ուներ կերպընկալման և իմաստային նշանակություն:

Գիրլանդայոի (1449-1494), Ա. Պոլլայոլոյի (1433-1498), Ս. Բոտիշելլիի (1445-1510), Լ. Սինյորելլիի (1441-1523) գեղանկարչությունը զարդացնելով տարածության և ձևերի ավելի ինտիմ կապակցություններ, հաղթահարեցին տարածության և կերպարների կամայականորեն սահմանված փոխկապակցությունը<sup>2</sup> և ճանապարհ բացեցին աշխարհի իրականությունն անհատական վերապրումների ոլորտում արտահայտելու, մարդակենտրոն հայեցողության համար: Բոտիշելլին և մյուս արվեստագետները կարողացան անհատական ապրումները հասցնել համբուղանուր նշանակություն ունեցող արտահայտությունների: Ընդ որում նկարիները հարստացնում էին կատավները ծաղիկների, տարասեն կենդանիների, նրազեղ հանդերձների, կտավների, գորգերի<sup>3</sup> պատկերումով, որոնք նկարի ընդհանուր բովանդակությանը տալիս էին հերթափային բնույթ:

Պրեռաֆայելիստները փնտրում էին անհատական ապրումների, զգայական աշխարհի նկարչական լեզուն: Այդ իմաստով նրանց ուշագրությունը կենտրոնացավ Գիրլանդայոի, Պոլլայոլոյի, բայց հատկապես Բոտիշելլիի<sup>4</sup> նկարչության վրա նրանց հետաքրքրողը ոչ այնքան վերջիններիս դիցաբանությունից վերցրած թիմաստիկան էր, որքան նշանաբանական նոր իմաստավորումների ունակությամբ օժտված դարդային տարրերը: Զարդային պատկերների օգտագործումը բնորոշ եղան նաև պրեռաֆայելիստների համար, այն տարրերությամբ միայն, որ ավալ թիմաստիկան վերականացավորելով նոր բովանդակությամբ, նրանց հաշողվեց գտնել գրաֆիկայի բնույթ ունեցող նկարչական լեզու:

Անցյալի արվեստների հետ կապակցություններ հաստատելը բնորոշ էր նոր կազմակորվող ուղղություններին: Եվ եթե սկզբնադրյուրներ փնտրելու ձգտումը XIX դ. ակադեմիզմին, ուկիւլաներին հակառակ հետևանք էր, ապա ձերնկալման անմիջականությունն արտահայտչամիջոցների հստակությունը վերագտնելու տեսք էր միաժամանակ:

Այս երեսությունը աստիճանական զարդարման փուլերով իր դրսեռումը գտավ նախ ավելի աղոտ Սեղանի վերջին նկարներում, հետագայում որոշակի՝ կուրիստների, զադակիստների, ինչպես և Դեր Ստիլի (1917), էսպրի նու-

<sup>2</sup> Տարածության և կերպարի կամայական ընկալումը արտահայտված է գերազանցական հետեւյալ նկարիների ստեղծագործություններում: Պիերո գելլա Ֆրանկեսկա (1410-1492), Անդրեա գելլա Կաստանյո (1423-1457), Դոնենիլի Վենեցիան (1405-1461):

<sup>3</sup> Բննոցը Գոցոլին (1420-1497) իր նկարներում պատկերում էր կտավներ, գորգեր, որոնց ունական մշակումը մասնագետները համարում են հայկական:

<sup>4</sup> Ս. Բոտիշելլիի արվեստը մոտավորապես երեք և կես դար մատնվել էր մոռացության և պրեռաֆայելիստների մեծագույն արքեներից եղավ վերագտնել և վերագնահատել հանճարեղ ստեղծագործողի նկարչությունը, ինչպես XIV և XV դարերի իտալական ամբողջ արվեստը:

վոյի (1920), իտալական ռացիոնալիստների (1927) գեղագիտական հայեցող զություններում։ Պարզության ձգտումն իր հերթին առաջ բերեց պրիմիախիզը։ Այժմեականություն ստացան ափրիկյան արվեստները, նախապատմական շրջանի Փոքր Ասիայի, Իրանի, Մերձավոր Արևելքի հնագույն շրջանների գործերը, որոնք լույս աշխարհ էին բերվում այդ շրջանում լայնորեն ծավալված պեղումներով։

Պարզությունը՝ Ար նուվոյի ըմբռնմամբ չէր նշանակում վերադարձ գեպի հիմնական ձևերը կամ ինչ-որ պրիմիտիվիզմ։ Այն հիմնականում հետապնդում էր արտահայտության անմիջականություն։ Սակայն Ար նուվոյի շրջանում կառուցված շենքերը պարզություն չունեն և ճակատներն ու ներքին հարդարանքները հաճախ ծանրաբեռնված են ամեն տեսակի զարդերով, և որոշ չափով հիշեցնում են ողկոկյան երանգավորումներ։ Այդ կարելի է տեսնել բելգիացի Վ. Հորտայի, Հ. Վան դե Վելդեի, Վիեննայի դպրոցին պատկանող՝ Օ. Վագների, Յ. Մ. Օլբրիխի կամ ֆրանսիացի՝ Հ. Գիմարի (Փարիզի մետրոյի մուտքերը, 1900 թ.) ստեղծագործություններում։ Հետեւարոր, անմիջականության ձգտումը հարկ է փնտրել Ար նուվոյին հաղորդակից պրեռաֆայելիստ նկարիչների մոտ, որոնց արվեստը, ինչպես նշել ենր, ավելի գեղանկարչական էր, ուստի ավելի հարազատ ճարտարապետի պատկերներնկալմանը։ Գծային արտահայտչամիջոցներով, դիցուք Ու. Կեինին, Ս. Բրոդլեին վերարտադրում էին շարժումը (Ու. Կեինի, «Պարուհու ցատկի գծային մեկնարանությունը») և նկարում առկա ոեալ կերպարի վերացական իմաստը։ Բացարենք, թե ինչ նշանակություն ուներ այս մոտեցումը ճարտարապետության համար։ Պրեռաֆայելիստները որոշադրում են պատկերված թեման՝ առանց դիմելու կերպարների արտահայտչությանը, եղելության ոեալ մեկնարանությանը։ Զեն օգտագործում նաև դիցարանությունից ծանոթ կերպարներ կամ ավանդաբար հաստատված նկարչական արտահայտություններ։ Այն ամենը, ինչ պատկերված է նրանց նկարներում, ունի նշանաբանական իմաստ, ոեալ առկա է այնքանով, որքանով կարող է դիտողին հուշել թեմայի հիմնական միտքը, նկարի ամբողջ շարահյուսության՝ հերիթային, քնարերգական մթնոլորտում արտահայտված այդ հիմնական դորոննը։

Նման բավական բարդ ընկալումը վերարտադրելու համար պրեռաֆայելիստները նկարչական թիման բաժանում էին տարբեր, հաճախ իրարից անշատ պատկերների, որոնք մշակված էին ոեալ իրերի նմանությամբ, իսկ իմաստային առումով՝ նշանարանական էին։ Նկարի հատվածները պրեռաֆայելիստները իրար էր շաղկապում ոլորապառությամբ, առաջ գծային բարձր մասաւային փոխկապակցություններ ստեղծող տարրեր, այդ առումով կառուցվածքային նշանակություն ունեին։

Եթե այս կարգի փորձենք հանել գծային կամ գույներով արտահայտված շաղկապակները, նկարը մեծապես կիմաստազրկվի և կստանալի լուսարտակիվ նշանակություն։ Ոլորապառությամբ էլեկտրոնական կապակցություններ հաստատող հոսանք է՝ հարտարապետական առումով տարրեր տարածությունները շաղկապուլ, նրանց սահմաններում ծավալող

5 1842-ին ֆրանսիական հյուպատոս Պ. Է. Բոտտուն հայտնաբերեց նինիվը, 1845-ին անդիւդիացի Ա. Լ. Լամբը նեմուրը, նույն տարին Զ. Է. Թելլը Ուր բաղբաց, 1876-ին Հ. Շիմանը սկիզբ գրեց Միքենեի պեղումներին և այլն։

գործունեությունը իրականացնող ֆունկցիա: Գործառնական, այդ զուտ զգայնական ուժը, երբ ամբողջապես ներթափանցում է ձեկի մեջ, արվեստի արտահայտությունը ստանում է կերպարագծված (պլաստիկ) մշակում, մի քան, որն առկա է ինչպես Մունխի, Վան Գոգի նկարներում, որոնցում առարկաները ալիքավորվում են, այնպես էլ Ս. Գաուգիի շենքերում, ուր չկան ուղիղ դժեր, այլ ամեն ինչ կոր է, մարմնային, ֆիզիկապես շոշափելի:

Այս նույն փորձեց պատկերի և մտքի կապակցությունը դրսերել առանց կրելու տեխնիկական համակարգերի, նոր դասականի ակադեմիկ հասկցությունների աղղեցությունները և ոռմանտիկ զգայնությամբ օգտագործեց աղատ գիծը, դիմամիջմը արտահայտող գրաֆիկական միջոցը<sup>6</sup>:

XIX դ. վերշերին Ար Նույնո՞ւ եվրոպական երկրներում հանդես եկավ տարբեր անվանումներով՝ Գիմանիալում կոչվեց՝ Յունգենդստիլ (Jugendstil), Ավստրիալում՝ Սեցեսիոն (Sezessionsstil), Իսպանիալում՝ մոդեռնիզմ (Modernism), Ֆրանսիալում՝ գիմարլան ոճ<sup>7</sup> (style Guimard), իսկ Բուլղարում՝ Լիբերտի կամ Ֆլորեալ (stile liberti, stile floreale):

Այս նույնի հետապնդած հիմնական միտումները կարող են ամփոփվել հետևյալ նյուրանգումներում.

— Սահմանապատել կիրառական արվեստները ոճական վերաբետադրամներից և փնտրել նորը ժողովորդների ձեռագործ աշխատանքներում:

<sup>6</sup> Եվրոպական գեղագիտական հայեցողության մեջ աղատ գիծի նշանակությունը մեծ կարևորություն ստացավ հատկապես XVIII—XIX դդ. արվեստների բնապահում և այս իմաստով հարկ է հիշել անգլիացի նկարիչ, փորագրիչ, գրող Ու. Հոգարթին (William Hogarth, 1697—1764), նա 1753-ին լույսում «Հրատարակած իր «The Analysis of Beauty» գրքում արվեստի բնական մտքի պատմության մեջ առաջին անգամ արվեստի գործը քննեց ձեզ վերլուծելու հիմունքներով: Այդ իմաստով 8. 8. Վինկելմանի (1717—1788) և Գ. Յ. Լեսինինի (1729—81) հետ մեկտեղ Հոգարթին կարելի է համարել եվրոպական գեղագիտության ուսմունքի հիմնադիմներից մեջը: Նրա մեր թեմայի հետ անշվարժ մտքերից նշնչն հետևյալը.

— արվեստի գործում հարկ է արտահայտել «փոփոխականության պահանջը».

— միտքը և աշը հրապուրելու նպատակով նկարի շարահյուսությունը պետք է լինի ժամանակաշաբաթաւում:

— ողորապուտը և օձընթաց գիծը Հոգարթը անվանում է՝ Line of Beauty, գեղեցկության գիծ:

Ու. Հոգարթը իր տրակտատում բնագատում է Վերածննդի գեղագիտության հիմնական ստորոտությունները՝ սիմետրիա, ճակատանություն, զուգահեռություն, կենտրոնականություն և այլն, և այդ դիրքերից մեկնելով հակածառաւմ լորդ Բերլինգտոնի (Lord Burlington) նոր պալատիաների, ակադեմիայի գեղագիտական հայացքների գեմ:

Ակադ XVIII դարից եվրոպական միտքը, փնտրելով ինքնուրույնության ուղին, ստեղծականությաց իտալական Վերածննդին, միաժամանակ, սակայն, դասական արվեստից և նույն վերածննդից քաղեց բուրու այն հայեցողությանները, որոնց հիմունքներով կարողացավ ստեղծել համաշվարպահն նշանակություն ունեցող դասական նոր արվեստը:

Անցյալի արվեստը վերահմաստավորելու, նոր ճաշակը մշակելու գործում անուրանալի է Ու. Հոգարթի բերած նպատառը (տե՛ս F. Antal, Hogarth and His Place in European Art London, 1961).

<sup>7</sup> Դրանք եվրոպական հատուկ համընդհանուր երեսությունը՝ կոչվեց նաև 1900-ի ոճ:

<sup>8</sup> Հեկտոր Գիմար (Hector Guimard, 1867—1942), Վիկտոր Հերուայի հետևորդ, Փարիզում կառուցել է Կաստել Բերաֆեն (1897—98), մետրոյի մուտքերը (1900) և նրանց հարդարանքներում օգտագործել է բուսական գարդային ձևեր: Մետրոյի մուտքերի գեղազարդական եղանակը Փարիզում դարձավ հեղանակի առարկա ու ժողովրդականացավ Գիմարի կամ Գիմարյան ոճի արտահայտությունը:

<sup>9</sup> Այս նույն իր հերթին տուրք տվեց, ալսպես կոչված, օրինատալիզմին, հնդկական, արարական, հատկապես ճապոնական արվեստի աղղեցությանը:

— Զերբազատված XIX դ. ճարտարապետների կաշկանդվածությունից, լայնորեն օգտագործվեցին երկաթբետոնը, մետաղները, ապակին:

— Հ. Վան դե Վելդեն հիմնեց օրգանական արվեստը:

— XIX դ. վերջերին գերիշխող ոճական խառնաշփոթ ուղարտում Ար Նուվոն ներմուծեց ձկնակալման համընդհանուր հասկացություն և գեղագիտական-էթիկական նոր նկատառումներից ենելով խրախուսեց արվեստագետներին հանդես գալու առօրյա օգտագործման առարկաների, կահավորումների, շենքերի հարդարանքների նորարար ձևերով:

— Հետեւելով Ռասկինին, Մորիսին և Արտուր ընդ Կրաֆտի արվեստագետներին, Ար Նուվոն հակարվեց մեքենային և նկարիչներին, քանդակագործներին, ճարտարապետներին առաջարկեց վերադառնալ դեպի բնությունը, օգտագործելով թե մեքենան, այլ արհեստավորի գործիքը կամ, ինչպես իրենք էին անվանում, «Ճեռորդ երկարացնող՝ հնարքը»:

Այսքանից հետո հարկ ենք համարում հակիրճ բնութագրել Թելզիայի մտավորական այն միջավայրը, ուր կրթություն են ստացել Ար Նուվոյի առաջին կարկառուն դեմքերը՝ ճարտարապետներ Վ. Հորտան և Պ. Հանքարը, կիրառական արվեստները վերափոխող՝ Հ. Վան դե Վելդեն և Սերյուրիկի-Բովեն<sup>10</sup>:

Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իսպանիայում առաջացած արդի արվեստը կազմավորուղ մշակութային մեծ հոսանքների ոլորտում, 1880—95 թթ. Բրյուսելը դարձավ ամբողջ Եվրոպայի նոր մշակութի կենտրոնը: Երկրի քաղաքական խաղաղ մթնոլորտը, նախապաշտումներից զուրկ, ազատատենչ, կենսուրախ, մեծ ազգերի միջև ընկած փոքր այդ երկիրը, կարողացավ դառնալ հանդուզն մտքերի ամենից բարձնպատճ միջավայր:

«Արվեստը հավերժականորեն անմիջական և ազատ այն ձեռնարկն է, որի միջոցով մարդք ազդում է, վերափոխում և իր նոր մտքին է պատշաճեցնում իր հսկ միջավայրը»: Այս տողերը տպագրված են Օկտավ Մոսի (Octave Maus, 1856—1919), Էդմոն Պիկարի (Edmond Picard, 1835—1924) 1881-ին հիմնադրած «Էլ Ար Մոդերն» (L'Art Moderne) շաբաթաթերթում, որը լույս տեսավ երեսուն տարի և արձագանքեց այդ ժամանակաշրջանի արվեստների ամենահանդուզն, նորարար մտքերին: Այս իմաստով «Էլ Ար Մոդերն» պատմագիտների համար անգնահատելի ազդյուր է: Հանդեսի շուրջը համախմբվեցին երիտասարդ արվեստագետներ Ֆերդինան Փնորքը, Ա. Վ. Ֆինիքը, մեծատաղանդ նկարիչ Ժ. Էնսորը (James Ensor), Ժ. Սոորոպոր, որոնք 1884—93-ին հիմնեցին XX-ականների (Les XX) միությունը, որի քարտուզարը դարձավ Օ. Մոզը: Դեռևս 1884-ին Բրյուսելում կազմակերպված ցուցահանդեսին մասնակցել էին Ռոդենը, Ուինստոնը, Մ. Լիբերմանը, 1886-ին՝ Ռենուարը, 1887-ին՝ Սյուրան, Պիսարոն, Մորիսոն, 1889-ին՝ Վան Գոգը և Սեղանը: Որպես մշակութային կենտրոն Բրյուսել էին այցելում Ռեմբոն, Վերլենը, այնտեղ էր ապրում Վերնարնը: Խսկ էկու լիբերը

<sup>10</sup> Տվյալ հարցի վերաբերյալ Հ. Վան դե Վելդեն իր գրքում՝ Die Renaissance im Modernen Kunstgewerbe (Լայպցիգ, 1901) գրում է հետեւյալը. «Այդ ժամանակ միասին չորսին կատարած գործերը քննվեցին և նկարագրվեցին դրանք՝ նշելով բոլորին բնորոշ մի հատկություն՝ նորությունը, Այդպես էլ սկիզբ առաջ Ար Նուվո (նոր արվեստ) տերմինը»:

(Ecole Libre) գարձել է բարձրագույն ուսումնական կարևոր կենտրոններից մեկը եվրոպայում<sup>11</sup>:

0. Մոդը 1894-ին հիմնեց «Լա լիբրետ էստետիկ» (La liberté Esthétique) հանդիսը, որի միջոցով տարածում ստացան Ա. Մորիսի, Զ. Ռասկինի, Ս. Հ. Մեկմուրզովի (1851—1942), Բ. Էշրիի (1863—1942) մտքերն ու գործերը: Այդ նույն հանդիսի միջոցով Հ. Վան դե Վելդեն տարածեց իր գաղափարները, ընթերցողին ծանոթացրեց արդի արվեստի մեջ Եվրոպայում և Ամերիկայում ժավալված դրծումներին:

Տեսության բնագավառում տարված ուսումնասիրությունները, շարունակ կազմուերպված ցուցահանդեսները և հատկապես Վ. Հորտայի կառուցած շենքերը, Վան դե Վելդեի իրագործած կահույքները բելգիական նոր արվեստի ամենացալուուն արտահայտություններն են:

Այս ամենից հետո կարելի է առանձնացնել Ար Նովոյի ճարտարապետական ձևերի մշակման երկու հիմնական մոտեցում: Նախ՝ ժավալների և հարդարանքների հաղորդակցությունը հիմնված է մակերեսների վրա (Վ. Հորտա, Հ. Վան դե Վելդե, Զ. Բ. Մեկինտոշ) և երկրորդ՝ ժավալների և հարդարանքների հաղորդակցությունը ներհամարկարդային է, ձեզ մշակվում է այդ երկու գործուների միաձուլմամբ (Անտոնիո Գաուդի և Բարսելոնայում ու Վալենսիայում զարգացուած գոտած՝ կատալոնիական զպրոցի ներկայացուցիչներ):

Առաջարկված բաժանումը պայմանական է, ինչպես կտեսնենք ուսումնասիրության ընթացքում, այդ երկուսի միջև հաճախ առաջանում են որոշակի փոխկապակցություններ, բազմաշերտ իմաստավորումներ:

## ✓ Առաջաւ ՄՈՏԵՑՈՒՄ

Արդի ճարտարապետության պատմության մեջ բելգիացի ճարտարապետ Վիկտոր Հորտա (Victor Horta, 1861—1947) մուաթ է դրծել Բրյուսելում կառուցած՝ Տասսելի եռահարկ բնակելի կառուցի և, այսպես կոչված, Փողովրդական տան (Maison du Peuple, 1897) շնորհիվ<sup>12</sup>: Երկու շենքերն ել հիշատակվում և վերլուծվում են մասնագիտական բոլոր գրեթերում:

Տասսելի բնակելի տունը քառահարկ է, առնված է հարևան տների միջև և չունի կողմանակի լուսավորություն: Հատակագիծը փողոցից դեպի գավիթը ձգված, մեկը երկուս և կեսի հարաբերությամբ քառանկյունի է: Ներքին տարածությունը բաժանված է չորս հատվածների, փողոցի կողմում՝ բաշխված են ընդհանուր բնույթի ունեցող անյակները, իսկ կես հարկով՝ ավելի բարձր տեղադրված և դեպի բակը ձգվող հատվածներում կազմակերպված է ընտանիքի ավելի մտերիմ կյանքը: Վերջին հարկում տեղ են գտնել բոլոր սպասարկու բաժինները: Ենթի երկրորդ հատվածում արտաքին:

<sup>11</sup> Եկու կիրքի բարձրագույն ուսումնական հաստատության Բյուզանդագիտության բաժնում՝ դասավանդել են Ն. Ալբոնցը, Ս. Տեր-Ներսեսյանը, Հ. Գրեգորյանը: Ալբեղ են ուսանել Գ. Վարուժանը և Կոստան Զարյանը:

<sup>12</sup> Վ. Հորտայի կառուցած Փողովրդական տունը զոհ գնաց Հողամասերի հետագա յուրացման աշխատանքների ժամանակ: Հորտայի մասին՝ P. Francastel, L'Arte e la civiltà moderna, Milano, 1959, p. 188. B. Zevi, Architettura moderna, Torino, 1954, pp. 65—67.

պատին կից առկա է մետաղյա, փայտե աստիճաններով, երկու կողմերով դեպի ներս բացվող աստիճանավանդակը: Ապակեպատ առաստաղից բնական լուսը ներխուժում է ներս: Արտաքուստ քարեպատ ճակատն ունի մուտքի բարավորից վեր տեղադրված դուրս ընկած, ապակեպատ, բազմանիստ պատուհան:

Այժմ կանգ առնենք Վ. Հորտայի ներդրած այն լուծումների վրա, որոնք նորարական էին առդի ճարտարապետության մեջ: Միջանկյալ աստիճանների առկայությամբ նույն հարկի հատվածները աեղադրելով մինչև կես հարկ հասնող տարրեր բարձրությունների վրա, սենյակներին ըստ էության տրվել է տարրեր որակավորում: Սույն հնարքը քառանկյունի, բավական նեղ տարածությանը հաղորդում է պլաստիկ ձև, մի հատկանիշ, որը հետագայում ընդհանրացված ձևով կիրառում դուավ առաջին համաշխարհային պատերազմից հետո կառուցված բնակելի շենքերում: Հարկերի կերպարագծային նման կազմը ավելի ուշ լը Կորրյուզին անվանեց ազատ հատակագիծ (le plan libre):

Վ. Հորտան շենքի արտաքին քարաշեն պատերից ներս օգտագործել է մետաղյա կառուց, այդ առամով շարունակելով Հ. Լաբրուստի մոտեցումը (Հիշենք Փարիզի Սեն Ժեներեկի, 1843—50 և Ազգային գրադարանները, 1858—68), Բնակելի շենքերում արտաքին պատերը կառուցից անշատելու, մեկի և յուսի համար տարրեր շինանյութերը օգագործելու եղանակը այսօր էլ չի կորցը իր այժմեականությունը: Հորտան, սակայն, այդ շրջանի համար որոշ հանդինություն ունեցավ և շենքը կրող մետաղյա կառուցվածքը դուրս բերեց ճակատի ապակեպատ հատվածներում:

1897-ին Բրյուսելում կառուցած ֆողովուրական տան (Maison du Peuple) ճակատները Հորտան իրականացրել է քարի և աղյուսի նեղ շերտերից, որոնց միջև տեղադրվել է ապակեպատված մետաղյա կառուցվածքը<sup>13</sup>, Մետաղը մյուս շինանյութերի հետ միասին ճակատային տարր դարձնելու ձգումը արդեն առկա էր Անգլիայում: Հիշենք Զոն Նաշի՝ Բրյաֆոնում 1818-ին կառուցած Թագավորական տաղավարը կամ XIX դարում Միացյալ նահանգներում իրագործված մի քանի շենքերը: Շինարարական նման եղանակը հանգեցրեց շինանյութերի նոր արժեքավորումն, որի հետևանքով քարը, աղյուսը գնալով վերածվեցին պատերը երեսպատող նյութերի, իսկ կրելու գործառնությունը ընկալ մետաղի կամ երկաթբետոնի վրա:

Երեսպատումի և կառուցվածքի ջանառումը մեղմացնելու միտումով՝ Վ. Հորտան դիմում էր հարդարանքին: Օրինակ, Տասսելի տան աստիճանավանդակի մետաղյա անկյունային սյունի խոյակը կազմող ոլորապտույտ մետաղների գծապատկերը՝ տարրերակվելով ընթանում է բազրիքի երկայնքի վրայով, վեր սլանում և որպես զարդակիր տարր տարածվում ապակեպատ առաստաղով, մեկն է: Ոլորապտույտ, գունավորված գծերը հարդարում են խճապատ հատակը, պատերի մակերևունները, մետաղյա հեծանները և առաստաղի նրանց կից հատվածները: Մի շինանյութից մյուսին անցումը, ճարտարապետական տարրեր հատվածների փոխառնչվող լուծումները Հորտայի շենքերում ձեռք են բերում տրամարտական կառուցվածքի ու կեպընկարուն, սերտորեն կապակցված ամբողջականություն, Այսուամենայնիվ անհնարին

<sup>13</sup> S. Giedion, Spazio, Tempo ed Architettura, Milano, 1954, pp. 285—296.

է Հորտային համարել նոր ոճի սկզբնավորող: Նրա կառուցած շենքերը արտացըլում են բաղաբացու ճաշակը, համանչուն են նրա ապրելակերպին, որի վայրին և տեխնիկապես անթերի են: Սակայն շափաղանցություն պետք է համարել տեխնիկապես և ձևականորեն, թեկուզ անառարկելիորեն գերադանց հարակցված հորինվածքը նկատել որպես ճարտարապետական նոր ոճի դրսերում: Հորտայի կառուցած շենքերը կատարյալ են, բայց նրա մշակած ձևերի խորքում չեն կայանում նորարար մթքերի գոյացումը: Հետևաբար, նրան կարելի է դասել. Ար նուվոյի թելգիկական դպրոցի լավագույն ճարտարապետների շարքը, բայց երբեք նոր ոճի շատագով:

Արվեստի ոռմանտիկ հասկացությունը՝ ժողովրդի ոգու արտահայտություն, Հորտայի մոտ մեկնարանվեց իրեն դարդարվեստ՝ որոշ իմաստով քաղցրենից վածքածք թանկարժեք իրերի նշանակությամբ: Վերջին հանգամանը ընորոշ եղավ նաև նրա պատվիրատուններին: Պատվիրատուն ճարտարապետության մեջ միշտ էլ ունեցել է կարեռը նշանակություն, նա հարկադրել կամ նպաստել է արվեստի գործերի իրականացմանը: Եվ քանի որ արվեստի նոր խոսքը ասվում է՝ հաղթահարելով ժամանակաշրջանի պահպանողական հասկացությունը, ուստի այդ պարագայում հարկ է ճարտարապետին գտնել համախոռն պատվիրատուն Այդպիսի երջանիկ դիպվածով էր, որ Ա. Լոռով կարողացավ 1926-ին Փարիզում կառուցել Տրիստան Ցարայի<sup>14</sup> մենատունը, և Կորրյուգին՝ 1929-ին Գարշում Շաայնի տունը, և Միս վան դեր Ռուեն՝ 1930-ին Թուգնհատի մենատունը Բռնյում, Ա. Գառուդին՝ 1905—10-ին Միլա տունը Բարսելոնում:

Վերադառնալով այդ շրջանում մեծ զարգացում գտած կիրառական արվեստների հարցերին, նշենք դրանցից Էլակետային նշանակություն ունեցող այն հասկացությունները, որոնք առնչվում են ճարտարապետության հետ:

Մարդը կերպարային իմաստով դրսեռում է իր ազգային ինքնառարկությունը, իսկ կառուցվածքային համակարգի իմաստով, որն ավելի ընդհանրական է և տրամաբանական, պատկերում է իրականությունը: Ժամանակակից արվեստում նոր գոթականից դեպի գոթականացված ձևերի անցումը շուներ ձևական իմաստ, այլ կատարվել էր այդ ճարտարապետությանը ներհատուկ: Համակարգերի՝ հարաբերությունների հարատեսությամբ: Զարդային տարրը կրում է ազգային նշանակություն, իսկ իր խորքում կառուցվածքային է: Եվ եթե XIX դ. կեսերին ազգային համարվեցին որոշ ոճեր, ապա դարաշրջանի վերջերին գերիշխում էր արդեն ձեւ ներսում ընթացող տրամաբանական կերպամածքը: Մինչ այդ, սակայն, էկեկտիվմից ազատվելու համար (և ոչ միայն ոճերի, այլև շինարարական համակարգերի), հարկ էր գտնել

<sup>14</sup> Տրիստան Ցարա (Tristan Tzara, 1896—?), ծագումով ռումինացի, 1916-ին Ցյուրիխի Վուտերի անվան կարարելով ուրիշ արվեստագետների հետ հիմնեց արվեստի և դրականության մեջ դադայիմ (dadaïsme) ուղղությունը: Հիմնադիրները՝ հատկապես գերմանացիները Հուգո Բալ (Hugo Ball), Ռիխարդ Հյուզենբեկ (Richard Hülzenbeck) և քանդակագործ Հանս Արպ (Hans Arp), նպատակագրել էին վերագրանալ արտահայտչածիքների պարզությանը ու այդ իմաստով ձգտում էին իրականությունը արտահայտել՝ վեր հանելով արտարամաքանակն այն նշանակությունը, որը կարելի լինի արտահայտել ձերի սահմանումներից անդին, առանց հպատակելու թեկուզ ինչ-որ շափով մտքերին ուղղություն տվող ինչ-որ համակարգի:

ընդհանրականն արտահայտող լեզուն: Տվյալ դեպքում բեկիսիցի ճարտարապետների կիրառած շինարարական համակարգերի հարաբերականության սկզբունքը թույլ տվյալ միաժամանակ օգտագործել ավանդականը և ասենք մետաղյա ավելի նոր կառուցվածքները: Այդպես Լաբրուստը Փարիզում իր կառուցած Սենտ-Ժնեվիեվ և Ազգային գրադարանների ներսում օգտագործեց մետաղյա, իսկ ճակատների համար քարաշեն պատր՝ սկիզբ դնելով երկամակարգային կառուցներին: Վ. Հորտան, Պ. Հանքարը, Սերյուրիե-Բովենը մետաղյա ներքին կառուցը արտաքրեցին ճակատային համական գրավածներում, առանց հասնելու, սակայն, ճարտարապետական լեզվի ընդհանրությանը: Եվ, այնուամենայնիվ, թող զարմանալի չժղվա, որ այդ ընդհանրությունն ու համակարգերի կապը ճարտարապետները կարողացան հայտնաբերել կիրառական արվեստների միջոցով:

Արհեստային զգացողությամբ մշակված գործում գեղագիտական օրինաշփությունները լուսեն առաջնահերթ նշանակություն: Սակայն միաժամանակ այդ կարգի գործերում մեծ կարևորություն են ստանում անխտիր կերպով ամենատարբեր շինանյութերը՝ առանց առանձնացնելու դրանցից որևէ մեկը որպես ազնիվ կամ հասարակ նյութ, ինչպես այդ անում էր նոր դասականների գեղագիտական հասկացությունը:

Ստեղծել ոճային միասնություն, ավանդաբար փոխարկված բովանդակային իմաստով, սա ճարտարապետության համար մասնակի խնդիր է, և նման սկզբունքով առաջարկված լուծումները կարող են լավագույն դեպքում մասնակի նշանակություն ունենալ: Ար նույնի ինչ-որ շահով ձգտեց ընդհանրացված լուծումների, սակայն անցյալի հետ խզումը և այժմեական լինելու առաջարկները իրագործվեցին միայն լեզվական խնդիրների սահմաններում: Մեզ հետաքրքրող շինարարական համակարգերի միջև հաստատվելիք կապակցությունները ստացան ավելի շարահյուսական իմաստ ունեցող լուծումներ, առանց հասնելու նոր ձևերի կառուցվածքային էությունը բնորոշող հասկացությունների: Կարելի է Ար նույնի առավել ևս ոճական վերաբերմունք համարել, քան նոր ոճ ստեղծող ուղղություն:

Ճարտարապետական կերպարը զարդամիջոցներով իմաստավորելը և այդ հարդարանքները ոճական միասնություն առաջացնող լեզու համարելը տվյալ շրջանին բնորոշ գծերից էր և տարածում էր գտել հատկապես Ռասկինի, Մորրիսի տեսություններից: Նման դրվագը մեծ նշանակություն ունենալով հանդերձ կիրառական արվեստների զարգացման մեջ, ըստ էության յուրովի փախուստ էր արդի արվեստի խնդիրներից: Հեռանալ իրականությունից, ապաստան գտնել երեակայության ոլորտում, փաստորեն սա այն էր, ինչ առաջարկում էին ֆրանսիացի սիմվոլիստ գրողներ՝ Փ. Մորեան, Ս. Մալարմեն<sup>15</sup>: Հանդիպելով ռացիոնալիզմին, արվեստագիտը սուլվում էր ոռոմանտիզմի անկայուն աշխարհը և հանձնվում անձնական դիւրարկումների,

15 Սիմվոլիզմ, ֆրանսերեն՝ Symbole, նշան բառից: Գրական ուղղությունը ճանաչեց Շ. Բողերին որպես հիմնադիր, ձևեց բացահայտել իրերի և ողու զալտնի կապակցությունները: Սիմվոլիզմը սկիզբ առավ 1865-ին և իր շարու խմբավորեց այն՝ բանաստեղծներին, որոնք հակարգվում էին պարնասիաների «արվեստը արվեստի համար» գեղագիտական հասկացությանը: Այն փորձեց բառերի երաժշտական, նշանաբառանական իմաստավորումներով թիւագրել հոգեկան արամագրություններ: Սիմվոլիզմի գլխավոր գեմեցները էին՝ Ս. Մալարմեն, Փ. Մորեան, բեկիսիցի է. Վերաբերնը, գերմանացի Ս. Գեորգեն:

փորձառությունների հոսանքին: Նման ըմբռնմամբ բանականությունը զարդանալու էր անհատականի ձանապարհով, իրականությունը ձանաշվելու էր՝ հատապնդելով հոգեկան բանականության ուղիները:

XIX դարի երրորդ կեսին Գ. Վունդը զարգացրեց փորձական հոգեբանության իր ուսմունքը և այն որպես ժողովուրդների հոգեբանություն, ներդրեց պատմագիտության բնագավառում:

Տեխնո-սոցիալական նախադրյաները և տարրեր ուղղություններով ընթացող այն հայեցզողությունները Ար Նովոն չկարողացավ ամփոփել ու առաջարկել իրեւ ճարտարապետության ամբողջական տեսություն: Ռոբերտ Ֆիշերին իր «Ձեկի տեսողական զգայնությունը» աշխատության մեջ (1873) դիտողի և բնական առարկաների միջև առաջացած միանությունը և հաստաված կարգը արտահայտելու համար առաջարկեց ներգայնականության (Einfühlung) հասկացությունը<sup>16</sup>: Ըստ արվեստի հոգեբանական մեկնաբանության, գեղեցիկը հոգեկան կյանքի այն դրվածքն է, որի շնորհիվ պատահական թվացող բնությունը արվեստի գործում կազմակերպվում և դառնում է կարգ: Այդ իմաստով արվեստը անհատի հոգեբանական-բնախոսական էության շարունակ իրականացվող ընթացք է: Նման հասկացությունը օդնեց վերագտնելու կապը իրականության հետ, հաղթահարելու էլլիկատիզմը, իմաստավորելու անմիջականությունը:

Հ. Վան դե Վելդին ներգայնականության հասկացությունը որպես հոգեբանական բաղադրիչ կիրառեց դարավերջի տեխնո-սոցիալական իրականությունը մեկնաբանության մեջ, իսկ որպես ստեղծագործ, արվեստի դարպացմանը խորապես պարտադրված անձնավորություն, փորձեց ճարտարապետական խնդիրներին տալ հատկապես մարդկային իմաստավորում: Հ. Վան դե Վելդին, ավելի ուշ այդ ուսմունքի հիմունքներով զեկավարելու էր Վայմարի արվեստների դպրոցը: Նա եղավ հազվագյուտ այն արվեստագետներից, որը կարողացավ ստուգ կերպով ձևակերպել, որ Ար Նովոյի և ուցինալիզմի կապը հասաւալված է բանականության վրա և ցուց տվեց, թի ինչպես է իրերի կառուցվածքային կազմը կապակցում նրանց: Մշակված ամեն մի ձև, իրականության արամաբանական արտահայտությունն է՝ պատկերված արվեստին հատուկ նշանաբանական միջոցներով: Ամեն մի նշանաբանական պատկեր, լինի զարդ կամ առարկա, երբ կառուցված է՝ պահպանելով իրականության և պատկերի կապակցությունը, արտահայտում է նրանց էությանը բնորոշ ուսցիունալ գեղեցկությունը:

Այս իմաստով իմարեսիոնիզմը, պուանտիլիզմը, սիմվոլիզմը և տարրեր ուների վերածնունդները փաստորեն փախուստ են իրականությունից: Այդ պատճառով հարկ էր եղարափակել դարը՝ նորին սկիզբ տալու համար: Արդ, եթե արդի ճարտարապետության պատմության մեջ կա մի անձնավորություն, որը գերազանց կերպով կատարել է այդ փոխանցումը՝ իր գործություններով, դասախոսություններով, առարկաների, կահույքների, գորգերի հնարագիտ մշակումներով, կառուցած շենքերով և դաստիարակչական եր-

<sup>16</sup> R. Vischer, Der optische Formengefühl. Ein Beitrag zur Ästhetik 1873. Einfühlung մեր թարգմանությամբ՝ ներգայնականություն, առաջին անգամ օգտագործել է Յ. Հերքերը իր „Vom Erkennen und Empfinden der Menschlichen Seele“ աշխատության մեջ, ապա Նովալիսը: Բ. Ֆիշերը այնքանու լուրջ հասկացությունը դիտեց որպես արվեստի հոգեբանական մեկնաբանման հանաչողական գործոն:

կարատե գործունեությամբ նպաւտել է նոր ճարտարապետության և կիրառական արվեստների զարգացմանը՝ դա Հանրի Վան դե Վելդեն է:

Հ. Վան դե Վելդեն (1863—1957) նոր մոտեցումներով մեկնաբանել է արվեստի հովիտունը, հայտնարերել անցյալի այս կամ այն շրջանի նկարչության, քանդակագործության, ճարտարապետության միասնությունը, և այս ամենից ելնելով արդի արվեստին հաղորդել նոր իմաստ. սա էր Վան դե Վելդենի ողջ գործունեության նպատակը: Նա համոզված էր, որ եթե արվեստը կորցնում է միասնականության գաղափարը, կորցնում է նաև այն, ինչ Վան դե Վելդենի բնորոշմամբ կազմում է արվեստի ամենագեղեցիկ հատկանիշը՝ լինել ամբողջությանը մասնակից գեղազարդական արտահայտչածն, այսինքն, որպես քանդակ, նկար, զարդ և անբակտերի մասնակից ճարտարապետականի ընդհանուր գաղափարին:

Իսկ ինչպես գտնել արվեստները միացնող համընդհանուր լեզուն: Վան դե Վելդեն գտնում է, որ արվեստներից յուրաքանչյուրի հատուկ արտահայտչամիջոցների տարրերությունները պահպանելով հանդերձ կարելի է հասնել դրան, եթե վեր հանվի նրանց այն զարդումակությունը, որը բխում է արշեստներին հատուկ ներդաշնակության հավասարակշռության օրինաշափություններից:

Արդի ճարտարապետության համար գեղազարդումը նույնանում է տարածական ձևավորման հետ, հետևաբար, ներհակ է ճարտարապետական արտահայտչականությանը<sup>17</sup>, այդ իմաստով նպաստում է որոշադրված տարածությունը մարդամոտ միջավայրի վերածելուն: Իների առարկայական հատկությունները (մարմար, ապակի, մետաղ, փայտ և այլն), լուսը, տարածության կամ առարկաների կիրապարանագծված մշակումը ճարտարապետական պատկերային արտահայտություններ են և կարող են նախագծողի կամ կիրառողի կողմից առավել կամ պակաս նշանակություն ստանալ այն ժամանակ միայն, եթե այդ բոլորը դիտվեն որպես տարածություն-միջավայր կապակցություն: Տեսական իմաստով գեղազարդության արժեքավորումը ունի արրեք ոճերին բնորոշ աստիճանավորումներ, որոնք փոխվում են ոճից ոճ, բայց հիմնականում արտահայտում են մարդ-տարածություն փոխկապակցությունը: Այս ամենքին համեմու համար ելքովան գեռ անցնելու էր երկու համաշխարհային պատերազմների դառն փորձություններով, իսկ մինչև այդ մարդուածություն փոխկապակցությունը վերագտնելու համար հարկ էր մշակութային նոր արժեքներ ստեղծել, սոցիալ-տնտեսական պայմաններ նախապատրաստել:

Որո՞նք էին մինչև օրս այժմեականություն ունեցող այն դրույթները, որոնց հանգել էր Հ. Վան դե Վելդենի բազմաթիվ ուսումնականություններում:

### Ահա դրանք՝

— նախագիծը ըստ էության պետք է լինի տրամաբանական, իսկ էտիկական իմաստով՝ բնությանը ներդաշնակ,

— շինանյութեր, նյութեր և կառույցներ մշակելիս հարկ է անազարտ պահպանել նրանց առարկայական բնույթը,

— ճարտարապետության մեջ տարածությունը համակարգելու արժեքը

<sup>17</sup> Զեղարի Թրանդիի կարծիքով այն ամենը, ինչ դուքս է ֆունկցիոնալ լինելուց, հարկ է ճարտարապետության բնադավառում համարել գեղազարդություն, տե՛ս Cesare Brandi, Eliante o della architettura, Torino, 1956.

համապատասխան է հասկացական այն բովանդակությանը, որը ստեղծագործող ներդնում է իր գործում:

Հ. Վան դե Վելդեն<sup>18</sup> 1895-ին թրյուելի Ուկլ արվարձանում կառուցում է իր բնակելի տունը՝ կից արհեստանոցով: Սեփական նախագերով պատրաստել է տալիս ամբողջ կահույքը, մշակում հարդարանքները՝ պատրաստում խեցեգործական անդիմները և տան մյուս բոլոր առարկաները: Ուկլի մենատունը դարձավ նրա գեղագիտական համոզմունքների ամբողջական իրազարժությունը, ամեն ինչ կառուցված է՝ ձևին տալով առարկայական հիմնավորում: Այդ շրջանում իշխող ներզգայականության հասկացության համաձայն, Ուկլի տան առարկաները և տարածությունը, անկախ նրանց ուրույն արժեքից, ունեն գծային կերպարի գեղազարդային նշանակություն և այդ իմաստով հոգեբանորեն ազդեցիկ են: Այդպիսի մոտեցմամբ կահույքների և այլ հարդարանքների նշանակությունը անհրաժեշտ էր լուծելու համար տան միջավայրի և յուրաքանչյուր սենյակի առօրյա գործունեության մշակման հետ կապված խնդիրները, որոնք նույնքան կարևոր են, որքան ֆունկցիոնալ դրույթները:

1895-ին Փարիզում «Մեզոն մոդերն» որաշներում ցուցադրած կահույքները<sup>19</sup> և հատկապես 1897-ին Դրեդենի ցուցահանդեսում ներկայացված ընդունարանը Վան դե Վելդեին բերին համահվողական համբավ: 1900-ին Կ. Է. Օստհաուգի առաջարկով վարպետը ձևավորում է Հազենի (Վեստֆալիա) Ֆուրվանդ թանգարանը: Այդ շրջանից սկսած Վան դե Վելդեի գործունեությունը կապվում է գերմանացի արվածագիտների հետ և զարգանում այդ երկրի մշակութային ոլորտում:

Սաքս-Վայմարի մեծ դուռիմի<sup>20</sup> հրավերով Վան դե Վելդեն 1902-ին հաստափում է Վայմարում, ուր նոր հիմունքներով է կազմակերպում արհեստավորների աշխատանքային եղանակը: 1906-ին կառուցում է Վայմարի Արվեստների և Արհեստների դպրոցը (Weimarer Kunstgewerbeschule), ուր 1906—1914 թթ. ստանձնում է տնօրենի պաշտոնը:

1901-ին հրատարակում է իր զիմավոր աշխատությունը՝ «Վերածնունդն արդի կիրառական արվեստներում» (Die Renaissance im modernen Kunstgewerbe) և 1902-ին՝ «Կիրառական արվեստների ոչ մասնագիտական քառողներ» (Kunstgewerbliche Laienpredigten): Այս ուսումնամիջությունները, ինչպես նաև բազմաթիվ այլ աշխատություններ ի ցուց են զնում Վ. դե Վելդեի համար որոնումները տեսական և տեխնիկական խնդիրների ոլոր-

18 H. Van de Velde, Die Renaissance im modernen Kunstgewerbe, Berlin, 1901.

” . . . Kunstgewerbliche Laienpredigten, Leipzig, 1902.

” . . . Vom neuen Stil, Leipzig, 1907.

” . . . Essays, Leipzig, 1910.

Per il nuovo stile, Milano, 1966.

1881—1884 թ. Հ. Վան դե Վելդեն հաճախում է նկարչության Ակադեմիան, Անվերսում մասնակցում է „Als ich kann“ և „Van Nu es Starks“ գրական ակումբների գործունեությանը, 1889-ին որպես նկարիչ անդամագրվում է XX խմբին (Les XX): 1890 թ. ծանոթանաւմ է Ու. Սորբիսի, Զ. Ռասկինի, Շարժների, Նիտչիկ գործերին, որոնց ազդեցության տակ թողնում է դրական և նկարչական գործունեությունը, քաշվում կամպին գյուղը, ուր մենակության մեջ հասունանում են ապահով առաքելության մտքերը:

19 Ցուցահանդեսը Փարիզում առաջարկել է վեճեր, քննադատություններ. այդ առիթով 0. Ռողենը հայտարարել է՝ «Վ. դե Վելդեի բարբարոս է»:

20 1915-ին նույն դուռիմի հրավերով. նրան հաջորդում է Վալտեր Գրոֆիուսը:

տում: Նա ձգտում է հայտնաբերել մեքենայի աշխատանքի և ձեռագործ մշակման հանդիպման այն կետը, որը թույլ կտա մասսայական արտադրության եղանակով մշակված առարկային հաղորդելու գեղարվեստական արժեքը: Հավատարիմ մնալով իր շրջանի խնդրականությունից ծնունդ առած պահանջներին, գիտական ուսմունքներին և գեղարվեստի հասկացություններին, Վ. դե Վելեն Վայմարում ծավալած իր գործունեությամբ հիմք դրեց ժամանակակից արվեստի զարգացման համար նշանակություն ունեցող մի քանի դրույթների: Այս դրանցից մի քանիսը եղր ստեղծվել բոլոր արվեստների համագործակցությունը առաջացնող հիմունքներ, ապագայում կմշակվի գեղեցիկի նոր հասկացություն, ձեռագործ աշխատանքում, ինչպես և առարկաների մերենայացված մշակումներում հարկ է ղեկավարվել՝ ի գործ դնելով երևակայությունը. հարկ է զգայարար ընկալված ձեին տալ տրամարանորեն հստակ, մինչև իսկ խստարար կառուցվածք<sup>21</sup>:

XX դ. առաջին տասնամյակի տեսությունների համաձայն, կիրառական արվեստների և ճարտարապետության հիմնական խնդիրը ոչ թե արվեստի նոր հասկացություն առաջարկելն էր, այլ նոր դարաշրջանը հնից բաժանելը, այսինքն՝ ընդայնել գեղագիտական արժեքների հանդեպ ունեցած անհատական շափանիշը, վերափոխել համբարական մոտեցումը արդյունաբերականի, հարստացնել գործարանային արտադրությունը արվեստի նշանակությամբ:

Այդ ժամանակ Գերմանիա նոր էր ոտք դրել կվրոպական տարածականությամբ կազմակերպված արդյունաբերական շրջանը: Համբավավոր գործարանատերերը մրցապայքարում առավել ազդեցիկ լինելու նպատակով, համաձայնեցին, ի տարբերություն առավել պահպանողական դիրքերում կանգնած անգլիացիների և ֆրանսիացիների, նպաստել արդյունաբերական դիզայնը: Այդ իմաստով մեծ դեր ունեցած վայմարի կիրառական արվեստների և արվեստների ու արհեստների դպրոցները, որոնց շրջանակներում տարածվեց այն սովորությը, ըստ որի գործարանների արտադրանքը ձեավորվում էր տվյալ դպրոցներում՝ ուսանողների և դասավանդողների համագործակցությամբ: Աշխատանքը ծավալվում էր արհեստանոցներում, ուր փորձարկվում էին ձեռքի ու մեքենայացված աշխատանքի եղանակները և լսարաններում, ուր ուսանողը հետևում էր տեսության և արվեստների դասավանդումներին:

Հատկապես XIX դ. առաջացած արվեստի և տեխնիկայի բաժանումը, որը սատարվում էր ակադեմիաների կողմից, Գերմանիայում առաջացած գործարան-դպրոց համագործակցության շնորհիվ գնալով վերանում էր: Իրականությունը արդեն ներթափանցել էր գեղագիտության ռեզուսկրեալյանց ու քանդում էր նրա տեսական պատնեշները: Նշենք, որ կերպարի և իրականության կապը սկիզբ դրվեց ամենահամեստ առօրյա օգտագործման համար մշակված առարկաներով՝ կահույք, կտավներ, անոթեղեն, ապակիներ, տպագրական գործեր և այլն:

Վ. դե Վելենի Արվեստների դպրոցի շենքը հիմնված է արհեստանոց-լսարան սկզբունքի վրա, ուր փորձ է կատարված կոլեկտիվ աշխատասենյակում պահպանել արհեստանոցային հատուկ միջավայր: Նույն հակումը կա-

<sup>21</sup> N. Pevsner, Pioneers of the Modern Movement from W. Morris to W. Gropius, London, 1936.

րելի է տեսնել Վ. դե Վելդեի 1914-ին, Քյոլնում կառուցած թատրոնի հորինվածքում, ուր հասակաղիքի տրամաբանական կազմը պայծառ է և այդ իմաստով օրինակելի, մինչդեռ ժավաները չնայած շեշտված են, սակայն, նրանց տեսկառնիկ ժածկերի մշակումը թողնում է անորոշության տպավորություն։ Ռումանատիկ ուսցիոնալիզմը այդպես էլ բնորոշ մնաց բելգիացի արվեստագետի ողջ գործունեությանը։

1937-ին Քրեոլլեր-Մյուլլերի (Kröller-Müller) պատվերով Վ. դե Վելդեն կազմակերպեց և ձևավորեց Հոլանդիայում Օտերլոյի (Otterlo) թանգարանը, որն ընդհատումներով ավարտվեց 1954-ին։ Կյանքի վերջին տարիներին ձանաշում գտավ նաև իր երկրի կառավարության կողմից։ Նա 1926-ին հրավիրվեց Բրյուսել որպես «Գեղազարդական արվեստների բարձրագույն ինստիտուտի» տնօրեն և Գանի համալսարանի ճարտարապետական պատմության դասախոս։ Հ. Վան դե Վելդեն մահացավ 1957-ին, Օբերեգերի ավանում (Եվլեցարիա), բոլորից մեկուսացած։

Գեղագիտական տեսությունում ավանդված բանականություն-երևակայտիւն շաղկապի երկրորդ բաղադրիչը առավել նշանակություն ունեցավ Վ. դե Վելդեի ստեղծագործություններում և այդ իմաստով, բնականաբար, նրա գործունեությունը ավելի կարեղ եղավ կիրառական արվեստների բնագավառում, քան ճարտարապետության համար։ Ցուրովի նշանակություն ունեցող հարցերից կարելի է ընդգծել առարկաների և ընդհանուր առմամբ աարածական նշանակություն ունեցող գծայնությունը, այսինքն գծի միջոցով առավել ուժեղ արտահայտված եռանդի այն ձգողականությունը, որը կարող է ձեր ոչ միայն նոր իմաստով մասնավորել, այլև գրավիչ դարձնել, առանց, սակայն, հեռանալու ուսցիոնալի սահմաններից։

Վորինգերյան էքսպրեսիոնիզմի արվեստի քննական վերլուծություններում գիծը ստանում է ստորոգության արժեք։ Վ. դե Վելդեն ավելի բնորոշելով այդ միտքը, առաջարկեց՝ գիծ-զգայնությունը և դիմ-պատգամ ստորաբաժանումները։ Դրանք որպես ճարտարապետության և արհեստների իմաստակիր լեզվական տարրեր հաջորդում են։ յուրաքանչյուր ազգի, յուրաքանչյուր դարաշրջանի քաղաքակրթության արժեքը։

Գիծը օժանակած է ձևաստեղծման ընթացքում երևակայականը ներդնելու, կառուցվածքը և զարդը իրար միասնացնելու, արվեստների միջև համընդհանրություն հաստատելու, առարկան ձևավորման միջոցով կենսաբեր ուժով օժանական հեղակի ունակությամբ։ Ձևավորված առարկայի մակերեսներով ընթացող գիծը ստանում է առարկան մարդուն հաղորդակից դարձնելու իմաստը։

Նման հասկացությամբ Վ. դե Վելդեն անջատվեց պրեռաֆայելիստների բանաստեղծագեղազարդական ոլորտից, հեռացավ գծին տրված՝ շինանյութերի և մակերեսների միջև կապակցություններ հաստատող նշանակությունից, որը հատուկ էր Վ. Հորտային, Պ. Հանքարին և գծին հաղորդելով կենսատու ուժ կրելու իմաստը, առարկայի մշակումը հանձնեց ստեղծագործմաքի իշխանությանը<sup>22</sup>։

Հետագայում Ա. Լոովին գծին հակադրեց ժավալը, իսկ գիծը և ժավալն իրար հարաբերակցելու խնդիրն ավելի ուշ դարձավ վիեննական Սեցեսսիոնի նպատակը։

<sup>22</sup> H. van de Velde, Les formules de la beauté architectonique moderne, Welmar, 1916, 1917.

XX դարի Արևմտյան Եվրոպայի արդի արվեստը չի կարելի գնահատել, առանց նկատի ունենալու ֆլաման ժագումով Հ. Վան Վելդեի և իր ազգակից վան Գոդի թողած տեսական և ստեղծագործական նշանակալից ժառանգությունը:

Զարգ Ռենեի Մեկինանոց (1863—1928): Մեկինանոցը Վիեննայում 1900-ի ցուցահանդեսում ներկայացրած իր կահույքներով և նկարներով հասվ համարվուական համբավի: Ստեղծվեց մի կարծիք, որի համաձայն նրա ստեղծագործությունները սերտորեն առնշվում են վիեննական Սեցեսսիոնին կամ ավելի լայն առումով Ար Նուվոյի հետ: Չնայած տարածում գտած այս կարծիքն, հարկ է նկատել, որ Մեկինանոցի գեղարվեստական գործունեությունն իր բնույթով կապված է Արս ընդ Կրիֆտի հետ և նրա ուրույն դրսմորումներից է: Այս պարագայում ժամանակագրական տվյալը դեռ շունի: Ինչպես անգլիական համանման ուղղության ներկայացուցիչները, այնպես և ինքը՝ Մեկինանոցը հիմնականում ստեղծագործ արհեստավորներ էին: Բոլորի գործունեությունը բնորոշ բազմակողմանիության հիմքը կազմում էր արհեստը, մասամբ՝ նկարչությունը: Այս իմաստով ևս նրանց հաջողվեց պահպանել ավանդականը, ժողովրդական առումով մոտենալ գործարանային արտադրության եղանակներին և նախապատրաստել արդյունաբերացված դարաշրջանի արհեստաների շրջափուլը:

Մեկինանոցի գուփագործոցը՝ Դլագկոյի Արվեստի դպրոցի շենքը (1898—99) իր մտահղացմամբ պահպանել էր կառույցի երկրաշափական ձևի սահմանները՝ քսանականներին տիրապետող վերացյալ երկրաշափության հետ (պորիգմ): Մեկինանոցի ստեղծագործությունն առավել ուժով էր դրսերում մշակութային այն հարուստ տվյալները, որոնք խարսխված էին իր հայրենիքի՝ Շոտլանդիայի գյուղական ճարտարապետության և արհեստների հիմքի վրա, արհեստներ, որոնց Մեկինանոցը արհապետում էր գերազանցութեան:

Ինսունական թվականներին թլագկոյի Արվեստի դպրոցի շրջանակներում Զ. Ռ. Մեկինանոցը, Մեկդոնալդը և Հ. Մկները հիմնում են արվեստի պատմության մեջ «Չորսերի» (The Four) անվանումը կրող միությունը: Այդ շրջանում Թրյուաելի դպրոցի, ինչպես և վիեննական Սեցեսսիոնի նվազումների հանդեպ կոնդոնի մտափրականների պաշտոնական միջավայրը անտարեր էր: Ռասկինի, Մորիսի ստեղծագործությունները և նրանց առաջարկած հասարակական արվեստի տեսությունը ավելի մեծ ազդեցություն ունեին Կենտրոնական Եվրոպայում, քան իրենց մայր հայրենիքում: Նյութականի և տեխնիկայի ասպարեզում այնքան առաջադեմ վիկտորյան շրջանը, արվեստի ասպարեզում զորկ եղավ հանդգնությունից: Այս իրավիճակը ն. Պլաները մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «Քանի զեռ նոր ոճը մի հարց էր, որն առնշվում էր ազնվականության հետ, Անգլիան պահում էր նրա սանձերը, բայց երբ հարցը սկսեց վերաբերել ամբողջ ժողովրդին, առաջնությունը Անգլիայից անցավ այլ երկներից<sup>23</sup>:

Արդի արվեստը ժողովրդականին հարաբերելու, ինչպես և արվեստի գործում ժամանակային-տարածականը բնորոշելու հանդմանությունը ցուցաբերեցին «Չորսի» շրջափուլը հավաքագրված մի քանի արվեստագններ՝ երկրի

<sup>23</sup> N. Feusner, I pionieri del movimento Moderno da W. Morris a W. Gropius, Milano, 1945, p. 67.

ծայրամասային քաղաք Գլազկոյում։ Գլազկոյում նրանցից ամենատաղանդավորը՝ Մեկինտոշը, իր ժննդավայրում կառուցած Արվածադի գլորիտի շնորհում, Կենսատոնի համար գեղադարձած թեյասահներում և Հիլ Հառուի մեջ (1898—1909), ժավալները և մակերեսները ջլատելու եղանակով հանդեց տարածությունների և հակատների նոր արժեքներ ստեղծելուն։ Եղակի հնարաւատությամբ նրան հաջողվեց նոր կապակցություններ առաջացնել փայտեկամ մետաղեր հարդարանքների և պատերի, ինչպես նաև կահույքների և ներքին տարածությունների միջև<sup>24</sup>։

Մեկինտոշն ի վերջո գործում էր արվեստի կոլեկտիվ, այսինքն՝ սոցիալական հասկացության ոլորտում և այս իմաստով հավատարիմ մնաց Ռասկինին և Մորիսին։ Նա հավատում էր արժեքների ընդհանրացնող տեխնիկային և ստեղծում էր առարկաներ, հպատակվում տեխնիկայի հատուկ օրենքներին, առանց, սակայն, հանդգնելու սահմանազատվել գլազականից։

Արվեստի գործը ավանդականից և անձնական հուզմունքներից անջատելու նպատակադրումը հատկանշական դարձավ կորիստների համար, որոնք ցանկացան ոչ միայն նոր արվեստ ստեղծել, այլև կարծեցին, թե իդաւը են բնությունից անկախ նոր գիտություն ստեղծել և տվյալ օրինաշափությունների հիմունքներով հորինել ձեւ, որպես բնությանը զուգահեռ իրողություն։

Ըստ մեկինտոշյան ուսալիքմի, ստեղծագործողի երևակայության ազատությունը սահմանված է կառուցվածքի շրջանակներում, այսինքն, անկախ այն բանից, թե ինչպես է մշակված ձեզ, ճարտարապետական հորինվածքում առկա կառուցվածքը պահպանում և արտահայտում է ամբողջության իմաստը։ Կարենոր խնդիրներից է նաև հետեւյալը。 XIX դ. վերջերին ձեզ կորցրեց իր ամբողջականությունը և սկիզբ առավ ձեզ մակերեսների մասնատումներով ընկալելու ձգտումը։ Վերլուծելու, մասնատելու և ման հասկացությամբ օժտված արվեստագետին, դիցուք, սենյակի խորանարդածեալ պարզությունը այլևս չի բավարարում։ Վերլուծական մտածելակերպն այդ սենյակը ձեռվորողին մղում է պատերի հարթ մակերեսները ջլատել շրջանակածեւ և ուղիղ գծերով վերջիններիս ենթարկել հարդարանքը, կահույքը և նույն կոր-ուղիղ գծերի միջոցով վերակազմավորել մասնատված մակերեսների ամբողջականությունը։ Նման ձգտումը կոչվում է «կորագիծ-ուլղագիծ ոճ» (Kortig-lineair Stil), որը հատուկ էր նաև Ար Նուվոյին և խիստ բնորոշ կորիզմի երկրորդ կամ, այսպես կոչված, վերլուծական (Pégiode analytique) շրջանին (1910—12)<sup>25</sup>։ Ճարտարապետության այդ ձգտման վաղագույն օրինակներից են Մեկինտոշի՝ Լոնդոնում ձեռվորած Շեյլարանը (1897—98), Հիլի տունը Հելսինքուրգում (1902—1903, Hill House, Helensburgh), նրա գլուխգործոցը՝ Գլազկոյի Արվեստի դպրոցը և հատկապես գրադարանը (1909)։ Իսկ տարածությունը հստակ, գերզարդարումներից զորկ խորանարդներով

<sup>24</sup> Տե՛ս L. Beineyolo, Խշ. աշխ., էջ 371—377։

<sup>25</sup> Արդագծերով կառուցված նկարներից նշենք Ժորժ Բրակի «Ճութակով մարդը» (1911), իսկ ուղղագծերի եղանակով՝ Պարու Պիկասոյի՝ «Մարդը ծխամորնով» նկարը (1911)։ Կորիզմն անցել է զարդարման երեք շրջան։

1—սեղանյան շրջան (1907—1909) (période cézaniene)

2—վերլուծական շրջան (1910—1912) (période analytique)

3—համադրական շրջան (1913—1914) (période synthétique)

վերակազմավորելու եղանակը ավելի ուշ բնորոշ եղավ Ա. Լոռզի ճարտարապետությանը<sup>26</sup>:

1900 թթ. գործող ճարտարապետները, նկարիչները, քանդակագործներն ապացուցեցին, որ XIX դարի արվեստագետներին բնորոշ ոճականությանը կամ անցյալին հառած լուծումները տարածության, ինչպես և կերպարի նոր հասկացություն լունենալու արդյունք էին: Հիմնականում խոսքը վերաբերում է կերպարի և լեզվի միջև կայանալիք կառուցվածքային ընդհանրությունները հայտնաբերելուն:

Արվեստաբանը ինչպես էլ ցանկանա մեկնաբանել 1900 թթ. ստեղծագործունակության արվեստագետների աշխատանքը, նրանց ստեղծած ուղղությունները, մի բան պարզ է՝ մասսամբ Ար Նուվոն և ֆովը<sup>27</sup>, բայց հատկապես կորիզմը և դի Բրյուկեի<sup>28</sup> արվեստն իրենց հիմնական միտումներով գերազանցապես ուղղված էին դեպի ապագան:

### ԵՐԿՐՈՐԴ ՄՈՏԵՑՈՒՄ

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հսպանիան ապրեց բարեշրջման նշանակալից վերելք: Մագրիդը, Բարսելոնան զարգացել, դարձել էին արդյունաբերավարչական մեծագույն քաղաքներ: Հյուսիսում՝ Աստուրիաները, Բասկերի նահանգը հանքանյութերի հարստության պատճառով մեծացրել էին արդյունաբերության արտադրողականությունը և Բիլբաոի, Կատիկսի նավամատուցների միջոցով վերահաստատել էին փոխանակությունները Ամերիկայի հետ: Վերագտած կենսունակությանը համապատասխանեց մշակութային վերելք: Այդ վերելքի կարկառուն ներկայացուցիչներից եղան՝ է. Գրոնդոս ի Կամպինյան (1867—1916), Մ. գե Ֆալյան (1876—1946), Մ. գե Ռուամունոն (1864—1936), Խ. Օրտեգա ի Գաստեն (1883—1955), Պ. Պիկասոն (1881—1973), Խուան Գրիս (1887—1927), Խուան Միռոն (1893) և բանաստեղծներ Յ. Գարսիա Լորկան (1899—1936), Ա. Մաչադո ի Ռուիզը (1875—1939), Ռ. Ալբերտին (1902), Զ. Դիեգոն (1896): Ինչպես բնորոշ է ամեն մի վերելքի, այդպես և խսպանականը սկզբնական շըրջանում կրեց արվեստի և մտքի օտարամուտ աղկեցությունները, և հատկապես Կատալոնիայի միջնորդությամբ ներմուծվեց Գրանսիական սոցիալական երանգավորում ունեցող ոռմանտիզմը (Վիկտոր Հյուգո), Զոլայի նատուրալ-

<sup>26</sup> Ադոլֆ Լոռզի (Adolf Loos, 1870—1933) նման հասկացությամբ մշակված դորձերից տես՝ «Կերտաներ Բար» (Kärtner Bar) Վենենայում (1907), «Տրիստան Յարայի» մենատունը Փարիզում (1926), «Սլուցեր» տունը Պրազյայում (1930):

<sup>27</sup> Ֆուլ' ֆրանսերն՝ Fauve (գաղան) բառից Փոխարեական իմաստով՝ 1903-ին իրենց «գաղան» անվանեցին այս շրջանի պայմանականության, անեկայունության, անձկության դիմ ըմբռացացած, ներհայեցողության ճանապարհով ճշճարտություն որոնող նկարիչները (Հանրի Մաթիս, Անդրե Գոնեն, Շառլ Պյուֆե, Ժորժ Բրակ, Մորիս Վլամին և Ալբեր Մարկ):

<sup>28</sup> Դի Բրյուկ (Die Brücke) գերմաներն՝ կամուզ: Գերմանական էքսպրեսիոնիզմի ուղղությունն, հիմնադրամ 1903-ին՝ Դրեզդենում է. Խ. Քիրխների, է. Հեգելի, Ք. Շմիդ-Ռուտլիքի կողմէց: Այդ ուղղությունը ևս, որին մասնակից էին դարձել Մ. Պելշչատյանը, Օ. Մուլերը, Ի. Նորդին, ըմբռացացամ էր՝ արտահայտված գույների ուժգնության և կերպարների ապաձեռությունների միջոցով:

սեալիզմը, Ստենդալի մտալին, ղգայական աշխարհի անհատականությունը, ինչպես և գերմանական իդեալիզմը և նիցելիան ըմբռատությունը<sup>29</sup>, Ալդքանով Հանդերձ, իսպանացի մտավորականների ազգեցությունը եվրոպական մշակույթի զարգացման վրա նշանակալից եղավ: Խոսքը, անշուշտ, Պ. Մերիմեի և Ժ. Բիզեի կամ Մ. Ռավելի իսպանական օտարակերպությունների մասին չէ, այլ Պ. Պիկասոյի, Խուան Գրիսի, Խուան Միրոյի արդի արվեստի զարգացման մեջերած նորամուծությունների, Դրանց շարբում Անտոնիո Գաուդին այն եղակի անձնավորությունն էր, որի ստեղծագործ միտքն անսպասելիորեն պոռթկաց ուցիչունալիզմով տարված Կենտրոնական Եվրոպայում: Եվ եթե այդ շրջանում նրա կառուցած շենքերը թվացին արտառոց, որոշ շափով քմահաճ, ապա նրա ստեղծագործությունների ուժգնությունը, մտքերի հոխությունը և այն բնածին կենսատու ուժը, որը հորդում է նրա գործերից՝ մի բան, որ բնորոշ է նաև Պ. Պիկասոյին, այսօր էլ հարգանք ու մեծարանք են ներշնչում:

Զիայած այն բանին, որ արդի ճարտարապետության պատմագիտությունը, ընդհանուր առմամբ, անտեսում է Ա. Գաուդիին: Զ. Ա. Պլացը (1930), Ն. Պեղները (1936), Վ. Կ. Բերենդը (1937), Ս. Գիդիոնը (1941), այսինքն արդի արվեստը ուսումնամիրող, դասական համարվող այդ հեղինակներն անուշագիր թողեցին մեծ իսպանացու գործը<sup>30</sup>:

Քրունո Զեին եղավ առաջին տեսարանը, որը 1950-ին լույս տեսած «Արդի ճարտարապետության պատմությունը» աշխատության մեջ ուսումնասիրեց Ա. Գաուդիի ստեղծագործությունները, առաջարկեց նոր գրությունը, որոնց հիման վրա հնարավոր էր բնորոշել նրա գործերը Ար Նուվոյի և էքսպրեսիոնիզմի հետ ունեցած առնչություններում և ներգրավել, հետեւարար, Ա. Գաուդիին արդի ճարտարապետության պատմության էջերում:

Անտոնիո Գաուդի ի Կորնեա (1852—1926): Ժամանակագրությունը բացատրելի է, առարկելին պատմությունից դուրս մնալու փաստն է: Նման կողմնորոշման՝ դիցուք ուցիչունալիզմը, Արևմտյան Եվրոպայում կարելի է հասնել, երբ գերիշխում է տեսական մտածելակերպի միագիծ ուղղվածությունը: Այդ պարագայում պատմագետը կնում է ոչ թե արվեստի երևույթից, այլ արվեստի երևույթին է իր տեսական հասկացությանը ենթարկում: Իսկ եթե այդ անհնարին է, երեսույթը պարզապես անտեսվում է: Ալդպիսին եղավ ուցիչունալիստների գիրքորոշումը Ա. Գաուդիի նկատմամբ:

Արվեստի գործը միշտ հարաբերակցված է պատմական այլ արժեքների հետ, նույնիսկ ձևը ընկալելու, մշակելու եղանակն առնչություններ ունի ժամանակաշրջաններով իրարից հեռու արվեստագետների միջև: Այլապես ինչով բացատրել ճապոնական արվեստի ազդեցությունը, օրինակ, Տուլուզ Լոտրեկի վրա, կամ նեգրոնների՝ հատկապես նրանց դիմանկարների, թողած ազդեցությունը Պ. Պիկասոյի կուրիստական շրջանի նկարներում:

<sup>29</sup> Իսպանական մշակույթի բարեշրջման այդ երեսույթն իսպանացիք անվանում են եվրոպականացում (europeizzazione).

<sup>30</sup> Բացառություն են կազմում մասնակի նշանակություն ունեցող երկու աշխատությունները՝ S. Dali, De la beauté terrifiante et comestible de l'architecture Modern Style „Minotaure“, 1933, № 3—4 և S. Cassau, Gaući et le Baroque, աե՛ս „Forme“, 1933, Բանասիրության համար նշանակալից է իսպանացի հետեւյալ հեղինակների աշխատություններ՝ J. F. Rafols i F. Folguera, Gaudi el gran arquitecto español, Բարսելոնա, 1928.

Անտոնիո Գառուդիի ստեղծագործության մեջ իրենց անդրադառն են գտել արվեստի որոշ ուղղությունները: Դրանցից, մեր կարծիքով, կարելի է նշել երեք՝ բարոկկո, գոթական և տեղական ավանդույթը: Հարկ է նշել, սակայն, որ Ա. Գառուդիի՝ անցյալի կամ ժամանակակից արվեստների հետ ունեցած հարաբերակցությունները, առավել կամ նվազ նշանակություն ունեցող փոխարկված կերպարները, միշտ և անվերապահորեն վերամշակված են իսպանացու, ավելին կատարուացու ոգով:

Պատմությունից հայտնի է, որ բարոկկոյի կառուցվածքային և կերպարային կարելիությունների ամենահանդուզն իրագործուամները կարելի է տեսնել իսպանիայում, Պորտուգալիայում և Գերմանիայում: Բոլոր մանրամասնություններով մշակված ձեզ իսպանական բարոկկոյում նշանավորեց ոչ այնքան տարածական նոր կերպարայնություն, որքան ունեցավ առավելապես գեղադրադրական նշանակություն՝ ոչ, սակայն, մակերեսը շոշափող իմաստով, որը հատուկ էր Ար Նուվոյին, այլ պատերը, կամարները, սյուները, այսինքն մինչև նյութի խորքը ճեղքող, նյութականորեն վավերականացված իմաստով: Նման հասկացության ծայրահեղ արտահայտությունը եղավ չորիգերեսկոն (Churrigueresco)<sup>31</sup>: Այդ ոճի մասմբ սոկոն հիշեցնող երանգավորումներով, իսկ մետաղի բարդիքների և այլ զարդերի մշակումներով Ար Նուվոյից ազդված՝ Գառուդին կառուցեց Կալվատի տունը (Casa Calvet, 1898—1904): Բոլոր ազդեցություններով հանդերձ, Կալվատի տան ճարտարապետությունը չի կարելի կապել ինչ-որ ոճի կամ նույնիսկ տվյալ շրջանում գերիշխող մոդեռնիզմի հետ<sup>32</sup>:

Ընդհանուր առմամբ, Գառուդիի ստեղծագործություններում անցյալի մշակութի արձագանքները բազմակողմանի են: Հարկ է, սակայն, ընդգծել, որ դրանք նրա գործերում մշակվում են, ստեղծագործական ոգով վերափոխվում, որի հետևանքով աղդեցությունները չեն ընկալվում էկլեկտիկ հասկացությամբ, այլ ընդհանուր ձեփ սահմաններում ստանում են բազկացուցիչ տարրերի իմաստ: Ավելին, նրա կառուցած շենքերի երկրաշափական կազմը հորինվածքային իմաստով միշտ կայուն է, ստրուկտուրալ իմաստով խստորեն բնորոշված, բայց ձեփ զարգացման ընթացքը բնորոշող հասկացությունն իր էլությամբ չի արտաբերվում ձեփ մակերեսի վրա, այլ մնում է միշկերպարային ոլորտում: Մացիոնալիզմի հասկացությամբ ձեփ կառուցվածքային իմաստը միշտ կայունանում է արտաքուստ, հետևաբար ձեփ նշանակության բացահայտումը, նրա ընթեռնելիությունը մակերեսից գնում է դեպի խորքը: Գառուդիի ստեղծագործություններում ձեփ մշակված է այնպիսի երևակայությամբ, կերպարանագծված է քանդակային և գունագեղական այնպիսի ար-

31 Գերիգերա (de Churrigera) կատալոնիական ծագում ունեցող ճարտարապետներ, քանդակագործների ընտանիք է (Jose Benito 1665—1725, Joaquín, N. 1674—1724, Alberto, N. 1676—1720), որոնք XVII և XVIII դարերում զործել են Մարդիկում և Սալամանկայում: Այդ ընտանիքի անունը կը ող շուրբիգերեսկո ոճը հատուկ եղավ նաև այլ ճարտարապետների համար՝ լ. գե Ապերալո (L. D. Arévalo) և Ֆ. Մանուել Վասկես (F. Manuel Vásquez), որոնք 1727—1764-ին կառուցել են Գրանադայի Զերոնզան: Չուրիգերեսկոն իսպանիայից գույք տարածում է գտել հատկապես Մեքսիկայում (տե՛ս Զակատեկասի—Zacatecas—Կաբովկեն): Որպես ոճ այն կազմակերպեցից հիմք ունենալով կատալոնիայի փայտե քանդակների ոճը, հռոմեական բարոկկոն և իդարեւ դե կաստիլյայի ուշ դրականը (XV դարի երկրորդ կես):

32 Ար Նուվոյի իսպանիայում կոչվեց մոդեռնիզմ (Modernismo).

ժեղներով, որ երկրաշափական կազմը վերաիմաստավորվում է՝ ենթարկվելով ձերնկալման մի այլ սկզբունքի, ըստ որի ձեռ ստանում է տարածության մեջ աճելու շարժունակության արտահայտությունն: Հետեւարար, Գառուղիի ճարտարապետությունը ոճականությունից անդին, հարկ է դիտել որպես տարերային երևությ:

Միլայի տունը (Casa Milà, 1905—1910) Բարսելոնայում անկյունային շենք է. ալիքաձև ճակատները չնշում են անկյունային բնդշատումները, ոլորապտույտ ձեմ մեջ ձուգելով, արտաքս կոշված, գլխավոր և երկրորդական ճակատները: Ամեն մի հարկ՝ մյուսի համեմատությամբ, ունի տարրեր ստորաբաժանումներ, նման հնարանքներով վերանում են ուղղաձիգ հաղորդակցությունները (բացի ներքին լուսանցույց շրջափակերից և աստիճանավանդակներից), ինչպես նաև կառուցվածքի և կերպարի անշատումը: Միլա տան ճակատները ատամնավոր մուրճով մշակված քարից են<sup>23</sup>, պատերը շարված են աղյուսով, իսկ դուրս ընկած հատվածները իրականացված են մետաղյատարերով: Շենքի ամենանշանակալից հատվածը, սակայն, տանիքն է, որն իր երեսակայական կերպարների նմանությամբ մշակված օդափոխության խողովակներով, ծխնելույղներով, լուսանցույց բացվածքներով և գունագեղ խեցեղնի երեսապատճերով<sup>24</sup> շենքի ողջ մակերեսից վեր ծավալվող բանդահային հսկա բնապատկեր է:

Որքան ինքնահնար է այդ տանիքն արտաքուստ, այնքան խստորեն կառուցիկ է ներքուստ: Գառուղին Միլա տան տանիքը կառուցել է գոթական ցիւրի եղանակով. գետնից վեր են սլանում հովհարի նման բացվող չորսական նեղ կողող ամրացված աղլուսակերտ պարաբոլիդ ցիւրը: Ամեն մի խուրձ՝ մյուսից անկախ, կազմում է կրող մի համադրություն: Այդ հատկանիշը Գառուղին օգտագործում է խուրձերը տարրեր բարձրություններով զարդացնելու, հետեւարար, առաստաղին ոլորապտույտ ուրվագիծ տալու համար: Կամարների խուրձային համակարգի միջոցով, ինչպես ցուց են տալիս գոթական շենքերը, ընդհանուր կառուցը բաժանվում է իրարից անկախ գործող, բայց ամբողջական համակարգերի: Հնարք, որի միջոցով ճարուարապետը ծածկերը մշակում է ճկուն և կերպարանագծված ուրվագծերի նմանությամբ: Սրանից հետեւում է արդի ճարտարապետությունում կիրառված մի հասկացություն, այսինքն՝ շենքի ընդհանուր կառուցվածքը միասնական լինելով հանդերձ, բաղկացած է ավելի փոքր, ինքնին ամբողջական համակարգերից, որոնց հաջորդականությամբ շենքը ստանում է ծավալային ճկունությունն: Այդ հանգամանքը, որը բնորոշ է գառուղիյան ճարտարապետությանը և որպես հատկանիշ հետևում է գոթական հասկացությունից, այսօր լայնուեն կիրառված է քաղաքաշինության ծավալատարածական մշակումներում

<sup>23</sup> Մեծ քանակությամբ քար օգտագործելու պատճառով այդ շենքը մականված է՝ լապերերո (La Pedrera), այինքին՝ քարհանք:

<sup>24</sup> Իսպանական խեցեղներ հայտնի է Վալենսիայում և Կատալոնիայում (աղղված նաև խուամական արվեստից), արտադրում են գծապատկերներով զարդարված, գունագեղ սալիկներ՝ հատակներ երեսապատելու համար, իսկ Անդալուզիայում (արգեն XIII դ.), այսպես կոյլված, ալիկատագումներ (alicitados), որոնք պլինտուսներ են, կազմված խեցեղների անկանոն կտորներից (alicares, XIII դ.): Հայտնի է քառանկյունիք, բազմակող ածուկեխոն (azulejo): Իսպանիայում դրանք օգտագործվում են արտաքին ճակատների և ներքին պատերի երեսապատճան համար:

(տե՛ս կոնստրուկտիվիստների առաջարկած պլաստիցիզմը, այսօր մեծ տարածում գտած բլոկ-սեկցիաները): Սածկի շեշտումը և այն շենքի գերիշխող տարրերից մեկը դարձնելու միուսը հատուկ է սկանդինավյան, անգլիական և գերմանական ժողովրդական ճարտարապետությանը:

Կենտրոնական Եվրոպայի արդի ճարտարապետության մեջ ձևը կերպարանագծելու ձգուումը հատուկ է էքսպրեսիոնիստական ուղղությանը: Էրիխ Մենգելսոնի Այնշտայնյան աշտարակը (1920), Ռուգովի Շտայների Գեոթեառուումը՝ Դորնախու (1925—28), Հանս Պեոլցինի նախագծած Զալցբուրգի թատրոնը (Festspielhaus, 1920, 21), Հանս Շարունի շենքերը և հատկապես մինչև օրս դեռ ըստ արժանվույն չգնահատված կ. Վ. Հերման Ֆինստերլինի (ծնված 1887-ին) նախագծերը վերը նշված հասկացության նշանակալից օրինակներ են: Տեխնիկայի զարգացումը իր հետ բերեց մեծ տարածություններ ծածկելու պահանջը: Եվ հետզետե առաջացած բազմաթիվ տիպերի հետեւանքով այսօր կարելի է արդեն գրել ծածկերի ճարտարապետության մասին, մի բան, որ դեռևս չի արվել ևրոպական ճարտարապետության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում:

Հարկ է նշել, որ ծածկերը շեշտակիորեն կերպարանագծված եղանակով մշակելու գառուղիյան մոտեցումը իր ազդեցությունն է թողել լը Կորբյուզիեի<sup>35</sup> (Մոնշանի նոտր-դամ եկեղեցու և ջ. Միքելուչիի Առողջապահության եկեղեցու (Chiesa dell'Autostrada del Sole 1964) հորինվածքում և հասագա ալ կառուցվածքներում:

1905—07 թթ. Գաուգին ուժանտիկ պանթեիզմի հասկացությամբ կառուցեց կարծես բնության քարացած հատվածի նմանությամբ արված ու Միջերկրականի լուսավոր պայմանագույն հեծաններին կապված սյուները, նրանց միջև տեղադրված ձվածե շրջագծված պատուհանները, մուտքը և ցուցափեղկերը, օրգանական բջիջներից կազմված թաղանթի նման պատում են շենքի առաջին երկու հարկը: Մինչդեռ վերին հարկերում պատուհանների կանոնավոր հաջորդականությամբ դուրս են երկարում պատշաճքը ների դիմականման բազրիքները: Գունավոր կղմինդրե ծածկով տանիքը սլանում է վեր և ավարտվում բլուրների ոլորապտույտ ուրվագծերի նմանությամբ: Հետաքրքիր է նկատել, որ դռնից ներս մտնելով, աստիճաններով բարձրանալիս և մուտք գործելով գլխավոր սենյակները՝ տարբեր շափերի տարածությունները քարայրների նման միմյանց հաջորդում են առանց ընդհատումների: Անցքերը միշտ նեղ են, ուստի մեկ սրահից մյուսն անցնելով՝ մարդ անակնակալի է գալիս: Բաւլյու տան ճակատը, սկսած երկողորդ հարկից, ամբողջապես երեսապատված է գունագեղ ածուկեխոններով:

Ճարտարապետությունը, որպես բնության ձեերի այլակերպություն, հատուկ էր Գյոթեի հասկացությանը: Արդ Ա. Գաուգին թարսելունայի համալսա-

<sup>35</sup> 1928-ին լը Կորբյուզիեն այցելելով Բարսելոնա, Ա. Գաուգինի գործերին տվել է հետեւալ գնահատականը. «Նա իր սերնդի մարդկանց համեմատությամբ օժտված է ճարտարապետական մեծագույն ուժով» (տե՛ս «La Publicitat», 18.5.1928, Բարսելոնա): Խոկ լոփ Ալիֆանը Սակրա Ֆամիլյա եկեղեցու վերաբերյալ գրել է. «Վերջին 25 տարիների ամենանշանակալից ճարտարապետական գործը», այն «քարով նշանաբանված ողի է»: Այդ մասին տե՛ս Thomas E. Tallmadge, The Exploratory Temple of the Holy Family, Western Architecture, III, 1922, p. 37.

րանում հետեւ էր Միլա ի Ֆոնտանաս (Milà y Fontanals) գեղագիտության և փիլիսոփական դասընթացներին, իսկ Միլան երիտասարդության շրջանում ապրել էր Հռոմում և հաճախել Օվետորեկսի կազմակերպած Նազարենուների ոռմանտիկ շրջանում Գյոթեի ազգնությունը Կատալոնիայացում մեծ էր<sup>36</sup>, Գաուդիի ընկերը և համախոհը, գրող Խ. Մարազալը կատալոներենի էր թարգմանել մեծ գերմանացու գործերը:

Արևմտյան Եվրոպայում վերագրածը դեպի միջնադարի արվեստը նշանավորվեց ժողովրդական արհեստների զարգացմամբ և ազգային ոգու վերագրանումով՝ Խավանիան, որ XIX դ. վերջերին սկիզբ դրեց մշակութային այդ Վերածննդին» (Renezieenza), վերագրածավ արհեստներին և հակվեց դեպի ամբողջ Երկրում լայն տարածում գտած իզարելան շրջանի ուշ գոթականը: Եվ, Հավանարար, Վիոլե-լը Դյուի մաքերի փոխանցումով, Գաուդին անդրադարձել էր գոթական ճարտարապետությանը, բայց ստեղծագործողի ոգով վերափոխել և ձեզնկալման իր հասկացությանն էր ենթարկել գոթական կառուցների համակարգը: Այս իմաստով Գաուդիի նշանակալից գործերը դարձան Գյուելի (Güell) արհեստավորների թաղամասի մատուցը (1898—1915) և Սակրա Ֆամիլիա (Sagrada Famiglia, 1883—1926) անալաբատ եկեղեցին:

Քննարկվող երկու եկեղեցիների կառուցային յուրահատկությունները մեկնարաննելու առումով, վերհիշենք, որ գոթական եկեղեցիներում լայնաթոփչք, վերասւաց թաղակիր կամարների և շատ բարձր սլացող սյուների վրա ազդող հորիզոնական հակագումաները շեղոքացնելու նպատակով, ճարտարապետները կառուցում էին շենքի առանցքին ուղղահայաց, թաղակիր սյուների ամբողջ բարձրությամբ և նրանց կամարներով կապված դիմհար արտակամարները Պարզ է, որ առանց այդ արտաքին կամարների, ամբողջ կառուցի համակարգը կայունություն չէր ունենաւ: Արդ, եթե որևէ մի կետի վրա ազդող հորիզոնական և ուղղաձիգ ուժերը բաղադրվում և ընթանում են դրանցից կազմված անկյունագծի ուղղությամբ, ապա ամբողջ հարցը կայանում էր կարելի հնարքներով անկյունագծով ընթացող ուժը մոտեցնել ուղղագծին:

Գաուդին չի դիմել դիմհար արտակամարներին, այլ պարզապես թերել է սյուները անկյունագծի ուղղությամբ, կապել կամարը հակադիր թեր սյունին և ստացել պարարողիկ, կրող տարրերի համակարգ: Նշենք, որ Գաուդին երբեք չի օգտագործել երկաթեհոտնը, այլ հնտեսելով Կատալոնիայի շինարարական ավանդությանը, կառուցել է աղյուսով և գոթականի պահանդությամբ՝ քարով, իսկ մետաղը օգտագործում էր դուրս ընկած տարրերը պահելու համար: Պարաբոլիդ կամարներով նա կառուցեց Գյուելի այգու ջուրադին, իսկ պարաբոլիդ-հիպերբոլոիդ համակարգով՝ Սակրա Ֆամիլիա՝ գոթական երանգավորումներ ունեցող, հակա եկեղեցին:

Ուժերի անկյան հիմնական ուղղություններով ընթացող երեք գծերին Գաուդին մեծ նշանակություն էր տալիս, որովհետև ինքնին պարզ այդ համակարգը<sup>37</sup> կարելի էր դարձնում բարդ թվացող պարաբոլիդ-հիպերբոլոիդ:

<sup>36</sup> Udo Rukser, Goethe in der Hispanischen Welt, Stuttgart, 1958. Robert Pageart Goethe en España, Madrid, 1958.

<sup>37</sup> «Diario de Barcelona», 9, II—1915. J. F. Ràfols, Gaudí 1852—1926, Barcelona, 1952. G. R. Collins, A. Gaudí 1852—1926, New-York, 1960.

Կառուցների իրագործումը: Կառուցներ, որոնք թվարանականորեն բնորոշվող են, համեմատաբար դյուրին իրագործվող և շատ արտահայտիչ<sup>38</sup>:

Կատալոնիայում գործող նշանավոր ճարտարապետներ ենուան Մարտորելի կ Մոնտելլսը (J. Martorell y Montelles, 1833—1906), Դոմենեչ ի Մոնտանեցը (Domenech y Montanez, 1850—1923), ճարտարապետ, հնէաբան և գրող Էլիաս Ամատը (Elias Rogent Amat, 1821—1897) համագործակցեցին Գաուդիին և մի քանի այլ արվեստագետների հետ հիմնեցին մոդեռնիզմ կոչված ուղղությունը: Բայց նրանցից ոչ մեկը չունեցավ Ա. Գաուդիի ստեղծագործական կորովը: Ինչ իմաստ էլ ունենան այդ բացառիկ անձնավորությանը արվեստաբանների տված գնահատականները, անհերքելի է այն, որ Ա. Գաուդիի կերտած Գյուևի այգու, Բատլլո և Միլա տների տանիքների կերպարանագծված գունագեղ ծավալները, Գյուևի մատուրի, Սակրա Ֆամիլիայի հանդուզն, նորարարական կառուցները ներկայանում են երկրաշափական ճշգրիտ պատկերին առնչված, տեխնիկայի առարկայացված, նոր փորձառություններով հարստացած իրականությանը:

Եվրոպայում ծաղկող Ար Նուվոյին, էքսպրեսիոնիզմին, ֆուժիզմին, կուբիզմին Գաուդին հակագրեց թիկուզն չուրիկերեսկյան հասկացությամբ վերամշակված, երևակայության արտակարգ ուժգնությամբ ուրվագծված, իր Կատալոնիայի ժողովրդի ոգուն հարազատ, պլաստիկորեն հզոր իրագործումները:

Այն հանգամանքը, որ քննադատներին դեռ մինչև օրս չի հաջողվել Գաուդիի ստեղծագործությունները դասել Կենտրոնական Եվրոպայում ստեղծված արվեստի ուղղությունների շարքը, ցուց է տալիս ըմբռուս այդ իսպանացու բռնած եղակի, ոչ մի ուղղության մեջ չկաղապարվող դիրքը և արդի ճարտարապետության պատմությունը շարապրողների սահմանափակությունը:

<sup>38</sup> Հայտնի է, որ պարաբոլիդ-հիպերբոլիդ ձևերի հարցերով չի հետաքրքրվել անտիկ թվարանությունը, իսկ առաջին բնորոշումները սկիզբ են առել XVII դարում: Նման ուրվագծերով երկաթբետոնե թաղանթային ծածկերի առաջին իրագործումները կատարվել են միաժամանակ, թերևս իրարից անեախ տարրեր երկրներում: Առաջիններից եղան իսպանիայի ճարտարապետներ Ֆելիսու Կանելը (1910—?) և էգուարդո Տորոխան (1899—1961): Այդ մասին տե՛ս Colin Faber, Candela der Schalenbaumeister, München, 1964. Eduardo Torroja, Razón y ser de los tipos estructurales, Madrid, 1958.

XIX դարի վերջերին Վիեննան քաղաքաշինության և արտարապետության առումով համարվեց ամենամիասնական քաղաքներից մեկը՝ Արևմտայան Եվրոպայի այլ մայրաքաղաքների համեմատությամբ։ Նման որակումն ունի առավելապես ձևաբանական և կազմարանական նշանակություն։ Եվ սոսկ հորինվածքային հարաբերությունների իմաստով այն դրսերվեց քաղաքի հետագա ընդարձակման, նույնիսկ ուստի աշխատական շրջանի կառուցապատումների մեջ, Ընդհանուր առմամբ Վիեննային հարազատ դարձավ դասական արվեստի՝ թեկուզեւ ոռկոկոյան նրբագեղ պերճություններով հարուստ ձեր։ Սա կտարարվեց այն ժամանակ, երբ անցած դարի հիսումական թվականներին որոշվեց քանդել հին քաղաքը շրջափակող պարիսպները և կառուցել Ռինգը<sup>1</sup>, 1857-ին կայսերական հրովարտակով հայտարարված մրցույթի հաղթող դարձավ Կ. Ֆ. Լ. Ֆորստեր (C. F. L. Förster), մինչեւ վերջնական նախագիծը, հավանաբար, կազմեց Մ. Լոհը (M. Löhr), 1859-ին<sup>2</sup>։

Անցյալում այսօրվա Ռինգի ուղղությամբ ծավալվող քաղաքի պատերը, արտաքին փոսերը (գրաքեն) շրջափակում էր ոռմանական, դոթական, Վերածննդի և բարոկկոյի շրջաններում կառուցված, ճառագայթաձև կազմ ունեցող, ճարտարապետականորեն հաղեցված կորիզը։

Վաթունական թվականներին հիմնադրված Ռինգի իրագործումով պահպանվել էր քաղաքի հին կողմը։ Քաղաքի կենտրոնախույս ուղղություններով ընթացող ճանապարհները հնարավոր էին դարձել կենտրոնը կապել շրջափատի ազատ հողամասերի վրա տարածվող նորակերտ քաղաքային շրջանների հետ։ Պարիսպներից ազատված լայնատարած տարածություններում, օղակաձև պողոտայի երկու կողմերում կառուցվել էին պետական և մշակութային նշանակություն ունեցող շենքեր՝ թուրք թատրոնը, օպերան, Քաղաքապետարանը, Պալամենտը, Համալսարանը, Արվեստի և բնագիտության թանգարանները, Արվեստի ակադեմիան։ Խսկ վերջիններիս միշեւ ընկած աղատ տարածություններում մշակվել էին այդիներ, կառուցվել շատըրվաններ, տեղադրվել էին արձաններ, կոթողներ։ Կառուցապատման այդ հըս-

<sup>1</sup> Ռինգ (Ring) նշանակում է օղակ և կիրառվում է քաղաքաշինության անվանաբանության մեջ հետեւյալ իմաստով՝ հին քաղաքը շրջապատող երթևեկության պողոտա։ Այս իմաստով Ռինգ անվանումը բնորոշ է հատկապես Ավստրիայի, Գերմանիայի և մի քանի այլ երգընների քաղաքների՝ Լայպցիգ, Լուտեր, Կոոպենհագեն։

<sup>2</sup> Հավանաբար, որպէսկետե մինչ օր պարզված չէ, թե ստուգ ով է նախագծել Ռինգը։

կա գործին մասնակցեցին տարբեր ազգերի Հարտարապետներ՝ Ավստրիա-ից՝ Կ. Ֆ. Հազբենհառուերը, Հ. Փոն Ֆերսակլը, Գերմանիայից՝ Գ. Սեմպերը, Դանիայից՝ Թ. է. Հանսենը, Հոլանդիայից՝ է. Վան դեր Նեոլը; Շինարարական այդ մեծածավալ ծրագիրն իրագործվեց մի քանի տասնամյակի ընթացքում՝ դառնալով մայրաքաղաքի ամենամբողջական արտահայտությունը:

Հետաքրքիր է նշել, որ նույն շրջանում (1853—69) Ժ. է. Հոսմանը իրագործեց Փարիզի բուլվարների կառուցապատումը՝ դիմելով Հարտարապետներ Հիտորֆին և Բալտարին; Հոսմանի մտադղացմամբ գերիշխող տարրը պետք է լիներ բուլվարը, իսկ նրա երկայնքով տեղադրվող շենքերի շարքը պետք է կազմվեր ինքնուրույն արտահայտությունից զորկ ափային շենքերից:

Հոսմանյան մոտեցումը մասնակի էր, մինչդեռ Ռինգը կառուցողները ձգտել էին օղակած այդ պողոտակի բաղաքաշինական և հարտարապետական իրողությունը արտահայտել իր ամբողջությամբ: Հիրավի բարոկկոյի և ոռկոկոյի ոճավորումներով երանգավորված Վիեննան մինչև օրս պահպանել է մետրոպոլի անցյալում ունեցած նշանակությունը, որը տարածական առումով քանակական է, այս հետևանք է հարտարապետական և քաղաքաշինական մինչև վերջ մշակված ծավալա-տարածական լուծումների: Արդ, այս ամենը ձեռք բերվեց շնորհիվ այն բանի, որ քաղաքի կենտրոնը տեղաշրժվեց կորիզային հատվածից դեպի հնի և նորի միջև ընկած Ռինգի երկայնքը:

Ծնդհանրապես քաղաքի գարգացման ընթացքը կամ այլ կերպ ասաւ, նրա դիմամիզը առավել ուժով արտացըլվում է բաղաքի շրջապատում լնկած հատվածներում, իսկ կենցաղի, մշակույթի ու վարչական առումով դիմամիզը ներդորձում է հատկապես քաղաքի հին կենտրոնի վրա: Վիեննայի օրինակում քաղաքի կազմի վրա ազդող ուժերի սահմանը գտնվում է Ռինգի երկայնքում, որտեղ փոփոխման ենթակա շրջապատի արվածաններից գեպի կենտրոն ընթացող ուժերը մեղմանում են և երթևեկության մերժալացված իրողությունից վերադառնում դեպի մարդուն հատուկ շափանիշներ:

Հարկ է նշել նաև, որ Վիեննան ավանդաբար կապված է Ֆիշեր Փոն Էլզախի, Հիլդեմերանդի ստեղծած ճարտարապետական մշակույթի, ինչպես և դասական արվեստին խարսխված սեմպերյան մտքերի հետ: Արվեստի հասկացության նման ոլորտում գործառնությունները, շինարարական տեխնիկան և նոր շինանյութերի օգտագործումը ճարտարապետականում են և գրանով իսկ հարստացնում քաղաքաշինական միտքը:

Արդի քաղաքաշինության հիմնադիրներից մեկի՝ ավստրիացի Կամիլլ Սիտտեի (1843—1903) հասկացությամբ, ճարտարապետի բարձրագույն նպատակը քաղաքի ձևակերպմանը միասնական բնույթ հաղորդելն է: Նման մակարդակի հնարավոր է հասնել միայն այն ժամանակ, երբ ճարտարապետական կարգը դեկավարող օրինաշափություններում կիրավում է քաղաքաշինական տարածական համակարգը: Կ. Սիտտեի առավելապես գեղագիտական բնույթ կրող սույն մոտեցումը բնորոշ եղավ 1860—1914 թթ. ավստրիական քաղաքաշինությանը և հատկանշեց վիեննական Սեցեսիոնի ճարտարապետական մշակույթը:

Ավատրիայի նկարիչ Գուստավ Քլիմտը (1862—1918)<sup>3</sup> 1897-ին Հիմնեց վիեննական Սեցեսիոնը՝ 19 արվեստագետների մասնակցությամբ: Դրանց մեջ էին Օ. Վագները, Յ. Մ. Օլբրիխը, Յ. Հոֆմանը: Գ. Քլիմտը ընտրվեց Սեցեսիոնի նախադաս՝ և այդ պաշտոնը վարեց մինչև 1905 թվականը: Իր նկարչությամբ և տեսական դրույթներով Քլիմտը նշանակալի ազդեցություն թողեց Ավստրիայի ճարտարապետության և կիրառական արվեստների վրա: 1903-ին Յ. Հոփմանը և Պ. Մողերը սահեղեցին Վիեննա Վերեցտեսե անունը կրող կիրառական արվեստների միությունը, որը, ներշնչված Քլիմտի մշտաքրով, առաջադրեց արվեստի և հասարակության փոխհարաբերության մի խնդիր, որի նպատակը կիրառական արվեստը կանքի բոլոր բնագավառններին հաղորդակից դարձնելն է: Արվեստի հասարակական առումով որակավորելու ձգառումը Վիեննա Վերեցտեսեն ժառանգել էր Մորիսից, Ռակինից և գերմանախոս երկրներում զործող Վան դե Կերտեից:

Սեցեսիոն բառը (լատիներն՝ *անշատել*, *հատել*) հիմնադիրների ընկալմամբ նշանակում էր բաժանում՝ պաշտոնական հովանավորություն վայելող Ակադեմիայի պահպանողական արվեստից<sup>4</sup>: Իսկ շինարարական տեխնիկայի առումով բաժանում նշանակում էր՝ անշատվել հնացած սիւտեմներից, օգտագործել նորագույն շինանյութեր (երկաթբետոն) և բաղարացիական շենքերի կառուցման մեջ կիրառել առավելապես ճարտարագիտական շինություններում տարածված մետաղայ համակարգերը: Նշանակալի օրինակներից է 1905-ին Վիեննայում Օ. Վագների կառուցած «Փուտի դրամարկը»:

Եինանյութը, տեխնիկան, արդյունաբերությունը և հասարակարգը միասին առաջ մի իրողություն է, որի խորքում հարկ է խարսխվել ու մի կողմ թողնել գեղագիտական ինչ-ինչ համոզմունքներ: Հարկ է նաև տվյալ իրողության զարգացման ուղղ մեջ փնտրել պատմության շարունակությունը:

Նոր ճարտարապետություն ստեղծել չի նշանակում շինարարական նոր տեխնիկա կիրառել: Այդ արել էին արդեն Վ. Հորտան՝ Բրյուսելում, Զ. Լաբրուստը՝ Փարիզում: Նույնը արել էր Օ. Պերըն: Նա երկաթբետոնը օգտագործել էր Վիոլել լը Դուզի գոթական ստրուկտուրալիզմի ոգով, իսկ երեմն՝ նոր դասականի ոճավորումով: Հորտայի, Լաբրուսի, Պերընի կառուցած շենքերում ձևի ընկալումը խարսխվել էր միայն ոճական հասկացության ոլորտում: Մինչեռ խնդիրն այլ էր. հարկ էր ձեզ սահմանապատել ոճական կապվածությունից, և արվեստի առարկան հաղորդակից դարձնել մարդուն:

Անգլիական Արտ ընդ Կրաֆտ, համաելուապական՝ Յուգենստախի, Ֆլորեալ, Լիբերտի և այլ անվանումներով տարածում գտած Ար Նուվոն մասսամբ միայն կարողացավ հաղթահարել մշակույթի բնագավառում իշխող պահպանողականությունը: Իսկ ձևի և մեքենայով արտադրված առարկայի միասնության, ինչպես և ձևի ու պարունակության փոխկապվածության հարցերը բավարար լուծում շտացան:

Նախորդից ստացած ժառանգության տնօրինումը Սեցեսիոնի արվեստագետների սեռնդի համար նշանակում էր հակադրվել քաղքենիների մտայնության մեջ արմատացած էլեկտրական առարկան: Արդ, էկլեկտիզմը հիմնականում

<sup>3</sup> Գ. Քլիմտ մասին տե՛ս G. Klimt, Lexikon der Kunst, Bd. 2, S. 642—643.

<sup>4</sup> Տե՛ս Jugendstil, Lexicon der Kunst, Bd. 2, S. 484—486.

Հակադասահկան է, որովհետեւ անջատել գեղագիտական և կառուցային նշանակություն ունեցող ճարտարապետական տարրերը (սլոն, կամար և այլն) դասական կարգի օրինաշափություններից և Հնարովի իմաստներով նրանց ինչ-որ նշանակություն տալ՝ դա մի կեղծիք է, որի հիմքանիքով խախտվում է ճարտարապետության դասական կարգի միասնականությունը: Նույն կեղծիքը առկա էր այն դեպքում նաև, եթե մեքենայացված եղանակներով արտադրված տարրականները երեսապատվում էին ավելի արժեքավոր նյութերով (ճենապակի): Մանավանդ, որ արհեստական այդ գեղազարդումը արվում էր, որպեսզի առարկան թողներ ձեռագործ աշխատանքի տպավորություն: Մեքենայով արտադրված առարկայի որակավորման խնդիրն արդյունաբերության մասշտաբով փաստորեն բարձրացվեց 1907-ին՝ Դոյլեր Վերկրունդի շուրջ Հավաքվածարվեստագետների կողմից (Հ. Վան դե Վելդե, Պ. Բերենս): Սակայն մինչ այդ, արվեստի տվյալ դրությունը գիտակցող վիճնական Սեցեսիոնի ճարտարապետների համար հիմնական խնդիրներից մեկը դարձավ կառուցվածքի և գեղազարդումների միջև առկա շաղկապի վերագտնումը:

Այս հարցի լուծմամբ լրազգում էին նեակինը և Մորիսսը: Նրանց կարծիքով տվյալ խնդիրը չության բացահայտումը պահանջում էր հիմնականում վերապահ լինել ձեւի ոճական հասկացությունների մեջ, քանի որ նոր զաղափարը՝ ձեւի և նշանակության կապակցություններում ենթարկվելով ոճական հասկացությանը, կարող էր ստանալ իրականությունից կտրված նշանակությունը:

Ճարտարապետի համար ձեւը, տարածություն սահմանելու և շրջապատին հաղորդակից դարձնելու հասկացությունները առնվզում են շենքի կառուցքի և գեղազարդության հետ: Երկուն էլ փաստական ճշմարտություններ են, որոնց միջոցով մարդը բնորոշում է իր ապրելակերպին հատուկ միջավայրը: Ռասկինի և Մորիսսի կարծիքով ձեւի ճշմարտությունը կարելի է վերագտնել արհեստաների ճանապարհով, իսկ արհեստը հիմնականում ձեռքի աշխատանք է և ավանդաբար հանդեցնում է զարդաբեղության: Ելակետային այս հասկացության հիման վրա կարելի է ընդգծել հետեւյալը: Անդիմիացի արվեստաբանների մեկնարանությամբ ճարտարապետական ձեւ կարող է ընդհանրացված իմաստ ստանալ այն դեպքում, եթե գերիշխում է զարդագեղությունը: Այս տեսակետը գալիս, հաստատում է այն փաստը, ըստ որի ճարտարապետության մեջ ընդհանրություն առաջացնող զարդը պարունակում է ազգային իմաստ, և այս պարագայում ևս արհեստը հանդիսանում է ընդհանուրի և ազգայինի կապակցության դրսերում:

Կառուցվածքի և գեղազարդության հարցի անգիտական այս ըմբռնմանը հակադիր մեկնարանություն առաջարկեց ավատրիացի ճարտարապետ Ադոլֆ Լոոզը: Նրա կարծիքով ճարտարապետությունը պետք է լինի զարգերից զուրկ, պարզ և հարակցված տվյալ գործառնությամբ:

Գեղազարդության հանդեպ Ա. Լոոզի ունեցած քննադատական վերաբերմունքը նրան մղեց ինտերելու ձեւի հստակություն, որին կարելի էր հասնել, պարզեցնելով առարկաների մշակման տեխնիկան: Այլ կերպ ասած՝

<sup>5</sup>Տվյալ հասկացությունը որոշ շափով հարատէ է, ոտինակ, պարզություն քարոզող նույն Ա. Լոոզը, 1923-ին, «Զիկապ Տրիբուն» լրագրի վարչական 32 հարկանի երկնաքերը նախագծել էր խորակով, արակով և ակոսած փորձաժեթերով՝ ամրողացած գորական հսկա պլոմբ նմանությամբ:

Հարկ էր ձեր և տեխնիկայի միջև սահեղծել անմիջնորդ կապակցություն։ Շաղկապումը պետք է լինի անմիջական և զուրկ ուշական փոխարկումներից<sup>6</sup>։

Չմիշնորդավորված կապակցության խնդիրը ինքնին թելադրում է արվեստի մշակման նոր տեխնիկա, որի շնորհիվ արտադրված առարկան՝ արվլուալ շրջանին հատուկ հաշակի դրսելորումների համեմատ, ձեւը է բերում որոշ ինքնուրույնությունն ինքնին արժեքավորված առարկան գործնական առումով հաղորդակից է դառնուած մարդու առօրյալին այլևս ոչ որպես զարդ, այլ որպես գործածական առարկա, այսինքն՝ մեզ շրջապատող ամօն ինչը, լինի այն մեքնա, տոն, կահույք կամ քաղաք։ Այս իմաստով ճարտարապետությունը ևս ստանում է առարկայական նշանակություն։

Նշենք նաև, որ առարկայի ինքնուրույնության գաղափարը կուրիստների մոտ առաջացավ որպես նկարչության ներքին զարգացման արդյունք, թեև ճարտարապետության պատմության համեմատ, ժամանակադրականուրեն փոքր-ինչ ուշացած։ Մեկինտոշը Գլազոյում 1901-ին, կոողը Վիեննայում 1907-ին արդեն մշակել էին այդ մտքերը և կառուցել նման հասկացությամբ։ Հետեւարար, այն կարծիքը, ըստ որի կուրիզը հարկ է նկատել իրեւարվիստի, ուստի և ճարտարապետության բոլորովին նոր ըմբռնման ակունք, մեր կարծիքով անհիմն է։

Կևառունական նշանակություն ունեցող ինդիրը վերաբերում էր ձեւին։ Եկեղեկամբը հայթահարված երևույթ էր, և ճարտարապետները փնտրում էին ձեւ ձևական իմաստից ավելի խորին ընկած, ձեւի հասկացական բովանդակությունը, ձեմաստը<sup>7</sup>, որի տրամաբանական մշակումը նոր նախագծումների հիմք կարող էր դառնալ։ Վիեննական Սեցեսիոնի ճարտարապետների ընկալմամբ տրամաբանական լինել նշանակում էր պահպանել դասական ողին։ Սեցեսիոնիստների դասականությունը առնչվում էր շենքի կառուցվածքային հասկացության հետ։ Եվ եթե Վագների, Օլբրիխի, Հոֆմանի ստեղծագործություններին բնորոշ են զարդավանդակային մշակումները, ոճական որոշ երանգավորումները, ապա ստեղծագործական այս դիրքորոշումը պետք է համարել Վիեննայի կիրթ, վայելակերպ մթնոլորտին հաղորդակից լինելու պահանջի հետեւանք։ Զարդը որակում էր ապրելակերպը, հարստացնում ձեւը, բազմիմաստ կապեր հաստատում մարդու և առարկայի միջև։

Գոթականը հիմնականում կառուցվածքային ընկալում է և այդ իմաստով մեծ նշանակություն ունեցավ ճարտարագիտական մտքի զարգացման համար։ դասականն իր էությամբ ուսցիունալ մոտեցում է, որը նպասանել է ճարտարապետության ոճական կախվածությունից սահմանազատելուն։ Վիեննական Սեցեսիոնի ճարտարապետությունը զուրկ է ոճական ձևակեր-

<sup>6</sup> Adolf Loos, Ins Leeregesprochen, 1897—1900, Paris, 1911, Adolf Loos, Trotzdem 1900—1930, Innsbruck, 1932.

<sup>7</sup> Զ. Կ. Արգանի խոսքերով՝ ճարտարապետական առարկան «գործառնությունների» պահանջանակությունը կերպում վերաբենում է իր էությանը բնութագործ սկզբունքը (il suo principio individuazionale) G. C. Argan, Progetto e destino, Milano, 1965, p. 113.

<sup>8</sup> Ձեմիմաստ բարը մենք վերցրել ենք լեզվաբանությունից՝ (semem) սեմեմ, այսինքն՝ բարիմաստ հասկացության իմաստով և օգտագործում ենք Գ. Ս. Բրուտանի «Փիլիսոփայություն և լեզու», Երևան, 1972 թ. գրքում տրված (էլ 126) հետեւալ մեկնաբանությամբ՝ «Բառի կենտրոնական նշանակությունը նրա բառային նշանակությունն է, բառի իմաստը»։

պումից, իսկ հորինվածքային իմաստով հարազատորեն դասական է: Դասական միտքը հնարավոր դարձեց վերականգնել ձեփի և կառուցի կապը, ճարտարապետության մեջ կիրառել շինարարական նոր տեխնիկան, իսկ բաղադրաշինության մասավորում ձգտել նոր լուծումների մշակման:

1894—1897 թթ. Օ. Վագները կառուցեց Վիեննայի Մետրոպի Կարլսպլաց և Շյոնբրուն կայանները: Մետրոպայանների լուծումներում (նշենք, որ այդ թիմալի շուրջ կատարած գծագրություններն ավելի բնորոշ են, քան կառուցված կայանները) Վագները առաջարկել է վերգետնյա ծավալը կապել ստորգետնյա տարածությանը և տվյալ շրջանի համար որոշ շափով այդ նոր իրողությունը դրսեռորել է նաև ալլուգուսա: Թաղարաշինական առումով առաջարկած խնդիրը կարեր էր և զարգացում ապրեց Սանա էլիայի նախագծերում: Այս կապակցությամբ նշենք հետեւյալը: Գետնի մակերեսը բաղադրներում գերիշխող երկույթ է, ընդհանուր առմամբ այդ մակերեսներին են հարաբերվում (փողոց, հրապարակ) շենքերի ծավալները<sup>9</sup>: Սույն իրողությունը այսօր աստիճանաբար սկսել է բազմաշերտ կառուցվածք ստանալ: Մտորգետնյա, գետնին հավասար և նրանից ավելի վերև ձգվող (թեկուղ կամրջատիպ) մակերեսները ոչ միայն արժեքավորվում են, այլև ճարտարապետը ձգտում է բազմաշերտ տվյալ կառուցվածքին տալ ծավալատարածային կերպար (օրգանապես, ասել է թե՝ բազմաշերտորեն լուծել երթևեկության, սպասարկումների հարցերը), պայքարել մարդու կզգիացման դեմ՝ առաջարկելով տարրեր բարձրություններում և խորություններում ստեղծվելիք կապակցությունների նոր հնարավորություններ:

Այստեղից երկում է, որ բազմաշերտ տարածության առարկայացման գործում Վագները գեռևա XIX դարի վերջերին բերել է թեև սահմանափակ, բայց դրական իր ավանդը:

Հմուտ ճարտարապետ, զգայուն արվեստագետ Օ. Վագները (1841—1918) մարմնավորում է ստեղծագործողի, կառուցողի և մտավորականի բազմակողմանի կերպարը: 1890-ին նա ստանում է Վիեննայի գլխավոր հատակագիծը պատրաստելու պատվիրը: Այդ նախագծի հիման վրա 1894—97 թթ. կառուցվեց մայրաքաղաքի արվարձանները կենարոնին կապող մետրոյի վերգետնյա ուղին: 1894-ին Օ. Վագները նշանակվում է Վիեննայի Ակադեմիայի ճարտարապետական ամբիոնի ղեկավար: Նրա մոտ են ուսանել Յ. Հոֆմանը, Յ. Մ. Օլբրիխը, որոնք Ա. Լոոպի և Օ. Վագների հետ վիեննական դպրոցի մեծագույն ներկայացուցիչներն են: Օ. Վագները հեղինակ է մի շաբթ գրքերի: Իր «Արդի ճարտարապետություն» աշխատությունում նա տեսականորեն առաջարկում է հիմնովին վերափոխել տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետական մշակույթի ուղղությունը՝ այն թեքելով դեպի արդի կյանքը: Վագ-

<sup>9</sup> Տարածություն-շենք փոխապակցության առումով հետաքրքիր է նշել, որ եթե պատմական շուրջում շենքը գերիշխում է շրջապատի փողոցների և հրապարակների վրա, ապա Փարիզում գերիշխում է ազատ տարածությունը: Այստեղ շենքը թվում են ավելի փոքր, մասշտարայնորեն խախտված Վիեննայի Ռինգում, մինչդեռ, կարծեն զանվել է հոռմեական և փարիզան ծավալատարածական լուծումների համարակաշռված արտահայտությունը:

Տարբեր շենքեր վերգետնյա ուղիներով իրար հաղորդակից դարձնելու օրինակներից նշենք ճարտարապետներ Էլիսին և Պիտր Սմիթսոնի (Alison und Peter Smithson) Շեքփերի համալսարանի համակառուցը (1954), որի նախագծման համար հեղինակները հիմք էին ընդունել հետիւն երթևեկության բազմաշերտ համակարգը:

Ների մտքերը զգալի ազդեցություն թողեցին, այսպես կոչված, մողեռն կամ պարզապես 1900-ի ոճ արվեստի ուղղության վրա<sup>10</sup>:

Վագները փորձեց բացահայտել արվեստի զարդացման էությունը՝ կապված առավել շափով ձեր, քան շինարարական տեխնիկայի հարցերի հետ: Այդ էլեկտրիզմի և ուժիվալ հասկացությունների համաձայն կայուն էր մնալու ձեր արտաքին, այսինքն՝ նրա ոճական իմաստը: Վագները շրջեց այդ տեսակատր, վերակուցեց ձեր ներքին իմաստը, հիմնականում նրա կառուցվածքային նշանակությունը, որը Շինկելի և Սեմպերի հասկացությամբ ուցիուալ է և այդ իմաստով՝ դասական:

Այսօր էլ հորինվածքի դասականությունից ժառանգված ազգակաները մնում են գործող: Հիշենք Միս վան գեր Ռոբեր շնորհի վճիռ ծավալները, կայուն շափերը, լր Կորրյուզիեի մոդուները, համաշափության օրենքների օգտագործումը (Հուկս Կան), Ա. Ասալոյի կառուցած Հենսո-Գուտցայտ շենքի (1959—1962), ինչպես և է. Գ. Ասպլունդի ճարտարապետության առավել բացահայտ դասականությունը\*: Մեր կարծիքով, դասական արվեստը կորցրել է իր առարկայական ուրույն նշանակությունը, բայց կերպընկալման առումով՝ դեռ կենդանի է: Այսքանից կարելի է եզրակացնել, որ հարկ է քանդել ճարտարապետական մտքի ձեւական կազմը, հրաժարվել ոճական տարրերից և անցյալից արդիականին հաղորդել դասականության մտային պատկերը: Մտային պատկերը իր հերթին կապված է ձեւի զեղունության, այսինքն՝ սիմետրիային հատուկ այն օրինաչփությունների հետ, որոնց հիմունքներով կարգավորվում և դասավորվում են ճարտարապետական հորինվածքի հիմնական բաղադրիչները: Նման մոտեցումն իր իսկությամբ էմպիրիկ է և հակադրվելով ակադեմիաների տրակտատային մտածելակերպին, ճարտարապետից պահանջում է եզակի շնորհը, ուժեղ բնավորություն: Վագները այս առիթով նշում է. «Հարկ է հովանավորել միմիայն օժտված և ուժեղ բնավորության տեր ճարտարապետներին, որովհեակ նրանց գործերը կարող են օրինակելի համարվել ապագա սերունդների համար»<sup>11</sup>: Իսկ ուժեղ է նա, ով ազատ է և զգայնությամբ՝ էմպիրիկ:

Քննության առնենք Օ. Վագների գործերից «Փոստի դրամարկղը» (Վիեննա, 1905) և տեսնենք, թե Վիեննայի ճարտարապետի համար ինչ է նշանակում ձեւի զարգացում հասկացությունը: «Փոստի դրամարկղը» ինքնամփոփ, սիմետրիկ, տրամաբանորեն պայծառ, երկրաշափորեն խիստ ընդգծված շենք է: Ճակատներում մակերեսների անցումները փոխարինված են հստակ անկյունագծերով, պլաստիկ արժեքներն արտահայտված են ոչ թե խորությունների միջոցով, այլ երեսպատումների, այսինքն՝ մարմարի, ճենապակու (տե՛ս Վագների «Մայոլիկա տոննը», Վիեննա, 1898) և երբեմն ծեփվածքի երանգավորումներով: Զարդերի համար օգտագործված են բրոնզը, երկաթը և կերամիկան: Նման հասկացությամբ ընկալված ճարտարապետության մեջ

\* Գիրքը ծանոթ է IV ճարտարակության վերնագրով՝ „Die Baukunst unserer Zeit“, Wien, 1914. Einige Skizzen, Projekte und Ausgeföhrte Bauten 1891—97, 1902—1922, Wien, „Qualität des Baukünstler“, Wien, 1911.

\* Հիշենք լր Կորրյուզիեի Հոնասանում, հտակայում կատարած գծագրերը և նախագծած որոշ շենքերը: Օրինակ՝ Մարսելի բնակելի տունը որպես մտահացում առնվազաւ է Ֆլորենցիայի մոտ գտնվող, վանական համակառուցից՝ Զերտողայի հետ:

<sup>11</sup> J. A. Lux, Otto Wagner, c. IV, München, 1914.

դասական կարգը մնում է պահպանված։ Պլաստիկ արժեքները՝ փոխանակ ընթանալու դեպի խորքը, բերված են ձակատների մակերես։ Նույն պատր երեսպատումների միջցով վերածված է մակերեսի և այս առումով ունի շնչների ծավալը քողարկող նյութի նշանակություն։ Հարկ ենք համարում զգուշացնել, որ նման մոտեցումը չունի զարդարի իմաստ։ Նրա նշանակությունը հիմնականում պետք է փնտրել շինանյութի ձեր միաձուկելու հասկացության ոլորտում։ Նման մոտեցման համաձայն, երեսպատումը պատի համեմատությամբ ստանում է առաջնահերթ նշանակություն։ Իսկ պատր, կորցնելով ծավալային իմաստը, վերածվում է շնչների արտաքին և ներքին մակերեսները պատող գունագեղ, խնամքով մշակված թաղանթի։ Հետեւարար, քանդվում է ձեր և կառուցի միասնական կապը, ձեր զեղունությունը պահպանվում է որպես բնական հատկանիշ, իսկ մակերեսը, ծավալի համեմատությամբ, ստանում է ճարտարապետական միտք կրող տարրի նշանակություն։

Մակերեսի և պատի, ձեր և կառուցելու եղանակի առնչության առումով նշենք հետևյալը։ Յ. Ստրժիկովսկին իր հայտնի «Հայ ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատության առաջարկանի «Հայկական հողարձանների նշանակությունը արդի ճարտարապետության համար» վերնագրված հատվածում, ճարուցված հարցի կապակցությամբ անդրադառնում է Օ. Վագների «Փոստի դրամարկղ» շնչների և Թալինի կաթողիկեի (VII) արտաքին պատերի երեսպատումներին։ Նա վերլուծում է երկու օրինակների մեջ պատր կառուցելու եղանակները և հանգում հետևյալ եղբակացության։ «Կես հազարամյակ է, որ մենք՝ իտալական վերածննդի ուղիով ընթացող արևմուտքինեւս, առավել շափով հետևում ենք ճարտարապետության արտաքին ձևերին, քան կառուցելու եղանակին» և ապա ավելացնում է. «Վերածննդը հազար տարի անց յուրացրեց քրիստոնեական վաղ շրջանում հայերի մշակած հիմնական դրույթները, իսկ շենքերը երեսպատվեցին համաձայն հոռմեացիների եղանակի՝ շնչների կառուցի հետ շառնչվող հունական ձևերով»։

Եթե Ստրժիկովսկին ճարտարապետներին խորհուրդ էր տալիս ավելի ուշադիր լինել հայերի կառուցելու եղանակի նկատմամբ, նա ենում էր կառուցի և ձեր միասնության սկզբունքային նշանակություն ունեցող այն հասկացությունից, որը, ինչպես շեշտում է վիեննացի գիտնականը, հատուկ է հայ ճարտարապետությանը<sup>12</sup>։

Վագների կարծիքով դասականությունը արդիական իմաստով ոճական հասկացություն չէ, այլ ձեր ընկալելու, արտահայտելու համակարգ, ուստի հարկ է վերագտնել ձեր պարզությունը՝ արտահայտված թեկուզե լերկ, ազատ մակերեսների միջոցով։

Վագները ձեր պարզությանը հասավ աստիճանաբար՝ մեկնելով տուկանա-կերածների հիման վրա նա զարգացրեց երեսպատումը պատից անշատելու արևմուտքին հատուկ ձգտումը, որի հետեւանքով պատը, հարաբերվելով շնչների կառուցին, ոչ միայն ինքնուրույնություն ստացավ, այլև հնարավոր դարձրեց ճարտարապետական հորինվածքում պահպանել դասական օրինաշափությունը, նույնիսկ երկաթբետոնե կամ մետալլա կառուցելու մեջ։

<sup>12</sup> J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, v. I, S. 3—4.

Հարկ էր նաև, որ ինքնուրուցնություն ստացած պատը հորինվածքային իմաստով ձևայնորեն կապվեր շենքի ընդհանուր կառուցին: Թերենք մի օրինակ. Վագները «Փողովրդական բնակելի տուն» նախագծում շենքի ճականները բաժանել է պատուհանի և բազրիքի շափը ունեցող և տարրեր հարկերը շեշտող բառանկունի ցանցով: Գաևազոր սալիկներով ընդգծված շենքի ճականները պատող այդ ցանցը ձևային իմաստով հնարավոր դարձրեց պանելի օգտագործումը: Պանելն արդեն մուտք գործեց հարտարապետության բնագավառը (տե՛ս նաև Վագների մարմարապատ պանելներով կառուցած Կարլսպլացի մետրոլիալանը): Մետաղա շինարարության մեջ ծանոթ այդ տարրը քսանական թվականներին տարածում դավ Գերմանիայում, և որպես պանելային շինարարություն (plattenbauweise) կիրառվեց է. Մայի Կողմից (1924) Պրաունհայմի (Ֆրանկֆուրտ Մայնի վրա) բնակելի թաղամասի շենքերում:

Արժեքների վերաբննության այն ընթացքը, որը հակառակվեց իդեալիզմին և ոռմանախղմին, տարրեր հապաղումներով զարգացում գտավ XIX դարի վերջերում, հիմնականում նպատակ ունենալով սահմանազատել արվեստը իդեալիստական տիպի հասկացությունների բացարձակված վիճակից: Նման հասկացությունների վերաբննությունը վերաարձերավորեց ճարտարապետական մտքի ուսցիոնալ որոշակիությունը և ճանապարհ բացեց դեսպի իրականը, դեսպի ճարտարապետությանը բնորոշ պատմականորեն ճշմարիտ դրսերումները: Մտքերի նման ոլորտում Գեսեղիուսը, Լինդգրինը և Էլիել Սաարինեն Ֆինլանդիայում հիմք դրեցին, այսպես կոչված, «ազգային ոռմանտիկ» ճարտարապետությանը: Ըվեդիայում Կ. Վեստմանը, ներշնչված Մորրիսի մտքերով և գանիացի Շիրոպինի գործերով, մի շարք ճարտարապետների հետ ստեղծեց «ազգային ուսցիոնալիզմ» անվանումը կրող ուղղությունը: Անզիայում Մորիսսի, Խասկինի սոցիալիստ-ուստումիզմը և Գլազույի դպրոցի ուսցիոնալիզմը, Ֆրանսիայում «Բո զարի» պահպանողականությունը, Վիոլե-լը-Դյուի գորթական տեխնիցիզմը և վերջապես Գերմանիայում Շինկելի, Սեմպերի դասականությունը և «ազգային արվեստը» միասին ներկայացնում են դարավերջում դասականի և ոռմանտիզմի, ուսցիոնալիզմի և ազգային հակառի կողմնորոշումների ոլորտում զարգացած ճարտարապետական մշակությը:

Այդ նույն շրջանում Հ. Թենը, հումանիստ ուսցիոնալիստի հասկացությամբ, իր «Արվեստի փիլիսոփայություն» գրքում (1885) առաջարկում էր արվեստի գործը մեկնաբանել՝ ենթելով միջավայրի պայմաններից: Մինչդեռ 0. Շուազին ճարտարապետությունը դիտում էր որպես շինարարական տեխնիկայի կարելիություններում առկա, բնականոն զարգացող և պատմական կապվածություններից անկախ, որոշակիուրեն սահմանված երևույթը Բուրբ-հարդն իր հանրահայտ «Կիկերոն» (1885) և «Վերածննդի մշակույթը Խտալիայում» (1860) գործերում գտնում էր, որ արվեստն ուսումնասիրելիս հարկ չկա ուշադրությունը կենտրոնացնել միմիայն տեխնիկական հարցերի վրա: Ուսմանտիկ ոգու լայնախորությամբ Բուրբհարդը ընդլայնում էր արվեստի նշանակությունը՝ հասցնելով այն մինչև ամբողջ մշակույթին արտահայտող երեսութիւ աստիճանին: Նկատի ունենալով այս բոլորը և միաժամանակ Ար-նուվոյի, Յուգենստիլի ունեցած կարևորությունը, ուշագրավ է հիշատակել, որ Կենտրոնական Եվրոպայում ստեղծվում էին արվեստի ոջախներ, որտեղ

նոր գաղափարներով տոգորված արվեստագետներին հնարավորություն էր տրվում ազատ միջավայրում լծվել ստեղծագործական աշխատանքի: Դրանցից Գերմանիայում հայտնի եղավ Դարմշտադի մոռակայրում ստեղծված Մատիլդեհոռ անոնց կրող «արվեստագետների համայնքը»: Հումանիումի գաղափարներով տարված, գյութեյան շրջանի Վայցարի ավանդների հետքերով ընթացող Հեսսենի իշխանը՝ արվեստասեր, մեկնաս է. և էսսեն Շիմնել էր այդ համայնքը և իր շուրջը հավաքել երիտասարդ ճարտարապետ Պ. Բերենսին, նկարիչ Հ. Քրիստիանսոնին, գծագրող Պ. Բուրկին, քանդակագործ Լ. Հարիսին, գեղազարդող Պ. Հուբերին և ակնագործ Ռ. Բոսսելտին:

Էսսեն իշխանի հրավերով, ավատրիացի ճարտարապետ Օ. Վագների աշակերտ Յ. Ս. Օլբրիխը (1867—1908) նախագծում է «արվեստագետների համայնքը»՝ բնակարաններից, արհեստանոցներից և ցուցարաններից բաղկացած համակառուցը<sup>13</sup>:

Վիեննական Սեցեսիոնի հիմնադիմներից Յ. Ս. Օլբրիխը հատուկ գերգայնությամբ, հմուտ վարպետությամբ նախագծեց նաև շենքերի ներքին և արտաքին հարդարանքները, կանուքը, ամանեղենը, այգիները և նույնիսկ սեղանատան սպասավորների հագուստը: 1889-ին սկսած կառուցը ավարտվեց երկու տարի անց, և 1901-ին համայնքի կոլեկտիվ ցուցահանդեսում բացվեց Մատիլդեհոռն: 1907-ին Օլբրիխը իրագործեց ցուցահանդեսների մեծ շնչքը՝ Հոխցայտուրմը, դրանով իսկ ամբողջացնելով համակառուցը:

Այդ բոլոր գործերը մինչ օրս պահպանել են իրնոց ժամանակի հրապույրը. նման երկարակեցության պատշառներից կարևոր այն է, որ Օլբրիխը պիտեր տեխնիկական մեծ հմտությամբ առարկայացնել իր մտքերը, պիտեր ճարտարապետական մանրամասներին, ինչպես և արվեստի առարկաներին անհատական բնույթ տալու գաղտնիքը: Այս իմաստով նա կարողացավ իրագործել Վագների պատգամը. «անեղծ պահել բնական զգայնությունը և որպես ստեղծագործող լինել ազատ»:

Ճարտարապետական իմաստով Մատիլդեհոռն երկրաշափությամբ հոգինած մեծ միասնությանը պատկանող շենքերը բազմահատված ծավալներ են, որոնք համադրված են ոչ թե սիմետրիայի կարգով, այլ բազմախմբությունների օրինաշափության համաձայն: Մի մոտեցում, որը կարելի է համարել քաղաքաշինական: Համակառուցից հորինվածքը թելագրող հիմնական գործոնները շպետք է փնտրել հատակագիծը կարգավորող դործառնությունների միջոցով, այլ պետք է դիմել ծավալներին տրվող ճարտարապետական մշակումների ձևայնությանը և այն գգայականին, որը հատուկ է Օլբրիխին: Այս իմաստով Մատիլդեհոռն մնում է վիեննական դպրոցի լավագույն գործերից մեկը:

Մի այլ հատկանիշ՝ ծավալների դասավորման կարգը շարժունակ է: Մավալները մշտապես կրում են այն նկատառումը, որ գիտողը գտնվելու է շարժման մեջ: Շարժունակությանը մեծապես նպաստում են համակառուցին շաղկապված շրջապատի տարրերը բարձրություն ունեցող հարթակները, սանդղվանդակները, որոնց միջոցով ծավալները հարաբերակցվում են միմյանց և առաջացնում նոր, անսպասելի զուգագրումներ: Արտաքին և ներքին տարածությունների կապակցումն անընդհատ է և որպես ծավալտարածական լուծում՝ նորարարական: Նման ընկալումը հետագայում հարա-

<sup>13</sup> L. Benevolo, նշան. աշխ., հատ. 1, էջ 381—391.

դատ դարձավ Ռայտի համար<sup>14</sup>, իսկ Եվրոպայում քսանական թվականներին կիրառվեց Միս վան դեր Ռոեի կողմից (տե՛ս «Աղուսե տուն» նախագիծը, 1923, Գուրենում կառուցած Վոլֆի տունը, 1926):

Օլբրիխի շենքերի մինչև վերջ մշակված մանրամասները ցուց են՝ տալիս, թե ինչպես էր նա կարողանում տեխնիկական լուծումների և հորինվածքային հարաբերությունների միջև կապակցությունների մի ամբողջ համակարգ ստեղծել և հասնել ճարտարապետական նրբագեղ արտահայտչականության: Պրոֆեսիոնալ կյանքում կարելի է հասնել նույն կատարելության, երբ գոյություն ունի նախագծողի, պատվիրատուի և արհեստավորի իդեալական համագործակցություն: Մասիլդեհոների արվեստագետների համայնքի բնորոշ գծերից մեկն այդպիսի համագործակցությանը նպաստող բարենպաստ պայմանների ստեղծումն էր:

Ճարտարապետության պատմության առողջով, սակայն, Օլբրիխի ներդրումն առավել շափով առնվազում է ձեր հարցերի հետ. տեխնիկայի իմաստով առաջընթաց շկատարվեց դեպի մեջքնայացված արտադրությունը: Օլբրիխի արվեստը մնաց ձեռագործ աշխատանքի ավանդության սահմաններում:

Ֆերես պահպանողական թվացող կառուցելու նման մոտեցումը համապատասխանում էր այդ շրջանի արվեստի հասկացությանը, ըստ որի ճարտարապետական հորինվածքում հիմնական միտքն արտահայտվում է կառուցային և իմաստային միավորների ստեղծմամբ: Նման հասկացության համաձայն ձեր և արտահայտման միջոցները, որոնց ամբողջությունը կազմում է արվեստի լեզուն, ունեն նույնանման կառուցվածք, և նրանց իմաստը հիմնականում ընկալվում է տեսողության միջոցով: Տեսողությունը, որպես դիտակարգ, Կ. Ֆիդերի (1841—1895) բնորոշումով՝ սիխտբարկայտ (Sichtbarkeit), այսինքն անողականություն, ստանում է ճանաչողական իմաստ, իսկ արվեստի գործը դիտավում է որպես գեղագիտությունից տարրեր, ուրույն օրինաշափություններով վարդացող, իրականությունը արտահայտող երեսությութեան հասկացությամբ գիտությունը և արվեստն առանց իրար հակագրվելու կարող են տարրեր ճանապարհներով մեզ հանգեցնել իրականության ճանաչողությանը<sup>15</sup>: Տիխնիկական պայմանավորվածությունից պոկված ձեր անհատականացումը ճարտարապետական հիմքը հանգեցրեց շենքի ճակատները, նրա մակերեսները ընդարձակությամբ արտահայտելու միտումի: Այսպես, երեսպատռումը ստացավ առաջնահերթ նշանակություն: Օլբրիխն ավելի առաջ գնաց այդ խնդրի մեջ, նա իրարից անշատեց շենքի ծավալները, ստեղծեց իմաստակիր, հատակագծում կապակցված, լեզվականորեն շաղկապված ծավալների համակառուց: Ձեր ինքնուրույնության հետագա և վերջին քայլը կատարեց Յ. Հոֆմանը:

<sup>14</sup> Ա. Լ. Ռայտը Եվրոպայում կատարած առաջին շրջապայության ժամանակ 1910-ին Գերմանիայում ցուցարեց իր ստեղծագործությունները: Նույն թվականին Տյուրիխենի Վասմուտ հրատարակությունը հրատարակեց Ռայտի գծագրությունների և նախագծերի հավաքածուն՝ Ausgeführte Bauten und Entwürfe von F. L. Wright. 1911-ին երկրորդ հատորը՝ F. L. Wright, Ausgeführte Bauten. Երկրորդ հատորը բաղկացած է լուսանկարներից և անդիմացի հարաբառեալ Ռ. Էշբի (C. R. Ashbee) առաջարանից:

<sup>15</sup> H. Faensen, C. Friedler, Berlin, 1959.

միջնադարյան վարպետի կերպարի, ինչպես նաև արվեստը ձեռքի գործ համարելու հասկացության ոլորտում, այսօրվա բմբանմամբ՝ տեխնիկայի նոր հնարյավորություններին, շինանյութերի կարելիություններին տիրապետելու պահանջի մեջ: Մասնագիտացման հետագա ձգումը, սակայն, հեռացրել է ճարտարապետին արհեստներից, նրան առավել շափով կապելով նախազգածման սեղանին: Գերմանախոս երկրներում մի շարք ճարտարապետներ լրացրել են իրենց ուսմունքը Արվեստի և Արհեստավորների դպրոցներում (Kunstgewerbeschule): Այդ տիպի դպրոցները, որոնք ժամանակին հիմնականում նկարչությունից կախում ունեցող բաժինների էին<sup>16</sup>, հիմնադրվել են XIX դ. կեսերին, Սեղինթողը, Բերենսը, լը Կորբյուլին, օրինակ, սկսել են նախ որպես նկարիչ, իսկ հետագայում անցել ճարտարապետության:

1897-ին ֆոն Սկալան Վիեննայում կազմակերպում է անդիմական կառույրի առաջին ցուցահանդեսը: Ավելի ընդհանուր առումով ժամանակակից արհեստների մշակությը գերմանախոս երկրներին հաղորդվելու առավելությունը ստանձնեց ֆոն Մութեսիոս (von Muthesius):

Նման նախաճեռությունները նոր հետաքրքրություն առաջացրին արհեստների հանդեպ: Սեցեսսիոնի ճարարապետներից Յ. Հոֆմանը 1899-ին նշանակվում է Կոնցուսկերբեցովկերի դասախոս, իսկ 1903-ին՝ Ք. Մողերի հետ նրանք հիմնում են Վիեններ Վերքշտետե (Wiener Werkstätte) արհեստանոց-դպրոցը, որը թե՛ ճաշակի, թե՛ ձեռագործ առարկաների տարածման իմաստով Դոյչեր Վերքբունդի հետ միասին մեծ ազդեցություն թողեցին Արևմտյան Եվրոպայում և նույնիսկ XIX դարի վերջերին արհեստների կենտրոն հանդիսացող Անգլիայում:

Օ. Վագների մոտ ուսանած, նրա մտքերին հավատարիմ Յ. Հոֆմանը (1870—1956) Ավստրո-Հունգարական կայսրության մայրաքաղաքի հասարակությանը հայտնվում է որպես Սեցեսսիոնի 1898-ին կազմակերպված ցուցահանդեսի բարեկարգող: Վայելլությունը, նրագեղությունը և վագներյան շրջանի դասական ուսցիոնալիզմը հետագայում բնորոշ հղան Հոֆմանի ամբողջ գործունեության համար: Նրա զեկավարած Վիեններ Վերքշտետենում արտադրած արվեստի առարկաների տարածումը մեծապես նպաստեց այն ժամանին, որ Վիեննան դառնա Եվրոպայի ճաշակը թելագրող կենտրոն:

Ար նույնոյի և Գլազգոյի արվեստի ազդեցությունը կրեուց հետո Սեցեսսիոնը գնաց ինքնուրույն զարգացման ուղիով և տաս տարի անց անշատվելով Վագների Սեցեսսիոնից, կոչվեց «Սեցեսսիոնը Սեցեսսիոնի մեջ» (Sezession in der Sezession): Այդ ուղղության, ինչպես և Քունստշաու (Kunstschaus) հանդեսի հիմնադիրները եղան Յ. Հոֆմանը և նկարիչ Գուստավ Գլիմտ (Gustav Klimt, 1862—1919):

Հոփմանը սկզբանական շրջանում կառուցեց Մողերի, Մալի, Հեններերի, Շրիցերի մենատները և 1903-ին՝ Պուրեբերսդորֆի բուժարանը: Արդի ճարտարապետության պատմության մեջ ուսցիոնալիզմը կանխորոշող այդ շենքը պարզ է, բաղկացած է սվաղապատ, քիչ դուրս ընկած հարթ սալերով պսակ-

<sup>16</sup> Սանոթ են Հոլրախի (1465—1542) կիրառական արվեստի համար կատարած գծագրերը, իտալական արացուներ (տե՛ս Մաֆայի կարտոնները Վասիլիանակուտայում), Ֆլաման (Գորլիններ) կամ նկարիչ Յ. Լրենի (1619—1690) մասնակցությունը և նրա թողած մեծ ազդեցությունը XVII դ. հարդարանքների, կահավորումների բնագավառում:

ված, տարրեր շափերի բացվածքներ ունեցող ծավալներից: Շենքի հասակագիծը սիմետրիկ է, հարկերի պատուհանները, ըստ դասական հասկացության, տարրեր շափերի են՝ ներքնաշենքի հատվածում ընթանում են կապույտ և սպիտակ սալիկներից կազմված գոտիներ<sup>17</sup>: Դրանց միջոցով Հոփմանը եղրագծում է շենքի անկյունները, մակերեսները բաժանում ավելի փոքր հատվածների, այլ կերպ ասած, ծավալների եռաչափ արժեքները վերափոխում երկշափ արժեքների: Ռիգի մեկնաբանությամբ, ասել է, թե շոշափելին վերափոխում է տեսողականի, երկու տարի անց Հոփմանը ընդհանրացնում է այս թեման Սոկլիի պալատի նախագծում, ուր գոտիները բրոնզից են, իսկ պատերը երեսպատված են նորվեգիակա սպիտակ մարմարով:

Հոփմանը 1905-ին թրյուելից ստանում է Սոկլիի պալատը կառուցելու պատվեր, 1914-ին ավարտված, նրբագեղություններով հարուստ այդ շենքի ճարտարապետությունը հագեցված է ետիմպրեսիոնիստական և սիմվոլիզմին հատուկ բանաստեղծական ոգով: Միաժամանակ ուշագրավ է, որ շենքի ու այգիների ընդհանուր հորինվածքը կարգավորված է ուսցիոնալ մտքի խորությամբ: Մոտեցման նման ճկումությունը թույլ տվեց Հոփմանին ըստ շենքի կարեռության շեշտել երբեմն ուսցիոնալը կամ դասականը, երբեմն՝ սիմվոլիկը և գեղազարդականը, նման բազմիմաստ մոտեցումը ոչ այնքան ձևի ձևական ընկալումի հետևանք էր, որքան որոշ պարագաներում ավանդականն արտահայտելու պահանջի արգասիք: Այս հասկացությունը կարելի է դասել պայական կարգի էկլեկտիզմի շարքում թերենք մի քանի օրինակ: 1914-ին Հոփմանը կառուցեց Քյոլնի ավստրիական տաղավարը, 1934-ին՝ Վենետիկի Բիեննալեի տաղավարը: Այս երկու շենքերն ել նախագծված են հունական դասականության ոգով, մինչդեռ Պրիմավիշենի տունը (1914) որոշ շափով պալադյան է: Արվեստագետի նման դիրքորոշումն, անշուշտ, հմայիլ էր, սակայն միաժամանակ նույն դիրքորոշումը սանձահարեց Հոփմանի նոր ուղիներով ընթանալու կորովը<sup>18</sup>: Մի այլ հատկանիշ, նրա շենքերի ծավալները համաչափ են, իսկ ընդհանուր հորինվածքում թվում են մեկը մյուսից անջատու Ազատ արվեստի կոչված (Freikunst) հասկացությանը հարազատ սույն մոտեցման ակունքները հարկ է փնտրել միջնադարի, ապա XIX դարի նոր գոթականության ոլորտում<sup>19</sup>:

Կ. Սիտտեն արդեն անդրադարձել էր այդ կարևոր իրողությանը և շեշտել տեսողության հարցը, հանգամանորեն վեր հանել արդի քաղաքաշինությունը:

<sup>17</sup> Սակայն սույն մոտեցումը, ըստ Անդրեա Սիլիպոյի, տվյալ շրջանում եվրոպայում տարածում գտած արեւելյան արվեստի ազգեցության հետևանք էր (տե՛ս A. Silipo, H. Hoffmann DEAU, v. III, Roma, 1969, p. 107).

<sup>18</sup> Երբ 1914-ին Քյոլնի ավստրիական տաղավարը կառուցելու առիթով Հոփմանը ծանոթաց Վ. Գրոֆիսաի ճարտարապետությանը, զգաց, որ նրանց բնում է հումկո, գրեթե տարերային մի ուժ, որը ծանուցում էր նոր դարաշրջանի սկիզբը: Ավստրիացի ճարտարապետ հասկացավ, որ հարկ էր վերանայել անձնական հայեցողությունները, ընթանալ նոր ճանապարհով և այդ իմաստով ուղղություն տալ վիճննական դպրոցին: Այդ գործին, սակայն, լծվելու էր ոչ թե ինքը, այլ իր հայրենակից Ալուլֆ Լոռզը:

<sup>19</sup> Ըստ Լ. Բենելոյի, տվյալ հասկացության ավանդույթը գալիս է նույնիսկ ուշ անտիկ շրջանից: Նշենք նաև, որ այդ շրջանի անվանումը պատկանում է Ա. Ռիգին և որպես արվեստի պատմության ֆնական ստորոգություն, ընդգրկում է մեր թվարկության սկզբից մինչև XV դարը:

թյան բացասական, բայց բնորոշ գծերից մեկի՝ միօրինակության տագնապալի խնդիրը<sup>20</sup>:

Համաշխական համեմատությունները, սիմետրիան, կշռականությունը, ազատ կամ ուղղիղ գծերը, ինչպես և մարտարապետական հորինվածքը ղեկավարող այլ ստորոգությունները կազմում են ձևի բնական զարգացմանը ներշակ ուղղիոնալ այն հասկացությունը, որը հատուկ է Գ. Սեմպերին: Մինչդեռ արվեստի անկախության խնդիրը առաջացավ Ա. Ռիզի առաջարկած առեսողության տեսողություն» և «արվեստի կամք» (Kunstgewerbe) հասկացությունների հիման վրա<sup>21</sup>: Երեմնի հակադիր թվայող այդ տեսությունների ընդարձակ ոլորտում զարգացավ վիեննական Սեցւսիոնի շրջանի մարտարապետությունը, նկարչությունը և կիրառական արվեստը Ավստրիական փիլիսոփայության դպրոցին պատկանող Ա. Ռիզի և Կ. Ֆիդլերի տեսականիմացական ընկալումները ոչ միայն համբոնդանուր նշանակություն ստացան արվեստի քննական պատմության բնագավառում, այլև վիեննական Սեցւսիոնի արվեստագետներին հնարավորությունը ընձեռնեցին ստեղծելու Օ. Վագների ավանդած՝ արվեստագետի աղատության պահանջի վրա խարսխված այն հիմքերը, որի վրա բարձրացավ ճարտարապետական մտքի կառուցվածքը: Այդ արվեստագետներից էին ճարտարապետներ Օ. Վագները, Յ. Մ. Օլբրիխը, Յ. Հոֆմանը, քաղաքաշինարար Կ. Սիտտեն և նկարիչ Գ. Քլիմտը:

Դառնանք մեր հարցին: Ձեզ կառուցից անշատելու ձգտումը, որը բնորոշ եղավ նաև երեսնական թվականների իտալական ճարտարապետության համար, ունի պատմական հիմնավորում: Բացատրենք այս միտքը. միջնադարյան հասկացությամբ տարածությունը կազմակերպվում է առավել շափով տեսողության օրինաշափությունների հիմունքներով: Նման մոտեցումն անվաննենք բնական: Վերածննդի, ուստի և նոր դասականի հասկացությամբ տարածությունն ընկալվում է որպես մտային պատկեր: Ճարտարապետական իմաստով՝ առարկայացումը կատարվում է բնությանը պարտադրելով երկրաշափականորեն սահմանված տվյալ պատկերը: Այդ մոտեցումը անվանում ենք արհեստական:

Արդ, եթե քննության առնենք Օլբրիխի Մատիլդեհով և Հոփմանի Սոլկեի շենքերի հատակագետերը, կտեսնենք, որ դրանք սիմետրիկ են, մակերեսները հավասարակշռված և կարծես չեն թելադրում վեր բարձրացող ժավալների ավելի ազատ համակարգ: Հատակագետերում իշխող կարգը, նշված իմաստով, արհեստական է, մինչդեռ ծավալների հորինվածքը՝ բնական: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ այդ շենքերի ծավալներից յուրաքանչյուրը ինքնին համաչափ է, բայց իրար հարաբերված, նրանք թվում ենք

<sup>20</sup> «Եատ զարմանալի է,—գրում է Սիտտեն,—որ արդի քաղաքների հատակագետերում առկա ամենափոքր խախտումը աշքի է ընկնում, մինչդեռ անցյալի հրապարակներում առկա նման խախտումները վաստակություն չեն թողնում: Դրանք ալեպիսիննեն, որ տեսաների են գառնում միմիայն թղթի վրա, իրականում խոսափում են մեր ուշագրությունից: Անցյալում հատակագծի հղացումը չէ վերարտադրվում թղթի վրա, այլ կառուցները բարձրանում էին կամաց-կամաց, բնականում: Եվ կառուցները հեշտությամբ անդրադառնում էին, երբ ինչ-որ բան իրականում նեղություն էր տալիս աշքին, այդ պարագայում նրանք, առանց զլանալու սրբագրում էին համաշխափության թերությունները: Թող որպես օրինակ ծառային Սիենայի ասրբեր շափերի հրապարակները» (տե՛ս C. Sitte, Der Städtebau, Wien, 1889. p. 40).

<sup>21</sup> A. Riegl, Arte Tardoromana, Torino, 1959, A. Riegl, Problemi di stile, Berlin, G. Siemens, 1923.

միկը մշուսի հանդեպ ինչ-որ շափով շնորհած։ Մի այլ հատկանիշ՝ ամբողջականությունը չի ենթարկվում հեռանկարի կանոններին, ուստի համակառուցից ստացվող ներդաշնակության գաղանիքը պետք է վերագրել նախագծողների կապակցություններ ստեղծելու վարպետությանը։ Ըստ էլության, որինվածքալիին հարաբերություններ առաջացնել նշանակում էր հասնել դասական հատակագծի և ոռմանտիկ ծավալայնության, այլ կերպ ասած՝ արհեստականի և բնականի, երկրաշափական կարգի և տեսողության ազատության, ներդաշնակ արտահայտչականության։

Օ. Վագների գործերում մակերեսներին արված առաջնահերթ նշանակությունը Յ. Մ. Օլբրիխի՝ հաղորդակից ծավալների ինքնուրուզնությունը, մակերեսների զուգադրումներով առաջացրած շարունակությունը և վերջապես Յ. Հոֆմանի հետապնդած՝ տարածությունը կամ ծավալը հաճախ զուգահեռարար մշակված գեղագարդումներով արտահայտելու ձգտումը (այս առումով հետարրիքի է հիշել, որ պոմպեյան նկարչության շորորդ շրջանի գեղազարդումների եղանակը Սեցեսսիոնին բնորոշ հարտարապետական ընկալումներ են): Կերպընկալման նման մոտեցումը ավանդաբար կապված է նաև Վիեննային հարազատ ուկոկոյան շենքերի, նրանց պատերի մակերեսներով ընթացող, վայելլած դարդաբանդակների ձևալին ոլորտի հետ։

1897—1914 թթ. հարատեսած վիեննական Սեցեսսիոն կոչվող արվեստի այս ուղղությունը, որպես իր ժամանակի նշանակալից երևույթ, Վիեննայում առաջացած՝ արվեստի ավելի առաջադեմ ձգտումներին զուգահեռ (Ա. Լոողի ծայրահեղ ուսցիոնալիզմը, երաժշտության բնագավառում՝ Շյոնբերգ, Ա. Բերգ և Վերեբը) կարողացավ ստեղծել արդի հարտարապետությանը նպաստող նախադրյալներ։ Հարկ է նշել, որ այդ ուղղությունը որոշ շափով անկումային բնույթ ունի։ Զնայած այդ բանին, վիեննական Սեցեսսիոնից հետեւ իտալական լիբերտին (Է. Բագիլե, Ռ. գ' Արնոնկո, Գ. Մորետտի, Ջ. Սոմմարուզա), այսպես կոչված, մոդեռն ոճը և մասսամբ ֆուտուրիզմը։

## ՌԱՑԻՈՆԱԼԻԶՄ ԵՎ ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻզՄ

(1900—1914)

XIX դարի քաղաքաշինարարները՝ Ու. Օուեն, Շ. Ֆուլիե, է. Կարե և արվեստաբանները՝ Զ. Ռասկին, Ու. Մորրիս, տարված հումանիզմի գաղափարներով, ապավինած արդյունաբերական հեղափոխությունից առաջացած իրականությանը, հանդգնություն ունեցան կառուցել Կոմիսանելլայի. երազած «արևի քաղաքները» և հակադրել դրանք, ժամանակի անդեմ և պլանազուրկ քաղաքներին<sup>1</sup>: Աշխատավորների և մտավորականների համար կառուցված քաղաք-այգիները ձուլեցին շարունակ ընդլայնվող ավելի մեծ բնակավայրերի օրգանիզմում և վերածվեցին թաղամասերի: Անկարող կարգավորելու քաղաքների քառոր, մտավորականները ունել իրողությանը հակադրեցին իդեալ քաղաքը: Մտավոր պատկերը իրականության հակադրելը ծանոթ եղավ է ճարտարապետության պատմության մեջ: Այս իմաստով Վերածընդողի ճարտարապետներն իրենց ստեղծած կենտրոնական հեռանկարի համակարգի համաձայն կառուցեցին նորը, նպաստակ ունենալով ճշակության այդ նոր դրվագքի օրինաշափություններով վերակազմավորել բազմակերպ, եղբեմն տարանջատ թվացող, բայց միշտ մարդուն հարաբերված գլուխերով հարուստ, միջնադարյան քաղաքի կերպարը:

Սակայն XIX դարի ճարտարապետությունն ընկալվում էր ոճականի, այսինքն արդեն մշակված ձերի իմաստով: Արդ, երբ ոճից հետեւմ է ոճ, սկիզբ է ամսում փոխանկած ձերի ինքնակալությունը, առաջանում է մտավոր պատկերի (կամ իդեալ քաղաքի) ու իրականության անհամաժեղությունը: Ասել է, թե արվեստը ստանում է արդի լինելու բնութագրումն այն պարագայում միայն, երբ վերահաստատվում է մտավոր պատկերի և իրականության կազմը: Ժամանակագրական առողջությունը, սակայն, արվեստը արդիական համարիլը հարաբերական է, հասկացությունների տեսակետից՝ փոփոխական:

Արևմտաելլուպական հասկացությամբ արդի լինել, նշանակում էր վընուականորեն հակադրվել անցյալին, իսկ նորը կազմավորվում էր գարասկըրբին բնորոշ ուղղունալիզմի և էքսպրեսիոնիզմի հակադիր ուղղություններով<sup>2</sup>:

<sup>1</sup> Մումֆորդի խոսքերով՝ non-plan of non-city (տե՛ս L. Mumford, The Culture of Cities, New York, 1932, p. 183).

<sup>2</sup> Շ. Բողերի կարծիքով արվեստագետը կարող է վճռականորեն պահպանողական լինել և կամ վճռականորեն արդիական, դիրքորոշմների տարրերությունը կրավորական «լինելու» կամ «պետք է լինել» ներգործական ճշուածի մեջ է (տե՛ս Ch. Baudelaire, Salons, 1859, Œuvres complètes, Paris, 1868—70).

Իտացիոնալ լինելը ճանաշողական մեկնակետ է, որը թելադրում է արևեստի գործը մշակելու, առարկան գործնականորեն վավերականացնելու հղանակի: Իտացիոնալիզմը՝ պատմականորեն կապված լուսավորականությանը, ինչպես և Եփնքելի, Սեմպերի դասականությանը, նաև Վիոլել-լը Դյուի ստրուկտուրալիզմին, Ար Նուվոյին և Դուչեր Վերբրունդին, իր ուրուն բնորոշումը գտավ Վ. Գրոփիուսի հիմնադրամ Վայմարի դարոցի մեթոդաբանության ոլորտում: Լինելով տեխնիկայի շրջանին հասուկ շինարարական մշակույթի նվաճում՝ ուսցիոնալիզմը ձևաբանության առումով սկիզբ առավ անցյալ դարի գերմանական ուսցիոնալ դասականության ուղղությունից:

Արդյունաբերության աննախընթաց զարգացման հետևանքով մասնագիտացած բանվորը, տեխնիկը, ճարտարագետը ի վիճակի եղան նպաստելու ոչ միայն տնտեսական ճյուղերի տեխնիկական վերակառուցմանը, արդյունաբերության մեքենայացմանը, այլև արտադրողականության բարձրացման, այսինքն տնտեսակարգի կազմավորմանը: Գիտատեխնիկական այս ուսուրը սատարեց ճարտարապետական-տեխնիկական մտավորականությանը և արդյունաբերական մեծ ձեռնարկությունները սկսեցին գործակցել ճարտարապետների հետ: Այսպես, Վերտհայմը Ա. Մեսսելին կառուցել տվեց հանրային խանութը (Բեռլին, 1896), հետագայում նույն Վերտհայմը դարձավ է. Մենգնալսոնի գլխավոր պատվիրատուն: 1907-ին Աէֆ Էլեկտրական մեքենաների, սարբավորումների ընկերությունը Բեռլին հրավիրեց Պետեր Բերենսին (1868—1940) և հանձնարարեց նախագծել գործիքների, մեքենաների ձեւվորում, մշակել ապրանքները ծրաբելու, վաճառքում ներկայացնելու միջոցներ, պատրաստել արտադրանքների ցուցահանդեսներ, կատալոգներ, մինչև իսկ ընկերության հատուկ գործիքումների թղթի ձևավորումը: Նոր փորձառությունների կիրառումը նպաստեց արդյունաբերական արվեստի զարգացմանը (դիզայն), որին մասնակից դարձան նկարիներ, ձևավորողներ, և հատկապես ճարտարապետներ<sup>3</sup>:

Գեղագիտական մակարդակով և շինարարական առումով ճարտարապետական ձեր և արդյունաբերական արտադրանքի հարաբերակցումը նշանավորեց կառուցվածքային տարրերի ստանդարտացում, շինքերի տիպարալացում: Ելակետային մի դիրքորոշում, որը սկզբունքորեն հակադրվում է արվեստի գործը մշակելու ավանդական ընկալումին:

Երբ կա արվեստի նոր խոսք ասելու պահանջը, օտարամուտ գաղափարները դրականորեն են ազդում տվյալ երկրի ստեղծագործ գործունեության վրա: Այսպես էր տասական թվականների Գերմանիան: Արս ընդ Կրաֆտը Անգլիայից, Սեցեսիոնը Վիեննայից, ինչպես և Հոֆմանի, Օլբրիխի, Վան դե Վելիի մասնակցությունը, 1910-ին Փ. Լ. Ռայտի ներկայությունն իր գործերի ցուցահանդեսի առիթով, և վերջապես 1903-ին Դրեզդենում ստեղծված Դի Բրյուգեն, 1911-ին Բլաուե Ռայտերը Մյունիխում և էքսպրեսիոնիզմը քաղաքան և տարանջատ այն երեսություններն են, որոնք կարող էին կազմավորման շրջանին բնորոշ անկայունություն թվալ, մինչդեռ իրականում դրանք նույնանման միատամներ ունեցող, տարածում ու կիրառություն գտած, արդի արվեստի կազմավորմանը նպաստող հասկացություններն էին:

<sup>3</sup> Նման դրվածքի կարուրությունը համար բավարար է նկատել, որ այսօր գուղթյուն չունի առևտրական կամ արդյունաբերական գործունեություն, առանց դիզայների մասնակցության:

ժամանակակից, ուղիղոնալիստ համարվող ճարտարապետներից շատեւը սկզբնական շրջանում հարել են էքսպրեսիոնիզմին: Դրանցից են Միս վան դեր Ռուեն (Լիբրկնեխտ-Լյուրսենբերգ հաւաքածանը, Բեռլին, 1926, քանդակագործ նացիստների կողմէից), Է. Մենդելսոնը (Այնչտայնի աշտարակը, Պուտսդամ, 1920), Հ. Պեոլցինգը (Զրամբար աշտարակը, Պոզեն, 1911, Ֆենտագի հառուց, Զալցբուրգ, 1920—21, նախագիծ), Ֆ. Հեռոգերը (Քիլ հառուց, Զամբուրգ, 1922—23), Մ. Բերգը (Ցուցասրահ, Բեռլին, 1912—13), նույն Գրոֆիուսը, Բերենսը և օրգանականի հասկացությամբ՝ Շարունը, Ալտոն, լը Կորբյուլիեն (Ռոնշանի մատուրը):

Սկզբնական շրջանում այս ուղղությանը հարած ճարտարապետներն աշխատում էին իրարից անկախ, ինքնուրուցն արվեստանոցներում, որոնք երբեմն կցված էին արդյունաբերության (Սէգ, Հեռուստ) կամ առևտորի (Վերտհայմ) ընկերություններին և կազմակերպված էին որպես ճարտարապետական և կիրառական արվեստների համեմնդանուր կենտրոններ: Նշանավոր անձնավորություններից հիշենք Թեոդոր Ֆիշերին (1862—1938), որի մոտ Մյունիստնում ուսանել են Պ. Բոնացը (1877—1951), Բ. Տառուար (1880—1938), Դ. Բեոմը (1880—1955) և Հ. Հերինգը (1882—1958), օրգանակերտ ճարտարապետության սկզբանավորողը<sup>4</sup>: Հ. Հերինգի տեսության հետքերով հետազոտմ ընթացան՝ Ա. Ալտոն, Լ. Քանը, Հ. Շարունը: Մեծ եղանք Պ. Բերենսի արվեստանոցի համբավը. նրա մոտ, Բեռլինում ուսանեցին Գրոֆիուսը (1907—10), Մ. Վան դեր Ռուեն (1908—11) և լը Կորբյուլիեն (1910—11):

1907-ի հոկտեմբերին Գերմանիայում հիմնադրվեց Դուլեր Վերքբունդը, որի առաջին մասնակիցներն էին՝ Հ. Մութեզիուսը, Կ. Շմիդտը, Թ. Ֆիշերը, Ռ. Ռիմերշմիդտը, Հ. Պեոլցիգը և Հ. Վան դե Վելդեն՝ առևտոր և արդյունաբերության անվանի ներկայացուցիչների համագործակցությամբ:

Վերքբունդի նպատակն էր շրջանառության մեջ ներդնել տրվեսաի առարկան, այդ կերպ ձգտելով արվեստի և իրականության կապակցությունների վերահսկութամանը: Եվ որպեսզի առարկան անխափի ձևով մատչելի դառնար հասարակությանը, հարկ էր քանակի և որակի հարցերը լուծել միասնարար, առավելագույն շափով ապահովել տիպերի հերթականությամբ դասավորված, սերիաների եղանակով արտադրված առարկաների քանակը: Այս անհնար էր ելնել Մորրիսի կամ Ռասկինի ոռմանտիկ նկատառուներից և հանգել գոհացուցիչ լուծումների: Հարկ էր առանց երկրայիլու արտադրությունը հանձնել մեքենային և ձևը մշակել տրամաբանական այնպիսի կառուցվածքով, որը համաքայլ լիներ մեքենայի ընթացքին: Հարկ էր՝ ստեղծագործողի ազատությունը ապահովելով հանդերձ, համախոն: միասնություն ստեղծել նախագծի և մեքենայացված արտադրության միջև:

Հերման Մութեզիուսը իր հոդվածներով, գրքերով, դասախոսություններով և կառուցած շենքերի օրինակներով եղավ Դուլեր Վերքբունդի ամենա-

<sup>4</sup> Հ. Հերինգի օրգանականի հասկացությունը (Organhaftes Bauens) տարբերվում է Ֆ. Լ. Բայցտի տեսակետից այնքանով, որ հարաբերվում է օրգանականի կազմավորման բնակացքին (դիմամիկ հասկացություն), մինչդեռ Բայցտը շենքը դիտում է որպես արգելակազմավորված օրգանիզմ (անդ' H. Härling, Wege zur Form in die Form, I, 1925; H. Härling, Geometrie und Organik in Baukunst und Werkform, 1951).

յործուն մասնակիցը, արդի ճարտարապետության տեսական և գործնական և կրտսենքների մեջ չառագովը<sup>5</sup>:

Արվեստի գործին մինչ այդ տրված կիրառականի բնորոշումը Մութեղիուր փոխարինեց արդյունաբերացված արվեստ հասկացությամբ: Այդ առումով, սակայն, ձեմ կատարելությունը մնում էր հարաբերված տրամադրանական կառուցվածքին, զգայականն անշատվում էր, իսկ կատարելությունը ստանում էր մասնակի իմաստ: Ուստի, մեքենայացված արտադրանքում առարկաների որակը ապահովելու նպատակով, հարկ էր վերափոխել ձեմին հատուկ գեղագիտական նշանակությունը:

1911-ին Վերբունդի հայանի ժողովում Մութեղիուսը, խոսելով ձեռագործ և մեքենայի աշխատանքի տարրերությունների մասին, նշեց, որ մեքենան այլև չի կարելի ձեռագործ աշխատանքը բազմացնող (Մորրիս) կամ կեղծ, նույնանման գործ կատարող միջոց համարել Մեքենան՝ ուրույն հատկություններով օժտված, ձևարանական առումով նոր ոճի՝ մեքենայի ոճ (Maschinenstil) հասկացության գլխավոր գործոնն է:

Տրամարանականի շրջանակներում սաեղծված ձեմ մշակման ընթացքում հանդիս են գալիս ձեզ հարստացնող, որակի և գործառնության առումով կայունացած նոր բաղկացուցիչներ, որոնք վավերացնում են ձեմ փոխակերպված իմաստը: Այս ինաստով գործածական առարկան վերահմաստավորվում է որպես արվեստի գործի տարատեսակ, դառնում մատչելի և ձևավորման միջոցով ազգում մարդու վրա: Գեղագիտորեն ներգործելու հատկությունը, օգտավիել լինելը, մարդու կինցաղին մասնակից լինելը՝ առարկային հասարական նշանակություն տվող այն առանձնահատկություններն են, որոնք արվեստագետի կողմից հայտնաբերվելիս անհապաղ կայունացվում են, որպեսզի մեքենան կրկնողաբար արտադրի տվյալ տիպի առարկան: Այստեղից բխում է առարկաների որակը ապահովող նորմերի հասկացությունը: Հարկ էր անահետեւ առանձին գործի կարելությունը, սանձահարել արվեստագետի թուշը և կաղապարել նրա մտքերը նորմերի շրջանակում:

Մութեղիուսը 1914-ին Քյոլնում բացված Վերբունդի ցուցահանդեսի առիթով առաջարկեց ստանդարտի գաղափարը: Եթե արդյունաբերության ստանդարտացմամբ այդ ճանապարհով կարելի էր հասնել առարկայի սոցիալ-տնտեսական նշանակությանը, ապա պարզ էր նաև, որ նույն նորմերն ու ստանդարտը խափանում էին ստեղծագործողի ազատությունը: Այս վերջին դրույթի պաշտպան Վան դե Վելեն, անշուշտ, իրավացի էր, թեև ինդիբրը առանց տատանումների, բողերյան հասկացությամբ վճռականորեն լուծվեց՝ հօգուտ մեքենայացված արդյունաբերության:

Արդի ճարտարապետության կազմավորման գործում նշանակալից դեր ունեցավ արդյունաբերական ճարտարապետությունը և հատկապես այդ բնագավառում կիրառվող ճարտարապետական լեզվի ուսցիունալ կառուցվածքը: Վ. Գրոփիուսը կառուցելով Ֆագուս Վերբե արհեստանոցների ապակեպատշենքը (1911, Ալֆելդ ան դեր Լայնե), հետապնդում էր հիմնականում երկու

<sup>5</sup> H. Muthesius, Das Englische Haus, III v., Berlin, 1904—05, չ. Մութեղիուսի մասին: N. Pevsner, Pioneers of Modern Design, London, 1960, pp. 32—38. J. Posener, Anfänge des Funktionalismus, Berlin, 1964, pp. 109—198.

<sup>6</sup> H. van de Velde, Werkbund Diskussion, 1914. H. Muthesius, Die Werkbund-Arbeit der Zukunft, Jena, 1914.

նպատակ. վերացնել շինանյութերի դասակարգումը (աղնիվ և անաղնիվ) և արտահայտչական նշանակություն տալ տրամարանական շարահյուսությանը:

Ընդհանուր առմամբ արդյունաբերական ճարտարապնտության մեջ ձեզ գործառնությունները, տեխնիկական տնտեսականին սերտորեն կապված և շենքի գաղափարը վավերականացնող այն կանխադրություններն են, որոնց կիրառումը վերագտնում է ձեկի և իրականության կապը: Սակայն, եթե մասամբ էկեկտիզմի և հատկապես Ար Նովոյի շրջանում գերիշխում էր ձեզ ոճականորեն երանգավորելու հասկացությունը, որը շատ բնորոշ էր տասական թվականների կենցաղին և մտավորական դրվագքին, ապա արդյունաբերական ճարտարապետության մեջ անցյալի փորձառությունների փոխառնությունը գրեթե անհնար էր: Արդյունաբերական շենքի հորինվածքի վրա աղդող գործառնությունները և տեխնիկական պայմանները շարունակ փոփոխման ենթակա էին, ուստի այդ ափակի շենքերի նախագծումը զերծ էր պատմական պայմանավորվածությունից: Ձեւըանական կամ տիպարանական առումով արդեն կիրառված հետեւթյուններին դիմելով, ձևաշակման ընթացքում կարելի էր հասնել բյուրեղացումների, սակայն դրանով իսկ կարելի էր հակադրվել արդյունաբերության զարգացման ընթացքին: Մրանից հետեւմ է, որ արդյունաբերական ճարտարապետությունը իր բնույթով ինքնուրույն է, իսկ գրույթների փոփոխականությունը կազմում է նրա ուրույն հատկանիշը: Կա, սակայն, մի այլ հանգամանք, այս բնագավառում ձեկի մշակմանը նախորդում է նախագծմանը ուղղություն տվող, զգայարար ընկալվող ձեզ, իսկ մշակումը ընթանում է տվյալ շրջանի մշակույթի դրվագքին համերաշխ: Գրոփիուսի Յագուն Վերքեն հորինվածքային հարաբերությունների իմաստով դասական է՝ թեկողն շենքելաւան հասկացությամբ, Մեսսելի Վերտհայմ վաճառատունը, Բերենսի Աէֆ-ի համար կառուցած շենքերը (1908—1912) Սելլորֆում, Կոնտինենտալ ընկերությունը Հաննովերում (1913—20), նոր դասականի, մասամբ ոռմանականի ոգով իրագործված մոնումենտալ կառուցներ են:

Դեռևս Ա. Պալլադիոն ժամանակին քաղաքացիական շենքերում (շուրջա, վիլլա, գյուղացիական տուն) կիրառել էր դասական ճարտարապետությանը (տաճար, պալատ) վերապահված տարրերը, հորինվածքային օրինաշափությունները, քանդելով ճարտարապետական ձևի և ափակերի բացարձակապետության գաղափարը և ճարտարապետությանը հաղորդելով նոր, ավելի մարդամոտ իմաստավորում: Բերենսը, փոքր-ինչ ոռմանակի թերումով, շարունակեց պալլադյան ուղղությունը և ճարտարապետական որակավորում հաղորդեց մինչ այդ անդեմության մատնված գործարանային շենքերին:

Եթե նկատի առնենք Հ. Պելցիկի վարչական շենքերը Բրատիսլավայում (1909), Պոզենում կառուցած ջրամբարը (1911), Յերենսի Աէֆ-ի համար կառուցած շենքերը՝ լայնագիր պատկեպատումներով, կրող համակարգը արտաքուստ արտահայտելու իրողությամբ, գեղազարդումների բացակայությամբ, այս ամենը, անտարակույն, ուղիղունալիզմը նախապատրաստող տարրեր էին: Նույնը նկատելի է և Օ. Պերքեյի՝ Փարիզում կառուցած Պոնթյու գարաժի օրինակում (1906): Դրանցում կիրառված սկզբունքները, սակայն, սոցիալ-տնտեսական առումով անբավարար էին, անտեսված էր նորաստեղծ տարրերը շինարարական ընդհանուր համակարգում ներդնելու (սերիաներ, սանդղարտ) խնդիրը: Մի Վան դեր Ռուն հետագայում գործա-

դրեց շինարարական տարրերի ստանդարտացումը, բայց ձևընկալման առումով հավատարիմ մնաց դասական՝ ինքնամփոփի ձեփի հասկացությանը (Միգրամ, Նոյու-Ցորք, 1958):

Արվեստի արդի հասկացությամբ դասականորեն կատարյալ ձեզ կորցնում էր իր նշանակությունը, մասնաւում բաղադրյալների, որոնցից ամեն մնկը լրուսի համեմատությամբ ստանում էր հարաբերական իմաստ: Արվեստի հետաքրքրությունը կենտրոնացնում էր ոչ թե բացարձակ ձեփի, այլ ձևաստեղծման պատճառների, ինչպես և պատմական շրջափուլերին հատուկ, արվեստի ընթացքը զեկավարող՝ շարժունակության օրինաչափությունների վրա: Սակայն հարկ էր պատմական ընթացքը կապացել արդի ճարտարապետության ընթացքին: Իսկ նման կազ առաջանում է այն պարագայում, երբ ուսումնասիրողը միաժամանակ ստեղծագործ է: Այս առումով, ստեղծագործել չի նշանակում կերտել միայն նորը, այլ պարտավորված լինել պատմականորեն: Այս առումով հանդուզն էր Վ. Գրոֆիուսի որոշումը՝ Բառուհովի ծրագրերից հանել արվեստի անցյալի պատմությունը: Նրա կարծիքով հարկ էր նախ և առաջ մասնակից դառնալ նորին, այնուհետև ստեղծագործական ոգով մեկնարանել անցյալը, որը լինելու էր ժամանակագրականորեն հնացած, բայց արդիականորեն կենդանի արվեստ:

XIX դարի վերջներից մինչև հրեսնական թվականները արդի արվեստի գերիշխող խնդիրներից էին՝ մեխոդաբանական առումով միասնության ձգտումը, իսկ ձեւաբանական իմաստով՝ նոր լեզվի ստեղծումը:

Ճարտարապետության ձեւաբանության խնդրում մեծ էր նկարչության դեր՝ առաջին հերթին ֆովիզմի (Ֆրանսիա, 1905), էքսպրեսիոնիզմի (Գերմանիա, 1908): Պատահական չէ, որ Լը Կորրյուլին, Պեոլձիզը, Մենդելսոնը, Օլրիխը, Բերենսը նկարիչներ էին:

Յովերին հատուկ են ուժգին երանգավորումներով օգտագործված գույները, «երկափ» տարածությունը (Մասիս), մեծ պարզությունը, առարկայական այլաձեռումները, անմիջականությունը, դասականությունը: Դասականության ոգին փոխանցվեց կուրիստներին և քանական թվականներին բնորոշ դարձավ պուրիսմ<sup>7</sup> ճարտարապետությունը՝ որպես ճարտարապետության հորինվածքում կարգ հաստատող, պայծառ երկրաշափական ոգի (esprit de géometrie):

Կարտեզյան խստությամբ ընկալված դասականությունը հարազատ եղավ Լը Կորրյուլիին<sup>10</sup>: Այդ ոգով նա նախագծեց սերեք միջոն բնակիչների արդի քաղաքը (1922), կառուցեց ժամաներե, Օզանֆան, լա Ռոզ, Գարց մենատները, էսպրի նովոյի տաղավարը (1925): Պուրիստ ուցիոնալիզմի ոլորտում, ինչպես և Ա. Լոոզի ազդեցության տակ (տե՛ս Ա. Լոոզի կառուցած մե-

<sup>7</sup> Զեփ կախվածության խնդիրը, ամբողջ էությամբ, դրվելու էր վաթսունական թվականներին, երբ նախագծերում սկսեց օգտագործվել շարժունակության գործոնը (ճկունություն, փոփոխականություն, պավածնություն):

<sup>8</sup> Պուրիզմ (հատակություն), լեզվի անալարտությունը վերականգնելու, նորարարություններից մաքրելու, իտալական գրականությանը ծանոթ ձգտում: Պուրիզմի կողմանակիցներն էին XVIII դ. Կրուպակայի ակադեմիան, XIX դարում Մանեսին և իր հետևողները:

<sup>9</sup> Պատունի խոսքերով՝ Աստված երկրաշափություն է:

<sup>10</sup> Le Corbusier, Vers une Architecture, Paris, 1923.

նատունը Տ. Զարալի համար, Փարիզ, 1923—28): Փարիզում ստեղծագործում էին Ա. Լուիսան, Մալլ-Ստելլենսը, Մ. Ռու-Սպիցը և Հայազդի Գարբիկ Գերեկյանը<sup>11</sup>: 1932-ին Գ. Գերեկյանը և Մալլ-Ստելլենսը հրավիրվում են Յ. Նոֆմանի կողմից Վիեննա, մասնակցելու «Համաշխարհային Կերպունդիդունդի» թաղամասի կառուցմանը: Մինչև օրս Հոգատարությամբ պահպանված զիդունդը պատմության մեջ ներկայացվում է որպա՞ս այդ շըրջանին հատուկ քաղաքաշինական ճարտարապետական մոտեցումների օրինակելի նմուշ:

Այժմ քննության առնենք էքսպրեսիոնիզմը: Դի Բրյուերի նկարչական աշխարհն այլ է: Էքսպրեսիոնիստ նկարիչները վերարտադրում էին կյանքի հանդեպ ունեցած հուսահատ, երբեմն կատաղի վերաբերմունքից բխած տեսաիլքներ, ձևազերծված կերպարներ, որոնք խելահեղ հուզմունքների միագին արտացոլումներ էին: Էքսպրեսիոնիստները ձգտում էին ներքին զգացմունքների ամբողջական, չըողարկված արտահայտության<sup>12</sup>:

Եթե ձեմ կառուցվածքային համակարգը բնորոշող ուցիոնալիզմը արտահայտում է ճարտարապետական մտահղացման տրամարանական կերպավածքը, ապա էքսպրեսիոնիզմը՝ որպես դասականին հակադրվող երևույթ, բնորոշվում է ձեմին հարաբերված իմաստային պարունակությանը տրվող գերակշիռ նշանակությամբ: Խել այս գեպքում, երբ երեակայականը կամ վերացականը շնչառելու դիտավորությամբ արվեստագետը այլափոխում է ձեր, խախտում պատկերի ներդաշնակ համակարգը, նաև ենթարկվում է արվեստի պատմության մեջ մանիերիզմ կոչված ապահովիոնալ երևույթին<sup>13</sup>:

Էքսպրեսիոնիստները, սակայն, տարբերվում են մանիերիստներից, ինչպես և իրենց ժամանակակից ֆովերից այն իմաստով, որ նրանց արվեստը առանձնահատուկ շեշտավորմամբ դրոշմեց կյանքի իրադրությունների հանդեպ նրանց ունեցած քննադատական վերաբերմունքը: Էքսպրեսիոնիստների այս դրվագքը առաջադրեց արվեստագետի պարտավորվածության խնդիրը: Է. Նոյելի, Է. Լ. Կիրիսների, Ժ. Էնորի նկարները տվյալ շրջանի ճնշաժամյին հոգեվիճակի, ինչպես և պատմահասարակական իրադրությունների վկայությունները լինելով հանդերձ, միաժամանակ ի ցուց էին զնում տվյալ իրականության հանդեպ նկարիչ-արվեստագետի գործոն դիրքորոշումը: Ք. Քոլվիցը, Է. Դիկսը և Գ. Գրոսը նպատակադրվել էին արվեստի միջոցով ազդել մարդու վարքի վրա: Նման բարոյականությամբ գործեցին Հ. Վան գելդեն, Վ. Գրոփիուսը, Բ. Տառլի, Է. Մալը, Մ. Թերգը, Զ. Պյոլձիկը:

Էքսպրեսիոնիզմը նշանավորեց նաև ազգային ուրույն ոգու վերագտնումը և վերադարձը գեպի արհեստներն ու ժողովրդական տների ափը<sup>14</sup>: Նըման ձգումը հարազատ էր XIX դարի երկրորդ կեսի ճարտարապետության ուժմանտիկ-ազգային ուղղությանը, որը նոր-ուժմանականից մինչև նոր-դա-

11 Knauts „Lexikon der Modernen Architektur“, München, 1963, p. 95.

12 Մարզու անգիտակցության ուրոտում կոտակված զգացմունքների արտաբերումը արվեստի ճանապարհով, գիտական հիմնավորում ստանալուց առաջ (Ա. Ֆրույդ) կանխորոշվել է էքսպրեսիոնիստների կողմից: Այլ հարցերում ևս արվեստը նախորդել է դիտությանը, օրինակ՝ պայմանական ուժիքների հարցը մանրամասնորեն նկարագրված էր արդեն է. Ա. Պոյի կողմից:

13 Մանիերիզմ՝ 1520—1560 թթ. Տոսկանայում զարգացում գտած արվեստի շարժում, որի ներկայացուցիչներն են՝ Ջելինի, Բեկկաֆուուի, Ֆիորենտինո, Պոնտորմո, Բրոնձինո:

14 L. Mittner, L'expressionismo, p. 49—74.

ասկանի հասկացությամբ զարդացում ապրեց Գերմանիայում, Խտալիքայում, Սկանդինավյան երկրներում և Ֆինլանդիայում, այսինքն բոլոր այն երկրներում, որոնք, համեմատած Անգլիայի, Ֆրանսիայի և Խոպանիայի հետ, նոր էին հասել իրենց անկախությանը:

1900-ի արևմտանելքողական ճարտարապետությանը բնորոշ ռումանափայլին, էքսպրեսիոնիստ և ուղղությունների համակարգում ուրուց տեղ էն գրավում հոլանդացի Հ. Պետրոս Բերլագեի (1856—1936) ստեղծագործությունները:

Ցուրիխի պոլիտեխնիկումի շրջանավարտ, Ֆրանկֆուրտում աշխատած Պ. Բերլագեն 1881-ին հաստատվում է Ամստերդամում, ուր 1898—1903 թթ. իրագործում է իր լավագույն գործերից մեկը՝ Ամստերդամի սակարանի շենքը: Նույն շրջանում նրա կառուցած Աղամանդագործների տունը (1899—1900), Շոլանդիայի տունը Լինդոնում (1914), քաղաքաշինական մեծ նախագծերը՝ Ամստերդամ Զույդ (1902—1915), Այա (1908), Ռոտտերդամ (1914), Ամերիկա (1921) վարչական շենքերը, ինչպես նաև հրապարակած հոդվածներն ու տեսական աշխատությունները նրան դարձրին նոր սերնդին ուղղություն տվող ամենակարևոր անձնավորությունը: Ստեղծվեց ո՞Բերլագեի դպրոցը, ուր կրթություն ստացան անվանի ճարտարապետներ Քրամերը, Վան գեր Մայը և Մ. գե Քլերը:

Բերլագեն սկզբունքորեն առաջարկում էր վերագտնել անցյալի շենքերի հրապուրը կազմող հանդարտությունը, ուստի առաջարկում էր լինել պարզ, բնական, անմիջական: Բերլագեի համար ձեզ ճշմարիտ էր այն ժամանակ միայն, եթե իր ամբողջությամբ ենթարկվում էր կառուցելու օրինաչափություններին: Նույն հասկացության համաձայն զարդարելությունները ճշմարիտ էին, եթե լիովին միահյուսվում էին շենքի օրգանիզմին: Այս իմաստով շրնանյութը (Շոլանդիայում աղյուսը) ստանում էր միասնականություն ստեղծող գիտավոր գործոնի նշանակություն:

Բերլագեի ժամանակակից ճարտարապետ Պ. Յ. Կույպերս (1827—1921) Ամստերդամում կառուցած Ռիթբ թանգարանի (1885) և քաղաքի գլխավոր կայարանի (1889) շենքերում վերադարձել էր աղյուսի օգտագործմանը՝ վերականգնելով պատր արտաքուստ չափաղելու ավանդական մոտեցումը: Պատր չափաղելու խնդիրը կապված էր նյութի անմիջական արտահայտչականության, այսինքն, շինանյութը անաղարտ վիճակում օգտագործելու հարցի հետ<sup>15</sup>: Ենելով նման համոզմունքից, Բերլագեն բնական աղյուսը օգտագործում էր նաև սենյակների ներքին պատերի մեջ: Հայտնի է նաև Ֆրանկֆուրտում 1920—1924 թթ. Պ. Բերենսի կառուցած Հեռկստի վարչական շենքի գահինը, որն իրականացված է ստալակտիտանման, մուգ կարմիր աղյուսաշար պատերով:

Արդիական ձեին ազգային բնորոշում տալու նկատառումով Բերլագեն, գե Քլերը, Քրամերը, հետեւելով Կույպերսի օրինակին, ընտրեցին կառուցելու ավանդականորեն կայուն միջոցները, վերամշակեցին ճարտարապետության աղյալինի առումով իմաստակիր տաղրերը և հոլանդական մշակութին հատուկ ձեւնկալման հասկացության համեմատ, աղյալին տարրերը ներդրեցին սացիոնալ կառուցվածքի համակարգում:

<sup>15</sup> Արդիական ըմբռնմամբ բոլոր շինանյութերը (երկաթ, բետոն) բնույթով կամ մշակման եղանակի արդյունքով աղնիվ են:

Աղքային ժառանգության ռացիոնալացումը Բերլագեն ընդհանրացրեց շենքի բոլոր հատվածների ընդհանրությամբ: Նրա հորինվածքներում զուգահեռաբար կայուն մնացին առարկայական և ենթակայական դորձանները, օրինակ՝ ավելի ժամանակակից կառուցվածքին գործակից դարձան պայմանական նշանակություն ունեցող, թեկուզկ զուսպ մշակումով ազգային գեղազարդումները: Եվ կամ հետևելով կարուսի՝ Փարիզում կառուցած Սենաժնեկի (1843—50) և Աղքային (1858—68) գրադարանների կամ Վ. Հորտայի «Ժողովրդական տան» (Բրյուսել, 1895—99) օրինակներին, Բերլագեն մեծ դահլիճների համար օգտագործեց պատերի հետ չհարակցվող մետալլա թղակերպ, ապակեպատ ծածկեր<sup>16</sup>:

Զիջումների շղմող խստապահանջ ռացիոնալիզմը ծնունդ առավ 1917-ին, Լեյպցինում, Գե Ստիլ անվանումով՝ Պ. Մոնդիանի, Ա. Քոբի, Վ. Հուսցարի, Յ. Յ. Պուտիկ և Թ. Վան Դուելը գործողի մասնակցությամբ: Մինչ այդ, սահայն, ոռմանտիկ ազգայինի և էքսպրեսիոնիզմի հետևորդները շինարարական հարցերում ապավինած մնացին Վիոլե-լը Դյուի գործառնական ռացիոնալիզմի նոր գոթականությանը:

Բերլագեի ստեղծագործություններում առկա գործոններից ձևայինն միակողմանի զարգացում գտավ իր շրջանի մի շարք ճարտարապետների կողմից:

Եշտել ձեկի արտահայտչականությունը, նշանակում էր արտաքերել ձեկի իմաստը թելագորող առանձնահատկությունները և պլաստիկ մշակումների ուժով բնորոշել գրանք: Ձեկի պլաստիկ ընկալումը բնականորեն հանդեցրեց էքսպրեսիոնիզմին: 1910-ին Միքայել Պե Քլերքը, Պ. Լ. Քրամերը և Մ. Վան դեր Մայեն հիմնեցին Բերլագեի զպրոցին հակադիր հոլանդական էքսպրեսիոնիզմի՝ «Ամստերդամի դպրոցը» (1910—26), միաժամանակ հանդեն եկան արվեստաբանական քննադասությամբ իրենց հիմնած «Վենդինգեն» ամսագրում:

Հոլանդացի այդ ճարտարապետների կատարած տարածական և ծավալային արժեքների բաղկացական հարուստ գյուտերը և շարունակ փոփոխվող պլաստիկ ձևերը յուրովի կերպարանք տվին նրանց կառուցած շենքերին ու ամբողջ թաղամասերին: Մ. Պե Քլերքի և Քրամերի նախագծերով կառուցապատկեց 1902-ին, ապա 1914-ին Բերլագեի մշակած Ամստերդամ Զուլց քաղաքային շրջանը, որը համարվեց հին քաղաքի թաղանթում կատարված բարեկարգման և ապագա զարգացման լավագույն օրինակներից մեկը: 1918—21 թթ. Քրամերը կառուցեց «Ալգեն համար» բանվորական թաղամասը: Հոլանդացի ճարտարապետներին հաջողվեց ստեղծել ճարտարապետական նոր լեզու Եվ եթե ճարտարապետական արտահայտչամիջոցների հարըստացումը կատարվեց ավելի ազգայինի, քան թե եվրոպականի իմաստով, ապա հենց այդ կողմնորոշումն էր, որ բարենպաստ աղղեցություն գործեց հյուսիսային փոքր երկրներում: Ռացիոնալ կառուցվածքը ազգայինի բովանդակությամբ իմաստավորելը նշանավորեց էքսպրեսիոնիզմի մուտքը ավելի փոքր ազգությունների արվեստի մեջ: Ոմանք (թ. Ձեկի) այդ ընթացքը դիտում են որպես Կենտրոնական Եվրոպայի ծայրամասային արտահայտություն, մինչդեռ իրականում նման բեկումը բեղմնավորվեց եվրոպական

<sup>16</sup> H. P. Berlage, Gedanken über der Stil in der Baukunst, Leipzig, 1905. H. P. Berlage, Grundlagen und Entwicklung der Architektur, Berlin, 1908.

մշակությը հոլանդական, սկանդինավյան, ֆիննական և դանիական ժողովարքների ստեղծած արվեստի հարստությամբ։ Այս առումով նշանակալից էն Յ. Վ. Պ. Քլինտի կառուցած Գրունդլիգ եկեղեցին (Կոպենհագեն, 1920—40), և Սոնքի կառուցած Տամպերեի դոմը (Յինլանդիա, 1902—07), ինդրենի, և Սաարինեի ստեղծագործությունները, ինչպես և Օ. Ալկվիստի, Գ. Ասպլունդի, Մ. Լորենցի կառուցած Եվեդիալում։

\* \* \*

Անցյալի ճարտարապետական ձևերի հարուստ ժառանգության մեջ ընտրություն կատարելը աղքատացման գործնթաց չէ, այլ պարզության հասնելու նպատակ Ալդակս վարվեցին անցյալ դարում Պյուտեն, Շինքելը և Մեսսելը նույն ձևով արտահայտչական միջոցների պատշաճ օգոագործումը, ընդհափ մինչև երկրաշափական պարզագույն ծավալները, հասունության նշան է։ Ալդակս շարժվեց նկարչությունը կորիզմից սկսած, և դա է պատճառը, որ Լոռզի և Գրոփիուսի տասական թվականներին ստեղծած ճարտարապետությունը, եթե նվազ հրապուրիչ է արվեստի տեսակետից, ապա մշակույթի առումով առաջընթացի վկայություն է։

Կառուցվածքային օրգանիզմի ստեղծագործ մեկնաբանությունը սկզբանքային նշանակություն ունեցավ արդի ճարտարապետության կազմակորման համար և վարչության հարցում։ Շենքի մակերեսների մշակումից ավելի էականին հանգելը նշանավորեց այն կապի վերականգնումը, որ պետք է հաստատեր տեխնոլոգիայի և բովանդակության, ինչպես և կառուցելու եղանակների ու դրանությունների միջև։ Կապակցությունների նման համակարգում միմիշայն տեխնիկական հարցերին հարաբերված ձևաբանական խնդիրները չեն կարող պատշաճ լուծում գտնել։

Բացահայտ է, որ մետալը և երկաթբետոնը խթանեցին շինարարական արվեստի զարգացումը, բայց այդ շինանյութերով կառուցված շենքերը պարզապես կրկնում էին քառանկյունի ցանցի երկրաշափական այն կառուցվածքը, որը վերամշակել էր Վերածնունդը և փոխանցել մեզ։ Ճիշտ է այն մեղադրանքը, ըստ որի Պերրեն շնասավ երկաթբետոնի կարելիությունների այնպիսի մշակման, որին նույն շրջանում հասավ է Ֆրեյսինն (Օրիի հանգարը, 1916—24)։ Այնուհետև, Պերրեն կատարելագործեց այդ շինանյութը և հասցրեց ազնիվ նյութի աստիճանին։ Նույնը արեց Միս վան դեր Ռոեն մետաղի խնդրում։ Սակայն Պերրեն և Միս՝ մշտապես հավատարիմ մնալով ռացիոնալիզմի գործառնական տեխնիգիզմին, ձեռնկալման խնդրում մնացին պահպանողական իրոք, ձևաբանության ոլորտում տեխնիկան և շինանյութը՝ բոլոր հնարավորություններով հանդերձ, ինքնին ոչինչ չեն թելագործ ճարտարապետությանը, քանի դեռ կերպնկալման մեջ չի փոխվում երկրաշափական պատկերը։

Ռացիոնալիզմը, որ հասել էր համաշխարհային ճանաշման, ուղղությունը տվեց արդի ճարտարապետությանը, 1914-ի շրջանում արդեն սպառել էր ձևաստեղծման հնարավորությունները։ Հ. վան դե Վելդեն, Հ. Մութեսիուսը և Ա. Լոռզը կերպեցին ֆունկցիոնալիզմի պատմական հիմքերը ճիշտ այնպես, ինչպես իր գերթին Պոլլեր Վերբրունդը նախապատրաստեց Բառհանուլը։ Ֆունկցիոնալիզմը խախտեց ռացիոնալիզմի բյուրեղացման վիճակը, և

սկսած 1918-ից ու ացիոնալ-ֆունկցիոնալիզմի հասկացությամբ բեղմնավոր գործունեություն ծավալեցին լը Կորբյուլիքին, Վ. Գրովիուսը, Միս վան դեր Ռուն, Թ. վան Դուզպուրգը և Ռիտվելը:

Սակայն ճարտարապետության պատմությունը մեկնարանել որպես ուղիոնալիզմի կամ տեխնիցիզմի, բեկուզե կողմնակի ներդրումներով հարսացած միակողմանի երևությ, ինչպես այդ անում են, օրինակ, Յ. Յոդիգեն, Լ. Բենալոն, Զ. Մ. Ռիշարդը կամ Ս. Գրիփոնը, սխալ է: Պատմական ճշմարտությունն այն է, որ ուղիոնալիզմին հակադրվեց էքսպրեսիոնիզմը: Ուստի պարզ է, որ այդ երկու ուղղությունների մեկնարանումը կարող է որոշ լուս սփռել 1900—1914 թթ. ճարտարապետության հարցերում:

Ճարտարապետական մտահղացումը ժամանակի զգայնությամբ ընկալված կյանքի մի հատված է: Որպեսզի կարելի լինի այդ իմաստով կաղմակիրպել տարածությունը, հարկ է տեխնիկական լուծումները, գործառնությունների կարգավորումը հարաբերել մարդուն: Հարկ է մշակել ձեր, տարածել ձեր բոլոր հնարավորությունները: Բերլագեի դարձոցին հատուկ որոշ ընկալումները՝ կապված կամարների միջնադարյան կերպարի հետ կամ Պերերի հոմական տաճարների օրինակով մշակած սյուները, անցյալի օրինակով կաղապարված հեծանները արդի իրականությանը հնամապատասխանող գեղագիտական նախընտրությունները են: Անցյալի կապը պետք է ընթանար ոգու ճանապարհով և ոչ թե ձեր գերարտագրությունների միջոցով: Այս իմաստով Ֆ. Լ. Ռայթը գոթական ոգին է համարում օրգանական ճարտարապետության ամենակատարյալ արտահայտությունը<sup>17</sup>:

Հարցն այն է, որ փոխվել էր կառուցելու եղանակը, սյունը, հեծանը կամ ճարտարապետական տարրը կորցրել էին իրենց յուրովի նշանակությունը, և հետաքրքիրը այժմ ոչ թե այդ տարրերի ինքնուրուց արժեքն էր, այլ նրանց համագործակցությունը ընդհանուր կառուցվածքում:

Ուղիոնալիստական ըմբռնմամբ ճարտարապետի մտահղացումը կաղապարված է երկրաշափական ձեր մեջ, որը որպես նախադրյած պայման կազմում է ուղիոնալիստ մտքի մոդելը էքսպրեսիոնիստը, կարծես, զիտակցորեն մզում է ճարտարապետին տեխնիկական նոր լուծումներ որոնելու: Այս առումով նշանակալից է ճարտարապետ Մաքս Բերգի (1870—1947) նախագծով և ճարտարապետ Տրաուերի գործակցությամբ Բրատիսլավում 1912—13-ին կառուցված «Հարյուրամյակի դահլիճը» Ուժգնորեն ուրվագրծված, դինամիկ անցումներով հարուստ, լուսատվերային խաղերով ճոխ, գմբեթածածկ, քառարսիդ հսկա այդ դահլիճը (դահլիճի տրամագիծը 95 մ, գմբեթինը՝ 65 մ) երկաթբետոնի ամենանշանակալից կառույցներից է, որի հանդիպությանը հասնելու էր Պ. Լ. Ներվին իր մարզական պալատներով՝ Վիեննա 1958 (նախագիծ), Հռոմի փոքր դահլիճը (1956—57) և մեծ դահլիճը (1958—59): «Հարյուրամյակի դահլիճին» այնքան բնորոշ ծավալատարածական լարվածությունը արտահայտում է ձեւամշակման և տեխնիկայի միջոցների զարգացման Մ. Բերգի ցուցաբերած դրական մասնակցությունը:

<sup>17</sup> F. L. Wright, op. cit. Առաջարանում ասված է, «Գոթական ոգու վերածնունդը արքի կյանքի արվեստի և ճարտարապետության համար Գոթական ոգու վերագննումը ավելի խոր իմաստ ունի, քան գոթական ճարտարապետության ձեր օգտագործումը: Իր օրգանական բնույթի համար այդ ոգին ես անվանում եմ գոթական ոգի, և կարծում եմ, որ իմ շենքերը մեծ ժամանքը մտահղացված են ու կառուցված գոթական ոգով»:

Դիմամիզմը որպես արվեստի հասկացություն հիմնված է շարժունակության տեսողական ընկալման վրա։ Ծարտարապետության ստորոգության խմաստով տարածությունը ստանում է լուսաստվերային, այսինքն մթնոլորտի նշանակություն, ուր ձևերը, ճարտարապետական տարրերը կարծես շարունակ փոփոխվող ծավալատարածական հարաբերակցություններ են առաջանում։ Դիմամիզիկ տարածության կազմակերպման առաջին օրինակներից պետք է համարել Օ. Բարտնինի Շաերնքիրսեն, որը կառուցված է կենտրոնական դահլիճից գեղի եղրամասերը իջնող, մեկը մյուսին հենված պարարուածների հաջորդումով։ Մավալի առունով դիմամիզմը քսանական թվականներին կիրառվեց Ք. Մալեկի քանդակներում՝ Դե Ստիլի ճարտարապետների կողմից, իսկ քաղաքաշինության բնագավառում՝ վաթունական թվականներին<sup>18</sup>։

Մայիսոնալիզմը, որը ծնունդ էր առել ուշ լուսավորչականությունից, ձգտեց տրամախո՞րար լուծում տալ ինքնադեպ իրականությունից առաջացած խնդիրներին։ Մեր գարի քսանական թվականներին, առաջին համաշխարհային պատերազմում պարտված, սոցիալիստական հեղափոխության, նրան հաջորդող վայմարյան սոցիալ-դեմոկրատ հանրապետության շրջանի Գերմանիայում նպաստավոր ազգեցություն թողեց երկրում ծավալվող ճարտարապետական գործոններության վրա։ 1927-ին Միլանում խմբավորված ուցիոնալիստ ճարտարապետների շնորհիվ տարրածում գտավ ֆաշիստական իշխանություններին ենթարկված իտալիայում և հանդիսացավ արվեստի առաջադեմ միակ այն ուղղությունը, որը պարունակությամբ պետականորեն հաստատում գտած մոնումենտալիզմի դեմ։ Ուցիոնալիզմի շրջանում հայտնարերված պիլոտին, ապակեպատր, հստակ ծավալը, պատուշանների հորիզոնական շարքը, այսինքն ուսցիոնալիստ ճարտարապետության հիմնական ձևապաշարը ամբողջությամբ կիրառվեցին միայն 1918-ին հաջորդող շրջանում։

Սոցիալ-տնտեսական նոր պայմանները, տեխնիկայի ասպարեզում եղած նվաճումները խրախուսեցին ճարտարապետներին՝ գիտական ճշգրտությամբ քննության առնելու ձեի և պարունակության ավանդաբար կայունացած հարաբերակցությունները։ Ուցիոնալ հասկացությանը բնորոշ՝ նախագծելու վերլուծական մեթոդաբանությունը հնարավոր դարձեց հասնելու աղատ հատակագծի հորինմանը և այդ հիմունքների տրամարանական հետևողականությամբ հանգելու նոր ձեերի մշակմանը։

Իսկ էքսպրեսիոնիզմը։

Էքսպրեսիոնիստների մատակառությունը հաստուկ ծավալատարածական նոր չափանիշների հայտնաբերումը, պլաստիկ և դիմամիզիկ ձեերն արդեն առկա են Ա. Գաուգիի գործերում, նկարչական ընդհանրացում են գտնում Գլեզերնե թեստեի շրջանակում, նոր ձևավորում ստանում՝ Բերինսի, Մենդելսոնի, Հեռդերի, Շտայների նախագծելու հանգելու նոր ձեերի մշակմանը։

Էքսպրեսիոնիզմը արդի ճարտարապետության ամենակարևոր բազագրիներից մեկն է, նա առկա է Մայթի, Միւ վան գեր Ռոեի, Գրոփիուսի կառուցյներում, և երբ թվում է, թե հաղթահարված է, նորից է հայտնիլում, ինչպես, օրինակ, լը Կորրյուպիի՝ Ռոնչանի ճարտարապետության մեջ, կամ

<sup>18</sup> M. De Michelis, Le avanguardie artistiche, Del'900, Bari, 1966.

Միկելուսիի վերջին շենքերում։ Հանս Շարունն իր կյանքի ամբողջ ընթացքում հավատարիմ մնաց էքսպրեսիոնիզմին։ Նրա ստեղծագործություններից՝ «Ռոմեո և Ջիուլիա» բնակելի համալիրը (1959) ու Թեովինի «Ֆիլհարմոնիա»-ն (1963) դասվում են վերջին տարիների լավագույն կատալցների շարքում։ Էքսպրեսիոնիզմը արդի ճարտարապետության մյուս գեմքն է։ Այն ուղղությունների խստապահանջ երկրաշափությանը հակառակող, շենքի պարունակությունը անմիջականորեն մարդու հետ հաղորդակցության մեջ դնող, ձեզ դիմում է հետապնդում։

1918-ի նոյեմբերին Բեռլինում Մ. և Բ. Տառլիթը, Վ. Գրոֆիուսը, Հ. Հերինգը, Հ. Շարունը և նրանց հետ մեկտեղ մայրաքաղաքի լավագույն նկարիչները, բանդակագործները, գրողները, երաժիշտները և թատրոնի մարդիկ հիմնեցին Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխության անվանումը կրող Նոյեմբերգրուպե (Novembergruppe) արվեստագետների միությունը։ Համաշխարհային առաջին պատերազմի դաժան փողձություններից հետո, նովեմբերգրուպեի նպատակն էր շարունակել և ծավալել դեռևս 1910-ին՝ ամսագրերի, մանիֆեստների, կարարեների և ցուցահանդեսների միջոցով տարված պայքարը պահպանողական մտավորականության դեմ, պայքար, որի սկիզբը գրել էին էսպարեսիոնիստները։ Նովեմբերգրուպեի արվեստագետները համոզված էին, որ արվեստի միջոցով ևս կարելի էր օգնել մարդուն՝ վերացնելու իր ազատությունը։ Նրանց ըմբռնումով, ամենալայն առումով, նշանակում էր՝ ժողովրդի համար և ժողովրդի կողմից ստեղծված արվեստ։ Մորիսյան այդ հասկացությանը, սակայն, տրվեց ճարտարապետական նշանակություն։ Քանդակներով, ապակյա նկարներով և երաժշտականությամբ ամրողացած գոթական տաճարը նովեմբերգրուպեի արվեստագետներին ներկայանում էր որպես իրենց երազանքների լուսավոր իդեալ։ Կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքի գոթական շափանիշը, ոռմանտիկ շաղկապով, համապատասխանում էր այդ արվեստագետների էթիկական զգայնությամբ բնկալված սոցիալիզմին։ Նման դրվագը մի անգամ ևս մղեց արվեստագետներին դեպի ուսուպիսան<sup>1</sup>։

Ենթարտի մանրավեպերը որոշակի դեր կատարեցին եվրոպական մշտին այնքան բնորոշ ուսուպիսան տարածելու գործում։ Նրա ոլուսավոր արվեստի գաղափարը դեռևս 1897-ին նպաստեց Դի Բրյուգեի նկարիչների միտումներին, որպես ուղղություն տվող ներքին գործոն, որպես նկարչական հասկացությունը կերտող հիմնական տարր։ Ենթարտի նկարագություններում արվեստի հայրենիքը գտնվում էր լուսավոր սյունաշարքերով, գունավոր և տարօրինակ ձևերով կառուցված դյակեների հերիաթային աշխարհում։ Ենթարտի բարեկամ Բ. Տառլիթը, աղջկած նրա 1914-ին Բեռլինում լույս տեսած «Ապակյա ճարտարապետություն» (Glasarchitektur) գրքուկից, 1917-ին նախագծում է և իր հիմնած «Ֆրուուիխտ» արվեստի հանդեսում հրատարակում Ալպյան ճարտարապետություն կոչվող նախագծերի շարքը՝

<sup>1</sup> „Novembergruppe“, Lexikon der Kunst, Leipzig, 1975, Bd. 3, S. 590.

աստղածե, լուսավոր տաճար, լուսների բարձունքից վեր սլացող ապակն պալատ, շանցակերտ բետոնե գմբեթ: Այդ նախագծերը ուստուիկ լինելով հանդերձ, շինարարական բնագավառում Տառիթի դեռ պատերազմից առաջ ձեռք բերած փորձառությունների անդրադարձում են ձիւտ այնպես, ինչպես 1914-ին նրա նախագծով Քյոլնում իրականացված ապակյա գմբեթը, որը ձարտարապետության պատմության համար ցանցակերտ գմբեթի առաջին նմուշն է, ինչպես 1912-ին նրա կառուցած նորարարական պողպատե տաղավարը:

Այդ շրջանի ձարտարապետների ստեղծագործական հանդգնությունն ու մտքերի հարստությունը դարձանում էին իրականության և երևակայականի բեղմանավոր ոլորտում: Ոլորտ, ուր արվեստագետն անդոր էր փոխնկալու քաղաքական-սոցիալական գրությունը, շեղվում էր իր ընթացքից և հանգում երևակայական դյաների աշխարհին:

Եքսպրեսիոնիստը Կ. կիրկնենիստի բնորոշմամբ «բուռնցարք» սևդմում էր աստղերի դեմ, մեղադրում տիեզերքը և ոչ մի ելք չաեսնելով, հողատում էր ինքն իրեն, փոխանակ պայքարելու, որպեսզի կերտվի մի նոր աշխարհ<sup>2</sup>:

Նովեմբերգրությի առաջին քայլը եղավ «Անձանոթ ձարտարապետ» անունը կրող ցուցահանդեսի կազմակերպումը: Ցուցահանդեսի նախադաշն էր Վ. Գրոֆիուսը, իսկ ղեկավարող՝ Բ. Տառիթը: Նորահայտ բացում ուժերի կողքին ցուցահանդեսը ի հայտ բերեց բացառիկ տաղանդով օժտված նկարիչ Հերման Ֆինստերլինին, որի աղքացությունը ապագայում տարածվեց ներարիշներ Մասոնի, Գորկով<sup>3</sup>, Դյոցի ստեղծագործության վրա, ինչպես և ձարտարապետության ու քաղաքաշինության քնագավառներում:

Ֆինստերլինի ներկայացրած երևակայական շենքերի և քաղաքների նախածերում հաղթահարված էր էվկիպույան եռաշափ երկրաշափությունը և իշխում էր դինամիզմը: Ենթադրաբար գործող ուժերի հետագետը միջոցով Ֆինստերլինը առաջացրել էր ուժերի խտացումներ, որնց սահմաններում ուրվագծվում էր շենքերի կերպարը, կամ ավելի նոսր զգված ուժերի հետագերով պատկերում էր տարածության մեջ մարդկանց գործունեությունների բաշխումը: Նման հասկացությամբ, վերանում էր փակ ձեփ և բնության միջև դոյլացած արհեստական պատճեղը, շենքը միաձուլվում էր քաղաքին, ձարտարապետությունը՝ քաղաքաշինության: Հաղթահարելով հեռանկարային եռաշափ տարածության վերածննդի հասկացությունը, Ֆինստերլինը վերականգնում էր անսահմանության գաղափարը: Նա գոնում էր, որ ձարտարապետական կիրառությունների տեսակեաից հասական գեղագիտության օրինաշափություններով կայունացած ձեզ կարող է արհեստական լինել, եթե այն չենթարկվի կյանքի հոսում ընթացքին: Այս տեսակեաից շենքի կամ քաղաքի զաղափարը վերածվում էր հասարակական կարդի զարգացման դեմամիզմը վերարտադրող գործոնի, իսկ կայուն ձեզ կորցնում էր իր գերիշխող նշանակությունը և ձևակերպման մեջ ենթարկվում կառուցվածքի օրի-

<sup>2</sup> K. Liebknecht, Briefe von Anfang August 1918, Berlin, 1922, III, p. 119.

<sup>3</sup> Ashil Gorki, իսկական անունը՝ Ռուտանիկ-Մանուկ Ադոյան, ծնվել է 1904 թ. Խորվածք (Վարի Հայոց ձոր), Վան, 1920-ին իր բրոք՝ Վարդուշի հետ հաստատվում է ԱՄԽ: Գորկին մատացել է 21 Հունիսի 1948 թ.: Գորկին արվեստի քննադատների կողմից նկատվում է որպես Միացյալ Նահանգների արդի նկարչության Ռահմականը.

<sup>4</sup> G. C. Argan, op. cit., p. 213—17.

նաշափություններին: Փոխարինելով ավանդական շինանյութերին՝ պողպատը, ապակին-երկաթերետոնը, գալիս էին վերացնելու արտաքին և ներքին տարածությունները իրարից բաժանող պատը և նրանց միջև հաստատելու շարունակ փոփոխվող հոսուն ընթացք<sup>5</sup>:

Զեակերպման առումով այս տեսակետների մեջ ուշագրավ է հետևյալը. Եթե Ֆինստերինի նախագծերում օգտագործված պարուրած գծերը փոխվեն ուղղանկյունի հատվող ուղղաձիգ և հորիզոնական գծերի, էլիպտիկ ծավալները՝ խորանարդների, ապա մենք դուքս կզանք էքսպրեսիոնիզմից և կընկնենք առցիոնալիստների պատկերային աշխարհը (Ձ. Կ. Արգան): Արդ, դինամիզմը, որպես իրականությունը զեկավարող կարգ, դրսենորում է իր ընթացքը ոչ միայն կառուցելու, այլև նախագծելու գործում: Ենելով իր այս տեսությունից, Ֆինստերինը առաջարկում էր շարունակական նախագծման դաշտափառը, որը օժտված էր նորանոր շինանյութեր, ինչպես և միշտ ավելի հանդուն տարածական վարկածներ կիրառելու ունակությամբ: Շարունակական նախագծման առաջարկը ենթադրում է ընդգրկումների անսահմանություն, նպաստում է ճարտարապետական բազմակույթամբ հարցերի բացահայտմանը, նրանցից ամենակենսունակների ներդրմանը: Այդ առումով կառուցվածքն իր հասկացական բովանդակությամբ ստանում է առաջնահերթ նշանակություն՝ ձեր մինչ այդ ունեցած կարեռության համեմատ: Սույն մուտքումը թելազրում է կառուցվածքային երեք սարորդություն:

- բառանկյունի ցանցը (ուցիոնալիստ մոտեցում),
- ազատ գծերի համակարգը (էքսպրեսիոնիստ մոտեցում),
- անկյունագծով կատարված հորինվածքը (Յ. Լ. Ռայթի օրդանական մոտեցում)<sup>6</sup>:

Նման հասկացությունների գիտակցումը նախագծողի համար ունի ոչ միայն տեխնիկական նշանակություն: Այն իր հետ բերում է նաև սոցիալ-տնտեսական իրականության հետ կապելու իմաստ:

Հոլանդիայի համալսարանական հնագույն քաղաքներից Լեիդենում 1917-ին նկարիչներ թեր վան Դոնդորգը, Պ. Մոնդրիանը, Բ. վան դեր Լերը, Վ. Հուսցարը, ճարտարապետներ՝ Յ. Պ. Օուդը, Յ. Վիլսը և Ռ. Վան Հոփը, քանդակագործ՝ Գ. Վատոնգերլոոն և բանաստեղծ Ա. Կոկը հիմնեցին «Դե Ստիլ» (De Stijl) հանդեսը՝ սկիզբ դնելով նույն անունը կրող արվեստի ուղղությանը: Նոր տեսության հիմնական գաղափարները թերևս 1913—17 թթ. մշակել էր Պիտ Մոնդրիանը (1872—1944): Վան Դոնդորգի մտքերը և նեռալիստիկ դպրոցի մշակած ծավալատարածական կառուցվածքի արտահայտամիջոցներն այսօր մերկել են արդի ճարտարապետության լնգվական պաշարում:

Պ. Մոնդրիանը արստրակա նկարչության փորձառություններից անդին, առավելագույն շափով խորամուխ էր եղել իր երկրի արվեստի ավանդական սկզբունքների մեջ: Նա քաջ գիտեր, որ Հոլանդական նկարիչները նախօրոք մանրամասնորեն կառուցում էին նկարի հիմքում ընկնող երկրաշափական կերտվածքը: Մոնդրիանի համար բնության ձերին արտաքին կերպարը:

<sup>5</sup> Ֆինստերինի այս մտքերը, որ հիմնված էին դինամիզմի օրինաւափությունների վրա, կիրառեցին սացիոնալիստները (տե՛ս F. Borsig, H. Finsterlin, Firenze, 1968).

<sup>6</sup> Տե՛ս B. Zeval, Il linguaggio moderno dell'architettura, Torino, 1973.

<sup>7</sup> «De Stijl» հանդեսը ընդհատումներով հրատարակվեց մինչև 1927 թվականը:

փոխական է, իսկ նրանց ներքինում գոյություն ունի մի այլ իրականություն, որը հավերժ է: Այդ իրականությունը արտացոլվում է համընդհանուր նշանակություն ունեցող տարրերի հակադիր իրավիճակից: Մոնդրիանի հասկացությամբ արդի նկարչության, բայց հատկապես ճարտարապետության համար հարկ էր գտնել երկրաշափական այն ավարտում կառուցվածքը, որի օրինաշափությունների հիմունքներով կարելի լինի կազմակերպել ճարտարապետականորեն կարգավորված տարածությունը, որը կընդորի և դրանով իսկ կլուծի ամեն մի նոր ձևի կառուցվածք: Դե Ստիլը նպատակ ուներ հետևողականորեն հաղթահարել նախադրյալ ձևի գաղափարը, հորինել առարկայականորեն հարաբերված, կառուցվածքին ննիթակա տարրերից բաղդրված մի համակարգ, որը ճշմարիխ էր լինելու ոչ միայն արվեստին, այլև քաղաքի ծավալատարածական կերտվածքին: Արդի ճարտարապետության կազմավորումից ի վեր քննադատության է ենթարկվել նոր դասական-ներին հատուկ այն դրվածքը, ըստ որի շենքը դիտվել է որպես ինքնուրույն էություն: Այս իսկ առումով շենքի ինքնարավ լինելու ինքիրը փոխվում էր և շենքը դառնում էր առարկայացված տարածությանը մասնակից, նախագծման մեթոդի առումով՝ մեկը մյուսով արտահայտելու հնարավորություն: Այս մոտեցումը պահանջում էր հրաժարվել շենքի ճակատային հասկացությունից և անցնել շենքի հատակագծային կազմին, պահանջում էր ծավալի ձևական կառուցվածքին հասնել շենքը և շրջապատը շաղկապող երկափ տարածությանը<sup>8</sup>: Նույն մակերեսը ընդարձակելու, ընդայնելու գաղափարը նշանակում էր՝ հաղորդակցություն առաջացնել փակ և բաց տարածությունների միջև, ինչպես նաև նախագծի գոյացման ընթացքին տալ ներդաշնակ զարգացում: Նեպալաստիկ հասկացությամբ հակադիր գործառնությունների միջև հավասարաշաղաթ ներդաշնակություն առաջացնելով՝ ճարտարապետությանը բնորոշ գործումը ֆինստերլինի շարունակական նախագծման մեթոդով դրվում էր ավելի իրական հիմքերի վրա:

Գործելով մակերեսի սահմաններում, Մոնդրիանը հիմնականում վերահսկեց ձևի և կառուցվածքի կապակցությունների հարցը: Նա բաժնեց մակերեսը դեպի դրական արժեքները ճգփող ուղղանկյունի հատվող ուղղաձիգ և հորիզոնական գծերի: Այդ կոորդինատները պայմանավորում են մյուս հնարավոր սոուրաբաժանումները, որոնք, սակայն, կատարվում են ոչ թե անկյունագծերի օգնությամբ, մի բան, որ հատուկ է համաշափությունների դասական կարգին, այլ կոորդինատներին ուղղահայաց, քառանկյունի ավելի փոքր մակերեսների բաժանումներով: Ստորաբաժանումները ենթակա շենքաբանական օրինաշափություններին: Նրանք առանց ընդհատելու տարածության շարունակությունը, ստեղծում են տրամարանական այնպիսի կարդ, որի հիմքներով կարելի է կերտել նույն համակարդից արտարերված ձեր: Տեխնիկական առումով անկյունը կազմում է շենքի ծրկու ուղղություններով ընթացող պատերի, կամարների, թաղերի ամրացման լուծումը, Գեղագիտության տեսակետից շենքի անկյունագծային տեղադրումը, անկյունաքարերի

<sup>8</sup> Դե Ստիլի հասկացությամբ շենքի և տարածության կապը իրազերմական գետահարկի, այսինքն անմիջականորեն մարդու մատշելի մակերեսի ընդայնումով: Շենքերի բարձր հարկիրի և բնոթյան միջև տեսողական, ինչպես և ծավալային առումով հաղորդակցություններ ստեղծելը առաջարկվեց Խոալիայում, 1962-ին Սեկոնդիանո ավանի կառուցվապատման նախագծերում:

շեշտաված շարքերը վերափոխում և հարստացնում են շենքի երկրաշափական ձեզ: Բարոկկոյում անկյուններին տրված գողածն, կործնթարդ կամ սյունային լուծումները թելադրիչ եղան նեռպլաստիկ ուղղության համար:

Մոնդրիանը, մեկնելով պատմական առարկայական իրողությունից, հանգեց մակերսների (իսկ թ. վան Դոնզուրդը՝ ժավալների) ձեւին հարաբերություններին, այսինքն դպայական ընկալումից (նկարչության մանապարհով), մտավոր վերացրկումով տարածությունը կարգավորելու գաղափարին:

Կա մի այլ խնդիր. տարածությունը պատկերել որպես անսահմանություն՝ անիմաստ է ճարտարապետության համար, քանի որ տարածությունը ճարտարապետական նշանակություն է սահմանում, եթե բաժանվում է արտաքին և ներքին հատվածների: Արդ, այդ բաժանումները կայուն են, եթե ծավալը սահմանող ուղղությունները ամրացված են ուղղանկյունների միջոցով, հոսուն են, եթե անկյունները բով են կամ բաց: Ուղիղ անկյունը հատուկ է ուղիղությունների ձերնկալմանը, բովթը կամ բացը՝ օրդանականներին (Ֆ. Լ. Ռալթ):

Զեր հիմնականում մարդուն պարտադրված համոզմունք է: Ժամանակավրակ լիիներ, սակայն, եթե համոզմունքը չափանիշ դառնար ու պայմանավորեր ձեւի ընկալումը ժամանակի ընթացքում: Դե Ստիլի հետևորդները շրջեցին դասական այն հասկացությունը, ըստ որի տարածությունը պետք է նկատել որպես տրված, կայուն իրողություն: Նրանց համոզմունքով տարածությունը շարունակ կազմավորման ընթացքում գտնվող նյութ է, իսկ բաղաբային իրականությունը հարկ է ընկալել որպես հասարակական կյանքին համբարձագ և շարունակ կազմավորման ենթակա իրողություն: Ճարտարապետական առումով տարածություն-ծավալ շաղկապը կորցրեց տեսականորեն աներեր լինելու հատկանիշը, որին հետևեց դասական հասկացությամբ ծավալի տարրալուծում, նբա օրգանական միասնության կազմալուծում: Անորոշության այդ ոլորտում Մոնդրիանը առաջարկեց ուղղանկյունը և պատմական առում միջավայրի կապակցություններից անկախ, կորդինատների համակարգով կայունացված հստակ մակերեսը իսկ Դե Ստիլի ճարտարապետների համար հստակ լինել նշանակում էր խուսափել բնական շինանյութերից և օգտագործել արհեստական նյութեր: Նման դրվագիքը նոր թափ հաղորդեց նորագյուտ շինանյութերի արտադրությանը, որոնք արագ կիրառում գտան առաջադեմ ճարտարապետների կառուցյներում:

Զեակերտման հարցում Դե Ստիլի տեսակետը հետևալին է: Խորանարդը որպես սահմանափակ ձեւ այլևս նշանակություն չւնի, իսկ ներքին տարածությունը կարող է նոր իմաստ ստանալ միայն այն ժամանակ, եթե այն դիտվում է որպես անհուն տարածության մասնիկ: Համաձայն այդ տեսակետի, շենքը սահմանող մակերեսներն առանց անկյունային ընդհատումների կոռդինատական հունիստ առանցքների հետագծերով երկարում են դեպի դուրս: Նման հնարքով վերանում է շենքի ճակատների դասակարգումը (արտաքին, ներքին, կողմնակի): Ներքին տարածությունների սահմանումները ես կատարվում են կոռդինատական համակարգի հիմունքներով: Եվ եթե այս ամենին ավելացնենք նաև նույն կարգով սարքված կահույքը, ապա կունենանք նեռպլաստիկ հասկացությամբ կառուցված շենքի օրգանապես միասնացած պատկերը: Հիմնական գույների՝ կարմիր, կապույտ, դե-

դին և նրանց հակադրվող «ոչ գույների»՝ սպիտակ, սև, մոխրագույն օգտագործումը ամբողջացնում է արտաքին և ներքին մակերեսներին տրված՝ տարածությունը սահմանելու, բայց ոչ սահմանափակելու իմաստը<sup>9</sup>:

Արդի ճարտարապետության պատմության համար նեռալաստիցիզմի նշանակալից օրինակներ են թ. վան Դոեզըուրդի և Կ. վան Էստերենի նախագծած բնակելի տունը (1923), Գ. թ. Ռիտվելդի Ուտրեխտում կառուցած Շրյուդերի (1924), ինչպես և Իպեդամի (1959) մենատները, կամ Պ. Օուդի 1924—25 թթ. բարեկարգած սրճարանը Ռոտերդամում:

Հոլանդացի Նկարիչների՝ Մոնդրիանի և Վան Դոեզըուրդի ստեղծած նեռալաստիկ ուղղության ազգեցությունը նշանակալից եղավ ֆունկցիոնալիզմի և ինտերնացիոնալիստ ոճի վրա<sup>10</sup>, իսկ մեթոդաբանության առումով՝ կիրառվեց Բառհասուզի դպրոցում: 1937-ից ի վեր մուտք գործեց նաև ԱՄՆ-ի Հարվարդ համալսարանը, ուր արդեն 1938-ին Վ. Գրոփիուսը վարում էր ճարտարապետության բաժնի տնօրենի պաշտոնը:

Մոնդրիանը համոզված էր, որ առարկայական և հոգեկան աշխարհն իր էությամբ արտահայտվում է արվեստի միջոցով: Նա գտնում էր նաև, որ հնարավոր է բարելավել մարդու միջավայրը՝ ղեկավարվելով արվեստի շափանիշներով: Եվ Մոնդրիանի համար խնդրը ոչ թե արվեստի բնագավառում գործելն էր, այլ կյանքի մակարդակի բարձրացումը՝ մինչև կտարյալ ներդաշնակության աստիճան: Մի աստիճան, ուր արվեստի ներգործությամբ վերափոխված կյանքը ինքնին վերածված լինի արվեստի մեծագույն գործի:

Ճարտարապետության մեջ տվյալ շրջանում արծարծվող տարածության հարցը ըստ էության պարունակում է երկու տեսակետ:

— Ըացիոնալիստների, ըստ որի տարածությունն ընկալվում է որպես կայուն, փակ, անհաղորդակից խորանարդած ծավալ: Կառուցվածքը կադրված է եռաչափ միավոր ծավալներից:

— Դե Ստիլի, ըստ որի տարածությունն իրար հանդեպ ուղանկյունի, ուրույն գույներով բնորոշված, երկափի հարթություններից բաղադրված ծավալ է: Կառուցվածքը բաղկացած է քառաշատի, այսինքն տարածություն-ժամանակ գործոններից:

Այդ տարիներին Հոլանդիայում տարածում գտած Ամստերդամի գրպարոցի<sup>11</sup> ոռոմանտիկ-աղջային արվեստին, ինչպես և Մոնդրիանի և Թ. վան Դոեզըուրդի հայեցողական արվեստին հակադրվեց Յ. Յ. Օուդի և Վ. Մ. Դուդիկի ավելի իրական ճարտարապետությունը: Օուդին հաջողվեց հաղթահարել նոր պլաստիցիզմի տեսության վերացապաշտ դրվածքը, իսկ Դուդիկը, խորացնելով Ամստերդամի դպրոցի առավել շափով գեղագրադրորեն ընկալված աղջային ոճը, զտեց ժառանգված ձևը ոռուանդպիս հաճելիություններից և ներդրեց քաղաքաշինության օրգանիզմի մեջ:

1918-ին Օուդը՝ գեռևս դե Ստիլ խմբի անդամ, նշանակվում է Խոտերդամի գլխավոր ճարտարապետ: 1919-ին նա կառուցվում է Տուշինդիքին բնա-

<sup>9</sup> B. Zevi, Poetica dell'Architettura Neoplastica, Torino, 1974. Storicità del Movimento De Stijl, p. 74—117.

<sup>10</sup> Խոտերնացիոնալ անվանումը տարածում գտավ ԱՄՆ-ում լույս տեսած հանելագրի աղջեցությամբ՝ H. R. Hitchcock and Ph. Johnson, The International Style, Architecture since 1922, New York, 1932.

<sup>11</sup> R. De Fusco, Storia dell'Architettura contemporanea, Bari, 1974.

կելի թաղամասը, ուր քառանկյունի շնչները նախագծված են թերլագեին հատուկ խստությամբ:

Օուզը ընդունում էր սիմետրիկան, բնակարանների ուղղաձիգ կարգի միապաղաղ գասափորումը, աղյուսե լրեսպատումը, տանիքը: Սակայն եռանիսս խորշածե շնչնի անկյունները, նրանց զուգահեռ երկու կողմերի վրա բարձրացող լուսամուտների պատշաճամբների շարքը հիշեցնում են նոր պլաստիցիմի դրույթներից մնկը, ըստ որի ծավալը ոչ միահամուռ ամբողջություն չի կազմում, այլ բաղադրված է իրար կցված, անկախ պահպանված պատերից: Այս առումով, շնչնի անկյունների բաց միացումների լուծումը ստանում էր ելակետային նշանակություն: Զերնկալման առումով Օուզի գործունեության այդ շրջանին բնորոշ էր նաև 1922-ին Ռոտերդամում կառուցած Օուզ Մաթենսոս թաղամասը: Բնակելի այդ վայրը կառուցապատված է եռանկյունի հողամասի անկյունագծերի և կողերի վրայով: Իրար մեջ դասավորված շորս, միակենարոն եռանկյունիների երկայնքով տեղադրված են Հոլանդիային հատուկ երկնարկ, երկթեք տանիքներ ունեցող նույնատիպ տների շարքեր: Թաղամասի միօրինակության աշխուժացումը կատարվում է զույների միջցով և շնչների միջև հաստատված հարաբերակցությունները տարրերակելով: Այս հորինվածքի մտային պատկերը համապատասխանում է Մոնդրիանի նկարներում առկա մակերեսների, գոյների զուտ երկրաշափական կարգին: Մինչդեռ Օուզի 1924-ին կառուցած Հեռոց Վան Հոլանդ տների շարքը բոլորովին ինքնուրույն, մինչ օրս իր իսկությունը պահպանած ճարտարապետություն է: Երկնարկ այդ շնչներում Օուզը հրաժարվեց կիրառել կառուցվածքային համակարգերից առնված որևէ նախադիր պայմանավորվածության: Նրա խառնվածքին խորթ էր թ. վան Դուեզբուրգի ավանդած տեսական հիմունքներով շնչնքը ձևակերպելու եղանակը: Ազդված թառհառողությունից՝ Օուզը ձգտեց վերականգնել շինարարական իրողությանը հատուկ ճանաշղղական նշանակությունը և այդ հիմունքներով կատարել նախագծումը<sup>12</sup>: Այլ կերպ ասած նա փորձեց նախագծման պահը համատեղել կառուցելու պահին:

Առարկայակապվածության խստապահանջ այդ կարդում թ. լ. Ռայթը առաջարկում էր վերոհիշյալ երկու պահերի միջև թեկուկ փոքր ընդմիջում թողնել, ուր կարելի լինի տեղադրել բնությունից ստացած զգացմունքի մի նշույլ:

Հանրահայտ է, որ Գրոփիուսը, լը Կորրյուլիեն, ինչպես և քսանականների ֆունկցիոնալիստները սկզբումքորեն քողարկում էին պատերի շինանյութը և շենքը ներկում սպիտակ գույնով: Կրող կմախքի և մակերեսները սահմանող պատի միջև արհեստական միջցոներով միատարրություն առաջարկելու ձգտումը այդ ճարտարապետներին մղեց քողարկելու պատի և կմախքի էությունը, որպեսզի շնչնի կերպարն առավել շափով արտահայտի ճարտարապետական մտքի երկրաշափական պատկերը: Հասկանալի է, որ այդ պատկերի հստակ ամենաճշգրիտ իրադրումնից էր կախված ուսցինալիքստների տեսության հավաստումը և շինարարական աեխնիկայի որակավորումը:

<sup>12</sup> Տե՛ս L. Mittner, Ֆակտ., էջ 113—144, „Neue Sachlichkeit“.

Սվաղը, սպիտակ գույնը, Մոնդրիանի նախընտրած գույներից՝ առաջին ուշը նկատվեցին որպես զենքը պատմական կապվածություններից անջատելու միջոցառում, որն իր հերթին նպաստեց համընդհանուր նշանակությունը ունեցող ինտերնացիոնալ ոճի առաջացմանը։ Կա, սակայն, մի այլ հանգամանք, սվաղի և գույնի մշտականությունը խիստ սահմանափակ է, որի հետևանքով առաջանում էր մշտական հոգատարության խնդիրը։ Անցյալում գրեթե անժանոր այդ հարցը նոր կապ էր առաջացնում շենքի, այսինքն վերանորոգման ենթակա առարկայի և մարդու, այսինքն վերանորոգման կատարողի միջև Այսպես, ձեմ ձշմարիտ լինելը և կառուցելու եղանակի հաջողությունը կախված են բնակիչների վարքից, սա ենթադրում էր ճարտարապետական ձեմ պահպանման կոլեկտիվ մասնակցություն<sup>13</sup>։ Նախագծի գծագրական արտահայտության իրական լինելու շահանդը կապվում էր մարդու կենցաղի մակարդակի հետ, հետևաբար երկրաչափական պատկերի վերացական բնույթը նվազում էր այնքանով, որքանով բարձրանում էր կենցաղի մակարդակը, կոլեկտիվ ապրելակերպը։ Ահա թե ինչու Օուդի կառուցած, մինչ օրս մեծ խնամքով պահպանված Հոեք Վան Հուանդի շենքերը, Քիֆհեռը բանվորական թաղամասը Ռոտերդամում (1925) իրենց թարմությամբ, մարդամուտ ճարտարապետությամբ հիացմունք են առաջացնում<sup>14</sup>։

Զինվորական ասպարեզից ճարտարապետության անցած Վ. Մ. Դուդովի 1915-ին ընտրվում է Հիլվերսումի բաղդաքապետարանի գլխավոր ճարտարագետ և 1918-ից սկսած իրագործում է բնակելի թաղամասերի, հասարակական շենքերի ամբողջ մի շարք։ 1921-ին նա նախագծում է Հիլվերսումի հատակագիծը։ Փակ և բաց մակերեսները կամ հորիզոնական և ուղղաձիգ զարգացումով ծավալները իրար հակադրելու գե ստիլան ձգումը, ինչպես և Ամստերդամի գլորոցի ոռմանտիկ-ազգային ավելի մեղմ արտացոլումները կազմում են Դուդովի ճարտարապետության հատկանիշը, նրա էկլեկտիկ դրվագները։

Միջոցները նպատակին հարմարեցնելու արդի արվեստին հատուկ ձրգառումից որոշակի դարձավ, որ տարածությունը շորս պատերով սահմանելու ընդունված կարգը չէր համապատասխանում այսօրվա մարդու ապրելակերպին, ոչ էլ գիտական առումով տարածության անվերջ անալիության դաշտափառին։ Հարդ էր տարածությունը բաժանել գործառնություններ սահմանող, նրանց շարունակությունը շեշտող առարկաների, երբեմն մինչև առատաղ հասնող բաժանիչ մակերեսների օգտագործմամբ (նշենք Միսի կառուցած տաղավարը Բարսելոնայում, 1929)։ Այլ կերպ սամաց, ավանդաբար հաստատված համաշափություններով կատարյալ, ավարտուն ձեզ և նախապես սահմանված տարածության պատկերը փոխարինվեց շարունակ կառուցվող տարածության գաղափարով։ Նկարչության և ճարտարապետության բնագավառներում այս հարցին վերաբերող զուգահեռաբար տարված հետազոտությունները հիմնականում հանգեցին երկու լուծումների. առաջարկվում էր կերտել ծավալն իրարից անկախ պահպանված մակերեսների միջոցով։

<sup>13</sup> L. Benevolo, նշ. աշխ., էջ 530—550, v. II.

<sup>14</sup> J. J. P. Oud. Holländische Architektur, in Bauhausbücher, № 10, München, 1926. J. J. P. Oud. Mein Weg in „De Stijl“, Rotterdam, 1961. H. R. Hitchcock, J. J. P. Oud, Paris, 1931.

առաջարկվում էր նաև շենքը կամ բաղաքը միավոր ծավալներով հորինելու մոռեցումը։ Այս երկրորդը մասսամբ առկա է Ք. Մալեհին երկրաշափական ժամաների հորինվածքներուն և առավել զարգացում ապրեց Յ. Յ. Պուդի, Մ. վան դեր Ռոեի ստեղծագործություններում։ Իսկ քաղաքաշինական առումով այդ լուծումն իր արտադրումը գտավ Կոր վան էեստերենի մշակած Ունակը դեր լինդելի 1925-ի ներկին նախագծում։

Դուզուկը, հետեւելով երկրորդ հասկացությանը, գործառնությունների դասակարգման համաձայն տարրերակեց շենքի ծավալները և հորինվածքային հարաբերություններում կիրառեց համաշափությունների դասական կարգը։ Արդի հարտարապետության պատմության մեջ Դուզուկը համարվում է ֆունկցիոնալ պլաստիկիզմի հիմնադիրը։ Նրա կառուցած՝ Մինքելերս դրացը (1925), հոլանդացի ուսանողի տունը Փարիզում (1937—38), թիենքորֆ հանրախանությը Ռուտերդամում (1929—30)<sup>15</sup> ծավալայնորեն հարուստ ստորաբաժնումներով ներդաշնակ թերզագերի հանդարս ճարտարապետության իդեալը մարմնավորող շենքեր են։ Շենքեր, որոնք թեկուզ մի պահ, բայց, անտարակույս, դասականության ոգու թարմություն բերին արևմտյան մշակույթի խստապահանգ ուսցիունալիզմի ոլորտում<sup>16</sup>։

1920-ից ի վեր Արևմուտքում սրոշակի անցում կատարվեց ուտոպիացից դեպի մեթոդների տեսական սահմանումը և դրանց դրական իրագործումը։ Յ. Յ. Պուդը վերամշակելով Հոլանդական դպրոցի և Դե Ստիլի տեսությունները, նախագծման հիմք դարձնելով դրանք և առանց խախտելու տեղանքի ծավալատարածական իրողությունը, հարազատ մնալով քաղաքի հոլանդական տիպարանությանը, կասուցեց Հոեք Վան Հոլլանդ և Թիֆ-Հեոք բնակելի թաղամասերը։ Ճարտարապետության արտահայտչականության հարցում նեռոլաստիկիզմը մշտապես հարեց հատակագծերի բաժանումներ կատարելու, ճարտարապետական մակերեսներ բնորոշելու երկրաշափական օրենքին։

Թ. վան Դոեզուրգը, որը ճարտարապետություն էր եկել նկարչությունից, 1929-ին ստեղծեց նոր քաղաքի մանրակերտը։ Նրա առաջարկած «երթեւկությունների» կամ նրա առաջարկով «կամրջակերտ» քաղաքը պետք է լինի բոլոր ուղղություններով ընթացող, անսահմանափակ, առանց փողոցների, հողի մակերեսույթից կտրված, բարձրաւիր շենքերով կառուցապատված։ Դոեզուրգը իր «երթեւկության քաղաքը» (1929) ուսումնասիրությունում առաջարկում էր ոչ թե շենքերի տիպեր, այլ ծավալներ տեղադրող կառուցյներ, երթեւկության և հաղորդակցությունների հորիզոնական և ուղղաձիգ ցանցը։ Եվ հենց այսօրինակ կառուցվածքն է, որ նա կոչում է քաղաք։ Ազատ հատակագծի փոքր-ինչ անորոշ գաղափարը Վան Դոեզուրգը փոխարինում է երկու հիմնական ուղղություններով զարգացող, ազատ, պլաստիկորեն հարուստ ծավալների կերպարով։ Ռացիոնալիզմի սահմանները հաղթահարող հոլանդացի այս արվեստագետի տեսակետը՝ Գրովիուսի առարկայակապատճենան, լը Կորրյուզիի վճիռ արամարանականի տեսությունների հետ մեկտեղ, ավելի բեղմնավում պետք է լիներ ապագայի համար<sup>17</sup>։

15 W. M. Dudok, Übersicht über mein Werk, Amsterdam, 1954.

16 Փաստ այն է, որ այսօր Հոլանդիայում նոր հետարքություն է առաջացել այդ մըստքերի շարքը։ 1961-ին «Ստրուկտուր» հանդեսը հրապարակեց Կոռու Բալժուցի և Դիք վան Վուրբումի նախագծերը, որոնցում զարգացվում են Դե Ստիլի ավանդած մտքերը՝ հանգելով նոր, հետաքրքիր լուծումների։

Արդ, նրբ ի հայտ է բիրվում տարածությունը կազմակերպելու կառուցվածքային մի համակարգ, որն օժտված է զարգանալու ունակությամբ, զբար է նման համակարգից հրաժարվել: Տվյալ համակարգի սկզբունքներով են սկսում լուծվել հասարակական-տնտեսական և քաղաքին հատուկ բաղմակովանի հարցեր, որոնք արդի կյանքի և մշակույթի արգասիքն են: Ապադա քաղաքին տրված Սանտ Էլիայի մասնակի լուծումները, ուստովիստների, էլեկտրափոխանունների երևակայական քաղաքների գրավիչ պատկերացումները՝ 1918-ից հետո թեև ննթարկվեցին ուցիւնալիստների մշակած տրամաբանական տարածության համակարգին, բայց և հարստացրին այն: Այստեղից ծնունդ առան գերմանական Զիդլումը, ավստրիական Հոֆբրուկը, Կորուպիկին հանգեց ապագա քաղաքների ծավալատարածական կերտվածքների գեղագիտացված լուծումներին:

Հոլանդական գորոցը Մունդրիանի և Դուեզուրգի ներդրումների շնորհիվ դարձավ այն միակ գորոցը, որին հաջողվեց կերտել տարածական այնպիսի համակարգ, որը Ռիտվլատին հնարավորություն տվեց կառուցել նորակերպ կառույքներ և մենատներ: Օուլիին՝ նախագծել հասարակական բնույթի շենքեր, իսկ թ. վան Դուեզուրգին՝ հորինել ապագայի «կամրջակերտ քաղաքի» կառուցվածքը:

Թթե քանական թվականներին Օուլի, Դուեզուրգի, Կ. վան Էեստերնի, ինչպես և Մ. վան դեր Ուոեի և Լը Կորբյուլիի ստեղծագործությունները կապված էին պատմական, մշակութային որոշակի դրվածքի ազգային տարրեր ավանդների հետ, ապա նրանց ձգտումը նույնն էր, եվ ինչպես շեշտում է Լ. Բենելուն<sup>17</sup>, այդ ճարտարապետներից շահերը սովորեցին կամ ուղղակի աղբվեցին Բառհասուզից, և ի դեմք Գրուփիուսի հիմնած գորոցի, նրանը գտան գաղափարների հանդիպման, իրենց փորձառությունները հովանավորող, եվրոպական նշանակություն ունեցող կենտրոն: Գրոփիուսը հավակնություն չունեցավ նոր ոճ առաջարկելու նա առաջարկեց նոր մեթոդ, որի միջնորդ լավագույն ճարտարապետներին խրախուսեց խորացնել անձնական փորձառությունները, պահպանել շենքերին, կառուցապատռմներին տրվելիք մարդամուտ չափը, տեխնիկական լուծումների պատշաճ պայծառությունը, լինել համեստ, տրամարանական և լծվել հասարակական կյանքը բարեկալվելու և գեղեցկացնելու գործին<sup>18</sup>: Բառհասուզ անվանումը կրող արվեստների գորոցը Վ. Գրոփիուսը (1883—1969) հիմնեց 1919-ին՝ Վայմարում: 1925-ին այդ գորոցը տեղափոխեց Դեսսաու, իսկ 1933-ին Բեռլին, ուր և փակից նացիստների կարգադրությամբ<sup>19</sup>:

Մեթոդաբանական առումով Բառհասուզը հետապնդում էր ճարտարապետության, նկարչության, քանդակագործության և արհեստների այն միաս-

<sup>17</sup> L. Benevolo, նշվ. աշխ., վ. II, թ. 584.

<sup>18</sup> «Мастера архитектуры об архитектуре» («Зарубежная архитектура конец XIX—XX вв.»), М., 1972. Սույն գրքի 323-րդ էջում նեղինակը գրում է. «Գրոփիուսը զուրած չեկալ ուժորմիստական իլյուզիաների սահմաններից, հուսալով, որ քանական ճարտարապետությունը կարող է հասարակության մեջ ներդնել սոցիալական հարաբերությունների բանական և արգար ձևերը»:

<sup>19</sup> Համաշխարհային առաջին պատերազմից հետո Վ. Գրոփիուսը հաջորդելով վան դե Վելդեին, նշանակվում է Sächsische Hochschule für Bildende Kunst, Sächsische Kunstgewerbeschule գեղագիտը, Նա 1919 թ. միաձուլում է երկու այդ ինստիտուտները և հիմնում Հարաբերությունների բանական և արգար ձևերը:

նությունը, որը գոյություն ուներ ակադեմիաների հիմնադրումից առաջ: Բառուառուղի 1919-ին հրապարակված առաջին ծրագրում ասված է. «Մենք բոլոր մարտարապետներ, քանդակագործներ, նկարիչներ, պետք է վերադառնանք արհեստին: Արվեստը պրոֆեսիա չէ, արվեստագետի և արհեստավորի միշտ գոյություն չունի հիմնական տարրերություն: Մենք միասին կազմում ենք դասակարգորեն հավասար արհեստավորների մի համայնք»<sup>20</sup>:

Ճարտարապետության մեջ կառուցելու գործընթացին առաջնահերթ նշանակություն տալը նշանակեց մեկնել առարկայական իրականությունից և հանգել ձեփ մշակմանը, սկսել արհեստներից ու հասնել արվեստին: Նշանակեց իրազեկ դառնալ նյութի և նրա հնարավորություններին, որպեսզի կարելի լինի վերադառնել արվեստի և արտահայտչամիջոցների ճշգրիտ հարաբերությունը Սույն դրույթի վճռական ձևակերպումը կատարեց Վ. Գրոֆիուսը, իսկ դրույթի համալրմանը մասնակից եղան Վան դե Վելդեն, Դոյչեր Վերբերումը, Մութեզիուսը, Բերենսը և որոշ շափով Վիներ Վերբշտետեն: Գրոֆիուսի առաջին գործակիցները գարձան Յ. Խտուն, Լ. Ֆայնինդերը, Գ. Մարրուսը, Ա. Մայերը, Գ. Մուկին, Պ. Քլեն, Օ. Շլեմմերը, Վ. Կանգինսկին, Լ. Մոհոլի-Նահին:

Ինստիտուտի առաջին ծրագիրը նախատեսում էր.

— վեցամյա նախապատրաստական դասընթաց (շինանյութերի և ձեփ խնդիրների ծանոթացում),

— եռամյա դասընթաց՝ նրկու ճյուղերով. տեխնիկական ուսմունք (Werklehre) և ձևագործում (Formlehre):

Ուսանողը ստվորում էր միաժամանակ արհեստավոր վարպետի և տեսության դասաւորի հետ: Գույքահեռ դասավանդումն ուներ սկզբունքային նշանակություն: Եռամյա դասընթացն ավարտողը մի քննություն հանձնելով, ստանում էր արհեստավոր վարպետի դիպլոմ:

— Կատարելագործման շրջան (մոտավորապես երկու տարվա տևողությամբ): Այդ շրջանում արհեստավոր վարպետի դիպլոմ ստացած ուսանողը պետք է փորձնական աշխատանք տաներ հատուկ լարորատորիաներում և շինհրապարակներում, սովորել ճարտարապետություն և շինարարություն: Մի քննություն հանձնելուց հետո ուսանողը ստանում էր արվեստի վարպետի դիպլոմ:

Արհեստից արվեստի հասնելու ճանապարհով Գրոֆիուսը ձգտում էր հաղթահարել հիմնական այն հակագրությունը, որ դեռևս գոյություն ուներ համբարության և արդյունաբերության միշտ:

Ռոմանտիկ հասկացությամբ ստեղծագործել նշանակում էր ներհայեցողության ճանապարհով բնության ստեղծագործ ընթացքին մասնակից դառնալ և այդ վիճակի լուսակություններով օժաված մարդկանց ընտանիում: Գրոֆիուսը շրջեց այդ հասկացությունը, բնորոշեց արվեստի գործը որպես վարից դեպի վեր, արհեստից դեպի արվեստ զարդացող, շարունակ կատարելագործման ենթակա գործունեության արգասիք: Հարկ էր, ուստի, վառ պահել իրականությունից ստացած տպավորությունների թար-

<sup>20</sup> H. Bayer, W. Gropius, Program des Staatlichen Bauhauses in Weimar, 1919, Boston, 1952, p. 16.

մությունը, խուսափել գեղագիտական, գաղափարանշական պայմանավոր-վածություններից և ռասնակից դառնալ առարկան մշակելու և կամ օգտագործելու գործիք:

Զեր արվեստի բնագավառում գործելու արգասիք է: Արվեստը ինքնագլուխություն է և ինքնահաստատում: Արվեստի առարկան, երբ օժտված է մինում փոխկապակցություններ հաստատելու առարկայական ունակությամբ (Sachlichkeit), վերածվում է իրականությունը բնորոշող միջոցի և որպես այդպիսին սարածվում և թափանցում է հասարակական կյանքի դրվագի մեջ, կերպագորում արտաքին աշխարհի հետ կայսցող փոխկապակցությունները: Եվ եթե նյութի ձևային բնորոշման հարցում մշակելու դորձրնթացն ունի գեղեցիկի նշանակություն, ապա զեղեցիկը կորցնում է կանխորոշիչ իմաստը և որոշիչ է դառնում որակի խնդիրը նրան հարակից, պատճառականորեն հետեած օգտավետության (Nützlichkeit) հարցը ստանում է առարկա-իրականություն կապակցություններ հաստատող արժեք: Բառուառուղի մեթոդը կարելի դարձեց նոր շաղկապ ստեղծել նյութի, ձևի և զործառնության միջև, այդ կապակցությունը հասցնել օրգանական ամբողջության աստիճանին, և այդ կերպ որակի հասցրած առարկան ներդնել իրականության ռացիոնալ կառուցվածքի համակարգում: Որակը, այս իմաստով, ստանում է իրը կեցության հետ շաղկապող հատկանիշի նշանակություն:

Բառուառուղում սարվող աշխատանքները կատարվում էին արդյունաբերական կենտրոններից ստացվող պատվերների հիման վրա: Այս հանդամանքով վերացավ ակադեմիական կարգով ընդունված՝ վարպետը աշակերտից տարրերելու հասկացությունը և հիմք դրվեց հասարակականորեն հավասարեցված կոլեկտիվ աշխատանքի: Տեսության և ձեռագործ աշխատանքի զուգահեռ մշակումը նպաստեց, որպեսզի վերանան արենստների և արդյունաբերության միջև գոյատևող հակասությունները և արհեստը համբարության պատմական փուլից անցնի նյութական և հոգեկան արժեքների նոր միասնություն առաջացնող արդյունաբերական փուլին:

Բառուառուղի գործունեությունը բազմակողմանի եղավ: Տուրինզի զեկավարների պահանջով 1923-ին կազմակերպվում է դպրոցի աշխատանքների ստուգատես-ցուցահանդեսը: Դասախոսություններով հանդես են դալիս Գրոդիտաց, Կանդինսկին, Օուլը, կատարվում են Հինդեմիտի, Բուզոնիի, Ստրավինսկու, Քրեների ստեղծագործությունները, ցուցադրված են Շլեմերի ձեւավորած բալետները: Բառուառուղի ուժերով կառուցվում է գրող և նկարիչ Գեորգ Մուգանի նախագծած «Հայուց ամ Հորն» մենատունը՝ Բրոյերի կառուցներով: Մենատունը նախատեսված էր որպես սերիաներով արտադրվելիք, Վան դե Վելդեի շենքի շուրջը իրագործվելիք թաղամասի բնակելի միավոր բջիջ:

Հասարակարդի միավոր-շահանիշի արժեքավորում սաացած բնակելի մակերեսը կազմեց փոխանցման այն գործոնը, որի միջոցով ճարտարապետությունը ստացավ քաղաքաշինական իմաստավորում: Ֆունկցիոնալ ճարտարապետության հասկացությամբ ձևը այլևս չէր լինելու տարածությունը պատկերող կայուն կերպար, այլ՝ տարածության մեջ զարգացող, կյանքի կշռականությամբ ընթացող ծավալական սահմանում:

Լ. Բ. Ալբերտին մեկնարանում էր մակերեսը որպես սահմանվածք անսահմանից բաժանող միջոց, իսկ հարթությունը որպես տարրեր արժեքի

տարածական խորհություններ առաջացնող հեռանկարային նշանակություն  
ունեցող տարր<sup>21</sup>:

Դիմք, մակերեսը, գույնը մեկուսի ամնված իմաստազորկ են, մինչդեռ  
տարածությանը հարաբերված՝ նրանք բնորոշում են տարածության պատ-  
կերի, նրա ընդարձակությամբ ծավալվող գործունեությունը: Այս առումով  
Բայովնառուզում Կըի և Կանդինսկի անցկացրած դասընթացների իմաստն  
այն էր, որ ուսանողին ետ էր պահում ընդունված արտահայտչամիջոցների  
օգտագործումից, նրան մղում էր ճարտարապետական լեզվի նոր տարրերի  
հայտնաբերման: Մշակված ձեզ ինքնին արդեն իրականություն է, ուստի  
հարկ էր վերագտնել նոր իրականությանը համապատասխան ձեզ: Դասա-  
կան հասկացությամբ վերաբերված բնության կայուն պատկերին, Դն  
Սո.իլը և Բառհառուզը հակագրեցին շարունակ փոփոխվող բնության իրողու-  
թյունը: Արտացոլման օրենքի հիմունքով, երկրաշափական պատկերը  
այս չէր բնորոշում տիպարանորեն հաստատում ճարտարապետական ձեզ,  
աչք ենթարկված փոփոխականության օրինաշափություններին՝ պատկերը իր  
հերթին բնորոշում և կազմակերպում էր տարածությունը: Այս իսկ տեսա-  
կետից ճարտարապետությունը վերածվում էր տարածությունը շարունակ  
վերամշակելու իմացության: Մերժելով արդեն վավերացված ձեւերի այժմեա-  
կանությունը, Բառհառուզի ուսանողները ձգտում էին լուծելու նախագիծն իր  
բոլոր մանրամասնություններով՝ կահավորումից մինչև շենք, շրջապատ և  
քաղաքի Հարկ էր տարածությունը բնորոշել առարկայացվող ամեն մի ման-  
րամասով, հարկ էր սահմանել և անցնել հաջորդ սահմանումին, ինքնա-  
սահմանումին և քաղաքակերտել երկիրը: Ահա մի ընթացք, մի գործունեու-  
թյուն, որտեղից բխելու էր մշակույթի տվյալ ասահմանին համապատասխան  
ձեզ և գեղեցիկի բնորոշումը:

Դինամիկ նման հասկացության ոլորտում, առարկան, շենքը, քաղաքը,  
որպես կուանտաներ, պատկերում էին անսահմանի սահմանված գաղափա-  
րությունիւսի համար շենքը ծավալային սահմանում էր, նրա գեղագիտա-  
կան նշանակությունը կախում ուներ բնակվելու, այսինքն մարդու վարքի  
աստիճանից: Կյանք-արվեստ շաղկապը պարտագրում էր արվեստագետին  
մասնակից լինել կյանքի բոլոր երեսությներին: Սա եղավ Վ. Գրովիտիսի իր  
ուսանողներին թողած պատգամը, նրան ստեղծած Բառհառուզի նշանակու-  
թյունը Արևմուտքում և Միացյալ նահանգներում:

<sup>21</sup> Սույն հասկացության ցայտուն օրինակներ են Ալբերտի Սանտ Անդրեան (Մանտովա, 1470) և Ֆ. Բրունելլեսկի Սանտո Սպիրիտո եկեղեցիները, (Ֆլորենցի, 1444):

Արդի ճարտարապետությունը ոճական հասկացության ասումով նախագծողին շի մատուցում արդեն պատրաստի լուծումներ, այլ հաղորդում է մեթոդաբանական ցուցմունքներ, այսինքն, լուծումների հանգելու միջոցները: Նոր ձևերի պաշարը կամ ինչ-որ ուղղության տեսական դրույթները չեն կարող երաշխափորել նախագծի հաջողությունը, քանի որ կյանքի իրականությունը շարունակ փոփոխվում է, և ամեն մի նախագծի վերածվում է տվյալ պահից կամ պահանջից արտաքրված անմիջական փորձառության: Գործառնությունը օժուված է առարկային բնորոշ հատկանիշները (օգտավետություն, կառուցղական ճշտություն) արվեստի գործին հաղորդելու բնույթով: Բայց գործառնությունն առավելապես մարդկային հասարակական պահանջները արվեստի գործում արտաքրելու տրամարանական շափանիշ է: Դասական ճարտարապետության մեջ դեռ Վիտորվիոյից ծանոթ գործառնային դրույթները՝ «ուտիիտաս» և «ֆիրմիտաս», մասնակի զարգացում շունչցան: Պատճառը այն է, որ գեղագիտական կարգի գործոնները և ավանդաբար հաղորդված ձևընկալումն ամբողջությամբ առած կազմում են ձեր մեջ պարփակված անխախտելի միասնություն:

Հետաքրքիր է նշել, որ գործունեության հասկացությունը՝ թեկուղ միամիտ-էմպիրիկ ընկալումով, ավելի բարձր արդյունքի էր հասել բնագագարար զարգացում գտած ժողովրդական ճարտարապետության բնագավառում, և սա է պատճառներից կարևորը, որ արդի ճարտարապետները ստեղծ ներշնչում են գտել ժողովրդի արվեստում:

Ինչպես հայտնի է պատմությունից, երբ առաջանում է մշակութային ճգնաժամ, գործառնության գաղափարը զարգանում է ու ստանում տիրապետող մշակույթի գեմ պայքարելու նշանակություն: Այս յուրահատկությանը ծանոթ էին լուսավորչականները, երբ գործառնության անոնից պայքար էին մղում բարոկկոյի և ոոկոկոյի դեմ: Նույնը կատարվեց և արդի շրջանում: Մի քանի ճարտարապետներ այդ գաղափարներով՝ ներշնչված հիմնեցին, այդպես կոչվող, Փոմկցիոնալիստ ուղղությունը: Գերմանիայում Փոմկցիոնալիզմը մարմնավորում էր կապիտալիստական և կայսերական շրջանի ճարտարապետության ամենաառաջնային ուղղությունը: 1926-ից սկսած այդ ճարտարապետները կազմել էին քաղաքական հետադիմական հոսանքին հակադրող արվեստի բնագավառում պայքարի մղող միակ ուժը:

Ճարտարապետության պատմության շրջափուլերում Փոմկցիոնալիզմն ունեցել է կարգ հաստատելու սկզբունքային նշանակություն և հանդես է

սկել՝ կատված մնալով պատմական, միջավայրի ենթակայական բաղադրիչ-ներին: Իրարից տարբեր այս բաղադրիչներով հանդերձ ֆունկցիոնալիզմի հիմնարար գաղափարը ստացել է բաղմապիսի կերպարանավորումներ, դիցուր Սևմագերի պատմականացված ճարտարապետությունը, Յուգանսութիւլը, Ար Նուվոն, Զիկարոյի դպրոցի ոճը, Մութեսիուզի «բաղենիական տան ոճը», օրդանականը, լը Կորրյուզիի առաջին շրջանի կուրսուսական ձևերը, Բաուհաուսը<sup>1</sup>: Գործառնության գաղափարից ելնելով, մի շարք ճարտարապետներ մշակել են նախագծան դիտական մեթոդ, որը հնարավոր էր դարձնելու ուղինաւոլ և որակլալ նախագծեր հորինել՝ ենթակայականի անշուռականություններից անդին:

1923-ին Գրոփիուսը մշակեց գործառնական պայմանների ձևակերպումը, հիմնված, այսպես կոչված, գոյարանության (Wesensforschung) գիտական մեթոդի վրա: Հաննես Մայերը (1889—1954) ավելի առաջ գնաց. եթե մինչ այդ գործառնության հատկանիշներ էին համարվում տեխնիկան, շինանյութը և օգտագետությունը, ապա նա ընդարձակեց այդ հասկացությունը և որպես գործառնության հատկանիշ ընդունեց հասարակական պահանջները և հասարակական կառուցվածքը:

Եինարարության բնագավառում արդյունաբերական մեթոդների կիրառումը, արհեստական շինանյութերի օգտագործումը, տնտեսագիտությունը և քանակական թվականների բնակելի տների մասսայական շինարարությունը դեկավարվում էին ֆունկցիոնալիզմի սկզբումբներով: Այս առումով շինարարությունն արդյունաբերականացնելու կարելոր գործը կատարվեց Գերմանիայում: Գուգահեռաբար նույն ուղղությամբ էին աշխատում Հոլանդիայում՝ Դե Մաիլ (ճարտարապետներ՝ Մ. Մ. Պ. Օուդ, Մ. Շտամ), իսկ Սովետական Միությունում՝ էլ Լեսիցկի և Վիսուտեմաս, Վիսուտեին դպրոցները<sup>2</sup>:

Չնայած ֆունկցիոնալիզմի կատարած որոշակի դերին, այնուամենայնիվ երբեք չի կարելի այն համարել արդի ճարտարապետության կազմակիրմանը նպաստող բացարձակ գործոն: Զեք, ինչպես ասում է Հերինգը, արտահայտություն է և ոչ թե գործարանային արտադրանքի արդասիք: Այս հարցը կարելոր է արդի ճարտարապետության ընդհանուր գնահատման համար Միակողմանի մեկնարանությունները կարող են մզել մասնակի երեվությների մասնակի ուսումնասիրմանը, սակայն դրանց ընդհանրացումը կարող է աղավաղել ճշմարտությունը: Ճիշտ է, լը Կորրյուզին գրում է՝ բառուն բնակելի մեքենա է», բայց առաջարկում է և երկրորդ գրությը՝ «Ճարտարապետությունը գտնվում է օգտագետության հարցերից անդին, ձևը, մշակելու ընույթը, տիպն են որոշում ճարտարապետության հշմարիտ լինելը»:

Զեք գիտական մեթոդին հաղորդակից դարձնովը և այդ միասնությանը իմաստ հաղորդովը մարդկային հասարակությունն է: Միաժամանակ հարկ է ընդունել, որ տեխնո-տնտեսական, գործարանային շինարարության, ինչպես և ձեւամշակման խնդիրների իրարից տարբեր լրտումները ներկայացնում են արդի ճարտարապետության առանձին կողմերը: Ավելի ընդհանուր ձևով, դրանք վերաբերվում են արդի շնորթը, թաղամասը, քաղաքը ձևակերպելու հարցերին:

<sup>1</sup> Hannes Meyer, Bauen in „Bauhaus Zeitschrift für Gestaltung“, II Jahrgang, № 4' 1928. Dessau.

<sup>2</sup> El Lissitzky, La ricostruzione dell'architettura in Russia, Firenze, 1929, p. 23.

Ճարտարապետական հորինվածքի սկզբունքները հիմնավորելու հարցում Գրոփիուսը հրաժարվեց օգտագործել ձևային որեւէ ապրիորիզմ և նման դիրքորոշումները ենելով, հեղաշրջեց հորինվածքը դասական կարգը, սկիզբ դրեց ճարտարապետականորեն գործելու նոր մեթոդականությանը, որը հաճախ կրում է Փունկցիոնալիզմ անվանումը: Նման դրվածքի համաձայն, միասնություն է առաջանում գործառնայինի և ձևայինի միջև, իսկ ստեղծագործական պահը նույնանում է կառուցղականի հետ: Սա է ստեղծագործության ընթացքն առարկայացնելու գրոփիուսյան ճանապարհը: 1925—26 թթ. Գևսասու քաղաքում Գրոփիուսի նախագծով կառուցղած Բաուհաուզի շենքը կարելի է համարել նշանակած հասկացության ամենապիշտուկ արտահայտությունը: Որոնք են շենքը բնորոշող զինավոր հատկանիշները. երկու փողոցների հատման հանգույցին կից տեղադրված շենքը եռաթիւ է, բաղկացած է երեք ծավալից՝ դպրոցական շենք, արհեստանոցներ և հանրակացարան: Գրանցից ամեն մեկը կազմում է եռաթիւ մի հատվածը: Նման լուծումով բացահայտ է գործառնությունների բաշխումը և հնարավոր է դառնում հոսանքուակացությունների առաջանակը ծավալների և պատարա տարածությունների միջև: Լսարանների և արհեստանոցների շենքերն իրար են միացված դրանց միջև անցնող փողոցի վրայով ձգվող երկնարկանի կամուրջի միջոցով, ուր տեղադրված են վարչական սենյակները և ճարտարապետության բաժնի լսարանները: Արհեստանոցները հանրակացարանի հետ կապված են ավելի ցածր, ազատ սյուների վրա հենված միհարկանի շենքով, ուր տեղադրված են հավաքույթների դաշինք և սեղանատունը:

Գործունեությունների ճշգրիտ բաշխումը, ձևային տարրերի պատշաճությունը գեղագիտական և բարոյական արժեքավորում են տալիս աշխատանքը և դաստիարակությունը ներկայացնող այդ կենորոնին: Նման պարունակությունը արտաքերող ձեզ չի կարող լինել մոնումենտալ, այլ առաջացրած կապակցությունների առումով և մարդու չափանիշին համապատասխան, ստանում է քաղաքաշինական նշանակությունը. Մարդ-գործունեություն-շրջապատ հարաբերումը շեշտվում է ճակատների մշակումի միջոցով: Այսպես, լսարանները և վարչական շենքերն ունեն լուսամուսների գոտիներ, արհեստանոցներն ապակեպատշած են առաջին հարկից դեպի վեր, հանրակացարանն ունի մեկուսի պատուհաններ և պատշգամբներ: Արտաքինից պատշ-լուսամուտ թաղանթը ձգվում է երկրորդ հարկից դեպի վեր՝ սյուների գծից դուրս երկարած դիրքով: Առկա է եռաթիւ շենքի բազմալեզու մշակում և տարածություն-ժամանակ քաղաքարի առարկայացում: Շենքի հակատային արտահայտությունը փոխարինված է դինամիկ դիտարկումով՝ Գրոփիուսի խոսքերով «...առանցքային սիմետրիայի անհիմասս կենծիքը զիջում է իր քայլը ասիմետրիկ, ազատ խմբավորված, կշռական, աշխատույժ հավասարակշռությանը»<sup>3</sup>: Գրոփիուսը վերացրեց կայական սիմետրիան, նրա տեղը դրեց փոխակացությունը, այլ կերպ ասած, ձեկի դիմոկրատացումն առաջացնող գոլիսավոր գործոնը: Հիմնական նշանակություն ունեցող այս քաղաքարի համաձայն, ձեկի և գործառնության կապը հաստատվում է շենքի շրջապատում

<sup>3</sup> W. Gropius, The New Architecture and the Bauhaus, London, 1936, p. 56.

և նրա ներսում ծավալվող կյանքի աշխատությամբ, իսկ եթե կտրվի այդ կապը, այսինքն վերանա կենսարեր միշավայրը, շենքը կոռցնի իր ամրող-ջականությունը:

Միշավայրը ննրեին և արտաքին ուժերի դաշտ է, ուր ձևավորվում, մարդին է ստանում ճարտարապետական միտքը: Նման ընթացքը զեկավարող զլսավոր գործուներից է համաշափությունը, որը Հ. Վայլի կարծիքով բնության և արվեստի կազմավորումը կանոնավորող ստորոգություն է, գիտությունը արվեստին զողող բնականոն երևույթ:

Հայտնի է, որ եռաձև կերպարին հնարավոր է շարժունակություն հազորել, եթե բեկվեն թեմերի ծայրամասերը (սվաստիկայի նման): Արդ Բառուհուուրը եռանցք շինություն է, շենքերն իրար միացած են կամրջանման կառուցներով: Նման լուծումը և ութեակի կայուն վիճակը վերափոխում է դիմամիկի, տարածությունը ստանում է «բաց» լինելու, այսինքն կապակցություններ առաջացնելու հասկանիշ:

Ֆունկցիոնալիստների հարատապ հարցերից մեկը տարածությունը մարդկայնացնելու խնդիրն էր, այսինքն արդի մարդու գոյաբանական պայմանները առարկայուրեն սահմանելու: Ինչպես հայտնի է, ճարտարապետական տարածության հիմնական գաղափարը ընկալվում է երկակիուրեն՝ մեկ որպես ֆիզիկական տարածության հատված, ապա որպես կայուն տարածության ամբողջություն, որն իր բնույթով ներուժություն դիմամիկ է: Արդ, նշված սահմանումներից առաջինը վերաբերում է մարդուն՝ որպես ֆիզիկական տարածության միավորի, մյուսը՝ հասարակությանը, որպես տարածության ամբողջություն: Որոնք իմաստ են հաղորդում այն ընթերաշափերին, որոնց միջոցով միավոր տարածությունը կապվում է ամբողջական տարածության հետ, մարդուն հաղորդակից դարձնում ճարտարապետությանը: Նշված կապը հաստատող գործուները (մի կողմ թողնելով գործառնությունների պահանջները) հիմնականում երկուսն են: Մեկն այն է, որ ձև ստացած տարածությունը առաջացնում է հոգեբանական բնույթի զգայական հակառակություններ (գոյակցական կապ), մյուսը՝ կերպար ստացած տարածական արժեքների վայելում (գեղագիտական հաճույք):

Նշված հարցերի ամենացայտուն ձևակերտումը ստեղծեց Գրոփիուսը, 1927-ի «Տոտալ թատրոն» (Totaltheatre) հասկանշական անվանումը կրող նախագծով: Էրվին Պիսկատորի համար արված նախագիծը հետապնդում էր հետեւալ միտքը՝ վերացնել բեմին արված տուփի ձևը: Նման ձևավորումը վերածնդի ժառանգություն էր և համապատասխանում էր այդ շրջանի մարդու կայուն հեռանկարի այն հասկացությանը (Պալլադիոյի օլիմպիական թատրոնը, 1585), որ հանդիսատեսին պարտագրում էր դիտարկման հաստատուն, միակողմանի կետ:

Արդ, տարածություն-ժամանակ չափանիշը, որպես իրերի վրա ազդող կենսատու գործոն, արդի ըմբռնմամբ առավել ևս բացասում է տարրերի հարաբերությունները կայական համարելու գաղափարը և առաջադրում տարրերի միջն հաստատող դիմամիկ հարաբերությունների առարկայաց-

<sup>4</sup> H. Weyl, La Simmetria, Milano, 1962, p. 73.

<sup>5</sup> Այդ շրջանին հատուկ էր բեմադրողի և ճարտարապետի համագործակցությունը, հիշենք Պիսկատոր—Գրոփիուս, Ռայնհարդ—Պեոլցիկ, Մայերհոլդ—Վախթանգով, Բարհին փոխգործակցությունը:

ված իրողությունը։ Սույն դրույթի հիման վրա Գրուիիուսը ստեղծում է «Հեղող», բայց շարժունակ բեմը՝ թատերական բոլոր տիպի փորձառությունները իրագործելու կարելիությամբ օժտված տարածությունը։ Նրա նպատակն էր «Հանդիսատեսին մասնակից դարձնել ողբերգության գործողությանը»<sup>6</sup>։ Դասական տեղադրում ունեցող գլխավոր բեմի առջևի հատվածում նա ստեղծեց շրջանաձև, շարժական երկրորդ բեմը, որը կես պտույտ կատարելով կարող էր այնպիսի դիրք ստանալ, որ հանդիսատեսները շրջապատեն այդ տարածությունը։ Ավելին, ամբողջ դաշինքը առնված է «օղակաձև բեմի» մեջ և հատուկ բաժնումների բացվելով հանդիսատեսը գտնվում է թատերական իրողության կենտրոնում։ Դինամիկ բեմի տպավորությունը ամրազացնելու նպատակով Գրովիուսը մտադիր էր դաշինքի եղրապատերի և թափանցիկ վարագույնների վրա արտաքրել թատերական իրողությունն ամրողացնող կինեմատոգրաֆիկ պատկերներ։ Նա լուսի միջոցով կատարում էր վերացական տարածությունն եռարեմ այս թատրոնը, ուր թատերական պատրանքը ռացիոնալ ճանապարհով նույնանում է իրականությանը, ստանում է կյանքի մի հատվածին տարածական սահմանում տալու նշանակություն։ Գրովիուսը ձգում էր արհեստական միջոցներով վերականգնել բնության, հանդիսատեսի և բիմական իրողության այն միասնությունը, որը գալիս էր հույններից (բացօթյա ամֆիթատրոն), առկա էր միջնադարում, երբ ներկայացումները տեղի էին ունենում ժողովրդի մասնակցությամբ՝ հրապարակում կամ շուկայում («Քերմանական բեմ» Reliefbühne) և որը վերացավ Վերածննդից հետո նոյն համոզմունքներից մղված, բայց տարբեր ծրագրերով, Գրովիուսը նախագծեց Խարկովի պետական թատրոնը (1930) և Մոսկվայի Սովետների Պալատը (1931)։ Այս նախագծերը, ինչուս և Տոտալ թատրոնինը՝ մնացին չիրագործված։

Ենթը բազմակողմանի պահանջների կարելիություններով օժտելու խրնգիրը ավելի հրատապ դարձավ մեր դարի քսանական թվականներին՝ կապված տարածության միասնությունը պահպանելու հետ։ Ֆունկցիոնալիստների տեսակեառվ, այս հարցը կրուծվեր, եթե հաղթահարվելին շինարարական բնույթի որոշ գժվարությունները։ Անհրաժեշտ էր շենքի կրող կառուցվածքն ուղղակիորեն հաղորդակցության մեջ դնել շրջապատի հետ, հարկ էր հնարավորին շափ վերացնել շենքի ներքին միջավայրի և բնության միջև գոյություն ունեցող բաժանումը։ Սա նշանակում է, որ չէր կարելի տեխնիկայի նորագույն նվաճումները կիրառել ուղղակիորեն, այլ հարկ էր նրանց տալ նոր մեկնաբանություն, հարկ էր անշատել պատը կրող կառուցից, Անշատման գաղափարը սկիզբ առավ վիեննական սեցեսիոնիստներից, շարունակվեց ռացիոնալիզմի վաղ շրջանում և հանգեցրեց ձևային ըմբռնման և շինտեխնիկական խնդիրների նոր լուծումների՝ կրող կառուցվածքի և շենթը պարփակող մակերեսների միջև հաստատվող նոր հարաբերությունների

<sup>6</sup> S. Giedion, Walter Gropius, Teufen San-Gallo, 1954, p. 63.

<sup>7</sup> Ֆրեդ Քիսերը 1923—24-ին արդին ուսումնասիրել էր գինամիկ բեմի կարելիությունները և ինքը եղավ առաջինը, որ օդապորձեց տարածական բեմ (Raumtheater) անվանումը, և այդ ըմբռնմար 1923-ին Բելինում բեմադրեց Օնեյլի՝ «Թռն արթան»։ Քիսերին են պատկանում «անսահման թատրոն»-ի (Endloses Theatre) գաղափարը, ինչպես և «մի բնել երկու դաշինք թատրոնի նախագիծը, կատարված Բրութինի համար, և Վուլստորի «Համաթատրոն» (1926)։

Հայտնաբերման: Գրոփիուսի եռահարկ Ֆազուս Վերքի (1911) կառուցի կրող Համակարգը մետաղից է, հակատները ապակչա թաղանթից: Այն հանդամանքը, ըստ որի ապակեպատը զուրկ է կրելու ունակությունից, շեշտակիուրեն արտահայտված է շննդի անկյուններում, ուր բացակայում են անկյունային կրող սյուները:

Լը Կորբյուպիին 1914-ին առաջարկում է Դոմ-Խոռ երկաթբետոնով միաձուլված, կրող համակարգը (սյուներ, հարկերի բաժանման հարթակներ, սանդղաշար): Մետաղի կառուցվածքի նմանությամբ արված այս համակարգը հնարավորություն է տալիս վերացնել կրող ներքին պատերը և իրադորձի դարձնել «աղատ հատակագիծը», այսինքն՝ շննդի ներքին բաժանմաների անհամար համակցումներ և լուսամուտների տեղադրում ըստ գործառնությունների:

Լը Կորբյուպիին «Մինիմում առևն» (maison minimaum) հարցի լուծմանը ձևանամուխ լինելուց առաջ, կառուցում է մի քանի մենատուն՝ վոկուսոն վիլան (1922), նկարիչ Օգանֆանի առևնը, Լա-Ռոշ Փաններե (1923) և Իպշշից (1924) տները: Այնուհետև նա ձեռնամուխ է լինում տուն-բնության շաղկապը հաստատող խնդրի լուծմանը և 1926-ին ներկայացնում է իր և Պ. Ժաններեի կողմից մշակված «արդի ճարտարապետության հինգ կետեր» բանաձեկը: Այդ գրությունները, անշուշա, յուրօրինակ ներդրումներ են և արտացոլում են ռացիոնալիստորեն հատկանշված ճարտարապետական ուրուցնելուն որոշագրելու, բնդանրացնող սկզբունքներ մշակելու ձգուումը: Սակայն, թեև նշված գրությունները կազմում են այլ ճարտարապետների կողմից նախօրոք մշակված սեխնիկական հնարավորությունների, լեզվական արտահայտությունների բառապաշարը (Գրոփիուս, Գարնիե, Մեսսել), այնուհետք «հինգ կետերը» իրենց մեջ կրում են ճարտարապետական նոր ձեակերտումներ մշակելու անսահման հնարավորություններ: Ահա այդ կետերը՝ «սպիտիս», տանիք-պարտեզ, պատ հատակագիծ, հորիզոնականորեն ձըդված լուսամուտ և պատ ճակատ:

Օգտագործելով արդի տեխնոլոգիայի բազմակողմանի հնարավորություններով օժտված «հինգ տարրերը», հնարավորություն է ընձեռվում շննդը հենենել նուրբ սյուների վրա, իրագործել հարթ ժամկետի հարթ աղատել ավելորդ տեղ գրավող և ավելորդ բեռ հանդիսացող պատերից, լուսամուտները բնդայանել ըստ ցանկության: Ասել է, թե՝ շննդը նախագծելու աղատության սահմանումներ, որոնք հնարավորություն կտան ճարտարապետին բավարարելու ոչ միայն գործառնական պահանջները, այլև մշակելու շննդը բանդակային կամ երկրաշափականորեն հստակ ձևերով:

<sup>8</sup> Le Corbusier et P. Jeanneret, Le cinqes points d'une architecture nouvelle, in Oeuvres complètes 1910—1929, Zürich, 1937, p. 23.

<sup>9</sup> Պիլոտի ֆրանսերն (piloti բառից) լատիներեն՝ (pila՝ փելա) նշանակում է վաշոված հաստ ցից: Պիլոտիները օգտագործվում են որպես հենայուներ այն դեպքում, եթե պահանջ է ներկայանում տանը փողոցի կամ շրի մակերեսութից ավելի վերև պահել: Հնագույն օրինակներից են Անդիայում, Սկանդինավիայում Մելոութիսիան շրջանի ցերերի վրա բարձրացված, զետինից անշատված հստակով խօճիթները: Արդի ճարտարապետության մեջ առաջին երկաթբետոնին պիլոտիները օգտագործել են Գարնիեն և Պետրեն (Ֆրանկլին փողոցի տունը, Փարիզ, 1903), լը Կորբյուպիին՝ Պուասիի Վիլա Սուպլուայում (1929—31), Փարիզի Շվեյցարական հանրակացարանում (1932), Միացյալ Ազգերի Պալատի նախագծում (1927—28): Որպես ընդհանրացում գտած տարր, պիլոտին օգտագործել է Կաստիլյոնի, Նիմայերի, Բանդերի կողմից:

Լը Կորբյուզիեի ըմբռնմամբ նկարը, շենքը, քաղաքը հարկ է կերտել ձեկի նույն հասկացությամբ։ Այս խնդրում նա նեկնեց նկարչությունից ու հանգեց ճարտարապետությանը։ Պատկերայինի (Փիգուրատիվ) և վերացարկվածի սահմանագծում կանգնած նրա նկարչությունը վերարտադրում է վառ գույներով աշխուժացած, առանց ծավալային շեշտավորումների հյուաված, իրերի աշխարհից կարծես թե պատահաբար առնված առարկաներ, որոնք իր իսկ խոսքերով՝ «բանաստեղծական հակադիցություններ են առաջացնում»։

Հայտնի է, որ լը Կորբյուզիեի նկարներն ունեն իր ճարտարապետության ձևաբանական նույն արմատը, որոշ նկարներ նման են շենքերի նախագծերին կամ ներքին դասավորումներին։ Այս ասումով ուշագրավ է Խուան Գրիսի կարծիքը. ըստ նրա նկարչական հորինվածքը նման է «հարթ և գունավոր ճարտարապետության»։ Այս դրույթը ընդունել էր լը Կորբյուզիեն և զարգացրել իր 1923-ին լույս տեսած «Դեպի ճարտարապետություն» (Vers une architecture) գրքում նա գրում է. «Սավալը և մակերեսը տարբեր են, որոնց միջոցով հայտնվում է ճարտարապետությունը։ Սավալը և մակերեսը սահմանափակված են հարթությամբ։ Հարթությունը ծննաող է»<sup>10</sup>։ Հարթ «պլան» բարը ֆրանսերենում ունի երկակի իմաստ՝ հարթ մակերես և հատակագիծ, եթե Գրիսի վերը բերված արտահայտության մեջ պլանն ունի առաջին նշանակությունը, ապա լը Կորբյուզիեի համար՝ երկրորդը։ Մեր կարծիքով լը Կորբյուզիեի մոտ «պլան» բարը ներառում է իր մեջ նաև նրա նկարչության և ճարտարապետության միջև շաղկապիշտ տարր լինելու իմաստ։ Ասում ենք նրա, որովհետև պուրիզմը տարածում չունեցավ և մնաց որպես արվեստի ուսցիոնալիստ փոլին հատուկ հասկացություն։ Հարկ է, սակայն, նշել, որ կորբյուզյան արվեստի լեզուն հասկանալու համար միշտ պետք է նկատի առնել երկու գործոն՝ նկարչականը կամ ձեկի ազատ մշակումը և «կարտուզյանը», որը կապված է գործառնությունների, շենքի, քաղաքի հորինվածքը կանոնավորող գծագրային կարգի և իր առաջարկած «Մոդուլորի» հետ։

Հիշված սկզբունքները, որ լը Կորբյուզիեն ներդրել է քսանական թվականների ամենակարևոր գործերում, կազմում են այդ շրջանի նրա ճարտարապետության ընդհանուր բնութագիրը։ Այդ գործերից Պուասսի վայրում տեղադրված «Վիլլա Սավուան» կառուցվել է 1928—31-ին։ «Ճինդ կետերի» հիմունքներով նախագծված վիլլան մարմնացնում է նաև այլ գործուներ՝ կապ պուրիստ նկարչության հետ, երկրաշափական և ազատ ձևերի համադրում, շենքը որպես «ճարտարապետական ճեմուղի» դիտելու տեսակետ։ Զեարանական առումով շենքը կազմավորվում է պիլոտիների ցանցակերպ դասավորությունը։ Միմյանցից նրանց ունեցած հեռավորությունը (4.75 մ) սահմանված է՝ ելնելով շենքին մոտեցող, կանգառի համար կես շրջան անող մերենայի գրաված տարածության շափով։ Մեքենայի կանգառում կառուցված է կիսարողը, քիչ երկարած ծավալ, ուր տեղադրված են կանգառը, մի փոքր բնակարան, նախամուտը, մի սանդուղք և շենքի առաջարկած «Մոդուլորի» հետ։

<sup>10</sup> Օդանֆանը և լը Կորբյուզիեն 1918-ին (Après le cubisme մանեֆեստում) ազգաբարեցին կուրիզմ ց հետո եկող արվեստ պեղություն, նրանց զեկավարած, 1920—1925-ին լույս տեսնող «Եսապրինուալ» (Esprit nouveau) ամեազիբը դարձավ այդ ուղղության պատուական հանդեսը։ C. L. Riggiani, L. Corbister a Firenze, Firenze, 1933, p. XXVII. «Controspazio», 1971, № 4—5.

նրա կենտրոնական միջուկը կազմող թեք և մուլտին: Վիլլայի գետնահարկի քառակուսին, նրա մեջ առնված կիսաբոլորի հորինվածքներն առկա են կը Կորրյուլիկի նկաներում, հետեւաբար, նկարչականից դեպի ճարտարապետական փոխանցումը կատարվում է գործառնության միջնորդությամբ: Վիլլա Սալուայի վերն հարկի երեք կողերի երկայնքին տեղադրված են ընդհանուր դաշտին, երեք ննջասենյակները և սպասարկումները, իսկ չորրորդ կողմում՝ բացօթյա հողահարթակը: Լը Կորրյուլիկին գրում է. «տան իսկական պարտեզը չի լինելու գետնահարկում, այլ դրանից վերև, 3,50 մ բարձրության վրա, այնտեղ հատակը ավելի շոր է, առողջավետ, այնտեղից շրջապատը կարելի է դիտել ավելի ամբողջական, քան գետնահարկից»: Շարունակելով բարձրանալ թեք և մուլտիփով, ոտք կդնեք տան ծածկի վրա: Ճեմուլին սկիզբ է առնում գետնահարկից, բացօթյա է և շենքի կենտրոնով հասնում է մինչև ծածկը, հնարավոր դարձելով այն, ինչ լը Կորրյուլիկին անվանում է՝ ճարտարապետական դրսանք (Promenade architecturale): Մածկից վեր են բարձրանում կիսաշրջան և ուղիղ ընթացող ծավալներ, որոնք կալիպում են գլունահարկի կիսաշրջան ծավալի հետ ու այդպիսով դարձանում պիլոտիների վրա հենված, գրեթե քառակուսի ծավալի ներքեւում սկիզբ առնող, դեպի վեր ավելի ճոխությամբ արտահայտված դինամիկ ծավալի թեման: Ճակաների երկայնքով ձգվում են ժապավենաձև լուսամուաներ, որոնցով լը Կորրյուլիկին լուծում է ազատ տարածության խնդիրը և երկարափական տարրական ձևեր կիրառելու ոացիոնալիստների հետապնդած նպատակը:

Կա, սակայն, մի նրբություն, խորանարդած ծավալի երեք կողերի երկայնքով սյուները բարձրանում են ճակատներից ներս ընկած դիրքով, իսկ հողահարթակին համապատասխանող կողի դեպքում, դրանք հպված են ճակատին: Ֆունկցիոնալիստների սկզբունքների նման խախտումը ի ցուց է դնում, որ լը Կորրյուլիկին նախագծում է կերպարներ հորինելով: Դրանք գործառնալին պահանջներից զատ համապատասխանում են նրա զգայնությամբ սահմանված ձևային տրամաբանությանը:

Իշխան հայտնի է, ճարտարապետության դրականության մեջ մեծ տեղ է հատկացվում տարածության հետ առնչվող հարցերին և մասնավորապես աղվեստի տարրեր ուղղություններում հարուցված մեկնաբանություններին: Այս առումով հատկանշական են Միս վան դեր Ռոեն (1886—1969) նշված երկու հասկացությունների միջև հաստատեց օրգանական միասնություն, որն ստացավ հետեւալ ձևակերպումը՝ կառուցվածքի միջոցով շափակարգել բաց հատակագիծ և այդին բնական պայմանների համաձայն մշակելու բարոկկոյին հակադրված ձգուումից: Զգուամ, որը նշանակեց վերադարձ դեպի բնություն, բնական պայմաններ: Մ. վան դեր Ռոեն (1886—1969) նշված երկու հասկացությունների միջև հաստատեց օրգանական միասնություն, որն ստացավ հետեւալ ձևակերպումը՝ կառուցվածքի միջոցով շափակարգել բաց հատակագիծը և համադրել այն հուանուտ արածության հետ: Այս հարցի առաջարրումը շափականց կարեռ եղավ ֆունկցիոնալիստների տարած՝ էմպիրիզմը հաղթահարող պայքարը ըմբռնելու համար:

Բաց տարածության<sup>11</sup> հատկանիշների՝ թափանցիկության և շենքի ծա-

<sup>11</sup> Ch. Norberg-Schulz, Significato dell'Architettura Occidentale, Milano, 1974, p. 330.

վալի ծանրության մեղմացումն այն նվանումներն են, որոնք իրագործվեցին անցյալ դարի կեսերին՝ ապակեպատ և պողպատե կառուցվածքով շինություններում: Դրանց հնագույնը օրինակներից են Լոնդոնում և Փարիզում կառուցված միջազգային ցուցահանդեսների տաղավարները: Բաց տարածությունը, սակայն, որոշակի կերպարի հանգեց այն ժամանակ, երբ քաղմահարկ շնչեց միջոցով ստացավ քաղաքային մասշտաբ: Այս առումով կարեղ եղավ և Սլիվանի (1856—1924) ավանդը: Նրա նախագծերով կառուցվեցին Բուֆալոյի Գերենտին (1894—95) և Զիկագոլի Կերսն Պիտի Սկոտը (1899—1904): Այդ բաղմահարկ շնչեց արտահայտում են շարունակ աձող ծավալի և շրջապատում հենակետ լինելու պատկերը և հաղորդում են քաղաքի կյանքին առարկայականորեն կապվելու գոյակցական իմաստ<sup>12</sup>:

1919-ին Միսը մշակում է մետաղե կառուցվածքով, լրիվ ապակեպատված, բայն հարկանի վարչական շնչերի առաջին նախագիծը: Եռանկյունաձև շնչերի համար (Ֆրիդրիխշտրասսե, Բեռլին) նախատեսված այդ շնչերը բաղկացած էր երեք իրարից անշատ, եռանկյունաձև աշտարակներից, որոնք միմյանց հետ հաղորդակցվում էին կենտրոնական կորիզի միջոցով, որը տեղադրված էին հարկային սպասարկումները և ուղղաձիգ կապերը: 1920—21 թթ. նա նախագծում է մետաղե, ապակեպատ երկնարերը Բեռլինում կառուցվելու համար: Շենքը բարձրահում էր երեսակայական, անկանոն հաստակագի վրա, որն իր ձևով հիշեցնում էր Հանս Արսի քանդակները<sup>13</sup>: Միս վան դեր Ռուեր ճարտարապետական լեզուն հիմնված է հետեւալ սկզբունքի վրա: զարգացնել նյութի տեխնիկական հնարավորությունները և աստիճանաբար հասնել ձեփի որոշադրմանն ու արվեստին: Նըշված օրինակներում կրող կառուցվածքը պարզեցված է մինչև կարելիության սահմանը, իսկ շնչերը առնված է ապակե թաղանթի մեջ: Միսը գտնում է, որ կառուցելու նոր սկզբունքներն ակնհայտ են դառնում այն դեպքում, եթե շեն քողարկվում արտաքին պատերի միջոցով: շնչերը շպիռը է արժեքավորել գեղազարդումներով կամ պատերի լուսատվերային մշակումներով, այլ պետք է արժեքավորել իր կառուցվածքային էությամբ, ինչպես և ապակեպատի վրա երկնքի շարունակ փոփոխվող պատկերների և շրջապատի տեսարանի արտացոլումներով, իսկ երեկոյան՝ իր ներքին լուսավորությամբ: Զդատելով դեպի լուսը, շնչերը ապրում է ներքին և արտաքին կյանքով, մասնակից դառնում քաղաքային իրականությանը<sup>14</sup>:

Միսը լր Կորբյուլիկի և Գրոփիուսի նման անցել է արդի արվեստի բոլոր փուլերով՝ «շիրագործվելիք» նախագծերից սկսած մինչև միջազգային մանաշում գտած գործեր: Մասնակից է եղել արվեստը սոցիալական առաջտեմ ուղղություններին հաղորդակից գարձնելու հոսանքին (Լիբրինեխտին և Լուբսեմբուրգին նվիրված հուշարձանը), երբեք, սակայն, չի ընդառաջել պատմիրատուի պահանջներին կամ քաղաքնի ճաշակին:

Նա քարոզործ վարպետի որդի էր, որն արհեստից հասել էր ճարտարա-

<sup>12</sup> Սլիվանը Գերենդի շնչերի առիթով գրում է. «Կորովի ձեռք գեղազարդումների միջոցով քողարկում է շնչերը բանաստեղծական երեսակայությամբ: Դա նշանակում է, որ եթե շնչերը իսկապես արվեստի գործ է, ապա իր բնույթի և ֆիզիկական էության առումով, այն զգացնությունների արտահայտությունն է:

<sup>13</sup> Այս նախագծերը, ինչպես և Միսի ամբողջական ալիքից պահպանվում է Զիկագոյում:

<sup>14</sup> L. Mies van der Rohe. Two Glass Skyscrapers, New York, 1947, p. 182.

սպետության, դարձել հմուտ շինարար<sup>15</sup>, նորագույն տեխնիկաներին բաշա-  
տեղակ և տեխնիկական ամենափոքր մանրամասնությունը մշակող վար-  
պետ (Հայտնի է, որ լը Կորբյուլին և Ռալֆը ստեղ աշքաթող էին անում  
նման հարցերը): Նա իր աշակերտներին սովորեցնում էր «...Բախտախընդ-  
րությունից և պատահականությունից պետք է հասնել ռացիոնալ պարզու-  
թյան և մտադին կարգի»: Միսն իր համոզունքներում անաշառ էր, այդ  
պատճեռով Ռալֆը քննադատում էր նրան: Անաշառությունը, սակայն, այդ  
շրջանի Գերմանիայում իշխող քաղաքական, սոցիալական, տնտեսական  
խառնաշղոթ դրության և աղջամոլ ուժերի դեմ դիմագրավող մարդկարին  
հասարակության շահերը պաշտպանող ուժ էր, ընդհանրացված ձևով ասված՝  
հարարապետ լինելու բարոյականություն:

1930-ին Գրոփիուսը նրան նշանակեց Բառհառուդի տնօրեն, որը 1932-ին  
նացիստների ճնշման տակ Դեսուառից տեղափոխվեց Բելգին և մի տարի  
անց, վերջնականորեն փակվեց: Միսը խորապես համոզված էր, որ Գեր-  
մանիայում տիրող հասարակական և արդյունաբերական պայմանները հնա-  
րավոր է վերափոխել ճարտարապետության և նախագծման միջոցով: Այս  
առումով Միս վան գեր Ռոեին պետք է համարել Բառհառուդի գաղաքարա-  
խոսության պատրանքին մինչև վերջին պահը գաղաքարիմ մնացած հար-  
տարապետ:

«Ճշմարտության փայլը գեղեցկությունն է». Սր. Ագոստինոսի այս միտ-  
րը, ինչպես վկայում է Պ. Բլեյթը, ուղեգիծ եղավ Միսի մտածելակերպում<sup>16</sup>: Այս սկզբունքի հիման վրա նա հանգեց ձեմ բյուրեղացման բացարձակ  
դրսնորմանն ու մարմանակորմանը: Նրան հաջողվեց տեխնո-տնտեսական  
կապը դարձնել միասնու ամբողջություն, իսկ նման միասնությունը կերպար  
է դառնում հենց կառուցվածքի հանգուցային կետերում, ուր արտացոլվում  
է ճշմարիտը, ուստի և գեղեցիկը<sup>17</sup>:

Այժմ, հենվելով լուսի խնդրի տարրեր մոտեցումների վրա, փորձենք  
նկարագրել ապակյա մակերեսը ընդլայնելու հարցին վերաբերող զինավոր  
նվաճումները.

— Ապակյա մակերեսը դարձնում է, վերածվում շենքից դուրս երկա-  
րող ապակյա վահանի և ստանում է հետևյալ երեք լուծումները. առաջինում  
շեշտվում են հարկերի հորիզոնական բաժանումները (Գրոփիուսի Ֆագուս-  
վերեն, 1911, լը Կորբյուլիկի Կլարտե տունը, 1932), երկրորդում՝ շեշտ-  
վում է սյուների ուղղաձիգ կարգը (Գրոփիուսի Վերբունդ ցուցահանդեսի  
գործարանը, 1914, լը Կորբյուլիկի ծերանոցը Փարիզում 1932),  
երրորդը՝ ցանցակերպ է, արտացոլում է առաջին երկու լուծումների համա-  
գրումը (լը Կորբյուլիկի՝ Ծվեյցարական հանրակացարանը Փարիզում,  
1930—32), Բառհառուդի (1918) և ճարտարապետ Հերիսոնի Ռունի պալատը  
(Նյու-Յորք, 1947—50), ուր ապակեպատ թաղանթը դուրս է բերված ճակա-  
տի գծից: Բոլոր այս օրինակներում ապակեպատ մակերեսը առնվում է շեն-  
քի ամբողջ ճակատը ուրվագծվող շրջանակի մեջ: Միսը եղավ առաջինը, որ

<sup>15</sup> Մեր ժամանակաշրջանի ճանաչված շինարարներից մեկը՝ Մաքս Բին այսպես է բնո-  
րդում Միս վան գեր Ռոեին իր մենագրության էջերում (տե՛ս M. Bill, Miles van der Rohe  
Milano, 1955, p. 7).

<sup>16</sup> Peter Blake, Miles van der Rohe, in Penguin Books, USA, 1960, p. 15.

<sup>17</sup> Միսը սիրում էր ասել, որ «Աստվածը մանրամասի մեջ է» (նույն տեղում, էջ 32):

իւախտեց այդ սահմանումը ու շնչքը փաթաթէց ուղղագիծ կամ ոլորաձեւ սահմանագծով ապակյա թաղանթի մէջ, այդպիսով ստեղծեց արդի ճարտարապետության նախատիպերից մեկը: Այս տիպից են հետեւմ Ֆ. Լ. Ռայթի վարչական շնչքը (1936—39), ճարտարապետներ Սքիդմորի, Օուինզի և Մերիի կեվեր-հառլը (Նյու-Յորք, 1952 և Չոն-Հանկոք բազմահարկը (Սան Ֆրանցիսկո, 1960), ճարտարապետներ Ֆենիքս-Ռայնորը (Դյուսելդորֆ, 1957—60), Մ. Բեգայի Գալֆա-աշտարակը (Միլան, 1959): Այդ սույն սկզբունքով Միսր իրագործեց Սիգրամը (Նյու-Յորք, 1958):

Միս վան դեր Ռոեի ստեղծած մյուս նախատիպն է Բելինի համար նախագծած՝ Աշխատասենյակների շնչքը (1922): Քառանկյունի հատակագծով, յոթհարկանի, ատտիկայով վերջացող այդ շնչքը երկաթբետոնից է, սնկաձև սյուները միանում են հեծաններին, հարկերի հատակները բոլոր կողմերից գեպի դուրս երկարում են ու վերջանում բազրիք կազմող, ձականների երկայնքով ձգվող գոտիներով: Դրանց միջև առնված են ճակատների ամբողջ երկայնքով զետեղված լուսամուտները:

Սույն մտահղացումն էլ մնաց թղթի վրա: Ե. Մենդելսոնը, որը երկի ավելի մոտից էր ծանոթ այդ նախագծին, վեց տարի անց նույն սկզբունքով իրագործեց Շոքենի հանրախանութը Խեմիցում: Այսպես, Միսի ստեղծած ժապավենաձև լուսամուտներով շնչքի կերպարն ունեցավ իր առաջին իրականացումը: Մենդելսոնին հետեւց Թերենսը, 1935-ին, կիցը (Ավստրիա) իրագործած Միսախտի արդյունաբերության վարչական շնչքով: Ճարտարապետական միտքն առարկայացնելու հարցը՝ կապված տեխնիկայի շինանյութի հետ, Փոնկցիոնալիստների հրատապ խնդիրներից մեկն էր, այն ընթացավ միտք-առարկա միասնությունը հայտնաբերելու ճանապարհով: «Նվազագույնը գեռ շատ է»՝ Միսի հայտնի այս սկզբունքը եղալ այդ հարցին արված նրա պատասխանը, նշված միասնությունը իրագործելու առաջադիր եղանակը: Միս վան դեր Ռոեն վերլուծության ճանապարհով՝ հայտնաբերեց, որ շինարարության մեջ հնարավոր է օգտագործել ամենապարզ ուրվագիծ ունեցող պողպատե տարրերը: Դրանք, դիցուք, հատ աղյուսը կամ հատ քարը, կառուցվածքային միավորներ են, այլ կերպ սասած, ամենափոքր շափի սահմաններում առարկայացված, իրենց էությանը բնորոշ բովանդակությունը պահպանող տարրերը: Այս սկզբունքի հիման վրա նա Ամերիկայում իրագործեց գեռեւ 1922-ին, Բելինում նախագծած մըտքերը: Դրանք են՝ 1950—51-ին, Զիկագոյի Շոր լճի ափին կառուցած բնակելի, բազմահարկ երկու շնչքերը և 1958-ին, Նյու-Յորքում կանգնեցրած Միգրամը: Միսի շնչքերում մշտապես իշխում են աներկար տրամարանությունը, հունական գասական ճարտարապետության ներդաշնակ կարգը, գոթականի կառուցվածքային ճշմարտությունը<sup>18</sup>, մեծ պարզությամբ արտահայտված ճարտարապետական այն դրույթները, որոնք տարածում գտան Միացյալ Նահանգներում, Եվրոպայում, ճարտարապետության ճարտարապետության ֆակուլտետների ուսանողության կողմից: Միսյան քառասունինչ և կորբյուլյան ապլաստիկ ձևը արդի ճարտարապետության

<sup>18</sup> Ճակա՞րդեհային պայմանների համաձայն, պողպատե կրող սյուները բետոնապատված են: Կառուցվածքային ճշմարտության իմաստը պահպանելու նկատառությունը, դրանք տեսանելի են առաջին հարկում:

այն հիմնադիր հասկացություններն են, որոնք կիրառված են բոլոր երկրագործություն:

Սակայն ճարտարապետի իրադործումներում միշտ լինում է մի ստեղծագործություն, որն առավել չափով է արտահայտում զգայականի և տրամարանականի ներդաշնակ միասնությամբ կերտված ձևը (լը Կորբյուլին՝ Վիլլա Սավուա, Ռայլի Ռոբրի տունը, Միսի՝ Թուգենհատը (Թրոնո, 1930): Ավելին, Պ. Բլեյքի կարծիքով, արդի ճարտարապետության համառոտ պատմությունը «Հնարավոր է ներկայացնել երեք՝ Սավուա, Ռոբր և Թուգենհատ աների սահմանում»<sup>19</sup>:

Թուգենհատի առանք թեք հողամասի վրա տեղադրված երկնարկանի շենքը է, Փողոցից կողմից նեղ լուսամուտով հազիվ նեղքված խուլ պատերը սահմանում են տարածականորեն իրարից բաժանված երեք՝ ծավալներ: Հատվածակազմական այդ լուծումը հիշեցնում է Միսի՝ թարսելոնայում Գիրմանական տաղավարի (1929) և թեղինի ցուցահանդեսի շենքի մեջ (1931) իրագործած միջնորմներով տարածությունը բաժանելով դեռևս վան Դուզուրգից սկիզբ առնող ձգումը: Այս մոտեցումը Թուգենհատում ստանում է ծավալային շեշտավորում, ուստի և քաղաքաշինական իմաստավորում, ու միանդամայն համահնչում է նույն Միսի 1923-ին նախագծած, այսպես կոչված «Ալյոսան շենքի» հետ: Թուգենհատի առաջին հարկում տեղադրված են ննջասենյակները, գարաժը: Նրանց միջև գտնվող լայն մուտքը տանում է դեպի կիսածածկ հողահարթակը, որտեղից բոլորաձև աստիճանը իշխում է ներքեմի հարկը, ուր տեղադրված են մեծ դահլիճը և սպասարկու սենյակները: Միսը դահլիճը բաժանում է չորս հատվածի, բաժանող տարրեր են փայտակերտ կիսաբոլոր խորանը և օնիկսե միջնորմը: Խալածե սյուները պողպատից են՝ երեսպատված խրոմի շերտերով: Տանկահույքը, վարագույները պատրաստված են նրա նախագծերով: Երկու հարթությունների վրա գտնվող, դեպի զառիթափը ուղղված գալիթներն ամրացնում են շենքը բլուրին, իսկ տեղանքի թեք ընթացքին հակադրվող տեսասների բլուրին հաղորդում են ճարտարապետական կերպար:

Թուգենհատը և թարսելոնայի տաղավարը (լրիվ քանդված) կապված են արդի արվեստի լեզվական արտահայտչականության, նրան հատուկ կերպարը պատկերի ձևով հորինելու, վերացարկելու ճաշակի, տարածությունները հոսանքու դարձնելու և միաժամանակ դասական ոգով սահմանելու ձգուման հետ: Միս վան դեք Ռոբրի ավանդը եղավ հենց այս հակադիր հասկացությունների ճարտարապետականորեն իրագործված համագրումը:

### ԹԱՂԱՄԱՍ

Արդի ճարտարապետության հարցերի քննարկումն ընթացավ՝ գիտական վերլուծության հիմունքներով կապված բնակելի շենքերի խնդիրների հետ, սկիզբ առավ ըստ էության ներսից՝ հատ բնակարանից, որպես ինքնուրունաբար նախագծված միավորից: Սույն դրվագին հետևեց արհայնացված շենքը, քսանական-երեսնական թվականների ճարտարապետության կարևոր այդ նվազումը: Նման կողմնորոշումը նշանակեց նաև պարզ ձևերի և խըստապահանջ սկզբունքների կիրառում: Վ. Գրոփիուսի խոսքերով ասած՝ «թափանցիկ կառուցվածքների» և «ծավալայնորեն լրիվ սահմանված այնպիսի

<sup>19</sup> P. Blake, նշան աշխ., էջ 58:

տիպերի կիրառում, որոնց ներսում ամեն մի հատված բնականորեն ձուլվում է ամբողջության ծավալի մեջ»<sup>20</sup>:

Գրոփիոսի այդ սկզբունքներով նախագծած 10—11 հարկանի «շերտավոր» շենքը ներկայացվեց Փարիզում և Բնույնում անգի ունեցած ցուցահանդեսներում (1929, 1930): Ենթավոր շենքի սկզբունքով կառուցվել են Ռոտերդամի Թիրգրուղեր թաղամասի շենքերը (արարարապետներ՝ Վ. Վան Տիֆեն, Յ. Ա. Բրիկման և լ. Կ. Վան դեր Վլու, 1934): Այս շենքերը մշակվել են՝ ենելով սոցիոլոգիայի հիմունքներից և բանվորներին ամենաքիչ (մինիմալ) բնակարաններով ապահովելու նպատակով: Այսպես, բնակարանի ներսում կատարվող գործունեությունների քանակական հարաբերությունները սահմանելու եղանակով՝ մինիմալ տարածությունից սկիզբ առած բնակելի տարածության որոշագրումը: Սույն հիմունքներով Ա. Քլյանը մշակեց ժողովրդական տան նախագծեր, որոնք իրականացվել են Բեռլինի Ֆիշթալբրում և Բադ Դյուրենիներգում (Մերսերուրգ) 1927-ին<sup>21</sup>:

Գիտական մեթոդով մշակված բնակարանային բաշխումները ցույց տվին, որ ներքին տարածությունը ոչ թե դասակարգային պայմանավորվածություններով սահմանված ժառանգություն է, այլ ներքին ինքնածավալմամբ օժտված մեծություն: Գործառնությունների կարեռումը վերափոխեց բնակելի տարածության կամայական լինելու բնորոշումը, վերացրեց դասակարգային աստիճանավորումներ հաստատելու կարգը և ստացալ բնակարանի սահմաններում գործող դաշտի նշանակություն: Այս առումով բնակելի տարածությունը կապացվում է առօրյա կյանքին, իսկ որպես նրա առարկայացված արտահայտություն կարող է ստանալ բազմաթիվ մեկնաբանություններ:

Անցումը շենքի ձեւային ըմբռնումից դեպի նրա ներսում ծավալվող կյանքի կազմակերպումը հնարավորություն տվեց հայտնաբերել բնակելու գործունեությունների համընդհանուր հիմքը, երկրաշափական պարզ ձեռքով բազմազանությանը ձեւային նշանակություն հաղորդելու եղանակը: Գրոփիուսը առաջարկեց քառանկյունի շշերավոր շենքը, ուր բնակարանները դասավորված են ուղղաձիգ կարգով, իսկ շենքերը հեռացված են միմյանցից՝ համապատասխան առողջապահական ստանդարտներին: Ավելին, նա մշակեց թաղամասի գործառնային մինիմալ տարրերը և դրանց ռդիագրամը (1930), ուր ցույց է արված քառանկյունի հողամասի վրա տեղադրված երկայնաձիգ շենքերի շարքը, որոնց բարձրությունները և հեռավորությունները կարգավորված են՝ օդի, արևի և տեսադաշտի լավագույն պայմանները ապահովելու դիտավորությամբ<sup>22</sup>:

Ֆունկցիոնալիստների հետապնդած նպատակներից էր, այսպես կոչված, «նոր-պահապանողական» քաղաքի ներքին բարելավումը: Հասարակագիտական նախադրյալների հիման վրա նրանք հաստատեցին նոր սերնդին համապատասխան բնակելու կայուն պայմաններ՝ հիմնված ինչպես առողջապահական սկզբունքների, այնպես էլ ամեն մի անհատին մինիմալ մակե-

<sup>20</sup> W. Gropius, The new architecture and the Bauhaus, London, 1935, p. 21, 32.

<sup>21</sup> Ա. Քլյանի ժողովրդական տան ուրվագիծը հրատարակված է՝ „Modern Bauform“, № 2, 1934. J. Hoffmann, L’Habitation Minimum, Stuttgart, 1930.

<sup>22</sup> W. Gropius, Die Soziologischen Grundlagen der Minimalwohnung für die städtische Industriebevölkerung, „Die Justiz“, Berlin, Heft 8, V Band.

բեռով, ծավալով, իսկ շափահասին մի սենյակով ապահովելու իրավունքի վրա<sup>23</sup>: Նոր ձևով նախագծվեցին ավանդական բնօրինակներից տարբերող, վերոհիշյալ պայմաններն ապահովող բնակարան-մոդելներ: Դրանց բնագրի մեջ կարեռը վերաբերում էր գործառնական տարրերի մինիմալ պահանջներին, ինչպես և տեխնիկական նորարար միջոցներին ու կառուցման արժեքի ամենաարդյունավետ սահմանումին:

Այդ հիմունքներով կազմավորված բնակելի շենքի տիպայնացումը նշանակալի շակումներ մտցրեց թաղամասեր նախագծելու հին պատկերացումներում, իսկ բոլորովին նոր թաղամասերի կազմավորման հարցում՝ թելադրեց երկու սրաշակի համակարգ: Դրանցից մեկը վերաբերվում էր շերտավոր տան տիպին, իսկ մյուսը՝ բաց տարածությունները շրջափակող փակ տնաշարին: Առաջին համակարգի համաձայն, աստիճանավանդակ-բնակարան միավոր ծավալները կցելով իրար, շենքը երկարում է հորիզոնական ուղղությամբ: Ենթերից ամեն մեկը դասավորվում է հողամասի վրա զուգահեռ կարգով, իսկ միմյանց հեռավորությունը սահմանվում է առողջապահական և բնապատկերի տեսադաշտը ապահովող պայմաններով: Երկրորդ համակարգը տարբերվում է առաջինից այն առումով, որ փողոցների միջև ընկած հողամասում շենքերը տեղադրվում են փողոցներին դուգահեռ՝ ամրող հողամասը շրջափակող տնաշարի կարգով: Տնաշարի մեջտեղում աղաս մնացած հողամասը տրամադրվում է հանգստին և խաղերին:

Նոր պահպանողական քաղաքներին հատուկ հողամասերի բաժանման ավանդական կարգը շիսխտող սույն համակարգի լավագույն օրինակներից է Կ. Էն ճարտարապետի նախադով Վիեննայում կառուցված Կարլ Մարքս Հոփ թաղամասը:

Փողոցից և բակի սահմանում տեղադրված տնաշարը կարգավորում են գրսից և ներսից գործող ուժերը: Իր հերթին, աղատ տարածությունների նկատմամբ միջանկալ դիրքով տեղադրված բնակարանը, իր սեփական իմաստի հավելումով, ստանում է մարդու առանձնարանը լինելու նշանակություն: Հետևաբար, մարդկանց գործունեության հետ կապվող արտաքին տարածությունները և բնակարանը մարմնավորում են անհատի և կոլեկտիվի հարաբերակցությունը որոշագործ հիմնական գործոններից մեկը: Այս ըմբռնումի հետևանքով փոնկցիոնալիստները տարածությունը ընկալում են որպես հասարակական հաղորդակցությունն իրագործելու միջոց:

Գրոփիիսը բնակարանների ուղղաձիգ դասավորում ունեցող շենքերով կազմված թաղամասի մոդելը հակադրեց մնանատներով կառուցապատված, անդրսաքսոն ապրելակերպին բնորոշ հորիզոնական դասավորումով մոդելին (ընդունված էր՝ Հոուարդի, Գարնիեի և Ռայթի կողմից)<sup>24</sup>: Ըստ Գրոփիիսի առաջարկած մոդելի, շենքերի միշանկայ հեռավորությունը պետք է հարաբերված լինի: շենքի բարձրության հետ, իսկ շենքերի տեղադրումը պետք է անկախ լինի փողոցի ուղղությունից: Քաղաքաշինական սույն սկզբունքների և երկուակց մինչև տասնմեկ հարկանի շերտավոր տների նախագծերի հիման վրա, ուստի ուղղությանը վերացնել անցյալ դարի երկ-

<sup>23</sup> Տե՛ս երկրորդ ԶԻԱՄ-ի ակտերը, Ֆրանկֆորտ ամ Մայն, 1929 և սույն ակտերում ճարտարակված՝ W. Gropius, Architettura integrata, cap. X.

<sup>24</sup> W. Gropius, Case unifamiliari, edifici medi o blocchi alti? 3° CIAM, Bruxelles; 1930.

բորդ կեսերին մեծ տարածում գտած փակ տիպի տնաշարը և տներով կառուցապատված բակը:

Նույն խնդիրներին կը Կորրյուլիկին տվեց այլ լուծում: Նրա առաջարկով ժավալները չէին կարող իրարից կզզիացած լինել և պետք է տեղադրվեն հողամասի վրա ոչ թե շարքերով (Սպանդաուի թաղամաս), այլ ժապավենաձև, ներս և դուրս ընկած՝ «ատամնավոր» (à redents) հատվածներով՝ շարունակ երկարելու հնարավորությամբ: 1923-ին ստեղծած շարունակական տնաշարի այդ տիպը նաև տեսականորեն ամբողջացրեց 17 գծագրերով և կամ Վիլ Ռադիու (La Ville Radieuse) անվանումով ներկայացրեց 1930-ին գումարված երրորդ ԶիԱՄ-ի համագումարին:

Ճարտարապետական բազմազան լուծումներ թելադրող ուղանը կը Կորրյուլիկին օգտագործեց քաղաքաշինական տարրեր նախագծերում: Տեղանքի կազմի համաձայն «ուղղանը» կարող էր լինել կորած հատվածներով (Ալժե, 1931), ոլորապտույտ ձգվել ակվեդուկի նման՝ հնարանների վրա վերցրած (Ռիո, 1929), կորոդինատներ կազմել (Սան Պաուլ լո, 1929), ընթանալ բեկված գծերի ուղղությամբ (Փարիզ, 1936): Այդ բեկումները չունեն գործառնային նշանակություն, այլ կապ են առաջացնում տեղանքի հետ: Իսկ շենքերից կազմված ժապավենը՝ ձգվելով մեծ տարածությունների վրա, ստեղծում է քաղաքի միասնական պատկեր:

Համաձայն նշված հարցերին տրված երկու հիմնական լուծումների, հարկ էր վերացնել տուն-փողոց երկրայությունը և ստեղծել գործառնությունն իր հստակությամբ առարկայացնող բնակարանը:

Երտավոր շենքը և ուղանը երկու մոդելներ են, որոնք հատկանշում են համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանը: Սակայն դա չի նշանակում, որ նոր մշակույթին ի վիճակի եղավ սերնդեսերունդ ժառանգված, քաղաքաշինական արդեն պատրաստի մտքերը նոր հայեցողություններով փոխարինելու: Դեռ տիրապետում էր լոթանասունական թվականներին պատերազմին հետևած գաղութատիրության և տնտեսական բարենպաստ զրանում զարգացած քաղեքնի մտավորականությունը: Եվ եթե քսանական թվականներին նման պահպանողական միջավայրում հնարավոր եղավ որոշ իրագործումներ կատարել, ապա դրա արժանիքը պատկանում է սոցիալիստ կառավարություններին, որոնք հովանավորում էին այդ հայեցողությունները:

Ճարտարապետական իմաստով անհասի և հասարակության վոխհարաբերությունների բացահայտումը կապված է բնակելի տարածության տրամաբանական, առարկայական հարաբերակցությունը սահմաններու հարցի հետ: Պատմական անհամաժեղության տեսակետից այդ խնդիրը խարսխված է հասարակական հարաբերությունների «բնապատմական» զարգացմանը ընթացքի վրա և պայմանավորված է սմիկրոսոցիալական» ու «մակրոսոցիալական» կապակցությունները արժեքավորող երևույթներով<sup>25</sup>: Արևմտյան ելքուպայում միայն հիսունական թվականներին էր, որ քաղաքի ընդարձակումը կասեցնելու դիտավորությամբ հնարավոր եղավ ստեղծել միկրոսոցիալական բազմությունների միավորումներ և, ավելի ընդհանուր առումով,

<sup>25</sup> Ա. Ա. Հավսեփյան, Սոցիալականի և հոգեբանականի հարաբերակցությունը, Երևան, 1973, էջ 33—35: Ա. Բ. Դրոզդով, Человек и общественные отношения, М., 1966, стр. 53.

ընակավայրային միավորները կապակցել հասարակության ամբողջությունը կարգավորող բազմանշանակալից համակարգերի հետ: Սակայն մինչ այդ, 1900-ին Անգլիայում հաստատված բաղաքաշինական օրենքը կատարելագործվում է 1919-ին, ապա 1925-ին: Նորակազմ օրենսդրության հիման վրա անդիմական նահանգների խորհուրդը նախաձեռնում է իր վարչությանը պատկանող հողամասերի բաղաքաշինական պլանավորումը, իսկ 1932-ի օրենքով տարածում է այդ օրենքը բաղաքաշինականորեն դեռ չկարգավորված հողամասերի վրա: Մինչ հրկորդ համաշխարհային պատերազմը, սակայն, այս նոր օրենսդրության գործադրումը մնում է կամայական:

Արևմտաևլրոպական մյուս երկրներում բաղաքաշինական օրենսդրության հաստատումը ընթացավ ավելի դանդաղ, Եվրոպայում և Ֆինլանդիայում այդ հաստատումը կատարվեց 1931-ին, Դանիայում՝ 1939-ին, Խոալիայում՝ 1942-ին, իսկ Ֆրանսիայում՝ համաշխարհային երկորդ պատերազմից հետո:

Մեծ բաղարների ընդհանուր նախագծի մշակումը ևս կատարվեց ուշացումով, Ֆրանսիայում Սենի բաղաքապետարանը 1919-ին հայտարարում է Փարիզի ընդհանուր նախագիծը կաղմելու մրցույթ, և միայն 1939-ին սկսում է լրջորեն զրադարձ այդ հարցերով: Նույն աշխատանքը կոնդունի համար կատարվում է 1927-ին, իսկ Բելգիի համար՝ 1920 թվականին: Հոգում ընդհանուր նախագիծը ստեղծվում է 1931-ին, բայց նրա գործադրումը՝ մի բանի տամնյակ տարիներ հետո միայն:

Հոլանդական բաղաքաներից զատ, միակ կարեռ կենտրոնը, ուր կարելի եղավ իրագործել կարգավորման ընդարձակ ծրագրերը, եղավ Ֆրանկֆուրտ ամ Մայնը: Քսանական թվականներին այդ բաղաքի բաղաքափառարանը ձեռնարկում է ընդդանման համընդհանուր կառուցապատումը՝ ճարտարապետ է: Մայի ղեկավարությամբ և նրա նախագծերով: Նման բարենպաստ պայմաններում է, որ կառուցվում են Ռենմերշտադը և Ռիդոֆ-Վեսիտ թամասերը (1925—1931)<sup>26</sup>:

Կայսրությունը կորցրած Ավստրիայում, սոցիալիստների վարչության շրջանում, սկիզբ առավ կառուցման մի հսկա գործունեություն<sup>27</sup>: Ավստրիայի լավագույն ճարտարապետների՝ Հոֆման, Հոլցմայսեր, Ֆրանկ, նախագծերով: Վիեննայում կառուցվում է վերը հիշված Կարլ Մարքս Հոֆը՝ 1300 բնակարան, խաղաղաշտեր, մանկամատուր, լվացքատուն, բժշկական խնամքի կենտրոն, գրադարան, փոստ, խանութներ: Զանգայտենովի 1600 բնակարանով թաղամասն ունի նաև կինոթատրոն:

Ինչպես նշում է Լ. Բենեվոլոն, Արևմտյան Եվրոպայում ծավալված շինարարական գործունեությանը նպաստեց պետական միջամտությունը, որը գործադրովեց երկու կերպ. մեկը՝ մասնավոր ընկերակցություններին հատկացնելով հատուկ դյուրություններ, մյուսը՝ հասարակական կազմակերպություններին հանձնելով. բնակարանային շինարարությունը:

Անգլիայում գործադրվում է առաջին համակարգը. 1936-ի «բնակելի տների ակտ»-ի (Housing Act) շնորհիվ կառուցվել է մեկ միլիոնից ավելի

<sup>26</sup> Այդ շրջանում կառուցվում է 15.000 բնակարան:

<sup>27</sup> Միայն Վիեննայում կառուցվեց 60.000 բնակարան:

բնակարան<sup>28</sup>: Նման օրենքների հիմունքներով ղեկավարվում է հետևյալ երկրների շինարարությունը՝ Շվեդիա<sup>29</sup>, Բելգիա<sup>30</sup> և Ֆրանսիա<sup>31</sup>:

Երկրորդ համակարգի իրագործումով, Ֆրանսիայում կառուցապատվում է Գրանս-ի կա Մուեթ թաղամասը (1933, ճարտարապետներ՝ Բողոքեն և Լոդա), Անգլիայում ուղղող քաղաքի խորհուրդը անվանումը կրող ընկերությունը էսեքսում կառուցում է Բիոկանուրի ավանը: Նույն համակարգը տարածում է գտնում Գերմանիայում, Իտալիայում<sup>32</sup>, Հոլանդիայում:

Նկատի ունենալով վերը նշված շինարարական մեծածավալ գործունեությունը, հարկ է ուշադրություն դարձնել նաև մի այլ հանգամանքի վրա. նոր-պահպանողական քաղաքը ընդգրկում է նախորդ շրջաններում կառուցած օրգանիզմները, որոնք հիմնականում ուրվագծում են տվյալ քաղաքի ձեւային հատկանիշները: Արդի ճարտարապետությունը մենակելով այդ հատկանիշները քննարկելու դիրքերից, միաժամանակ հասու է քաղաքական, տնտեսական և հասարակական այն գործուներին, որոնք նպաստել են նոր-պահպանողական տիպի քաղաքների կառուցմանը: Նորը կերտելու համար ուղիղություն ճարտարապետները հանդիպություն ունեցան վերափոխել տարածությունը կազմակերպող այն մողելը, որը մինչ այդ հանդիսանում էր հասարակական խորությունների հենարանը:

Ճարտարապետի իդեալիզմ, ըստ որի հնարավոր էր տարածական նոր մողելի միջոցով հեղաշրջել կապիտալիզմի էությունը արտացոլող նոր-պահպանողական քաղաքների կազմը: Նման պատրանքներից առաջացած ժամանակակից մտայնության ամենացայտուն փաստերից է այն, որ այդ նույն ճարտարապետները կարողացան իրականացնել նոր շենքեր և թաղամասեր, օգտագործելով միմիայն անցյալ դարից ժառանգված շենքերից երկու տիպ՝ մենատունը և բազմաբնակարան շենքը, ընդ որում շարողանալով հաղթահարել շենքերի 4—5 հարկանի բարձրության սահմանը:

Նման իրադրությունից դրված՝ Փոնկցիոնալիստ ճարտարապետները ստիպված եղան գործել ավանդական համակարգերի ոլորտում: Այսուհետեւ նրանք կառուցեցին արդի ճարտարապետության զարգացմանը նպաստող շենքեր: Այս առումով հարկ ենք համարում նշել այդ համակարգերից գլխավորները:

— Կղզիացած մենատուն. այս տիպի տոնը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու բնակելի տարածության հետ կապված ինդիքները և հանգել որոշակի ընդհանրացումների, դիցուք թառէառուղի կառուցած «Հառուց ամ հորնը» (Վայմար, 1923):

— Մենատուներից կազմված տնաշար՝ մեկ, երկու կամ երեք հարկանի: Հիշենք 1932-ին Վիեննայի Վերքրունդիլումգում, Ռիտվելդի նախագծով կառուցված երկհարկանի տնաշարը: Երեսնական թվականներին այս տնա-

<sup>28</sup> Housing Act-ին հախորդել են՝ Addison (1919), Chamberlain (1923), Wheatley (1924) և Greenwood (1930) անվանումը կրող օրենքները.

<sup>29</sup> 1924-ի թվականով օրենքը.

<sup>30</sup> 1920-ին ուժի մեջ մտած Սociété nationale des habitations à bon marché.

<sup>31</sup> Լուշների 1928-ի օրենքը.

<sup>32</sup> Իտալիայում հիմնված է Istituto per le case popolari նշանակած ավալների համար տե՛ս L. Benenolo, նշանակած աշխարհական այս տնա-

շարք դիտվում էր որպես մեկուսացված տան շարքը փոխարինող լավագույն համակարգ: Օրինակելի լուծումներ պետք է համարել Օուդի նախագծած, չենք վան Հոլլանդ (1924) և Քիֆենը (1925) թաղամասերը Ռուտերֆամում, ինչպես և Տեռտսեն թաղամասը Դեսսաու քաղաքում (Բառհառութիւն իրագործում, 1926—28):

— Եթերից շորս հարկանի տուն, որ քննադատվեց 1929-ի և 1930-ի ԶիԱՄ-ի նիստերում: Լավագույն օրինակներից են Գրոփիուսի իրագործած Կարլսրուէի (1928) և Բեռլինի թաղամասերը (1930), ինչպես և Բադ Գյուրիբերգը (1930):

20—30-ական թվականների քաղաքաշինության հասկացությամբ մարդու ստեղծած արհեստական միջավայրը, որպես տարածությունը կաղմակարպող հատուկ մողել, հարկ էր, որ լիներ հավասարակշռված և կայուն, իսկ որպես նորմատիվ համակարգ պետք է օգտագործվեր որպես քաղաքի իրադրությունը հետազոտելու, կարգավորելու մասշտաբ:

Քաղաքաշինական երևույթները ձևավորելու առումով այդ շրջանի ճարտարապետների առաջարկած շենքերի կայունացած տիպերը (stereotipo) երկրաշափական խստությամբ սահմանված, պուրիտան ոգով մշակված ծավալներ են, որոնց պակասում է իրականության մշտաշարժ հատկանիշների արտահայտությունը: Սա նշանակում է, որ եթե ձեզ հարկ է համարել մեր գիտելիքների ուսցիոնալացված արտահայտություն, ապա հասարակության զարգացման տեսակետից ձեզ ստանում է պատմական տվյալ պահը արտացոլող նշանակություն: Ըստ նման դրվագքի, կառուցվածքը իրականությունից ձեին հասնելու միջնորդավորող օղակ է, այն էլ ոչ շեղող, այլ տարրերը ամրողացնելու շաղկապող, տեխնիկայի առաջխաղացման ընթացքով պայմանավորված համակարգ:

Այս իսկ տեսակետից կյանքի մի հատվածը (բնակվել, աշխատել և ալլ) երկրաշափական ծավալի մեջ պատկերելը նշանակում է կաղապարել այդ իրականությունը, նշանակում է նաև մանրամասն մշակման, բայց ապրիորի ընտրված ձեին ենթարկել եղելություններ և ընթացքներ, որոնց էությունը ծանոթ է մեզ որոշ շափով միայն:

Այսօր քննադատելով Գունկցիոնալիստներին, ոմանք մեղադրում են նրանց՝ «պուրիտ» հասկացության մեջ<sup>33</sup>: Մեր կարծիքով, սակայն, քննադատելի է այն, ըստ որի շինարարական ալյդքան ծավալուն գործունեությանը շհամապատասխանեց քաղաքաշինական նույնքան ստեղծագործ մասնակցությանը: Ձշմարիտ, եթե թաղամասերի ներսում խնամքով են լուծված հասարակական սպասարկումները, ապա նույն թաղամասերի տեղաբաշխումը արված է պատահական, ստեղծ խախտվել է երթևեկության ցանցի ծանրաբեռնվածության շափանիշը կամ քաղաքի օրգանական հավասարակշռությունը: Հիմնականում պակասում էր քաղաքի բարեկարգումը և նրա հետագա աճը զննակարող օրինագրական կարգը: Արդի հարտարապետությունը զարգացավ 1870—1915 թթ. կուտակված փորձառությունների, թեև առաջադեմ, բայց էմպիրիկ մշակութիւն սահմաններում:

Արդի ճարտարապետության վարպետները խոր հավատով ձգտեցին մարդու և ճարտարապետության մերձեցմանը՝ առաջնահերթ նշանակություն

<sup>33</sup> „Architecture d'aujourd'hui“, № 182, 1975, p. 53.

տալով այն միջավայրին, ուր պետք է իրագործվեր փոխադարձ այդ կապը: Հաստատվելիք այդ կապերի հատկությունները պետք է ննրկալացվենին ընթեռնելի միջոցներով, այսինքն, ճարտարապետությանը հատուկ լեզվական ըմբռնումով: Արդ, անցյալում ոնք ուներ մշակութի համասերությունն արտահայտող նշանակություն, հիմնված ճարտարապետական լեզվի ձևային-համաշխական նույնատարր միջոցների օգտագործման վրա: Միանգամայն բնական է, որ նման ըմբռնումը մեր ապրած այսօրվա շրջափուլի համար կորցնում է իր նշանակությունը՝ զարգացման պատմության տեսակետից: Ոճական հասկացությունը անցյալի արվեստը առնում է փակ շրջանակի մեջ, դրանով իսկ միակողմանի ուղղություն տալիս անցյալի մեկնաբանությանը: Մինչդեռ այդ շրջանակից դուրս գալու փորձեր կատարվել են նաև անցյալում՝ օրինակ մանիկերստները ձգտել են անձնականացնել արվեստը ու այդ կերպ խախտել մշակութային համասեռությունը (1523 թ. մինչև XVI դարի վերջը ծավալվող արվեստը), հակադրվել Հումանիզմի հետապնդած ունիվերսալիզմին, այսինքն, արվեստի գործում օգտագործվող մակապատմական լեզվի գաղափարին:

Արդի ճարտարապետության համար ոճի հասկացությունը կարող է իմաստավորվել այնքանով, որքանով մատնանշում է այն արժեքները և մտքերը, որոնք ճարտարապետական գործում ստանում են մտքի և տեխնիկայի, ասել է թե իմաստայնորեն օրգանական արտահայտություն: Այլ կերպ ասած, երբ ստեղծագործման ընթացքում հայտնաբերվում է ճարտարապետական միտքը դրսենող տեխնիկաիմաստային գործառնությունը, այդ գեպքում ձևը կարող է ստանալ լեզվական ընդհանուր նշանակություն, այսինքն ոճային իմաստ: Լը Կորբյուլիկի խոսքերով՝ «այսօր մեզ անձրածեցտ է ոճային վերաբերմունք, այսինքն՝ ամեն մի ստեղծագործված գործում կայունացած բարոյական հարակցություն»<sup>34</sup>: Նման մտածելակերպով Գրոփիուսը հայտարարում էր, որ Բաուհաուզը նպատակ չունեցավ ոճ ստեղծել, կամ դոգմաներ, բանաձևեր մշակել, այլ ձգտեց նոր կորով հաղորդել նախագծման գործին<sup>35</sup>, Միաժամանակ, սակայն, հարկ էր նորաստեղծ լեզվի ընդհանուր նշանակությունը տարածել քաղքենի մտավորականների շրջանակներում: Այս առումով հարկ էր օգտագործել ամեն մի առիթ՝ ցուցը տալու համար արդի ճարտարապետության վավերականությունը: Հիրավի ամենահայտնի ճարտարապետները մասնակցում են միջազգային մրցույթներին, որոնք ունեցան հետևյալ հերթականությունը. «Զիկագո Տրիբյունի» վարչական շենքը (1922), «Միացյալ ազգերի պալատը» Ժնևում (1927), «Ուկրաինայի պետական թատրոնը» Խարկովում (1930), «Սովետների պալատը» Մոսկվայում (1931): Արդի ճարտարապետության վարպետներից և ոչ մեկը՝ թերլագեից մինչև լոռող, Մենդելսոն, Մայեր, լը Կորբյուլիկ, Գրոփիուս արժանանում է որևէ գնահատականի: Այդքանով հանդերձ, նրանց նախագծերը կարեռ են արևմտաեվրոպական ճարտարապետության պատմության համար:

Միջազգային բնույթ կրող մյուս ձեռնարկը՝ ցուցահանդեսն էր: 1927-ին գերմանական «Վերքբրունդը» Շտուտգարդում կազմակերպեց բնակելի տնե-

<sup>34</sup> Le Corbusier, Oeuvres complètes 1910–29, Zürich, 1956, p. 5.

<sup>35</sup> W. Gropius, The new..., p. 92.

րի երկրորդ ցուցահանդեսը: Միս վան դեր Ռոեն նշանակվեց ցուցահանդեսի փոխնախագահ, միաժամանակ կառուցվելիք ու փորձարկային թաղամասին նախագծի զիսավոր տնօրենն: Նա մշակեց Միջերկրականի ափերի գյուղերին հատուկ՝ մտերմիկ վայրի և արդի ճարտարապետության հոսանքուտ տարածության միասնացումը պատկերող նախագիծը: Ենթերի նախագծման համար Միսը հրավիրեց մեծագույն ճարտարապետներին՝ կը Կորրյուլիե, Դրոֆիուս, Օուդ, Շտամ, Տառա եղալըներ, Շարուն, Հիլբերսհայմեր, Դիոնկեր, Ֆրանք, Բուրժուա, Շնեկը, ինչպես և ունվիրաններին՝ Թերենս և Պեոլցիդ: Թաղամասը կրում է Վայսենհոֆգիդլունք անունը և համարվում է արդի ճարտարապետության մեծագույն իրագործումներից մեկը<sup>36</sup>:

Յունկցիոնալիզմի ներշնչումով նախագծված թաղամասերն այսօր դիտվում են բացասական առումով, քննադատվում են որպես անբերի մտքերի արգասիք և միջավայրային հատկություններից զուրկ բնակատեղի: Եթե վայսենհոփգիդլունքը չի նպաստում այսօր արծարձվող միատարր թաղամասի հարցերի լուծմանը, ապա իր էությամբ արտահայտում է քաղաքային միջավայրի վերափոխմանը նպաստող, բնակվելու նոր հասկացությունը<sup>37</sup>, Այս թաղամասի ճարտարապետական բնույթը տարրերակված է նրբագեղությունից մինչև Օուդի և Շտամի խստապարզությունը, մինչև Շարունի շարժուակ ծավալները:

Միսի նախագծած տունը, որն ամենամեծն էր թաղամասում, ունի մետաղի կառուցվածք: Միասնական ծավալը պարունակում է տասներկու բնակարան, որոնց ներքին բաժանումները մեկը մյուսից տարբեր են և բնակչին լուծումներ թելադրելուց զատ, հնարավոր է միջնորմները տեղաշարժել և հասնել նոր տեղաբաշխումների: Շարժականության հնարավորությունը առկա է սակ կը Կորրյուլիեի երկու տներում, որոնք կառուցված են «5 կետերի» սկզբունքով: Այդ տներից ամենամեծում դահլիճն ունի երկու հարկերի բարձրություն, մի լուծում, որը կը Կորրյուլիեն ընդհանրացնելու էր իր Ցունիթիք գ'Արխասիոն բնակելի շենքերում: Գրուիխուսը կառուցում է մետաղե տարրերով և թեթև նյութերից պատրաստված պանելներով, ի ցուց գնելով հալաբուի շինարարության առավելությունները:

Տեխնիկական նոր լուծումների առումով Վայսենհոփգիդլունքը կոլեկտիվ ուժերով մշակված օրինակ է, իսկ քաղաքաշինական և ճարտարապետական առումով այդ զինունքը մինչև օրս պահպանում է իր եղակի արժեքը:

## ԲԱՂԱՔ

Կառուցցի տիպարանության և քաղաքի կազմաբանության միջև գոյություն ունի երկկողմանի հարաբերություն, որը պատմական անհրաժեշտության համաձայն պայմանավորված է հասարակական օրգանիզմին հատուկ օրինաշափություններով: Ինչքան էլ հնարավոր լինի քաղաքի կերպարը վերածել մտալին պատկերի (իդեոգրամա), այնուամենայնիվ անկարելի կինի մի գաղափարի միջոցով արտահայտած նրա բարդ կառուցվածքը: Քա-

<sup>36</sup> H. R. Hitchcock e P. Johnson, The International Style, New York, 1932, p. 42. Վայսենհոփգիդլունքը վերջին պատերազմում վնասվել է, ավելի են Գրուիխուսի շենքերը, մինչեւ կանգնեն են կը Կորրյուլիեի, Շարունի, Օուդի, Միսի և Շտամի շենքերը:

<sup>37</sup> C. Behrendt, Der Sieg des neuen Baustils, Stuttgart, 1927, p. 55.

դաքի ամեն մի հատվածը կրում է պատմական տարրեր փուլերում իրագործված ստեղծագործությունների դրոշմը, որոնք ամբողջությամբ առած կազմում են քաղաքի ձևային ու տարածական կերպարը: Այսպես, մինչև քանական թվականները, Անգլիայում շարունակում է զարգանալ քաղաքայի արգիների փորձառությունը, մինչդեռ Կենտրոնական Եվրոպայում նկատվում է քաղաքը ձևայնորեն ամբողջացնելու, նրագեղ միշտավայր ստեղծելու քաղենի մտայնությանը այնքան հարազատ, այդ իդեալի իրագործումը: Հստ էության գերիշխում էր քաղաքի ոճական-ոգեկան միասնությունն ամբողջացնելու, ամրացնելու ձգումը:

Ավելի լայն առումով, սակայն, քաղաքը տեղաբանական սահմանների մեջ առնված քաղաքային իրադրությունների առարկայացված վկայությունն է, Քաղաքն ունի իր հասարակական աշխարհագրությունը և այդ սահմաններում ապրող բնակչների բաշխումը, քաղաքի գոտիները, ինչպես և կապի ու հաղորդակցությունների ցանցը սահմանող օրինաչփությունը:

XIX դարի քաղաքների կայունացած կազմը վերափոխելու արդի քաղաքշինարարների ձգումը մինչև քանական թվականները դրսեռովել է արմատական նշանակություն ունեցող մի քանի մտքերի ուղղությամբ:

Առաջին հերթին նշենք S. Գարնիեի (1869—1948) «Արդյունաբերական քաղաքը» նախագիծը, որն իր շրջանի ընդհանուր մշակույթի մեջ ստանում է օրինակելի արժեք<sup>38</sup>: Հաջորդ ուղղությունը կապված է մի տասնամյակում ֆուտուրիզմից մինչև էսպրի նուվո զարգացում գտած մտքերին, որոնք առաջացել են վիեննական Սեցեսսիոնի և այդ շրջանի նկարչական հասկացությունների ոլորտում:

Առաջադեմ քաղաքաշինության<sup>39</sup> շրջանում, երբեմն հանպատրաստից, երբեմն անբավարար ու իրար հակադրվող ուժերի պայքարում է կազմավորվել տեխնիկական քաղաքակրթության կառուցվածքը: Ընդհանուր առմամբ գոյություն չի ունեցել տեխնիկայի տարրեր ճյուղերի զարգացումը ներդաշնակող միասնական պատկերացում: Տեխնիկայի բուն, բայց չպլանավորված զարգացման այդ շրջանում, քաղաքներում իրագործված սպասարկումների ցանցը, ինչպես և արդյունաբերական կենտրոնների տեղադրումը կատարվել են հանպատրաստից, որի հետևանքով էլ կրել են ժամանակավոր ընույթ: Թմահաճ այս ընթացքին ենթարկվեց նաև կառուցվապատումը, որը սպասարկումների ցանցի նման կրել է փոփոխական բնույթ և այսօր խոշցնդուռում է ապագա ծրագրերի իրագործմանը: Մասսայական շինարարությունը միշտ ավելի արագ է զարդացել, քան կարող են զարդանալ այդ երեվույթները համակարգող ծրագրերը, քաղաքի ընդհանուր նախագծի մշակումը: Քաղաքի ամբողջականության գիտակցումը արդյունք է դառն փորձությունների:

Ահա հենց այս առումով Գարնիեի գործը ստանում է հատուկ նշանակություն: Նրա աշխատությունը այսօր դիտվում է որպես Աթենքի Հրովար-

<sup>38</sup> «Արդյունաբերական քաղաքը» գործն ունի տեսական մաս և գծագրեր Ընդհանուր հատակագիծը պատրաստ էր 1901-ին, մյուս գծագրերը՝ 1904-ին: Ամբողջական գործը լույս է տեսել 1917-ին:

<sup>39</sup> Առաջադեմ քաղաքաշինության ռահճվերը եղել են՝ Owen, Fourier, Richardson Cabet, Proudhon. Այդ ուղղության վերջին մեկնությունը աղել է G. H. Wells, A Modern Utopia, London, 1905.

տակից առաջ լույս տեսած քաղաքաշինական առաջին հայտարարություն<sup>40</sup>։

Արդի քաղաքաշինության հիմնավորման խնդիրը հարկ է դիտել՝ կապված արդյունաբերության զարգացման ընթացքի մեջ բացահայտված հակասական ուժերի ու քաղաքաշինական տեսական մարքի հետ։ Բացահայտել, որ անցյալի քաղաքաշինական ըմբռնումը չէր կարող ընդգրկել քաղաքի արդյունաբերական շրջանի երևույթն ամբողջությամբ։ Բայց, որովհետև նոր թաղամասները կառուցվում են՝ կցելով հնին, նոր կենտրոնների կառուցապատումը կատարվում է նոր պահանջների և հին տեսության մոտեցումով։ Հասկանալի է, որ հարցի այս երկու կողմերը պետք է հակադրվեն միմյանց։ Խասի քաղաքաշինությունը զարդանում է այն ժամանակ միայն, եթե նրա խնդիրները ուղեկցվում են քաղաքային երևույթների ուսումնասիրությամբ և գոյություն ունեցող քաղաքին հակադրելով, իդեալ քաղաքի ապահովագությամբ։

Պարզ է, որ այսօրվա քաղաքի երևույթների ավելի համընդհանուր տեսությանը հանգելուց առաջ եղել են պատմական նշանակություն ունեցող այլ մուսեցումներ, առաջարկվել են լուծումներ, որոնց մեծագույն մասը վերաբերել է արդյունաբերական կենտրոններին և այստեղ աշխատող բանվորների բնակավայրերին։ Առաջադեմ ճարտարապետները նպատակ են ունեցել հիմնավորելու քաղաքը կազմավարող գորույթները, ինչպիսիք են՝ քաղաքային գործունեության դասավորում, կանաչ տարածությունների ընդուրածակում, գործառնային ափերի ստեղծում, քաղմարնակային շենքերի ուղղիոնալացում։

Սակայն հարցը դա չէր միայն։ Այդ խնդիրներից բխած ծավալատարածական լուծումներն իրենց հերթին բերում էին քաղաքային օրգանիզմի մասնատում։ Հետեւարար հարկ էր գտնել հատվածներն իրար շաղկապող մի տարր։ Գարնիեն իր «Արյունաբերական քաղաքը» նախագծում խորավորում է մարդկանց դասավորված գործունեությունը տարրեր գոտիներում, իսկ կանաչ տարածությունն ընդարձակելով, ստեղծում է գոտիներն իրար շաղկապող բնական պայման։ Տեսականորեն մասնակի, բայց հետաքրքիր այս լուծումը Գարնիեն չկարողացավ վերարտադրել նույնքան հետաքրքիր ճարտարապետական ձևերի մեջ։ Կարող եղավ, մինչդեռ, նույն կամ կամ կամ սոցիալիստ Հանրի Հերիոյի համագործակցումը։ 1905-ին կիոնի քաղաքապետ, սոցիալիստ Հանրի Հերիոյի համագործակցումը։ 1905-ին կիոնի քաղաքապետ ընտրված Հերիոյն քաղաքի գլխավոր ճարտարապետ է նշանակում Գարնիեն։ Գարնիեն այստեղ կառուցում է Մուղի սպանդանոցը (1909—13), Օլիմպիական ստադիոնը (1913—16), Գրանդ Պլանշ հիվանդանոցը (1915—30) և «Միացյալ Նահանգներ» կոչվող բնակելի թաղամասը, որը տեղադրված է շցանկապատված կանաչ տարածության մեջ։

Զեարանական առումով Գարնիեն հետևում էր Գոդեին և Շուաղիին հարազատ շինարարական ուսցիունալիզմին<sup>41</sup>։ Այս հասկացությանը հատուկ է ֆրանսիական դպրոցի մեթոդաբանությունը, որի հետ առնչվում է նաև Օ. Պերրեի գործը։ Մշակութային այդ հասկացությամբ Պերրեն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո պատրաստեց լը Հավրի վերակառուց-

<sup>40</sup> „La Charte d'Athènes“, լույս է տեսել 1941-ին, պարունակում է լը Կորրյուլիեի կողմէ վերամշակված IV ՀԻԱՄ-ի որոշումները (1933)։

<sup>41</sup> T. Garnier, Les grands travaux de la ville de Lyon, Paris, 1919, T. Garnier, Une cité industrielle. Etude pour la construction des villes, Paris, 1917.

ման նախագիծը: Այդուղի նա սահմանեց բնակարանին հարաբերված ներքին և արտաքին տարածությունների կապը (լոջիաներ, առաջին հարկի սյունաշար) ու այդ լուծումով կապեց Միջերկրականի ճարտարապետությանը, միաժամանակ նորարար ոգով ստեղծեց քաղաքալին նոր տիպայնություն:

Ճարտարապետական այն ուղղությունը, որն անցել է էկոլ դը Բոլարից, Գարնիեից հասել մինչև Պերրե, անշուշտ ինքնատիպ է, թեև նա պահպանողական՝ ավանդական մշակույթը պաշտոնական դիրքերից առաջ տանելու իր հավակնությամբ: Եվ, չնայած այն փաստին, որ Լյուրսան իրագործել էր՝ Վիլֆուհի դպրոցը (1932—35), Պինգուսոնը՝ Սեն Տրոպեզի Հյուրանոցը (1933), Լոդուր՝ Սյուրենի դպրոցը (1932—35), Կիշենում ժողովրդական տունը (1937—39), պաշտոնական մարմինները թշնամարար վերաբերվեցին այդ տիպի ճարտարապետությանը: Պաշտոնական շրջանները հաղթության օրերի հրճվածք ապրեցին Փարիզի 1937-ի միջազգային ցուցահանդեսով: Անցյալի և նորի փոխզիջող մշակումներով կասուցված այդ տաղավարների ճարտարապետությունը, որն այնքան համաձայնուն էր նաև նացիստական Գերմանիայի և Փաշչիստական Խոտալիայի ոգուն, ժամանակավորապես փակեց արդի ճարտարապետության ճանապարհը:

Պարզ է, որ քսանական թվականներին բոլորովին այլ մակարդակի վրա էին գտնվում կերպարվեստի, ճարտարապետության առաջընթաց ուղղությունները: Գեղարվեստական այլ ընկալմանով էր պատկերվում քաղաքային խնդրականը: Առարկայաշատ Փուտուրիստների ուղղաձիգ քաղաքի տեսլքներին հակադրվում էր էքսպրեսիոնիստների ներիմացական աշխարհի պատկերը. ավելի հավասարակշիռ քայլով առաջ էին ընթանում Դէ Սաիլը, Բաու-Հաուզը, Էսպրի Նուվոն:

Լը Կորրյուզիեի, Գրոփիուսի, Բ. Տաուտի համար ճարտարապետությունը և քաղաքաշինությունը անբաժանելի են: Ամեն մի նոր ճարտարապետություն՝ օգտագործելով արդի տեխնիկայի միջցուները և առարկայացնելով տարածության նոր հասկացությունը, սատում է ամբողջական իմաստ այն ժամանակ, երբ ներնդգրկվում է արդի քաղաքի պատկերի սահմաններում: Այս իմաստով լը Կորրյուզիեի Դո Մինոն Մենատուն շենքը (1922), Բաու-Հաուզում մշակված բնակարանի տիպը, կամ Գրոփիուսի շերտավոր քաղաքարկ շենքը, Միսի աղյուս շենքի նախագիծը, Ռիդվելտի, Դեոգրուրգի, Հ. Շարունի ստեղծագործությունները (Բրատիսլավա, Մենատուն, 1928, Լեռքառ, Մենատուն, 1932), շրջապատի միջավայրում ներդնդգրկված ճարտարապետական կառուցներ են:

Նշված շենքերի ամենացայտուն առանձնահատկությունը պետք է համարել պատի էությունը հիմնավորող համականիշների ժխտումը: Ավանդաբար հաստատված հասկացության համաձայն, չորս պատերի մեջ առնված այդ տարածությունը տուն-ապաստարան համարելը օրինական է, բայց կոլեկտիվ կյանքը կազմակերպելու տեսակետից այդ նույն գաղափարի հաղթահարումը հնարավոր դարձրեց կառուցապատվելիք տարածությունը դիտելու դրամ ծավալային միավորներից բաղադրված ամբողջականություն, այլ կերպ ասած նույն համակարգին ենթարկել անհատական և կոլեկտիվ տարածությունները, բնակելի բջիջը և քաղաքը:

Գրոփիուսը գրում է. «Ճարտարապետական իմ ըմբռնումն անխուսափելիո-

բն առաջնորդեց ինձ բնակարանների գործառնությունների ուսումնասիրությունից հանգել փողոցի ուսումնասիրությանը և փողոցից հասնել քաղաքի գործառնությունների բացահայտմանը<sup>42</sup>:

Հարկ էր ուստի 1870—1914 թթ. ժամանակաշրջանում կուտակված քաղաքաշինական փորձառությունները գնել մի կողմ և սկսել սկզբից (և. Բենիվոյ), հարկ էր ճարտարապետի գործը բաժանել բաղադրիչ տարրերի, որպեսզի հորինվածքի խնդիրը դրվեր ամբողջ ընդհանուրությամբ: Այսպես, «Տունը տարաբաշխվում է իդեալորեն ձեռագործ, պարզ տարրերի, իսկ նախագծում բաժանվում է իրար հաջորդող փուլերի: Նախ և առաջ մշակվում են հատվածները, որից ուսումնասիրվում է նրանց միախմբումը, նույն եղանակով թաղամասը բաժանվում է ծավալատարածական տարրերի՝ բնակելի բջիջ, փողոցներ, ընդհանուր բնույթի շենքեր: Քաղաքը ընկալվում է որպես տարրեր թաղամասերից բաղադրված, գործառնությունների համաձայն դասավորված բազմություն»<sup>43</sup>: Այս մեթոդաբանությունից հետևում է տարրերի գործարանային արտադրություն, նախագծի տնտեսականորեն ճիշտ մշակում և ամենակարենոր՝ տունը և բաղաքը նույն տարրերով ու նույն կառուցվածքով կերտելու հնարավորություն:

Լը Կորրյուգիեն ենում է նույն սկզբունքներից, մի տարրերությամբ սակայն, որ եթե Գրովիտոսի համար տարրը շինարարական և գործառնական միավոր է<sup>44</sup>, ապա կորրյուգյան հասկցությամբ տարրը ստանում է մարդկային գործունեության միավորի իմաստ:

Քսանական թվականներին հաստատվեցին համընդհանուր նշանակություն գտած հետեւյալ մնանությունները՝ բնակելի միավոր, աշխատանքի միավոր և աղատ ժամերի գրազմունքների միավոր:

1920-ին լը Կորրյուգիեն մշակում է Սիտրոհան բնակելի տունը հետեւյալ կազմով. կրող կառույցը երկաթքեառնից է, բնակելի բջիջը գրավում է երկու հարկ, լուսամուտները բացված են բառանկյունի հատակագիծ ունեցող տան կարճ կողերի երկարությամբ: Նման լուծումը հնարավորություն է տալիս Սիտրոհանի միավորները կցել իրար, արտաքին սրահներով սպասարկել տան հարկերը և կազմել «մենատուն շենք» (immeubles villas) կողմով բազմահարկ, բնակելի տունը: 1922-ին Փարիզի Սալոն զ՞օտոմնում լը Կորրյուգիեն ցուցակրում է սերեք միլիոն բնակելիների ժամանակակից քաղաքը» նախագիծը: Ուտոպիկ այդ քաղաքը կազմված էր երեք տիպի շենքերից՝ խաշածն երկնաքերներ կենտրոնում, վեցհարկանի ուղանի տիպի տներ միջանկյալ գոտիներում և «մենատուն շենք» տիպի տներ քաղաքի ծայրամասերում: Հատակագիծը կառուցված է խաշվող երկու մայրուղիների կանոնավոր, քառանկյունի ցանցի և անկյունագծով ընթացող ճանապարհների սիմետրիկ համակարգի հիման վրա: 1925-ին Փարիզի գեղարվեստական արվեստների միջազգային ցուցահանդեսում լը Կորրյուգիեն օգտվում

<sup>42</sup> W. Gropius, նշվ. աշխ., էջ 39.

<sup>43</sup> L. Benevolo, նշվ. աշխ., էջ 632.

<sup>44</sup> Հարկ է ստանաբարտացնել և սերիաներով արտադրել ոչ թե տունն իր ամրուցությամբ, այլ նրա հատվածները, այնպես որ իրար բաղադրելով, այդ հատվածներից ստացվեն տների տիպեր: Տե՛ս A. Meyer, Ein Versuchshaus des Bauhauses, München, 1925. «Bauhausbürger № 3 գրեթ Վ. Գրովիուսի առաջարանը Հավաքովի տարրերով են կառուցված Դեսսատու քաղաքի Տեսաբեն թաղամասի տները (1927), ինչպես և Վայսենհոֆի երկու մենատները (1927):

Է էսպրի նուվո տաղավարից ու կառուցել տալիս «մենատուն շենք»-ի մեկ բնակարանը: Նույն ցուցահանդեսում ներկայացնում է քաղաքաշինական առաջին դրական նախագիծը՝ լը Պլան Վուազեն (Le Plan Voisin).

Դասական ոգով մշակված երեք միլիոնանոց ուսուպիկ քաղաքի նախագծում առկա է քաղաքի նոր ծավալայնության գաղափարը: Արդի երթևեկությանը հարմարեցված՝ քաղաքն ապրում է դրսի հետ փոխանակությունների միջոցով: Երկու մայրուղիների հատման մակերեսից ավելի վեր տեղադրված է կենտրոնը, որը դառնում է ուղղաթիռ-տաքսիների կայան, ինչպես և տարբեր հարթություններով ընթացող տեղափոխման արտաքին և ներքին միջոցների կենտրոնական կայան:

Հիմնական սկզբունքներում արդեն ամրացած քաղաքայնացման գաղափարը Պլան Վուազենում հարաբերված է գոյություն ունեցող իրականությանը՝ Փարիզի Միվոլի փոլցից անդին, Սենայի աջ ափին գտնվող հողամասերին: Այդ առաջարկի դիմավոր թերթությունն այն է, սակայն, որ նախագիծը քաղաքաշինական չէ, այլ ճարտարապետական: Լը Կորրյուպիեն բանդում է նշված շրջանի շենքերը, պահպանում միմիայն թագավորական պալատը, Մալենը և մի քանի այլ կառուցները: Նա այդ հողամասերի վրա տեղադրում է մակերեսութից ավելի վեր ընթացող արագնթաց երթևեկության ճանապարհների քառակուսի ցանցը ու նրանց միջև առնված խաչաձև երկնաքերները, ուղարկած և կանաչ տարածությունները:

Քաղաքաշինական հարցերը ճարտարապետականորեն լուծելու միտումը հարազատ է ֆրանսիական մտքին և Վուանից մինչև Գարնիի ու լը Կորրյուպիեի հաստատում գտած հասկացություն է: Լը Կորրյուպիեի ուսցիոնալիքը յուրօրինակ է, որովհետև չի ընկալվում որպես որպիշներին հաղորդվելիք, առաջադրվող մեթոդ (Դրոֆիուսի տեսակետ), այլ որպես ինքն իրենով սընվող իրականություն, որն իր մշակված բոլոր մանրամասներով տեղադրվում է գոյություն ունեցող իրականության մեջ՝ ամբողջությամբ ու առանց փոխդիշունների<sup>45</sup>:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ հին քաղաքների հետ նորը կերտելը՝ հատուկ եղավ իտալացի ճարտարապետներին, որոնք մշակեցին այդ տեսությունը<sup>46</sup>:

Ալժեի համար նախագծված առաջին նախագծում (1930) լը Կորրյուպիեին հանգեց հասարակական և տարածական տվյալների միասնացած արտահայտությանը<sup>47</sup>, նա Ալժեի հրվանդանում տեղադրում է վարչատնտեսական կենտրոնը, Կայսերական ամրոցի հողամասերում՝ բնակատեղ քաղաքը: Այդ երկու ծայրամասերը կապում է իրար 80—90 մ բարձրությամբ ընթացող խճուղիով, որի տակ տեղադրում է 180.000 մարդու համար նախատեսված բնակարաններ: Նախագծի հաջողության գրավականը հանապարհի և շենքի, տարածության և ժամանակի, տեղանքի և գործառնությունների միջև հաստատվող, երթևեկության ու կապի արդի միջոցներին հարաբերված փոխկապակցությունների կայունացումն էր:

45 Լը Կորրյուպիեն իր մտքերը մշակում էր երեք միջոցներով՝ նախագծելով, գրելով և նկարելով:

46 Ա. Զարյան, Խոտական արդի ճարտարապետությունը, Երևան, 1974, էջ 47—73:

47 Երկրորդ նախագիծը (1931—34) նվազ հետաքրքր է: Հեղինակը ստիպված է եղել գիտումներ անել տեղում կիրառվող նորմաներին:

Ալժեհ նախագիծը, ինչպես և Ռիո դե Ժանեյրուի Մոնտեվիդեոյի, Սան Պաուլոյի, Բուենոս Այրեսի գծագրերը<sup>48</sup> ներկայացնում են արդի քաղաքաշինության գծերից մեկը, որը հնարավորություն ունի գործելու որպես նոր մշակվող նախագծերի ձևական-գործառնային կառուցվածք:

1935-ին հրատարակված «Լուսաշող քաղաքը» (La ville radieuse) գրքում ներկայացված մաքրերը լու Կորրյուզին գործադրում է տարբեր նախագծերում (Հելլոկուր, Սևն Կլու):

Ալյաքանից ակնհայտ է դառնում, որ արդի ուղղությունը ստեղծող ճարտարապետների պայքարը հաղթահարեց քաղաքը որպես հուշարձանային երեսություն նկատելու ակադեմիական տեսակետը և շեշտը դրեց գործառնականի վրա: Երկու տարբեր մոռացումների պարզաբանումը, սակայն, մինչ օրս անորոշ է, որի հետևանքով, ճարտարապետությանը վերագրվում է գեղագիտական նշանակություն, մինչդեռ քաղաքաշինության տեխնիկան գնալով ալիևի հզոր է դառնում:

Մի հարց ևս. քաղաքն իր ամբողջությամբ առած անհնար է ննթարկել միանման օրենքի կամ ձևային սկզբունքի, որովհետև նրա ծավալատարածական կերպարը մարդու ստեղծած մշակութի մասնակի արտահայտությունը չէ միայն, այլ իր ամբողջությամբ առարկայորեն սահմանված մշակում: Այս առումով քաղաքի կազմը հնարավոր է փոխել այն դեպքում միայն, եթե հիմնովին հեղաշորչի քաղաքասոցիալական կազմը: Նկատի առնելով, սակայն, քսանական թվականների արևմտաեվրոպական հասարակական-պատմական իրադրությունը, տեսնում ենք, որ քաղաքաշինական խնդիրներն ունեցել են միմիայն մասնակի լուծումներ կամ առաջարկել են իրականությունից վերացարկված քաղաքի պատկերներ:

Արդի ճարտարապետության վարպետները համոզված են, որ պետք է մասնակիից հանգել ընդհանուրին, ուստի երբ սկիզբ դրին քաղաքաշինական հարցերի ուսումնասիրությանը, գեռեւ փորձառու չէին, իսկ ժամանակը սուլ էր Արդի ճարտարապետության ձևային լեզուն կազմագործել է 1920—1930 թթ.: Քեզինում ու Ֆրանկուրում տեղի ունեցած շինարարական գործունեությունն ընդհանուր էր 1928—31-ի տնտեսական ճգնաժամի հետևանքով, նույն շրջանում դադարեցվեց ժողովրդական թաղամասերի կառուցապատճեմը Վիեննայում:

Ճարտարապետական արտահայտության հարցում, գրոփիուսյան քաղաքաշինությունը (Դամերշտոկ, 1927—28, Սպանդաու-Հազելորսա, 1929, Ջիմենսուտադ, 1929, Քեզինի երեք գիզլունգները, 1929) հետապնդում էր ոչ այնքան տարածությունների կազմակերպում, որքան ընակելի քջին վերաբերող տեխնիկական և տիպարանական հարցեր: Ի դեպ, պետք է նկատել, որ ձևաբանական հարցերին արված լուծումների գնահատման համար կարևոր եղան թ. Տառափի, Միսի, Շարունի մտահղացումները: Թ. Տառափը իր «Քաղաքի տարրալուծումը» (1928) գծագրերի շարքում հասնում է ձևական և քաղաքաշինական բազմակողմանի արտահայտությունների, որոնց մեջ առկա է ճարտարապետական մտահղացումը քաղաքաշինական գործունեության ոլորտում առարկայացնելու նպատակը: Ենելով կարևոր այս

<sup>48</sup> Այդ գծագրերը լու Կորրյուզին կատարել է Հարավային Ամերիկայում ունեցած քաղաքաշինությունների ժամանակ:

սկզբունքից, արդի պատմաբանները թ. Տառտին համարում են արդի բա-  
ղաբաշխնության հիմնագիրը<sup>49</sup>:

Արտաքին գործոններից բխող, մարդկային, հասարակական հիմունք-  
ներով ստեղծված ֆունկցիոնալիստների ճարտարապետությունը և առաջ-  
լազբես ձևաբանական իմաստ կրող էքսպրեսիոնիզմից հետևած ուղղությունը՝  
իրար հակադրվող երկու իրողություններ են և այդ շրջանի պատմական  
ընթացքին հատուկ հասկացություններ:

Այդպես հնարավոր է դառնում պատկերել այդ ճարտարապետների հե-  
տապնդած ապագա բաղադրի կերպարը՝ մոդելը:

Ինչպես միկրոպաշխարհի բնագիտական իմացության<sup>50</sup>, այնպես էլ բա-  
ղաբաշխնության մեջ մոդելն ունի ոչ միայն մեթոդաբանական նշանակու-  
թյուն, այլև քաղաքի նոր լուծումները արտահայտելու հնարավորություն:  
Այս արտահայտչամելք մեծ տարածում էր զանել Վերածննդի տրակատախտ-  
ների գործերում: Հետագայում մոդելի հանդեպ ցուցադրվող հետարքը թյունը  
նվազեց և միայն անցյալ դարի ուսուպիական-սոցիալիստների հա-  
մար մոդելը դարձավ ապագա սոցիալիստական քաղաքի կերտվածքը ար-  
տահայտելու ճարտարապետական ամենակարևոր միջոցը: Եվ եթե նախա-  
քաղաքաշինական շրջանում ուսուպիստների համար մոդելն ուներ վերա-  
ցարկված իրականության նշանակություն, ապա առաջադեմ քաղաքաշինու-  
թյան շրջանում մոդելը ստանում է մեթոդաբանական իմուստ ու դառնում  
բնակարանից մինչև քաղաքի էլեկտրոն ուսումնասիրելու հնարք: Խսկ այսօր  
այն, որպես հասկացություն, ստացել է համընդհանուր հանաշում:

Ուսումնասիրվող շրջանի քաղաքաշինության, քաղաքի ապագան պատ-  
կերելու հարցերի առնչությամբ մոդելի մասին եղած կարծիքները բաժան-  
վում են երկու ուղղության:

Առաջինի համաձայն քաղաքը զարգանում է գիտական հիմունքներով  
(կենսաբանական, տեխնոլոգիական, հասարակական և այլն) և հետեւանք է  
պատմական տվյալ փուլում ապրած իրադրության: Ուստի քաղաքաշինա-  
րարը կարող է հայտնաբերել նրա զարգացման օրենքները, բայց չի կարող  
ստեղծագործաբար միջամտել: Նման ըմբռնումը կապվում է քաղաքի ապա-  
գան որոշակի համապատասխանությամբ ներկայացնելու պատկերային մո-  
դելի հետ:

Հստ երկրորդ ուղղության անհնար է գուշակել քաղաքի ապագան, քանի  
որ փոփոխում է ինչպես կյանքը, այնպես էլ տեխնոլոգիայի և գործառնու-  
թյունների իմաստը: Այս դեպքում կարևոր է ոչ թե ապագա քաղաքը պատ-  
կերող նախագիծը, այլ քաղաքի զարգացմանը համարավ ընթացող նախա-  
գծման գործողությունը: Նման դեպքում նախագիծը ստանում է քաղաք-  
յին տարածությունը կազմակերպելու, ապագա զարգացմանը համապա-  
տասխանող գիտելիքներ ձեռք բերելու միջոց:

Առաջին ուղղության համաձայն պատկերային մոդելը դրսերվում է  
գծագրական արտահայտության մեջ, ինչպես արդեն նշել ենք, Գրովիուսը  
և լը Կորրյուլիին քաղաքի հարցերին անցնելուց առաջ նախօրոք մշակել են

<sup>49</sup> Kurt Junghanns, Bruno Taut 1880—1938, Berlin, 1970. DEAU. v. VI, p. 151—52,  
voce B. Taut di Franco Borsi.

<sup>50</sup> Լ. Հ. Քոչարյան, Սովետ և մատիին էքսպերիմենտը ֆիզիկական իմացության մեջ,  
Երևան, 1975.

բնակելի միավորը, ապա իրար կցելով, ստացել են գծային դասավորությամբ կազմակերպված բնակելի տան ժավալը։ Խոկ այդ ժավաները գծային ուղղությամբ դասավորելով, հանգել են թաղամասի ու ստեղծել հարևանությունների կապն ապահովող թաղամասային միավորը։

Ուսուպիսաներին ու ուցիոնալիստներին հատուկ պատկերային մողեն օժավածք է նախատիպ լինելու հատկությամբ։ Այն ձգտում է արտահայտել քաղաքային և երկրային արդեն կայունացած և ոչ թե զարգացման ենթակա իրականությունը։ Ձիվունգները, հոփերը և հոլանդական թաղամասերը ստեղծել են զոյտություն ունեցող քաղաքային իրականության մեջ և այս առողջության մեջ են մեծ քաղաքի՝ մնարուղովի կամ մեզավոլիի, քաղաքային հոսանքությունների հետ, ունեն օրինակելի լինելու մասնակինշանակություն։

Մողելը նախագծման մեջ օգտագործվելու դեպքում պիտի է լինի ստույգ, բոլոր մանրամասներով ճշտված։ Այս դեպքում այն ձգտում է նույնանալ նախագծի հետ (Բառուհառուցի մեթոդ)՝<sup>51</sup>։

Արհեստական նյութերի միշտ ավելի տարածում գտնող կիրառումը կապված է նաև ձեռք ընկալման, նրա իրագործման հետ։ Ուցիոնալիստների շենքերում ծավալների միացման հանգույցները, բացվածքների կայութեածքները կապված են բնական շինանյութի հետ։ Մի հանգամանք ևս, գծային արտահայտչականության կարերման հետեւնքով գծայինը գործոն մասնակցություն է ստանձնում պատկերային մողելի կազմավորման գործում, որի հետեւնքով սերտ առնչություններ են առաջանում նկարության և հարտարապետության միջև։ Բենեվոլոյի կարծիքով հնարավոր է մտային հարակցություն տեսնել Պ. Քլեի «Քաղաքային թաղամասի մեխանիկան» (1928) նկարի և մի շարք զիվունգների նախագծերի միջև (Դամմերշտոկի թաղամասը Կարլսրուհեում, 1928)<sup>52</sup>։

Մողելների դասակարգման մեջ կա մի այլ տիպ, որը կոչվում է արդյունավետ մողել ու օժանականորեն մեկնաբանվելու ունակությամբ։ Այդ մողելը, սակայն, չի պատկերում ամբողջությամբ կիրառվելիք լուծումները, այլ տախիս է գոյություն ունեցող քաղաքային իրականությունը մասնակիորեն վերամշակելու, կարգավորելու հնարավորություն և օգտագործվում է նախագծային մշակումներին ուղեգիծ տալու իմաստով<sup>53</sup>։ Արդյունավետ մողելի նշանակություն ունեն լը Կորրյուզիեի հետեւալ աշխատության մեջ բնորոշված «մարդկային երեք հաստատությունները» (Les trois établissements humains, 1944)<sup>54</sup>։ Գրանք են՝ պյուլատնեսական հաստատության միավոր, ժամանակակից արդյունաբերական քաղաք, փոխկապակցությունների քաղաք։ Նույն աշխատության մեջ լը Կորրյուզիեն գրում է. «...փոխանակությունների քաղաքն էլ իր հերթին պիտի դառնա կանալ քա-

51 G. Simoncini, Il futuro e la città, Bologna, 1970, p. 205–06.

52 L. Benevoli, նշվ. աշխ., էջ 641.

53 Քաղաքաշնական մողելներն ունեն հետեւալ դասակարգումը՝ կարգավորող մողել, պատկերային մողել, արդյունավետ մողել Այս մասին տեսն G. Simoncini, նշվ. աշխ., էջ 204–207։

54 Այս զրգում լը Կորրյուզիեն ի մի է բերում այն որոշական բերությունները, որ սահմանվել էին Ասկորալի (ճարտարապետության բարեփոխման) շինարարների համագումարի 1942-ին տեղի ունեցած նստաշրջանում։

**Դաքիոնալիստների** հետապնդած նպատակներից եղավ քաղաքի մեջ կանաչ տարածությունների ներմուծումը:

Քաղաքի սահմաններում բնական պայմաններ ստեղծելու հարցով ձար-տարապետները զբաղվել են գեռնս անցյալ դարի երկրուդ կեսերից: Այդ շրջանի հասկացության համաձայն մշակվել են վեցանկյունի թաղամաս (Բ. Հ. Հարտմանի Բեռլինի հաստակագիծը), շրջանաձև կամ արբանյակներով շրջապատված քառանկյունի քաղաք (Պ. Վոլֆի նախագիծը) մոդելները: Դրանք, նոր դասականության ոգով հետապնդում էին երկրաշափական իդեալ-կարգ հաստատելու գաղափարը և ըստ այդմ կանաչ և կառուցապատված տարածությունները իրար ներդաշնակելու խնդիրը լուծում էին ընդհանուր ձեր ստորաբաժանումների միջոցով: Ծացիոնալիստների համար շենքերը և ավտոմեքենաների ճանապարհները չեին հավում հողին, այլ հենվում էին սյուների վրա: Այս հնարքով մեծապես վերահաստատվում էին քաղաքի բնական պայմանները ու ստեղծվում էր կանաչ քաղաքը (պատկերային մոդել): Մոդելը և երկրաշափական պարզ ձեր մտային պատկերներ են, որոնց միջոցով ռացիոնալիստները փորձեցին կարգավորել քաղաքների խառնաշփոթ վիճակը: Փորձնականից առանձնացված տվյալներին նրանք տվյալներին տեսական հիմնավորում:

1927-ին Լ. Հիլբերսայմերը ներկայացրեց ուղղաձիգ քաղաքի կառուցման տեսական նախագիծը, տալով հետեւյալ բացատրություն՝ «...որոշ իմաստով երկու քաղաքներ են, մեկը դասավորված մյուսի վրա. վերևինը բնակելի քաղաքն է իր հետիւնն երթևեկությամբ, ներքեւինը՝ աշխատանքի քաղաքն իր մեքենայացված երթևեկությամբ: Սույն դասավորումով երկու քաղաքների միջև հաստատվելիք կապը չի լինելու հորիզոնական, այլ ուղղաձիգ ու շենքի միջից»<sup>55</sup>:

Լը Կորրյուլին մշակել էր «երեքմիլիոնանոց քաղաքի» նախագիծը՝ հիմք ընդունելով Փարիզի բնակելի տարածության խտության ամենաբարձր շաբանիշները: Դեպի վեր էր զարգացնում շենքերը՝ բնությանը ովերադաշներով այդ հողամաքի զգալի մասը: Հիլբերսայմերը մեկնելով ճշգրիտ տրվյալներից, կորրյուլյան նախագիծը դիտում է որպես և «գեր հորիզոնական զարգացում, և ձեւային բնույթ ունեցող քաղաքի առաջարկ»:

Հիլբերսայմերի խոսքերով՝ «քաղաքներն անձնավորություններ են, որոնց դիմագիծը կախում ունի բնապատճերի հատկանիշներից, մարդկանց նկարագրից և այն գերից, որ քաղաքը կատարում է քաղաքականության և քաղաքանության մեջ»:

Հիլբերսայմերը եղավ այն առաջին քաղաքաշինարարը, որը որոշադրեց «Մեծ քաղաքի» քաղաքաշինական կառուցվածքը: Նրա մտահղացման մտային ընկալումը մի կողմից առնշվում է նովմերերուպեի մտքերին<sup>56</sup>, մյուս կողմից արդեն առկա էր Բեռլինի Ունտեր դեն լիներն (1925), Ալեքսադեր-պլաց (1928), ապակեպատ երկնաքերների, Ռայխսբանկի (1933): Միև վանդեր Ռուի նախագծերում այդ ընկալումը կապվում է նաև կոնստրուկտի-

<sup>55</sup> Ludwig Hilberseimer, Großstadtarchitektur, Stuttgart, 1927.

<sup>56</sup> Նա եղել է նովմերերուպեի անդամ, իսկ 1925-ին լուս է տեսել մեծ քաղաքին վերաբերող նրա առաջին աշխատությունը (տե՛ս L. Hilberseimer, Großstadt Bauten, Hannover, 1925).

վիստների, ինչպես և Հոլանդիայում, Ֆրանսիայում մշակվող տեսական մուրերի ոլորտի հետ:

30-ական թվականներին կոնսուլտիվիստները կենտրոնացրին իրենց ուշաբությունը երկու հիմնական հարցերի շուրջ՝ բնակելի կումունա (որը հարաբերվում է կորրյուլյան «պատշաճ մեծությամբ բնակելի տուն» մըտքին) և անշահակ հողերի քաղաքայնացում։ Վերջինից առաջացավ ժապավենաձև քաղաքայրը և նրանից հետեւցին արդյունաբերական ժապավենաձև քաղաքայրը (Մ. Յ. Գինցբորգ, Ի. Լ. Լեռնիդով)<sup>57</sup>։ Քաղաքի այս տիպը հակադրվում է կենտրոնաձիգ ավանդական տիպին, ապահովում է հազորգակցությունների (գետ, մանապարհ, երկաթուղի) երկայնքով աշխատանքի վայրերի, բնակելի և կանաչ տարածությունների միանման, ընդհանրացված պայմանները։

Հոլանդիան միակ երկիրն է, որը տեղական ավանդին հարաբերված ուղինավորմը հանգեց լավագույն իրագործումների։ Այդ երկրում սոցիալական քաղաքային պայմաններն ու վարչական տնտեսությունը մեծապես նպաստել են քաղաքաշինարարների գործունեությանը։

Ամստերդամում քաղաքաշինության տարած իրացումների քաղաքականության հետեւանքով, 1928-ին քաղաքաշինության ինքնավար բյուրոյում Կ. վան Էստեբենի ղեկավարությամբ և վան Դոեղբուրգի մասնակցությամբ սկիզբ դրվեց քաղաքի ընդհանուր հատակագծի նախագծմանը, որն ավարտեց և օրենսդրական ուժ ստացավ 1935-ին։ Շարունակ վերամշակման ենթակա, բայց հիմնական հարցերում մինչև օրս իր վավերականությունը պահպանած ընդհանուր այդ հատակագծի հիմնական դրությունները հետեւալն են։ գործունեության ապահենարունացում, գոտիների միջկառուցվածքային կապակցում, նույնատիպ շենքերի կրկնողություն, սարքաբաժանումների հավելումով կատարվող քաղաքի բնդարձակում, շենքերի կառուցվածքին ենթակա կանաչ տարածությունների կազմակերպում<sup>58</sup>։

Ամստերդամի վերոհիշյալ ընդհանուր հատակագիծը ամփոփում և եղափակում է ուղինավոր քաղաքաշինության կենտրոնական շրջանը, ներկայացնում է այդ հասկացության, թերևս, ամենադրական և ծավալուն իրագործումը։

57 Ժապավենաձև քաղաքի մտահղացումը կապված է խապանացի Ա. Սորիա ի Մատայի հետ (1844—1920)։ Նա «էլ պրոզե» ամսագրում (1882-ին) գրում էր. «Ժապավենաձև քաղաքը կարող է 500 մ լայնություն ունենալ և երկարել այնքան, որբան հարկավոր է։ Այդպիսին է լինելու ապագա քաղաքը, նրա ծայրամասերը կարող են լինել Կադիկս, Պետերբուրգ, Թրլիսել, Պեկին։ Ժապավենաձև հնագույն օրինակներն են՝ Մադրիդի «Պարիսի գեղոնա» (1859) և Բարսելոնայի հատակագիծը (ճարտ. Ի. Զերդա)։

58 Ամստերդամի ընդհանուր և մասնակի հատակագիծերը, բացարադիրը հրատարակված են հետեւալ վերնագրով՝ Groudslagen voor de Stedebouwkundige ontwikkeling van Amsterdam, 1935.

ՈՎՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ԱՆՑՈՒՄԸ ԴԵՊԻ  
ՕՐԴԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տևանք, ճարտարապետության նոր ուղղության հիմնավորման հարցում առաջացած խնդրականը ըստ էության ընթանում էր նախագծում մեթոդաբանության ներսում և առաջարկվում էր նախագծման ընթացքը (և ոչ թե նախագիծը ինքնին վերցրած) համատեղել հաստրակական իրականության հետ: Առաջարկվում էր նախագծի և իրականության կապը որոնել շինանյութերին հատուկ իրականության, արդյունաբերության մեջ ներդրված առարկայի և մարդու պահանջների իրականության ոլորտում: Ճարտարապետական ձևը բնորոշել ենելով հաստրակական կարգի բազմիմաստ կառուցվածքի իրականության շափանիշից: Գրոփիուսի կողմից հիմնորեն ձևակերպված սույն գրույթները սկիզբ էին առել դեռ նախաբաղադրաշինական շրջանում Ռասկինի, Մորիսի սոցիալ-բարոյական հայեցողություններում, հետագայում Բերլագի և Մութեզիուսի կողմից վերաիմաստավորված ձևով, ինչպես և Վան դէ Վելդեի ու Բերենսի կողմից Վերքբունդով ձևակերպված՝ տեսողականության (Sichtbarkeit), ներզայնության (Einfühlung) և տարածությունը կազմակերպելու (Raumgestaltung) տեսական սահմանումներով:

Ֆունկցիոնալ ռացիոնալիզմը վարդապետություն չէ, այլ շարունակ փոփոխվող, զարգացման ենթակա իրականության լայնատարած հորիզոնում վերաբունված, մարդու բոլոր պահանջները գեղեցիկի օրինաչափություններին համապատասխանեցնելու ձգտում է: Այսպիսի ձևակերպում ստացած արվեստի ստեղծագործությունն ընդգրկում է կյանքի հետ առնչվող բոլոր երկույթները, գեղեցիկը ստանում է իրերի էությունը բացահայտելու իմաստ, առարկան մարդուն հաղորդակից դարձնելու գործոն: Կապակցումը, որպեսզի համընդհանրացված լինի, պետք է կատարված: լինի ռացիոնալաբարությունը էքսպրեսիոնիստները հաղթահարելով արդի ճարտարապետության սկզբնական շրջանին հատուկ ըմբռուս լինելու դրվածքը, ներշնչումների համընդհանրություն դասն Բառհառությունը մեթոդում:

Եթե 30-ական թվականներին ազգայնամոլությամբ տարված Գերմանիայի հետագեմ ուժերը պայքարի դուրս եկան արդի ճարտարապետությունը ստեղծողների գել՝ «ազգային» «ավանդական» արվեստը վերականգնելու դիտավորությամբ փակեցին Բառհառությունը, նպատակ ունեին ճարտարապետական խնդիրները ներփակել ձևականության փակ շրջանակում, ուր ճարտարապետական ձևը հորինվում էր ոչ թե արտարերվելով իրականությունից, այլ՝ ձերից հետեւած միջոցներով:

Գրոփիիուսի համար ռարտարապետական խնդրի խորքում կայունացած է կլանքի օրևնքը, որը պես է հայտնաբերել<sup>1</sup>, իսկ լը Կորբյուզիեի կարծիքով հարկ է կառուցել ճարտարապետական կերպարը ու վերադրել ընությանը, երկու հասկացություն, որոնք տարրեր են և չեն հետապնդում պաշտոնական բռնազրութիւնը ձեւի շրջանակում պարտադրելու նացիստների նպատակը:

Ճարտարապետության պատմությունը լուսաբանող առաջատար խնդիրներից ձեւային կառուցվածքի խնդիրը հնարավորություն է տալիս հետազոտել անցյալի ճարտարապետական առարկան՝ շենքը, փողոցը, հրապարակը, քաղաքը: Միաժամանակ ձեւային կառուցվածքը ընդունելով որպես ընդհանուր համակարգ, հնարավոր է դառնում ճարտարապետականորեն կազմակերպել արդի մարդու կոլեկտիվ կյանքի միջավայրը:

Ձեմ և կառուցվածքի հարաբերության հարցը որոշակի լուծում է ստանում այն գեղքում, եթե կառուցվածքային սահմանում է տրվում տարածությանը: Այս հարցին վերաբերող տարրերը հայացքների համակարգում այդ սահմանումը համապատասխանում է պատմության տվյալ փուլին հատուկ սոցիալ-տնտեսական պայմաններին, տեղանքի էկոլոգիական հատկանիշներին, ավանդությներին տրված նշանակությանը և ձեզնկալման տըլյալ շրջանի հասկացությանը: Այս առումով ոճը, եթե ընկալվում է որպես նշված սահմանումների ամբողջական արտահայտություն, պատմական փուլը բնորոշելուց զատ ստանում է համընդհանուր նշանակություն. Կա, օրինակ, գոթականություն և «միջազգային» գոթական» դասական արվեստ և «նոր դասական», Ոճի առաջացման ու նրա տարածման, այսինքն առանձին երկութիւց դեպի նույն երկութիւ ընդհանրացված ձեւի անցումը, մի խնդրական է, որ գրավում է ճարտարապետի հետաքրքրությունը, մղում նրան վերագտնել անցյալի ոճերի տրամարանական այն հիմունքները, որոնց օգտագործումը հնարավոր է դարձնում իրար հարաբերել կառուցվածքը և գեղազարդական սարքը:

Հայտնի է, թե ինչպիսի առնչություններով են արդի ճարտարապետության վարպետները կապված անցյալի արվեստին: Այսպես, միջնադարը ներշնչել է Մորիսից մինչև Օլբրիխը հացորդող վարպետներին, Վերածնունդը՝ ամրող սացիոնալիզմը, սկսած Շենկելից և Սեմպերից, բարոկկոն՝ օրդանական շարժումը, հունական դասական արվեստը՝ լը Կորբյուզիեին, գոթականությունը՝ XIX դարի ճարտարապետությանը: Նման դիրքավորումից տարբերակվող ոճի ամբողջականությունը մասնաւող XIX դարի և XX-ի երեսնական թվականների ուկիւլալները, ակադեմիզմները թելագրում էին անցյալի ձեւերի և ժողովրդական արվեստների տվյալների վերամշակում և պահպանում:

Այսօր օգտվել անցյալից, նշանակում է մի կողմ թողնել ձեւ և ուշադիր լինել այն գործընթացին, որը կերպավորել է այդ ձեւը: Հայտնի է լը Կորբյուզիեի 1922-ին Բուենոս-Այրեսում կատարած բանախոսության հետևալ միտքը. «Ես խոստովանում եմ, որ միշտ ունեցել եմ միմիշայն մի դասաւունցյալը, մի կարգապահություն՝ անցյալի ուսումնասիրությունը»: Այսքանից հետևում է, որ անցյալի հետ կապը չի ժիշտվում (ինչպես արել էր Դրո-

<sup>1</sup> W. Gropius, Scope of total Architecture, London, 1956.

փիուաը), այլ կախում ունի մեթոդաբանությունից, անցյալի ձևերի և այսօրվա մարդու միջև հաստատվող կապերի եղանակից: Իսկ կապակցությունները հաստատող հիմնական տվյալներից մեկը կառուցվածքն է, ոչ թե ձևը կամ ապրիորի մտածված երկրաշափական կազմը, կամ գործառնությունների ուսումնասիրություններից հետևած արստրակատ տրամաբանություններ:

Կառուցվածքը բաղկացած է ճարտարապետական ձևի կազմավորմանը մասնակից ծավալման ու տարածական միավորներից և դրանք բաշխող ու իրար փոխկապակցող կապակցություններից: Այս վերջինները տեղաբանական (topologico) և երկրաշափական բնույթ ունեն, սոցիալական առումով ավելի կարևոր են, քան տարրերը, որոնք, ի վերջո, արժեքավորվում են կապակցությունների միջոցով առաջացած հարաբերությունների հիման վրա: Այսպիսով, ամբողջությունը, առանձին տարրերի համեմատությամբ, ստանում է առաջնային նշանակություն:

Հստ դասական հասկացության, տարրը (այուն կամ շենք) մասշտաբային առումով ստանում է յուրովի նշանակություն և անկախ այն բանից, որ մասնակից է ամբողջությանը (այուն, սյունաշար)՝ ծիշա նույն ձևով էլ տարրերի կրկնողությունը՝ հիմնված համաշափության, համաշափությունների վրա, որոշագրում է տարածության միասնական օրենքը, իսկ այդ և այլ տարրերի կապակցությունն առաջացնում է տարածական կառուցվածքը: Այս առումով հարկ է նշել հետևյալը. Եթե երեսակայական գծերով իրար կապենք, օրինակ, գոթական շենքերի կառուցվածքը կազմող տարրերը, հնարավոր կլինի ստանալ այդ շենքերի հատակագծերը և ծավալներն իրար հաղորդակից դարձնող շափակարգված ցանցը: Երկրաշափական համակարգը թելադրում է տարածությունը կազմակերպել ռացիոնալ շափականության հիմունքներով: Եթե այս միտքը վերաբերենք մշակութի տարածման խընդիրներին, ապա այդ դեպքում կարելի է մտածել, որ գոյություն ունեն, օրինակ, ուժնանական, գոթական, հելլենական կամ այլ մշակություններին հարազատ տարածություններ, որոնց կառուցվածքը պատում է քաղաքները, երկրը և հասնում տվյալ մշակութի աղդեցության սահմանը:

Այսօրվա հասկացությամբ, երբ շափային ցանցը հարաբերում ենք մարդկային հասարակական կեցությանը և կենցաղի մակարդակի բարձրացման համաձայն հաստատում նրա շափանիշը, այդ դեպքում շափային ցանցը տնտեսապես օգտավես է և լայն տարածում է գտել շինարարության բնագավառում, հատկապես վարչական շենքերի, հյուրանոցների և բնակելի շենքերի կառուցման միջ:

Կա մի այլ հանգամանք, որ հարաբերվում է, վերը նշված հարցին, բայց կապված է անցյալի ճարտարապետության հետ հաղորդակցվելու խնդրականին, դա հետևյալն է. հին քաղաքում նոր շենք տեղադրելը, ստեղծ նշանակում է տվյալ տարածության կառուցվածքային կարգը լուսաբանել և նորը հյուսել գոյություն ունեցող ծավալների դասավորումը բնորոշող ցանցի սահմաններում:

Գ. Ասպլունդը<sup>2</sup> 1934—37-ին նախադռում է Գեուստեռուրգի (Շվեդիա) քաղաքականականին հավելված մի նոր շենք, որի ճակատը հորինված է հին շենքի սլուների հեռավորությունը և հարկերի բարձրությունը սահմանող

<sup>2</sup> J. Joeqicke, Geschichte der modernen Architektur, Stuttgart, 1958, S. 195—198.

նույն ցանցով: Ա. Աալտոովի Հելսինկիում կառուցված Հենսո-Գուտշայտ (1959—62) շենքն իր համաշափություններով, նակատների կարրարայի մարմարե սալերի չափերով, հաղորդակից է դառնում նոր դասականի ոճով կառուցված մոտակայքի շենքերին:

Նույն շրջանին պատկանող լը Կորբյուգիեի կա Տուրետ մենաստանը (1957) կառուցված է ուղղանկյունի ծավալով, որին լը Կորբյուգիեն նվիրել է իր «Ուղղանկյան պոեմը» (Poème de l'angle droit, 1955) և բնորոշում է ուղղանկյունը որպես տարածության անասելի երկույթ (phénomène d'espace indicible), ճարտարապետության բարձրագույն կատարելագործման արգա-սիր:

Ծավալը (տարրը) ինքնին իմաստավորելը դասական հասկացություն է: Սակայն ինչպես հոնական տաճարը պերիստիլի միջոցով կապվում է շըր-չապատին, այդպես էլ կա Տուրետի ճակատների ուղղաձիգ կամ դուզ երկարող քառանկյունի բացվածքների շարքը, դրանցից ստացված լուսաստվերային երանգավորումները առաջացնում են կապակցություններ, որոնք համեմա-տության եղբեր ունեն Սիտոյի արբայրանի (1148) ճարտարապետության հետ: Խման մոտեցումով հորինված կա Տուրետը ներգրավվում է սխտերսին ճարտարապետության տարածական կառուցվածքի համակարգում: XII դա-րի տարածական կառուցվածքում առնված այդ մենաստանը նկատվում է որ-պես ավանդականի հետ հաղորդակցվելու, ճարտարապետության մեջ պատ-մականության պահը արտահայտելու առաջարկ:

Ներընդգրկել ու վերաիմաստավորել միջավայրային այն արժեքները, որոնք մշակել է մարդը գարերի ընթացքում, նշանակում է՝ հասարակական-պատմական իրադրության համաձայն վերագտնել բնություն-արհեստական միջավայրի հալասարակշությունը, նշանակում է նաև, մեր նախագծած շենքերի միջոցով, խույս տալ կապակցություններ արգելակող ճարտարա-պետական պատեշներ ստեղծելուց:

Ինչքան էլ ճարտարապետի դիրքորոշումը նախագծման ընթացքում ան-հատական լինի, նա չի կարող անտեսել գիտության ընդհանուր կանոնների վալերականությունը: Նա չի կարող ստեղծել ենենելով ոչնչից, այլ պետք է կարողանալ մշակած ձեր յուրահատկությունը միաձուկել նույնքան յուրա-հատուկ կառուցվածքի հետ և ամեն մի նոր նախագծում վերագտնել ձեր ու կառուցվածքի, այդպես և տարրի ու համապատասխան համակարգի միջն կայացած փոխադարձ կախվածությունը:

Նման հասկացությամբ որոշադրված ճարտարապետական ինդիրը հաստատում գտավ 1930-ի ԶիԱՄ-ի համագումարներում: Քաղաքական ան-նպաստ դրությունը խափանեց քաղաքաշինական նոր գաղափարների զար-դացումը: Հետագիմականների հաղթանակը Գերմանիայում գրդեց ճարտա-րապետներին, արվեստագետներին և մտավորականներին, գաղթել դեպի ավելի աղատ երկրներ: Պաշտոնական հրավերով Սովետական Միություն են տեղափոխվում է. Մայը<sup>3</sup> և Հ. Մայերը<sup>4</sup>, նաև Բ. Տառտը<sup>5</sup>: Ժամանակավո-

<sup>3</sup> 1930—33-ի տարիներին է. Մայը աշխատել է Սովետական Միությունում, ուր մշակել է Մագնիտոգորսկի, Ստալինսկի, Նիժնի-Տագիլի և Լենինականի ընդհանուր հատակագծերի նախագծերը (տե՛ս J. Baechschmitt, Ernst May, Bauten und Planung, Stuttgart, 1964).

<sup>4</sup> 1930-ին սկիզբ առավ Հ. Մայերի ճարտարապետական գործունեությունը Սովետական Միությունում, որը տեսաց մինչև 1936 թվականը. Այս մասին տե՛ս Hannes Meyer, Architektu-րա օ Ռիվոլուզո, scritti 1921—1942, Padova, 1969, p. 103—133, 159, 191.

<sup>5</sup> Բ. Տառտը Մուկվա է գալիս 1932-ին, ապա հաստատվում ճապոնիայում:

րապես Անգլիայում են ապաստանում Գրովիուսը, Մենդելսոնը, Մոնդրիանը և ուրիշներ, իսկ հետո հաստատվում են ԱՄՆ-ում: Բառապատճեր փակելուց շորու տարի անց Միս վան գեր Ռոբեր տեղափոխվում է Զիկագո:

Ֆունկցիոնալիզմը տարածվում է Անգլիայում և Սկանդինավյան երկրներում: Վազ շրջանում նատուրալիստական գաղափարներով տարված Ռայթը ստեղծում է Բրոդբյեր Սիտին (1932)՝ ուսցիոնալիզմի դրոշմը կրող քաղաքային մոդելը: Նույն ուղղությունը արձագանք է գտնում Խոալիայում, ուր պաշտոնապես ընդունված կեղծ դասականի միջավայրում 1928-ին կազմակերպվում է իտալական ուսցիոնալիստ ճարտարապետության առաջին ցուցահանդեսը և ռուսական ուսցիոնալիստ ճարտարապետության իտալական ուղղությունը» (ՄիԱՐ):

Համաշխարհային առաջին պատերազմի հաղթանակից հարստացած Անգլիայում էդուարդյան էկլեկտիզմը ներկայացնում էր քաղաքանիական լայն խավերում տարածում գտած ոճական հատկանիշը: Պատմականորեն արմատացած դյուրահաճ, խառնաշփոթ այդ ոճական իրողության մեջ անդիացին գտնում էր իր աղքայինի արտահայտության հպարտությունը, քաղաքական ուժի հարատևման նշանաբանը:

30-ական թվականներին Անգլիայում դեռ գոյություն չուներ մշակութային այնպիսի միջավայր, որ արվեստի մարզում հնարավոր դարձներ առաջադեմ ուժերի զարգացումը: Եվ զարմանալի չէ այն փաստը, որ Պ. Բերենսը 1925-ին հրավիրվեց Անգլիա ու նորդհեմքնում կառուցեց մի մենատուն: Տեղում իշխող արվեստի պահպանողական ուղղության դեմ հակադրրվելու դիտումով Պ. Բերենսը նախագծեց խորանարդածե, լերկ պատերով մի տուն: Այսօր այդ շենքը դիտվում է որպես «ճնշում ուղղության» առաջին օրինակը Անգլիայում: Այս փաստը, երևի շափականցություն թվա, եթե նկատի շառնենք վերը նշված մշակութային ընդհանուր դրությունը: Ավելի լայն առումով, սակայն, հարկ էր այնպիսի համոզմունքներ ստեղծել, որոնց միջոցով հնարավոր լիներ գերիշխող պաշտոնական արվեստին առնենթեր դիմել ավելի վաղ շրջաններում զարգացած, նորը թելադրելու արժեքներով օժտված մտքերին: Այս գործին մեծապես նպաստեցին Կենտրոնական եվրոպայում և ավելի ազատ մինուրոսում աշխատող դոմինիոնների ճարտարապետությունները:

Արդի ճարտարապետության տեսական մտքի ձևավորման ընթացքը Անգլիայում սկիզբ էր առել 1923-ին, երբ թարգմանաբար լույս տեսան Գրովիուսի, Մենդելսոնի և կը Կորբյուսիկի գրական գործերը: Եվ ինչպես միշտ, ոգևորվողները երիտասարդ արվեստագետներն էին: Նրանք 1931-ին կազմեցին «ՄԱՐՍ» (արդի ճարտարապետության հետազոտական ընկերություն) խումբը, որը 1934-ին կապվեց ԶիԱՄ-ի հետ ու դարձավ նրա անգլիական ճյուղավորումը: Պատմական ճշմարտության համար նշենք հետեւյալը. եթե Գերմանիայում, Հոլանդիայում, Խոալիայում, Ֆրանսիայում և Սովետական Միությունում արդեն իրագործել էին քաղաքաշինական նախագծեր, կառուցվել հետաքրքիր շենքեր, Անգլիայում իշխանությունների անտարբեր վերաբերմունքի հետևանքով ՄԱՐՍ-ի ճարտարապետների նախագծերը դեռ թղթի վրա էին:

1936-ին կարճատև ժամանակով լոնդոնում հաստատվեցին Մոնդրիանը և Մոնոլիթացին: Նրանք ևս թողեցին իրենց աղդեցությունը ամենատաղան-

դավոր արվեստագետների վրա, ինչպիսիք են ճարտարապետներ՝ Յորբեն, Մ. Ֆրայը, քանդակագործներ՝ Մուրզ, Հեպուրոթը: Նշանակալից եղավ Հովնդարիայում ծնված, Գերմանիայում կրթություն ստացած ն. Պելզների ունեցած դերը նա Անգլիայում հրապարակեց իր «Արդի ուղղության ռահվիրաններ» Ռ. Մորիսից մինչև Վ. Գրոֆիուս գիրը, ուր ցույց էր տրվում նույն անգլիացիներին, արդի ճարտարապետության առաջացման գործում նրանց ունեցած կարևոր մասնակցությունը: Պատմական նման ճշտումը կատարվեց նիշտ ժամանակին: Դա օտարի կողմից կատարված աղնիվ ներդրում էր ճնաժամամի այնպիսի շրջանում, երբ երկրի թարմ ուժերը ծարավ էին ինքնավստահություն ներշնչող մեկնաբանությունների:

Սագումով ոռու, Անգլիայում կրթված Ս. Գերմյանի աշխատակցությամբ Մենդելսոնը իրագործեց Գելսենմի բնակելի տունը, Զալֆորտ մենատունը (սրբ. Զիլիում) և ծովափնյա հոլորանոցամահ շենքը Բերսիլի մոտակայքում: Այս գործերին հատուկ հորինվածքային ճկոնությունը, հնարամտությունը և տեխնիկական բարձր որակը թողեցին իրենց աղքեցությունը: Գրոփիուսի ներդրումը, թեև դանդաղ ընթացքով, բայց ավելի հիմնավոր եղավ: Նրա աշխատավիցն էր է. Մաքսուել Ֆրայը: Գրոփիուսը իր գործունեությամբ փորձեց դանել երկու երկրների ճարտարապետական մշակույթների այն կապակցությունները, որոնց ակունքը հասնում է մինչև Կոլը և Մորիսը: Նույն Զելսե վայրում Մ. Ֆրայի հետ կառուցած մենատունը նորարարություն էր: Գրոփիուսը հորինում է շենքը գործառնությունների վերլուծության և դանակով: Խմայինգինը դպրոցի շենքով Գրոփիուսը հեղաշրջում է մինչ այդ լընդունված հատակադարձային-ծավալային լուծումները: Նա մեկնում է դպրոցի հիմնական դրույթներից (դասավանդում, զրուանք, կուեկտիվ գրուանքներ), հերթական մշակումով ամփոփում դրանք ծավալների սահմաններում ու տեղադրում շենքերը՝ նույն հորինվածքում ընդգրկելով աղատ, կանաչ տարածությունները: Վերլուծական եղանակով հորինված այս իրադրումների միջոցով Գրոփիուսը ցույց տվեց կյանքը ճարտարապետականորեն կազմակերպելու ձեզ մարդուն պատշաճեցնելու եղանակը, որն այնան տարրեր է Մենդելսոնի փոքր-ինչ ձեամոլ լուծումներից:

Սագումով ոռու ճարտարապետ Բ. Լուբետկինը, ուրիշ ճարտարապետների հետ միասին, 1933-ին հիմնում է «Տեկտոն» (Tecton) նախագծող խումբը: Նրանց նախագծերով իրագործված են Լոնդոնի կենդանաբանական այգու կառուցները (Պինգուին պոլը), Հայֆեյտի բնակելի տները (խաշած հատակագիծ, երկհարկ բնակարաններ), որոնք ըստ կը կորբյուլիկ ունանակություն ունեն «ճարտարապետության նոր սերմունդներ» պատշաճեցնելու եղանակը, որն այնան տարրեր է Մենդելսոնի փոքր-ինչ ձեամոլ լուծումներից:

Անգլոսաքսոն մշակույթում ուացիոնալիզմի թողած դրական աղքեցությունը համապատասխանեց նախագծման գործում նոր միջոցներ կիրառե-

<sup>6</sup> Ն. Պելզները մնաց Անգլիայում ու շարունակեց դասավանդել նախ Քեմբրիջում, ապա՝ Լոնդոնում: Իր դասախոսությունները ամփոփեց «Արդի ճարտարապետության պատմություն» պամապատճեալ գրքում:

<sup>7</sup> Բերտոլդ Լուբետկին՝ ճարտարապետ և գրող, 1930-ին հաստավված է Անգլիայում, մասնակից գանում Գրոփիուսի, Մենդելսոնի, Բրոյերի հիմնած Արդի ճարտարապետության գիտահետազոտական ընկերությանը (Modern Architecture Research Society), որի հիմնադիրն է անգլիական ուացիոնալիստական ընկերությունը.

լու ուղղության հետ, որի հետևանքով հաստատում գտավ ոչ թե պատրաստի գաղափարներին հետևելու սովորութը, այլ նախագծման նոր մեթոդ՝ մշակելու անհրաժեշտությունը, գեղագիտական պահը կառուցելու պահի հետ նույնացնելու միտումը։ Նախագիծ-իրականություն շաղկապը օրգանական ճարտարապետության հասկացություն է և բնորոշ է անզուսաքսոն ու սկանդինավյան մշակույթներին։ 1940-ին Կոպենհագենում իրագործված թելլավիստ թաղամասը (Ճարտ. Ս. Յակոբսեն) օրգանական քաղաքաշինության լավագույն օրինակներից է։ Խոկ որպես ընդհանուրացման փորձի արդյունք նշանակալից է Գրոֆիտսափ և Բրոյերի նախագծով 1941-ին կառուցապատված նյուր-Քենսիփունի (ԱՄՆ) բանվորական թաղամասը, ուր շենքերը հորիզոնականների ուղղությամբ տեղադրված լինելը փաստում է գրոփիույան մեթոդի կրած այլափոխությունը։

30-ական թվականներին գերմանական շրջանից առաջացած քաղաքաշինական մշակույթի նոր ուժերը ցըվել էին, փակվել էր թաուհապուզը։ Կենտրոնական եվրոպայի քաղաքական նզնաժմամբ շարունակվում էր առանց դադարի ու պետք է գտներ իր ողբերգական վախճանը համաշխարհային երկրորդ պատերազմում, մարդուն հասցնելով արժանապատվության կործանման եղբին։

Մեալիստ մտածողությամբ օժտված, միշտ ուղղված ծովածությամբ կողմնորշված, քաղաքային իրագործության մեջ նոր կապ հաստատելու նպատակով դրական առաջարկներ արած ուսցիոնալիստ ճարտարապետները զարգացրին քաղաքային գործառնության գաղափարը՝ հիմնվելով բնակավայրերի շափակության ու մարդկանց գործունեության դասավորման վրա։ Սակայն սրանք քաղաքի մասնակի հարցերին առնչվող, մեթոդական նշանակություն ունեցող դրույթներ են, որոնց միջոցով անհնար է ընթացքի մեջ դնել քաղաքաշինական ավելի ծավալուն փորձառություններ։ Հարկ էր դուրս գալ ուսցիոնալիստ հասկացությունների սահմաններից և հետամուտ լինել հասարակական ու հոգեբանական իրողությանը՝ առանց սահմանափակվելու քաղաքի կառուցվածքային ընդհանրություններով և նոր դրույթներով հարստացնել նախագծման մեթոդաբանությունը։ Այս առումով, հատկապես 1940-ից հետո նկատելի է զանոնում տարրեր երկներում նախագծման նոր մեթոդների մշակումը։ Է. Մայերը լուսավորչականության և միջնադարյան ոճի նախապաշարումներով տարված, առաջարկել էր արդեն քաղաքը որպես բջջային միավոր դիտելու գաղափարը։ Եվ բջջային ուսցիոնալիստ քաղաքը իր նախագծով հաղթահարել էր «քաղաք-այգի» հովվերական ըմբռնումը։

Քաղաքը կազմաբանական ուրվագծերով (օրգանական միավորներ զարգացնելու գաղափարը առկա է Կ. Շտայնի՝ Ռադրումի (ԱՄՆ) ընդհանուր նախագծում (1928) և համընդհանրացված ձևով մշակվեց Պ. Արենբրումբիի՝ 1944-ին լույս տեսած զեկուցագրում։ Օրգանական միավոր հասկացության հիմքում ընկած է սպասարկումներով ամբողջական, համայնքի նույն կենտրոնին ձգվող անգլիական «ղուացիական միավոր» (Neighborhood Units) թաղամասի կազմը։ Այդ մոդելը հատուկ է անզուսաքսոն ավանդությանը և

<sup>8</sup> Ամերիկացի ճարտարապետներ Կլերենսը, Ս. Շտայնն արդի քաղաքաշինության հիմնադիրներից են ԱՄՆ-ում։ Շտայնը հիմք ընդունելով Հոուարդի ռժամայնական քաղաքը, առաջարկում է քաղաք-բջջանց քաղաքային ավելի տարածում օրգանիզմի գաղափարը։

նույն ռացիոնալիստների կողմից հանդես է գալիս հետագա իրագործումներում: Օրինակ՝ Վ. Գրուփիուսի և Մ. Վագների ղեկավարած Հարվարդի ուսանողների կողմից մշակված Կոնկորդի նոր կենտրոնի նախագիծը (1946)<sup>9</sup>, որն ուսումնասիրված է «Բնակելի թաղամասը որպես քաղաքաշինական խնդիր» (Housing as a town-building problem) գրքում: Եզրակացություններն ամփոփվեցին տասներկու կետում, որոնք կրում են նոր քաղաքի կառուցման ժրագիր (A Program for City Reconstruction) վերնագիրը: Այդտեղ տրվում են քաղաքի նոր կառուցվածքը սահմանելու մինչ օրս հիմնական համարվող բոլոր պայմանները: Դրանք հետևյալներն են. հարկ է ստեղծել քաղաքային թաղամասեր (townships), դրանց միջոցով սահմանել քաղաքի ընդարձակությունը: Իր հերթին թաղամասի մեծությունը պատշաճ է լինելու հետիւններին (ոչ ավելի, քան հինգ հազար բնակիչ) ու տեղակրված պետք է լինի այցելիք, պտղատու ծառեր ունեցող թաղամասի կենտրոնից ճառագայթած զարգացող, թաղամասը շրջափակող կանաչի հետ միացնող տարածության մեջ: Երթևեկության գլխավոր ճանապարհը պետք է շրջանցի թաղամասը, իսկ ավելի նեղ ճանապարհները երակների նման պետք է թափանցեն բնակավայրի օրգանիզմի մեջ: Ներկայացված նախագծում քաղաքը քաղակացած է վեց թաղամասից, որոնցից ամեն մեկն ունի իր կենտրոնը, իսկ ամբողջ քաղաքի համար նախատեսված է համայնքային ավելի մեծ կենտրոն: Այդպիսով, ավելի օրգանական կազմ ունեցող դրացիական միավորի հասկացությամբ վերահաստավորված զիգունդը ստացել էր քաղաքային թաղամասի նշանակություն: Նման միավորների միջոցով հնարավոր է փոքր քաղաքներ ստեղծել, այսպես կոչված, քաղաքային տարրերակված միավորներ, որոնք կարող են տեղադրել մեծ քաղաքների շրջակայրում ու ծառայել որպես մեծ կենտրոնների ապակենտրոնացման բնակավայրեր, և, որ ամենակարևորն է, քաղաքների անկանոն աճը շափակորող, այնտեղ ծավալվող խառնաշփոթ կյանքը կանոնավորող արրանյակատիպ միավորներ:

Նման միավորներ ստեղծելու գաղափարի հիմքում ընկած է հին քաղաքների թաղամասերին հատուկ՝ միասնաբար ապրելու ավանդույթը, որը պարունակում է այն դրական միտքը, ըստ որի հարկ է քաղաքաշինական ծրագրման կենտրոնում տեղադրել մարդու որոշակի պահանջները:

Հիմնական գաղափարն իր հետագա սահմանումն է ստանում դրացիական միավորների ստեղծումով, որոնց ավարտուն ձևը մշակվել է 40-ական թվականներին՝ հետևյալ դրույթների հիման վրա. բավարարել մարդու բնախոսական, մշակութային, հոգեբանական պահանջները, արժեքագործը և առաջին պլանի վրա դնել հետիւն անցումներն ու կանաչ տարածությունները, ճանապարհների դասակարգումը կատարել գործառնությունների և տեղափոխման միջոցների համաձայն: Բնակիչների քանակը լինելու է քավական բարձր, որպեսզի կոլեկտիվ կյանքը աշխույժ պահպանվի, բայց ոչ այնքան, որ դժվար լինի իրար ճանաչելը (3000-ից մինչև 10.000 բնակիչ):

<sup>9</sup> Դրացիական միավորը, տեսական առումով, մշակել է Կ. Պերրին. քաղաքաշինական առաջին իրագործումները կատարել են Կ. Շատարը, Դ. Յոնսոնը և Հ. Ռայթը՝ հետևյալ վայրերում: Աննի Սայդ Գարդենս, լոնդ Ալլանդ, Ռայթը (տե՛ս Clarence Stein, Toward New Cities for America, Liverpool, 1958).

Դրացիական միավորների ծավալատարածական կառուցվածքը պետք է լինի սահմանված և բաղաքից տարբեր:

Այս մտքերի ծավալաւմն ու ընդլայնումը բերեց ոչ միայն քաղաքաշինական իմացությունների հարստացում, այլ հնարավոր դարձրեց վերաբեմաստավորել մեծ քաղաքների մարմնում մերկած հին թաղամասերը: Նույն մտքերի ամենանշանակալից գործադրումները հանդիսացան անզլիական և ամերիկյան «նոր քաղաքները» (New Town):

Ուսուպիական սոցիալիստների առաջարկած բնակավայր-աշխատավայր քաղաքային կենտրոնները տեղադրված էին քաղաքների արհեստական միշավայրից հեռու, պանթեիստ բարոյականությամբ ընկալված բնության ժողով (Գոդենի Ֆամիլիստերիոն և Գիլա գործարանը, 1871)<sup>10</sup>:

Ավելի անցյալին տուրք տվող այս հասկացությունը հատուկ էր նախաքաղաքաշինական շրջանի առաջադեմ տեսություններին (Ռ. Օուեն, Շ. Ֆուրիե, է. Կորե): Նոր քաղաքներ ստեղծելու խնդիրը, սակայն, չը գտնելու համընդհանուր լուծում, եթե շատեղծվեր բնակավայր-աշխատավայր, մարդշրջապատ կապակցությունները մարդամուտ հիմունքները ծրագրելու սոցիալ-տնտեսական նոր համակարգը<sup>11</sup>:

Անգլոսաքսոն երկրների համար կարևոր եղավ Պ. Ջեդեսի «կենտրոնականության» տեսությունը: Ջեդեսը գտնում էր, որ յուրաքանչյուր քաղաքշինական ծրագիր (town planning) պետք է պայմանավորված լինի մարդու պահանջների որոշակի բովանդակությամբ, այլ կերպ ասած, քաղաքային միավորների նախագծերում պետք է կենտրոնական նշանակություն տալ կոլեկտիվ պահանջներին, իսկ նախագծումը կատարել պատմականորին հաստատուն գիտելիքների հիման վրա: Այս սկզբունքների համբնդանրացումով, Ջեդեսը քաղաքաշինական ծրագրումը հասցրեց գիտական մասնաճյուղի, առաջ քաշեց այն գաղափարը, ըստ որի, մարդկանց հաստատությունները, օրգանական և բնաշրջման ենթակա ամբողջություններ դիտելու հասկացությանը վերագրվում է առաջնային նշանակություն<sup>12</sup>: Ըստ տնտեսականորին և հասարակականորեն ինքնարավ քաղաքային մոդելի, Լոնդոնի շրջակայրում առաջանում են նոր քաղաքներ՝ Ստիլբենայշ, Հարլոու, Կրուուլի: Դրանց օրգանիզմում կենտրոնականությունը ստանում է քաղաքի կենտրոնի արժեք և բնակիչների միջև կապակցություններ առաջացնելու իմաստ: Ջեդեսի տեսության էկոլոգիական բաղադրիչը պայմանավորեց քաղաքային նոր տիպերի մշակումը: Այսպիսով, կենտրոնականության զեղեցյան գաղափարը կիրառում գոտավ դրացիական միավորներում, սակայն կազմակերպված գործառնությունների ոլորտում շուտով հետևեց հասարակական կարգերի անշատում, մի բնակավայրում ապրողների մեկուսացում հարեւան համայնքների ապրողներից: Մեկուսացմանը նպաստեցին նաև ֆիզիկական և տնտեսական պայմանները՝ տարածության սահմանափակումները (կանաչ գոտի, զոնավորում), գործառնությունների ընտրասերումը և տնտեսա-

<sup>10</sup> J. B. Godin, Social solutions, in „Social Solutions“, № 10, 8-IX-1886, Paris.

<sup>11</sup> F. Engels, La questione delle abitazioni! (1872), Roma, 1950, p. 72.

<sup>12</sup> 1911-ին Ջեդեսի կողմէց կազմակերպված ցուցահանդեսը՝ Gedde's Cities and Town Planning Exhibition ըջում է Անգլիայի քաղաքներում, այսուետեւ՝ Եվրոպայում և Հնդկաստանում, P. Geddes, Cities in Evolution, London, 1915.

կան գործուները<sup>13</sup>: Նման իրադրությունից բխում են որոշակի ձգտումներ՝ համայնքներից հեռացնել այն ընտանեկան կազմերին, որոնց միջոցները տարրեն են, եկամտի տարրերություններից հետևած նույն մակարդակի ընտանիքների խմբավորում և դրանց միջև առաջացող ինքնանջատման երևությունների մասնակիցների համար կամ անզիշական նոր քաղաքների այսօր կրում են «Հարուստների» կամ «աղքատների» քաղաք անվանումը: Կապիտալիստական երկրներին համուկ այս կարգը բարդանում է, եթե նկատի առնենք էթնիկական միավորների հարցին վերաբերող անցյալի գետունները և մեծ քաղաքներում էթնիկակիցների իրարից բաժանված թաղամասերի առկայությունը:

Կապիտալիստական քաղաքաշինության առումով հնարավոր է մեղմացնել հասարակական անջատումների երևությը՝ ստեղծելով կառուցվածքային երկու համակարգեր՝ «խառն դարձացում ունեցող» և «մասնագիտացված համայնք»-ները: Դրանցից խառն զարգացումով (Mixed development) քաղաքին միավորը ձևավորվել է այսպիս: Միավորը պետք է արտացոլի՛ առանց զատիչ գեր խաղալու, երկրի համայնքային կազմը, տնտեսական համակարգը և էթնիկական իրողությունը: Նման բազմազանությանը պետք է համապատասխանեն շենքերի նույնքան բազմազան ձևավորումները, որոնց արժեքների տարրերակումը ձգում է տարրեր խավերի և այդ հանգամանքը նպաստում է բնակիչների «խառն» դասակարգմանը: Տվյալ լուծումը ոգործել էր և. Մումֆորդին<sup>14</sup>, իսկ և. Հիլբերտսայմերը գրում է. «Տարբեր տիպի շենքերով կերտած քաղաքային հորինվածքը հնարավոր է դիտել որպես ապագա հաստատությունների ձև»<sup>15</sup>: Սույն սկզբունքներով իրադրծված բնակավայրային թաղամասերի նշանակալից օրինակներից է Լոնդոնի Ռոհեմպթոնը, երկրորդ համակարգի համաձայն (Social Specialization) հնարավոր է հաղթարել հասարակական անջատումների երևությը, ոչ թե փոխելով քաղաքային միավորների ինքնին էությունը, այլ կապակցություններ առաջացնելու դրանց միջև ու այդ կերպ, միավորների գործառնական կղզիացումից հանգել բոլոր կենտրոններին ընդգրկող գործառնությունների բարձր, համբողջանուր համակարգի<sup>16</sup>: Սա նշանակում է՝ ստեղծել քաղաքատիպ կամ գյուղատիպ կենտրոններ, երիտասարդների կամ տարիքավորների համայնքներ: Եեշտելով տարբերակումները (որոնք ԱՄՆ-ում համեմատ են քաղաքահասարակական, էթնիկական, կրոնական ստորաբաժանումների), ստեղծել քաղաքային միավորների ամբողջական համակարգ, որը հնարավորություն կտա նոր կապակցություններ հաստատելու, կամ մի կենտրոնից մյուս կենտրոնը տեղափոխվելու համար: Քաղաքաշինական առումով նման հասկացությունը պրագմատիկ է ու չի հիմնվում մողելների վրա, այլ ենում է այն համոզմունքից, որ միշտ էլ միջավայրի շարունակ փոփոխվող պայմաններն են թելադրում կենտրոնների կերպարային արտահայտությունը:

<sup>13</sup> Վաշինգտոնի և Բալտիմորայի միջև ընկած Կոլումբիա կոչվող դրացիական միավորման մեջ կարող են բնակվել միայն այն ընտանիքները, որոնց տարբեկան եկամուտը հասնում է 9—12 հազար դոլարի:

<sup>14</sup> L. Mumford, The Urban Prospect, New York, 1968, p. 75.

<sup>15</sup> L. Hillberstmer, Un'idea di piano, Padova, 1967, p. 47.

<sup>16</sup> W. Weaton, Form and Structure of the Metropolitan Area, in AA. VV., Environment for Man, Bloomington, 1967.

Սկանդինավյան երկրների իրագործումներում (Վելինգթոն) շեշտը դրվում է տարածության և միջավայրը մարդու չափանիշին համապատասխանեցնելու վրա: Ֆինլանդիայում և Դանիայում կառուցված քաղաքային միավորներում (Ստոկհոլմ, 1950, Բելլահոսի, 1951) նկատելի է Կենտրոնական Եվրոպայի ռացիոնալիզմի տեսակետների առկայությունը, դրանք տեղական ճարտարապետության և ապրելակերպին համերաշխելու ձգտումը<sup>17</sup>: Նույն ուղղությամբ ընթացան իտալացի ճարտարապետները, որոնք «նոր ռացիոնալիզմ» անվանումով ստեղծեցին քաղաքային միավորների յուրօրինակ տիպեր<sup>18</sup>:

<sup>17</sup> A. Aalto, Oeuvres complètes 1922—1960, Zürich, 1963.

<sup>18</sup>Տե՛ս Ա. Զարյան, նշվ. աշխ., էջ 32—46:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո կոնդոնը աճեց քաղաքը շրջապատող կանաչ գոտու սահմաններից անդին, կապակցությունների ուղիների երկայնքով, ընդգրկելով մինչև 60 կմ հեռավորության վրա գտնվող ավանները, որոնք մինչ այդ անդում էին այլատեսակ օրգանիզմներ համախմբող սիմբիոզի դաշնակցությամբ։ Միաժամանակ վերջիններիս կից կառուցվեցին նոր կենտրոններ։ 1951—61 թթ. մայրաքաղաքը շրջապատող այս շրջանում արդեն բնակվում էր մեկ միլիոն մարդ։

Այսօր կոնդոնը որպես մետրոպոլ մեծագույնն է Եվրոպայում, իսկ Նյու-Յորք, Նյու-Յերսի և Տոկիո-Ցոկոհամայից հետո՝ երրորդը աշխարհում։ Պարզության համար նշենք, որ մեծ կոնդոնը և արտաքին շրջանը իրար հետ միասին կազմում են կոնդոնի շրջանը, որը սոցիալ-տնտեսական, որոշ շափով և վարչական կազմով բաժանված է օղակների համակարգի։ Օղակների այս համակարգը պատկերում է ետպատերազմյան քաղաքաշինական այն քաղաքանությունը, որը հաստատվեց 1940-ին, Ս. Բարլովի նախագահած ռժագալուրական հանձնաժողովի «զեկուցագրի» տվյալների և առաջարկների վրա։ Մրագրված կառավարական քաղաքականությունը օժանդակեց երկրի հյուսամային և արևմտյան շրջանների աշխատավոր ուժերի հուսքը ուղղելու կենտրոնական և հարավային ավելի բարենպաստ վայրերը։ 1930—39 թթ. նման տեղաշարժեր առաջացան հատկապես կապիտալ նոր ներդրումների (բնակարաններ, դպրոցներ, երթևեկության ցանց) գործում։ Սկզբնական շրջանում կապիտալի միավոր արժեքը ավելի բարձր էր գնահատվում, քան զաղթած աշխատավորի արտադրական ունակությունը։ Մասնագետ երիտասարդները լինենց ծննդավայրերը և այնտեղ թողնելով ավելի տարիքավորներին, առաջացրին աշխատավոր ուժի անհավասար բաշխում։ Ընդհանուր առմամբ պակասեց արտադրողականությունը, իշավ կենցաղի մակարդակը։ Ճգնաժամային նման դրությունը ստիպեց կառավարությանը կաղ-

1 Լայնատարած այս զարգացումը մարդու համար նշանակում է ամեն օր տեղաշարժվել տասնյակ կիլոմետրեր։ Արդեն 1938-ին քաղաքի էլեկտրական արանապորտի ցանցը հասել էր 24 կմ երկարության։ 1961-ի ավլաներով և՛նեծ կոնդոնի Ատյանից իշխանությունը ընդգրկում էր 1605 քառ. կմ մակերես, որը բնակվում է 8 միլիոնի հասնող բնակչություն։ Հետեւար, բնակավայր-աշխատավայր սոցիալ-տնտեսական խնդիրը հասել էր մտահոգիչ իրողության, հատկապես, եթե նեկատի ունենք մայրաքաղաքը և շրջապատող արվարձաններն ու «էլոնդոնի պլանավորված շրջանի» որոշման սահմանումը, ընդհանուր մակերեսը հասնում է 11427 քառ. կմ, այսիքան՝ 65 կմ շառավիղ ունեցող տարածություն, որը բնակվում են տասներկու և կես միլիոն մարդ (1961)։

մակերպել արդյունաբերության զարգացման, ուժերի և արտադրական կենտրոնների ծրագրավորումը: 1934-ին լուս տեսավ «Հատուկ շրջանների զարգացման և բարելավման ակադեմիա»: Ըստ այդ ակադեմի երկրի հյուսիս-արևմրտյան հատվածում և Շոտլանդիայում նախատեսվում էին չորս հատուկ շրջաններ, ուր տեղադրվելու էին արդյունաբերական նոր կենտրոններ: Պարզ է, որ նպատակը դեպի հարավ ընթացող աշխատավորների հոսքը կանգնեցնելն էր: Բարլովի հանձնաժողովի գեկուցագրի (1940) և կառավարության սպիտակ գրքի առաջարկները (1944) հետևյալն էին.

— հիմնական արդյունաբերությունները զարգացնել անզործությամբ տառապով կենտրոններում,

— արդյունաբերությունների մասնաճյուղային տարրերությունների հիմունքներով բնորոշել նորակազմ կենտրոնները,

— ավելացնել հատուկ շրջանների քանակը և 1945 թ. մի նոր ակտով (արդյունաբերության տեղաբաշխման ակտ) կազմակերպել զարգացման շրջաններ,

— առևտորի մինիստրությունը, որի ղեկավարությանը հանձնվում են զարգացման շրջանները, միաժամանակ կենտրոնացնում է արտաքին առևտորի հրագաւածությունը, ալիպիսով ուղղակի կապ է հաստատվում երկրի արտադրական ուժերի և ապրանքների վաճառահանման առավել շահավետ մրցակցության միջև:

Առևտորի գերատեսչությունը լիազորություն է ստանում զարգացման հնթակա հողամասների վրա, պատասխանատու է դառնում նրանց իրացմանը՝ նոր գործարանների տեղադրման, կառուցման, ինչպես և կապիտալների ներդրման հարցում:

Մինիստրությանը տրված օրենսդրական, կազմակերպչական այս հնարավորությունները ստեղծեցին մի հեղինակություն, որը նպաստելու էր լայնատարած և երկարատև ծրագրավորումների իրագործմանը: Բնական է, այդ ծրագրերը հանգրվանեցին քաղաքաշինարարների սեղանին, և նրանք էին, որ վերջնականապես կազմակերպելով քաղաքի խառնաշփոթ իրագրությունը, առաջարկելու էին բարելավման ու կառուցապատման նախադերը: Լոնդոնի համար ընտրվեց ճարտարապես Պատրիկ Աբերբրումբին: Ենիսով Բարլովի զեկուցագրից, նա նպատակ դրեց նորովի կազմակերպել քաղաքաշիների կյանքը և աշխատանքը, այսինքն ծրագրավորումը հիմնել հասարակական-տնտեսական պայմանների բարելավման վրա<sup>2</sup>:

Պ. Աբերբրումբին հավատում էր, որ անկազմակերպ աճող քաղաքում կարելի է հավասարակշռված կազմ ստեղծել: Մարդկանամարի ճշգրիտ տըվյալները (Բարլովի զեկուցագրի) կարող էին թելադրել քաղաքի զարգացման աստիճանական ընթացքը, կարելի էր տալ բաղադրում գործող տարրեր ուժերի հավասարակշռված սահմանումը: Սա էր անգիտացի առաջավոր քաղաքաշինարարների ամենախոր համոզմունքը: Հարցի այդպիսի դրվագի նախադրյալներ կան միջնադարյան քաղաքի կազմում, իսկ արդի հասկացողությամբ դրանք առնչվում են Օուենի քառանկյունի ցանցով բաժանված բնակելի կենտրոնների, Մորրիսի և Հատկապես Հոուարդի քաղաք-այգու գաղափարի հետ: Քաղաքաշինության անգիտական ավանդը ենում է այն մեծ փորձություններից և նպաստավոր պայմաններից, որոնց հիման վրա ծնունդ

<sup>2</sup> J. H. Forshaw, P. Abercrombie, Country of London Plan, London, 1943.

առավ Արեգբրոմբիկ՝ «ՄՆԾ Լոնդոնի» նախագիծը՝ նա ոչ միայն նկատի ունեցավ գոյություն ունեցող քաղաքը, նրան շրջապատող կանաչ գոտին, այլև նրա շրջակայրում տեղադրված ավանները: Այս ամենը՝ բնակիչների և աշխատանքի վայրերի ձգրիտ բաշխումների նկատառումով պետք է պահպես բաղադրի բարելավումը: Հիմնականում Արեգբրոմբիկ առաջարկները ամփոփված են հետևյալ հինգ կետերում՝

1. Բնակիչների բանակը (շուրջ տասը միլիոն) պետք է մնար անփոփոխ, այսինքն այդ ժամանակաշրջանում կոնդոնում բնակվող մարդկանց քանակը չէր ավելանալու այն դեպքում նույնիսկ, եթե քաղաքի սահմանները ընդլայնվեին՝ հասնելով նոր շրջանների: Ո՞չ բնակչության բնական աճ, ո՞չ էլ դրսից եկողների հոսանք, քաղաքը ապրելու էր ինքնափոխմատուցման կարգով:

2. Քաղաքի վարչական կենտրոնի միջին խառնվումը սահմանվում է 100 կամ 75 մարդ մի քառակուաի ակրի վրա ( $0,40$  հեկտար), պարտադրվում էր 1.250.000 բնակչի հեռանալ և հաստատվել շրջանային հատվածներում, իսկ կենտրոնի ոչ վարչական մասերից հեռանալու էին 750.000 մարդ, պահպանելով խտությունը 136 անձ  $0,40$  հեկտարի վրա ( $\text{ընդհանուր գումարով} 2.000.000 \text{ մարդ}\)$ : Բնակիչների խտության նոսրացումը պահպանելու նպատակով կենտրոնից արվարձաններն էին տեղափոխվելու գործարանային միշտրը հաստատությունների:

3. Արգելվում էր կոնդոնում և շրջակայրում նոր գործարանների տեղադրուում:

4. Կոնդոնը զարգացնելու էր նավամատուցային սարքավորումներ ու այդ առումով դառնալու էր աշխարհի կարեռագույն կենտրոններից մեկը:

5. Պահանջվում էր հողամասի արժեքները հսկելու ավելի մեծ իշխանություն:

Նշենք, որ բնակիչների նման տեղաշարժում հնարավոր եղավ կատարել, քանի որ երկիրը պատերազմի մեջ էր և կոնդոնի կենտրոնը ավերված էր: Նման իրավիճակը պատմական այն հավադեպ առիթներից էր, որը պետք է օգտագործվեր: Սակայն պատերազմի ավարտից հետո կուալիցիոն կառավարությանը հաջորդեցին լեյբորիստները, որոնք սկիզբ դրին «առուտերիտի» քաղաքականությանը, այդպես կորցնելով բարենպաստ պահեց:

Վերը նշված հինգ կետը տեղական վարչական ղեկավարությանը առաջարկված այն մարքերն են, որոնք իրականացնելու համար քաղաքը բաժանվեց միակենտրոն չորս օղակների: Ամեն մի օղակի կառուցապատումը կատարվելու էր՝ ենելով բնակիչների թվից և խտությունից, հողամասերի օգտագործումից, արդյունաբերության տեղադրումից, ինչպես նաև ազատ տարածությունների՝ զրոսայինների և հողամշակման հատվածների բաշխումից: Աղաս հողամասերը, ինչպես առաջարկում էր Հոռուարդը, հավասարակշռությունը էր էին խաղալու:

Անցնենք օղակների նկարագրությանը. Առաջին օղակ՝ «իններ ոլոնդ», համընկնում է քաղաքի ամենահին մասի հատ (*Սիւիթի, Վեստմինստեր, կայարանների օղակ, Հոլբերն, Ֆայնմարի:* Նրա ծրագրումը կատարվել էր 1943-ին և հիշվում էր որպես «կոնդոն

<sup>3</sup> P. Abercrombie, Greater London Plan, London, 1944.

**Քառամտրի Քառամսիլ»** (լթթ): Բնակիչների խտությունը այս օղակում հասնելու էր՝ 200—250 անձ մի հեկտարում և մոտ 3 հա ազատ տարածություն ամեն 1000 բնակչի համար:

Եղերգրդ օղակ՝ «Սուրուրբան ոինգ», շրջապատում է Զարինգ Կրոսը՝ 20 կմ շառավիղով ու կառուցապատված է ազատ տարածությունների անխնա օգտագործմամբ (կառուցապատման նշանակալից մասը կատարվել է երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում): Այս օղակում դրված խնդիրը հետեւյան էր՝ որակավորել և խմբավորել գոյություն ունեցող հաստատությունները, ստեղծել բնորոշված հասարակական խմբավորումներ: Բնակիչների խտությունը սահմանվում էր՝ 125 բնակիչ մեկ հեկտարի վրա:

Եղերգրդ օղակ՝ «Գրին բելդ ոինգ» հասարակական սեփականություն է (1938 թ. օրենքով), ինչպես նաև անհատական հողամշակման այգիների (որ պայմանավորված է չկառուցապատել) հսկա հողատարածություն: Նախագիծը նախատեսում է գոյություն ունեցող հաստատությունների հետագա զարգացումը, հովանավորում է ազատ տարածություններում ստեղծել մարմարալզության կենտրոններ, խաղաղաշտեր, զբոսայգիներ և միմիայն հետիոտների համար նախատեսված ճանապարհների ցանցեր: Երրորդ օղակը սպասարկելու էր ամբողջ Մեծ Լոնդոնին: Բնակչության խտությունը՝ մոտ 40 անձ մեկ հեկտարում:

Չորրորդ օղակ՝ «տուուեր Քառամարի ոինգ» Մեծագույն տարածությունները երկրագործության համար հատկացված լայնարձակ հողամասերի օղակն է, ուր իրագործվելու էին ամենից կարեւոր ծրագրումները: Այստեղ բնակելու էին երկու միլիոնի հասնող քաղաքի կենտրոնական մասից հեռացողների մեծամասնությունը: Կարգավորվելու էին գոյություն ունեցող ավանները, ստեղծվելու էին նոր քաղաք-արբանյակներ:

Չորրորդ օղակը կատարելու էր քաղաքը և շրջապատը հավասարակշռողի գերը, այնտեղ էին բերվելու քաղաքից և երկրի այլ մասերից տեղափոխված արդյունաբերական հիմնարկությունները:

Մեծ Լոնդոնի 1944-ի նախագծում պատկերված տարածությունների բաշխման համաշխատությունը փոփոխական է, իսկ կառուցապատումը սահմանված է կենտրոնից շրջանային ծայրանասերը նվազող երկրամաս-խոտություն հարաբերակցությամբ: Հողամասերի տեղադրական և կլիմայական պայմանները նման են իրար, և նախագծողները բնակավայրային ամեն մի միավորի համար սահմանել են 10.000 բնակիչ: Այս հարցում ևս որոշագույքը տեղադրումն է, այսինքն աշխատավայրերից և Սիտիից ունեցած հեռավորությունները: Քաղաքն իր ամբողջությամբ խոշոր իրողություն է, նոր կառուցապատումը պետք է կատարվեր ավելի ընդայնված մարմնի վրա, առանց փոխելու կազմաբանական կատարվածքը: Փոխվում էին գործունեությունների գործառնությունների բաշխումները, փոխվում էր քաղաքի դիմայիկ հարաբերությունը: Այսքանից հետեւում է, որ գերբնակվածությունը չպետք է համարել գերիտացումների հիմնապատճառը, այլ գերբնակվածությունը հետևանք է այն իրադրության, երբ վարչական, արտադրական և ղեկավարման գործունեությունների բաշխումը համարժեք չէ քաղաքի կա-

\* P. Hall, Londra nel 2000, Padova, 1963, p. 93—95.

ոուցվածքային ընդհանրության հետ: Քաղաքի վրա ազդող ներքին և արտաքարային ուժերից մեկը, ինքնին վերցրած, պեսք է արտահայտի ընդհանուրը, իսկ մյուսը՝ մասնավորը, և հարկ է, որ դրանք կենտրոնանան իրար հակագեմ բենոներում: Այսպիսի դասավորումից ակնհայտ է, որ երկու բենոների դաշտում կատարվող քաղաքաշինական ծրագրավորումը կարող է արդյունավետ լինել, եթե միաժամանակ գործոն դարձվեն ընդհանուր և մասնավոր ուժերին: Քաղաքի ներհամակարգային հարաբերությունները պայմանավորող այս համակարգը նախագծողների ամենագիտավոր առաջարկներից է, որ արմատանում է Հոռուարդի քաղաք-արբանյակ համակարգում և արտահայտում քաղաքի միավորների միջև հաստատվող ծավալների և հեռավորությունների հավասարակշռված կարգը: Նման սահմանումն իր տրամարանական կառուցվածքի համապարփակ բնույթով հարաբերում է արեգակնային համակարգի՝ կենտրոն-արբանյակ խմբավորումների օրինակին, որպես քաղաքաշինություն դարձած տիեզերական օրենք:

Ճանապարհների դասավորումը պայմանավորված է նույն օրինաշափություններով: Դրանց համաձայն «ազգային» և «շրջանային» ճանապարհները չպետք է հատեն բնակավայրերի տարածությունը, այլ միայն շոշափեն: Ճանապարհը պահպանվելու է կառուցապատումից ազատ վիճակում և սպասարկելու է բնապատճերում ուրվագծված ավաններին: Շրջապատի և ավանի կապը հաստատված է օպակածե ճանապարհով, այդտեղով ընթացող երթեւեկությունը բաժանվում է ավելի նեղ փողոցների միջև և ներմրւծվում քաղաքի օրգանիզմի մեջ:

Պատմական անհրաժեշտության առումով, քաղաքատիպ արբանյակների նախնական համակարգից հետեւց «նոր քաղաքներ» կառուցելու միտքը. դա հասունացած էր ու ներկայացնում էր երկրի քաղաքաշինական ծրագրումը իրագործելու միակ ճանապարհը: Քաղաքագետները և վարչական օրգաններն արգել հասկանում էին, որ չը կարելի անխնա օգտագործել ազատ հողամասերը, մի կտոր հացի փոխարեն աշխատավորներին պարտադրել վատառողջ բնակարաններ ու զուտ շահագիտական պահանջներից ելնելով (ինչպես պատահեց երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում) անխնա կառուցապատումներով խտացնել, օրինակ, լոնդոնի արվարձանային ամբողջ շրջանը (Արեգումբիի նշած երկրորդ գոտին): Եվ, վերջապես, ավելի քան մեկ դար առող շինարարական փորձառություններից հետո, հասարակական կարծիքը հասել էր այն համոզման, որ արդյունաբերական կենտրոնների կազմակերպումը, տեղադրումը, ընույթյան պահպանման կարևորագույն խնդիրները և բնակավայրերի կառուցումը կատարվելու էին ամբողջ երկրի մասշտաբով: Այսքանից հետևում է, որ քաղաքաշինական ծրագրավորումը ընդգրկելու է տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ինչպես և արտադրության ուժերի, նյութերի բաշխման ու փոխադրամիջոցային բոլոր հարցերը: Դրանց լուծումը ներկայացնում է երկրի տնտեսական վատթար դրությունը բարեկավելու հիմնական միջոցներից մեկը: Համաշխարհային երկրորդ պատերազմը և հաղթանակից հազիվ երկու ամիս հետո երկրի զեկավարությունը ձեռք բերած լեյբորիստական ուղղությունը<sup>5</sup> կատարեց իր վճռական դերը:

<sup>5</sup> E. Carter, Il futuro di Londra, Torino, 1967. P. Hall, Le città mondiali, Milano, 1966, p. 30—58. Londra».

1946-ին լեյբորիստների «քաղաքների և երկրի զարգացման մինիստրությունը» կազմակերպեց ու պաշտոնական հաստատեց «նոր քաղաքների կոմիտե», որը պետք է իրագործենր հետևյալ ծրագիրը. «քննել ընդհանուր այն հարցերը, որոնք կապված են սահմանադրության, կազմակերպչական ու վարչական խնդիրների հետ, ապա մշակել քաղաքների գերբնակված շրջանների ապակենարունացման քաղաքականության հիմունքներ, որոնց միջոցով կարելի լինի «նոր քաղաքներ» կառուցել, Տասը ամիս հետո, 1946-ի օգոստոսի 1-ին, լրոք Ռայֆի նախագահությամբ պատրաստվեց «նոր քաղաքների» ակտը, որը գարձավ օրենսդրական ուժ ունեցող առաջին միջոցառումը: Առաջին քայլը եղավ Լոնդոնի գերբնակված շրջաններից հեռացված քաղաքներին վերաբաշխել արդյունաբերական նորակազմ այն մասերում, որոնք ենթակա էին վերակառուցման: Սկզբնական նվաճումները նպատակ ունեցան հաստատել բնակրան-աշխատավայր կապակցությաններ, լուծել երկկինտրոն գործունեության տարածական ու աշխարհագրական բաշխումը՝ կապված շրջանի հավասարակշռված միջավայրի հետ և կարգ հաստատել, այդպես կոչված, բնական մեխանիզմով զարգանալու ընթացքում: Այս կարգը ժամանակակից պայմաններում ճանաչվում է բավարար այն ժամանակ միայն, եթե միավոր-ավանը շաղկապված է լինում շրջանի ընդհանուր համակարգի հետ: Արդ, որպեսզի նկատի առնենք բնակրանային ծրագրավորման և տրված լուծումների բաղմագանությունը, վերցնենք բնութագրական երկու տիպ՝ քաղաք-այգին և շենք-միավորը, այլ կերպ ասած, բնակրան-պարտեզը և սպասարկումներով ամրողացած, տարրեր բնակրաններից բաղկացած բնակելի ծավալը: Առաջինն իր բովանդակությամբ բնությանը հառած կենտրոն է, իսկ երկրորդն ինքն իր մեջ կազմակերպված, բնության ինչ-որ վայրում տեղադրված, բայց նրա հետ անմիջականորեն չկապված ծավալ է: Երկուսն էլ կարելի է նկատել որպես քաղաքների զարգացման հոսանքներում իրագործվող բյուրեղացման ընդհատումներ, որոնց բնորոշիչ դերը բացահայտվում է համայնքի կյանքին հատուկ արտահայտություններում: Եթե ավելացնենք համայնքի կենսական ընթացքին բնորոշ մյուս պահանջները, որոնց կազմակերպումը դիտվում է որպես քաղաքային իրողություն, կտևանենք, որ հիմնական ձգտումը մեզ տանելու է դեպի երկու լուծում. մեկը տեսականն է, ըստ որի քաղաքը հավասարակշռված կազմ է ունենալու, մյուսը վերաբերում է շարունակ փոփոխվող, շարժումակ ընթացքում գտնվող քաղաքային իրադրությանը: Առաջին հայեցողությունը գտնում ենք անցյալի քաղաքների իդեալացած պատկերա-

յուրիներում ու անգլիական մշակութում, ինչպես և ֆրանսիական էսթետիզմում (լը Դուից մինչև լը Կոռբուտի) իրոք ավանդականորեն հաստատված իրողություն։ Զարմանալի չէ, որ Աբերքրումբի կողունի երկու նախագծերը, ինչպես և նոր քաղաքների երկությը վճռականորեն կապված ու խորապես արմատացած են անգլիական մշակութի այդ հայեցողություններում։ Իսկ այսօր նոր քաղաքների փորձառությունը ցուց է տալիս, որ ավելի մեծ կենարուների պահանջներին համապատասխան արբանյակատիպ կենտրոնները դարձել են խիստ գործոն տարր։ Նրանք են կանոնավորում քաղաքների շարունակ զարգացումը։

Քաղաքաշինության իմաստը հասարակարգի կազմը գեղագիտական կերպարի վերածեն է։ Սա նշանակում է նախագծել և առարկայացնել հասարակարգին համապատասխանող տարածությունը։ Հարցի կարեոր կողմէն այն շափանիշի հայտնաբերումն է, որով կարելի է տարածությունը կազմակերպել, մեկնել մասնակի հարցերից և համեմել ընդհանուրի։

Այս հարցերը հատուկ արժեք ստացան համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, երբ Անգլիայում դրվեցին վերակառուցման խնդիրները և վերաբերմունքը նոր քաղաքների զաղաքարի հանդեպ դարձավ ազգային քաղաքականության առաջատար նպատակ<sup>1</sup>։

Ինչպես արդեն նշել ենք, Աբերքրումբի առաջարկով կոնդոնի ընդարձակությունը պետք է կատարվեր՝ ապահովելով բնակելի խտության ցածր ցուցանիշներ։ այս նպատակը իրագործելու համար քաղաքի հին հատվածներից գեղի և զարամասերն էին տեղափոխվելու մոտ երկու միլիոն բնակիչ։ Լոնդոնի ընդայնումը չէր կատարվելու քաղաքի մակերեսի հաշվին, որի կանաչ գոտին՝ 8 կմ լայնությամբ, անձեռնմիելի պատճեց էր մնալու։ Նորը կառուցվելու էր քաղաքից անդին, շրջակայքի աղատ հողամասերում<sup>2</sup>։ Ավելացնենք, որ արդեն 1962-ին նորակառուց քաղաքներում բնակվում էին 365.000 բնակիչ, ըստ ծրագրի ամբողջական թիվը հասնելու է 555 հազար բնակիչ։ Հետեւարար, եթե 1946 թ. ընդունենք օրենսդրական կանոնադրության հաստատման և 15 նոր քաղաքների միաժամանակ կառուցման տարեթիվը, ապա սրանից հետևում է, որ 12 տարվա ընթացքում այդ ծրագրի <sup>2/3-ը</sup> իրագործված կինի։

1946-ի անգլիական քաղաքաշինական կանոնադրությունը հաստատում է, որ քաղաքային հողատարածությունները հանձնված են վարչական հատուկ մարմնի հոգատարությանը։ Նոր քաղաքների բնակիչները և արդյունաբերության գործիչները կարող են 99 տարվա սահմաններում վարձել և օգտագործել այդ հողամասերը։ Վարչական մարմնին հնարավորություն էր տրվում տեր դառնալ առեւտրական հիմնարկներին։ Օրենսդրական նման նախագրյալը հիմք դարձավ քաղաքաշինական միաժամանակ այն միասնությունների

<sup>1</sup> M. Teodori, Architettura e Città in Gran Bretagna, Bologna, 1967, p. 74-99.  
P. Merlin, Les villes nouvelles, Urbanismus régional et aménagement, Paris, 1969.

<sup>2</sup> Նոր քաղաքներ իրագործելու, հողամասը ընտրելու օրենսդրական հիմքը կազմված է՝ Եինարարության և վարչական մինիստրության ստանձնած հետեւալ որոշումով՝ «...եթե մինիստրը տեղական վարչության խնդրանքը հարցաքննելուց համոզվի, որ առաջարկված հողամասում նոր քաղաքի կառուցումը նպաստելու է ազգային շահերին, այն կարող է հրովարտակի միջոցով ընթացը ստանալ» (Կ. Թ. Պուրդոն, Արբանյակ քաղաքների կառուցումը, Լոնդոն, 1949, էջ 499)։

իրագործմանը, որոնք օժտված են կազմակերպչական ու գործառնային յուրահատկություններով:

Մրագորումը կատարվեց տարածության և ժամանակի կարևորագույն աղդակների ներդրմամբ: Այս սկզբունքը պարտադրում է, որ ծրագրման աշխատանքներն ընթանան քաղաքի զարգացմանը զուգահեռ Քաղաքների հավասարակշռված կազմը խախտման ենթակա, բայց և վերականգնվելու պարտականությունը թելադրող համակարգություն է, ուր տարածությունը ստանում է մնայուն լինելու իմաստ, իսկ ժամանակը շարունակ նորը թելադրող հակամարտ գործոնի նշանակություն: Հավասարակշռությունը ժամանակավոր երևույթ է, բնորոշը՝ զարգացումն է:

Նոր քաղաքների իրագործումն ընթացավ հետևյալ նպատակով. ընդհանուր պլանում հատկացված հողամասը հանձնվում էր ժամանակավորապես «զարգացման կորպորացիային»: Այս կազմակերպությունը կառուցման աշխատանքների առաջին օրից մինչև վերջինը մնում էր կազմակերպչական և վարչական միակ հեղինակությունը, ժամանակաշրջանի տևողությունը՝ 10—15 տարի էր: Նոր քաղաքի բնակչների թիվը կարող էր հասնել 20 հազարից մինչև 60 հազարի: Հողամասը շրջապատվելու էր 22 հազար հեկտար կանաչապատ կամ գյուղատնտեսության համար հատկացված աղատ տարածությամբ: Հետաքրքիր հանդամանք. պարտադրվում էր նախագծուներին պահպանել մշակված հողամասերը, և դա՝ երկու պատճառով: Նախ՝ երկիրը տնտեսական դժվարին ժամանակներ էր ապրում և ապա՝ հոռարդյան հայեցողությունները խորապես արմատացած էին անզիփացու մեջ:

Նախագծային առաջադրանքը մշակվում էր կորպորացիայի կողմից, իսկ հաստատումը տալիս էր մինիստրությունը: Այնուհետև նախագիծը ներկայացվում էր շահագրգությած կողմին՝ մինիստրության ծառայողներ, տեղական հեղինակություններ, կալվածատերեր: Բոլորին իրավունք էր որպատճեն կարծիքը, քննադատությունները, առաջարկները: Հասարակական կարծիքների փոխանակությունից և նախագծի վերջնական հաստատումից հետո կորպորացիաների վրա էր դրվում նախագծի իրագործումն ու աշխատանքների վարչական ղեկավարությունը: Կորպորացիան իր հերթին ենթարկվում էր քաղաքական և տնտեսական ղեմք ունեցող կառավարական յոթ պաշտոնյայի, որոնց հետ աշխատակցում էին մի քանի հարյուրի հասնող մասնագետներ:

1946-ին ձեռնարկվեց 13 նոր քաղաքների իրագործումը: Դրանցից ութը ներգրավելու էին հատկապես Մեծ Լոնդոնի, ինչպես և Գլազգոյի բնակչության վերակշռված մասը, իսկ մնացած հինգում ի մի էին բերվելու Ֆայֆշիրի, Ուետերլիի մի քանի հետամնաց գյուղերը: Նորթհեմփոնշիրում կառուցվելու էր մետաղի արտադրության մեծ գործարան, և, վերջապես, Դալլեսի հարավային շրջանում ստեղծվելու էր հասարակական կենտրոն, քաղաքի մասշտարին էր հասնելու գոյություն ունեցող արդյունաբերական համակառույցը<sup>3</sup>:

Իրագործումների սկզբնական շրջանը երկարատև էր: Վարչական բնույթի դժվարությունները տեղական հեղինակությունների և մինիստրության միջն

<sup>3</sup> J. Vlet, *Les villes nouvelles (New Towns): a Selected Annotated Bibliography* UNESCO, 1960.

Նղած հակասությունները, տնտեսական ազգային նզնաժամը, բյուրոկրատական խոշընդուները մի քանիսն են այն դժվարություններից, որոնց հետևանքով նոր քաղաքների կառուցապատումը սահմանակցվեց բնակելի դանդաղածների կառուցմանը: Պակասում էին քաղաքն ամբողջացնող կենարար կենտրոնները: Նորակառուց քաղաքները վերածվեցին, ինչպես ասվում է, մեծ ննջարանների: Հասարակական կյանքի գոյացման համար պակասում էին մշակութային կենտրոնների, սպասարկման, հանգստի կոլիկուլիվ կազմակերպումը: Կենտրոնները զուրկ էին նաև պատմական ավանդական սովորությունները պահպանելու կենսունակ միջավայրից: Հարցը նաև այն էր, որ մարդիկ շտապում էին, իսկ քաղաքում առաջընթացն ու տնտեսական բարելավումը կատարվում էր դանդաղ ընթացքով: 1950-ին վերջ տրվեց առատերիտին, երկիրը կարողացավ բարելավել տնտեսական դրվածքը՝ ընդլայնել ծրագրված պլանավորումները, նոր քաղաքներում աճող արդյունաբերությունը ներդնդրվել երկրի արդյունաբերության ընդհանուր համակարգում:

Նոր քաղաքների հերպարը սահմանող կարգը հիմնականում նույնանման է, տարրերությունները պայմանավորված են տեղանքի ֆիզիկական, կիմայական, երրեմն պատմական նշանակություն ունեցող պայմաններով<sup>4</sup>: Քաղաքշինական հիմնական միտքը՝ «բջիջ-քաղաքն» է, օգտագործված Աբերբրումբիի՝ Մեծ Լոնդոնի նախագծում: Տեղանքը կազմակերպվում էր երթևեկության լայն ցանցով: Ամեն մի թաղամաս կազմում է դրացիական մի միավոր՝ 50000—60000 բնակիչներով, թաղամասը ամբողջացված է պարագիր ուսումնաշրջանի դպրոցով, առաջնահերթ պահանջները բավարարող խանութիններով, խաղաղաշենքով: Թաղամասի տարածությունը սահմանված է 500—600 մ շառավիղի երկարությամբ, որը համապատասխան է 10—15 րոպե տևող հետիւոն հեռավորության: Թաղամասերը, արդյունաբերական կենտրոնը, հասարակական ընդհանուր շրջանը, ուր ծավալվում են երրորդահերթ գործունեությունները, իրենց ամբողջությամբ կազմում են մի քաղաք-բջիջ և կապված են շրջակային ավելի մեծ համակարգի երթևեկելի ցանցի հետ: Բնակիչների օպտիմալ քանակը սահմանված է 60.000-ով, բայց կարող է տատանվել 30.000-ից մինչև 80.000: Քաղաքը լինելու է ապրելու և գործելու հավասարակշռված կազմակերպություն՝ արտահայտված բնակվել-աշխատել, սպասարկում-ազատ ժամեր գործուների հարաբերակցությամբ, այլ կերպ ասած, քաղաքը հնարավորություն է տալու կյանքի շըրշաբերության բացահայտմանը և զարգացմանը: Կյանքը պատկերելու նման մեկնարանությունը ոչ միայն դրսնորվելու է բնակավայրի կազմակերպչական դրվածքում, այլև թելագրող է լինելու ծավալատարածական, այսինքն, կերպավորման խնդրում:

Քաղաքի ողջ տարածքում արտահայտվող քաղաքային անդամակցություններն ունեն իրենց շափանիշը, որը տարածական իմաստով նյութականացվում է գործունեության ընդարձակության շառավիղով: Որոշ հեռավորություններ անդին մարդը կորցնում է ուրիշների հետ կապեր հաստատելու հնարավորությունը, կղզինաում է և, այդպիսով, պատճառ դառնում կոլեկտիվի միասնության քայլայիմանը: Ստեղ անհատը կղզիացած է մնում մեծ

<sup>4</sup> A. E. Smailles, Geografia urbana, Padova, 1964, p. 33—58, „L'ambiente delle città“.

քաղաքներում և օտարանում, այսինքն, չեզոքանում, ուստի անհատին պետք է փոխարինել ավելի հուժկու տարրով<sup>5</sup>: Տարր, որ պահի բոլորին, ազգեցիկ լինի, պահպանի իր գոյությունը մնձ տարածություններում, որ անհատների խմբավորումը կազմակերպված լինի որպես քաղաքի մարմնի մաս, բջիջ Կոլեկտիվի այս միավորը, ինչպես նշել ենք արդեն, անգլոսաք-սոն երկրներում կոչվում է դրաշխական միավոր և կազմակերպված է կո-լեկտիվ սպասարկումների շուրջը, որոնց կենսանիշը սահմանված է կոլեկ-տիվի շափանիշով՝ երեխաների դարոցներ, բնակելի շենքեր, խանութիններ, վարչական կենտրոն, հասարակական շենքեր, գրուայգիններ, մարմնամար-գության հրապարակներ: Նույն մասշտաբով կանոնավորվում է բջիջ տե-ղական երթևեկության ցանցը, իսկ շրջապատի այլ կենտրոնների կարևորու-թյամբ համաշխավում են արագընթաց երթևեկության ուղիները<sup>6</sup>:

Այստեղ ակնարկած հարցերը քաղաքաշինության երկարատև այն՝ փոր-ձառությունների արգասիքն են, որոնք կատարվեցին հատկապես արդյունա-բերության հեղափոխությունից հետո, երբ քաղաքները բնական օրենքներով զարգացան՝ հանդիպելով խառնաշփոթ, քառային մի իրողության, որի հետևանքով նրանք մեծացան անսահման, անկանոն և անմարդկային: Պլա-նավորումը եղավ ծրագրային այն հսկա միջոցառումը, որը կարելի դարձ-րեց կոլեկտիվ միավորների քաղաքաշինական կազմավորումը: Այս իմաս-տով Հոռարդի քաղաք-այգի և միավոր քաղաքի առաջարկը գտավ իր զար-գացումը, կիրառվեց նաև քանական թվականներին: Կենտրոնական Եվրո-պայում հասունացավ ստանդարտ բնակավայրի միտքը, որը ընդհանուր առ-մամբ կոչվում է քաղաքի բջիջ, և հետապնդում է անհատական ու կոլեկտիվ կյանքը փոխադարձորեն կապակցելու նպատակ: Բնակավայրային նման իրողությունը որպես նախապատճառի և հետևանքի կապակցություն իր ար-տահայտությունն է գտնում քաղաքաշինական շարադրանքում: Այն վերաց-նում է իդեալ քաղաքի ոռմանտիզմը և հիմնվում սոցիալ-տնտեսական արդի մշակութի, արդյունաբերության, մեքենայացման, տեխնիկայի առաջխա-ղացման կայուն հողի վրա: Այս խնդրում կարևորը կոլեկտիվ-միավորը գտնելն էր. տարբեր առաջարկներից անզիացիններն ընտրեցին պատահների դպրոցը և այն դարձրին բնակավայրին տրվելիք շափանիշը հենակետ: Երկի-դա էլ օգնի ապագա քաղաքացուն ավելի սերտորեն կապվելու նորաստեղծ մշակության:

Անգլիայի տնտեսական ռեժիմը հիմնված է աղատ շուկայի վրա, միա-ժամանակ և ըստ պահանջի կատարվում են պլանավորված միջամտություն-ներ, որոնք հովանավորվում են կառավարության, կողմից: Նոր քաղաքների հիմնադրումը սկիզբ գրվեց հենց այդ տիպի ձեռնարկումներից: Կորպորեց-ների 1962-ի գեկուցագրով հաստատվել էին մոտ 720.000 բնակիչ, իսկ ծրա-գրված էր 930.000 բնակիչ, այդ թվում նախատեսված էր նաև բնական աճը: Այդ ժամանակաշրջանում կառուցված բնակելի տների, դպրոցների, խանութ-ների, արդյունաբերական հիմնարկների, ճանապարհների, տարբեր տիպի երթուղիների մեծաքանակ իրագործումները 1967-ին հասել էին քսան տարի առաջ պլանավորված ծրագրի կատարմանը: Սա մի ոգևորիլ իրագործում էր

<sup>5</sup> E. T. Hall, La dimensione nascosta, Milano, 1968, p. 143—159.

<sup>6</sup> G. Riggotti, Urbanistica, La composizione, Torino, 1952, p. 313—366.

կապիտալիստական երկրի քաղաքաշինության պատմության մեջ։ Քսան տարվա ընթացքում հաղթահարվել էր, այսպես կոված, բնական զարգացումը, որը մինչ այդ ղեկավարել էր քաղաքների աճանակ ընթացքը։ Մասնակի և ընդհանուր ծրագրի այդ իրագործումների գաղտնիքը քաղաքական ղեկավարների միջամտությունն էր։ Պետք է ավելացնել, որ ետպատերազմյան շրջանը նպաստեց այդ միջամտությունների կենտրոնացմանը։ Դա լեյբորիստաների և մի խումբ մասնագետների շնորհքն էր, որոնք վերամշակելով անդիմացի ուսուպիստների հայեցողությունները, իրականացրին կենտրոնական Եվրոպայի նոր տեսությունները և Անգլիայում ստեղծեցին քաղաքաշինական նոր մշակութիւն։ Այդ շրջանում հետապնդվեցին հետեւալ խնդիրները։

— մետրոպոլի ապակենտրոնացում,

— հավասարակշռված համայնքների ստեղծում,

— ամբողջ երկրում գոյություն ունեցող և նոր կառուցվելիք բնակավայրերի ընդհանուր ծրագրավորում։

Մինչև քաղաքաշինական նոր քաղաքականության հաստատումը, Անգլիայում գերիշխում էր այն կարծիքը, ըստ որի քաղաքային հաստատություններին հաղորդվելիք ձեզ և կառուցվածքը սերում են հայեցական գրություններից, որոնց բնույթը, ծագումը խուսափել են մարդու ուշադրությունից, նրա հետազոտելու, կարգավորելու ունակությունից։

Կերպարը հոսող ուժերի, քաղաքի կազմավորման վրա ազդող ընթերաշափերից առաջացած խտացում է, և երբ այս իրողությունը ընդունվում է կրավորականորեն, այն ժամանակ նոր արժեքների պահանջից գրդված ամենազայտն անձնավորությունները դիմում են ուսուպիային։

Դրական և գեղագիտական իրողությունների իրարից բաժանումը տանում է գեղի բովանդակության և ձեռի անշատում։ Եվ, որովհետև ամեն նախընկարված իրողություն ճանաշվում է որպես փորձնականից հետևած դրական նյութ, կազմակերպվում և իրագործվում է գեղարվեստական ձեռի պատկերումով։ Այդպես է և քաղաքաշինության հարցերում՝ աշխատանքի կազմակերպումը, արդյունաբերությունը, առողջապահական պայմանները, մշակութային, քաղաքական և ֆիզիկական կյանքը, անցյալի արժեքների պահպանումը, արդի կյանքի քաղաքացիական իրողությունը կազմում են քաղաքաշինարարի գործական նյութը և վերածվում են տարածականորեն միասնացված, տարածական կերպարը։

Այսպիսով, քաղաքաշինությունը վերածվում է հասարակական ամբողջ իրողությունից հետեւող տարածական գործոնի, որն արտահայտում է մարդամուս արժեքներ ներկայացնող ձեռներ, ինչպես և վաղանցիկը և մոնումենտալը, ժամանակավորը և հավերժը, զուտ տեխնիկականից և տնտեսականից հետևած կերպարը և դասականորեն ընկալված մշտականը։

Քաղաքաշինական տարածության վրա ազդող ժամանակ-գործոնը չպետք է գերիշխի բացարձականորեն, նա իմաստավորված է հակասականորեն էթիկական կամ հերոսական իրողությունն արտահայտող ձեռ հավերժ է, ուստի ոչ անցողիկ, ոչ փոփոխական, նա պահանջ է, որքանով պահանջ է զուտ գործառնայինը, որոշ ժամանակաշրջանի համար կառուցվող շենքը։

Քաղաքը կերպարող նախագիծը և իրագործումից հետո ստացած ձեզ կարող են համաճավասարվել, եթե շարունակություն ստեղծվի քաղաքաշինական տարածության հատվածի և ամբողջության հիմնական այն մտքերի միջև, որոնք կազմում են նախածեռնման հիմունքները<sup>7</sup>:

Կառուցված նոր քաղաքների վերաբերյալ արժեք նշել անգիտական «Արշիտեկտուրալ ուկյու» ամսագրի արտահայտած քննադատական կարծիքը՝

- անցյալի քաղաքների կենսաշատ միջավայրի հետ նոր քաղաքներում պակասում են հիմնական հատկանիշները,
- անհամաշափորեն են գերիշխում կանաչ տարածությունները, հետևաբար կառուցապատման ծավալային բնապատկերը շատ նոսր է, քաղաքը և շրջապատը կարող են շփոթվել,
- գերիշխում են ցածր հարկերով շենքերը, ստացվում է գյուղական տիպային շենքերի միօրինակ կրկնողության տպավորություն,
- քաղաքացիական կյանքը պատկերող շարադրանքի պակաս,
- ազատ շրջապատին կցված է ցածր խառնություն ունեցող բնակավայրը,
- դիզայնի միօրինակություն, ցածր որակի ստանդարտի ընդհանրացում,
- քաղաքի ընդհանուր կերպարի որակն անհամեմատորեն ավելի բարձր է, քան շենքերի տիպերի մշակումը:

Քննադատները հանգել են այն եղանակացության, որ դատելով այդ իրագործումներով, նախընտրություն է տրվում «առողջ միջակության»: Զեսստեղծման հարցերում գերիշխել է ավանդականը, նախագծողները որոշ շափով անփուլթ են եղել նորի հանդեպ:

Ինչ վերաբերում է մասնակի կամ ամբողջ երկիրը ընդգրկող ծրագրումներին, կարելի է մի անգամ ևս հաստատել, որ քաղաքը՝ պոլիսը, քաղաքական տվյալ իրողության գործադրումն է: Այս իմաստով, անգիտական նոր քաղաքներն այդ երկրի համար եղակի մնացած օրինակելի իրագործումներ են: Նրանք ներկայացնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական քաղաքաշինորեն լրիվ ծրագրված օրինակներ, որոնց իրակործմանը մասնակից եղավ ամբողջ երկիրը:

<sup>7</sup> G. Gullen, Townscape, London, 1961.

Օրդանական ճարտարապետության գրաված տնղը պատմության մեջ բացատրվում է այն յուրահատուկ բնույթով, որով օժտված է այդ հասկացությունը: Արվեստի և տեսության մարզում օրգանականը ժամանակի ընթացքում ստացել է բարձմիմաստ նշանակություն և հնարավոր է ընդհանուր ասուլիթների միջոցով միայն սահմանել նրա էությունը: Դրանց հիմքում ընկած են գեղագիտական երկու ըմբռնում: Առաջինի համաձայն օրդանականը բացահայտում է արվեստի գործի բնապաշտական-նշանակական բընույթը, ըստ որի ստեղծագործական ընթացքը ծավալվելու է բնության օրինաշափությունների նշանողությամբ (միմեզի), երկրորդը՝ երկրաշափական-վերացական ըմբռնում է, ըստ որի օրգանականը կարող է ստեղծվող ձևերին և տարածությանը հաղորդել գեղագիտական, հաղորդական արժեք այն շափով սակայն, որքանով ձեզ պարունակում է բնածին ուժ:

Մանոթ է, որ բնագիտության մեջ օրգանականը վերաբերում է եղակիի և ընդհանուրի կախվածության, մասնակիի և ամբողջության փոխկապակցության և գործառնականորեն իրար լրացնելու հարցին: Հարաբերակցությունների բնականոն օրինաշափություն, որը հարաբերված արվեստի գործին նշանակում է ձեզ իմաստացին և գեղագիտական հարստացում: Բնության և ձեզ կառուցվածքային հարաբերակցության գաղափարը հուշեց հույներին Օրդրերի կազմաբանության բնապաշտական մոտեցումը, շենքի և բնապատկերի անբաժանելի կապացումը՝ կատարված բնության օրինաշփությունների նշանողության հիմունքներով:

Նշանողության հասկացությամբ, Վիտրուվիոն փորձեց ուսցիոնացնել բնությունը, ձգտեց հայտնաբերել մասնակին ընդհանուրին հարաբերելու նախապես սահմանված համաշափական օրենքը, և այդ օրենքի համընդհանուրացումից հանգեց ներդաշնակության կատարելությունը արտահայտել «մարդը շրջանակում» (homo ad circulum) պատկերի միջոցով, մի գաղափար, որն այնքան ողերել է վերածննդի մարդկանց (Յ. դի Զիորզիո, Լեռնարդո, Դյուրեր):

Օրգանականը կ. թ. Ալբերտիի կոնչիննիտասը (concinnitas) արվեստի գործում գեղեցիկի հատկությունն է, իսկ գեղեցիկը հատվածներն ամբողջության հարաբերող ներդաշնակ համաձայնեցումն է: Այս առումով հնարավոր է վերաբաժնակ գեղեցիկը թվային կամ երկրաշափական կանոնների միջոցով, որոնց համաշափային սահմանումները ստանում են նշանակական իմաստ, ձեզ հաղորդում ճանաշողական և պատմական նշանակու-

թյում, այսինքն՝ կերպարային արտահայտություն, որը ռացիոնալ է և դրանով իսկ ընթեռնելի է բոլորի համար<sup>1</sup>:

Հստ Վերածննդի տրակտատիստների (Ֆիլարետե, Ֆ. դի Զիորջի Մարտինի) օրգանականը սահմանվում է հետեւյալ կերպ. իդեալ քաղաքը արտահայտում է մարդկանց դրական և գեղագիտական պահանջների միասնությունը այնքանով, որքանով ամբողջական է քաղաքի ճարտարապետական կազմը, մասերը կազմում են միմյանց լրացնող և ամբողջացնող օրգանիզմ, իսկ նրա ձևական կառուցվածքը պատկերում է մշակութի գաղափարի պլատոնիան՝ «իդեալական պետության» բյուրեղացումը<sup>2</sup>:

Թարոկկոյի շրջանում փորձնականն ընդգրկվեց գեղագիտության մեջ, նվազեց արվեստի գործին վերացարկման ընթացքով որակական աստիճանավորում հաղորդելու ալբերտյան տեսության ազդեցությունը, մինչդեռ նկատի առնվեցին երևութիւների արտաքին կողմերը:

Օրգանականը կորցրեց համընդհանուր նշանակությունը և դիտվեց որպես արվեստի գործի ձևային և կերպարանագծված մշակումն արտահայտույթուշիլ հատկանից: Ճարտարապետական առումով կառուցը նկատվեց որպես տարածությունների և ծավալների հորինվածքով շարունակական կապացություններ առաջանող, բաղմիմաստ օրգանիզմ:

Դասականի և բարոկկոյի հասկացություններով պատմականորեն հաստատում գտած օրգանականի դիալեկտիկական բնորոշումն այսօր պայմանավորված է ճարտարապետական ամբողջ մշակութիթը բնորոշող երկու հակադիր կողմերի՝ օրգանականի և ձևայինի ուղղությունների առկայությամբ: Վ. Բերենդտի առաջարկած սահմանումի համաձայն, օրգանական է այն կառուցվածքը, որը դիտվում է որպես օրգանիզմ, անում է իր գոյության օրինաչափությունների համաձայն, առանձնահատուկ կարգով, ներդաշնակ ուրույն գործառնություններին և շրջապատին: Ձևայինը մինչդեռ այն կառուցվածքն է, որը դիտվում է որպես միխանիզմ, ուր բոլոր տարրերը տեղադրված են բացառակ կարգի համաձայն: Ենթելով նշված պարզաբանումից, թերենդարը օրգանական ճարտարապետությունը սահմանում է որպես աճման ենթակա արվեստ (formative art), իսկ ձևայինը՝ որպես ընտիր արվեստ (fins art): Առաջինը ներհայեցողաբար ընկալված, մյուսը՝ մտքի արտադրանք, մեկը որոնում է մասնակին, շարժունակ է, ընթանում է ուրույն կարգով, ձգտում բազմազանության, մյուսը՝ ուղիղոնալը երկրաշափական է, ձգտում է համընդհանուր իմաստ հաղորդել ձեին:

Օրգանական ուղղությունը, որը հնարավոր դարձրեց մշակութային նոր կենտրոնների ստեղծումը (ԱՄՆ, Սկանդինավյան երկրներ), հակագրվելով հանդերձ արվեստի դասական-ուցիոնալ հասկացությանը, դեռ չի ստացել համընդհանուր արժեքավորում: Հիսունական թվականներին օրգանական ճարտարապետությունը տարածում գտավ Արևմտյան եվրոպայում, ազդեց ֆունկցիոնալ-ուցիոնալիզմի վրա: Դրան հաղորդաց ծավալային մշակումների առավել մեծ ազատություն, հնարավոր դարձավ անհատական և հոգե-

<sup>1</sup> A. Blunt, Le teorie artistiche in Italia dal Rinascimento al Manierismo, Torino, 1966, p. 31.

<sup>2</sup> R. De Fusco, Il codice dell'Architettura, Napoli, 1968, p. 224—34.

<sup>3</sup> W. Behrendt, Modern Building, Its Nature, Problems and Form, New York, 1937—DEAU, v. IV, Roma, 1969, voce „Organismo”.

բանական գործուների կիրառումը, պիտունզներից տարբերվող քաղաքային միավորների ստեղծումը, բայց չմշակեց համընդհանուր նշանակություն ունեցող այնպիսի հասկացություն, որը անկախ լինի Ռայթի կամ Աալտորի ճարտարապետություններից և ունենա ընդհանրացում գտած կառուցվածք: Ի դեպ հարկ է նշել, որ հնարավոր է այդ ճարտարապետների նախագծերի իրագործումից վեր հանել նյութական գործուներ, դրանց միջոցով հանդել օրդանական արվեստի ձևալին-տրամարանական տարրերի հայտնագործմանը: Այս տեսակետից իմաստալից են Ռայթի առաջին մենատոներին (*Պրերիհաուս*, 1902, Ռոբերտ, 1908, Ռոբի, 1909) հատուկ հետեւյալ հատկանիշները՝ խաշածն հատակագծով տարածություն (Ուինսլոու, 1893, Հիկրուս, 1900 և Ուիլիսոն, 1902 տեսեր), հորիզոնականության շեշտում, հանդուցային կետերում տեղադրված ուղղաձիգ տարրեր, գծերի շարժունակություն (*Քառուֆմանի տունը*, 1936—39), հարթ տանիքներ, արտաքին պատերի երեսպատումը շենքի ներսում շարունակելու միտում, և հատկապես ճարտարապետական ծավալը շենքի ներսից դեպի դուրս զարգացնելու ձգտումը, որը ելքոպայում ունի իր զուգահեռող «Շմարսովի տարածության ձևավորում» (Raumgestaltung) տեսությունում:

Ճարտարապետական նման սահմանումներն այսօր ստացել են ոճ-կանոնագիր (codice-stile) անվանումը, որը սրպես ճանաչողական ստորոգություն հնարավոր է դարձնում դասակարգել ճարտարապետական արտահայտամիջոցները<sup>4</sup>: Այս առումով Ռայթի առաջին գործերը ստանում են պատմական հիմնավորում, կապվում են Ար Նուվոյի, ինչպես և վաղ ռացիոնալիստներ՝ Հոֆմանի, Բերենսի, Փերբեցի, Լոողի ոճականությունների հետ:

Այս հարցերի կապակցությամբ առաջ է զալիս գծի և պատկերի հարաբերակցություն, այսինքն պատկերին գծագրական հիմնավորում տալու (մանիկերդմ) կամ գծերի միջոցով պատկերը հուշելու (արստրակտ) խնդիրը (Զ. Բրանդի)<sup>5</sup>: Ռայթը ձևալին միջոցների (պատկերներ) ճոխությամբ հաղթահարում է ռացիոնալիստների գծային միակողմանի պայմանավորվածությունը, օգտագործելով «արստրակտը» և տարածական շարժունակությունը տարրալուծում է ծավալը հարթ մակերեսների, մակերեսները՝ գծերի, գծերը՝ անկյունների (Ունիթորների տաճար, 1906): Նման մասնատումով ներքին հարդարանքները կապվում են շենքի ընդհանուր կառուցվածքին, հուշում ծավալները և հորինվածքին հատուկ տրամարանությամբ մասնավորից հասնում է շենքի ամրողությանը: Ինչպես նշել ենք, սույն եղանակը հատուկ հեկավ Մեկինտոշին, այդպես էլ Կուփհատներին, նեռպալաստիկների և որոշ շափով Բաուհաուզի մեթոդանությանը: Վերընծականից համարության հանգելը Ռայթի ճարտարապետության բազմակվությունը հուզող, նոր ներշնչումների աղբյուր լինելու յուրահատկությունը հաստատող հատկանիշներից է:

Ռայթի ձևալին մշակման հետ առնչվող հարցերը քննելիս, անհրաժեշտ է ուշագրության առնել հետեւյալը. երեսնական թվականների Կենտրոնական ելքոպայի արվեստը Կուփհամմից մինչև Բաուհաուզը, Դե Ստիլը, պյուրիդմը աղդել են նրա արվեստի վրա: Զեսթանական երեք կիրաքար՝ եռան-

<sup>4</sup> C. Brandt, Struttura e Architettura, Torino, 1967, p. 29.

<sup>5</sup> B. Zevi, Il linguaggio moderno dell'architettura, Torino, 1973, p. 99—103.

կյունը, շրջանը, քառանկյունը կիրառում են գտել իր գործիրում: Եռանկյունի հատակագծով ծավալներ ունի Միս վան դեր Ռոեի վարչական շենքը Բեռլինում (1919), Ֆ. Հեռգերի<sup>6</sup> կիլէհառուղ Համբուրգում (1922—23): Արդեռանկյունիի և քառակուսիի բաղադրումով Ռայթը հորինում է Պրայսի աշտարակը (Օքլահոմա, 1955): Քառփմանի մենատունը (Fallingwater, 1934—39) հորինված է հորիզոնականորեն ձգված ծավալների և տարածությունների բաղադրումով, ծավալները ջլատումներ չունեն, իսկ ծավալաշափական հատակությունը դրսելորում է արդի արվեստի մոտեցումը (Լոոզից մինչև լը Կորբյուզիե):

Միշտավային շերտերով և ծավալներով բաղադրված շենքի կառուցվածքը բնության հետ կապակցելու պայմանավորիչ հանգամանք է, որը քառփմանի տան օրինակում կատարվում է անմիջականորեն և այդքանով տարրերվում է մեխանիկական բնույթ կրող ուղղունալիստների<sup>7</sup> բնությունշենք շաղկապը հաստատող մողելից (լը Կորբյուզիեի հինգ կետերը): Այդ շենքին հատուկ ծավալատարածական կազմը և բնապատկերի հետ միահյուսվելու լուծումը արտահայտում է օրգանականի իսկությունը, դրանով իսկ դառնում է արդի ճարտարապետության հետապնդած գլխավոր նպատակներից՝ շրջապատշենքների միասնությունը առարկայացնող լավագույն օրինակներից մեջը: Այդպիսի շաղկապն իր էությամբ բանաստեղծաճարտարապետական երեւութ է և արմատավորվում է գրականության ու կերպարվածության մեջ:

Կորակազմ ձեզ օրգանականի կազմաբանությամբ մեկնարանված, կիրառում գտավ Ռայթի գործերում<sup>8</sup>, ինչպիսինն են՝ Զոնսոնի համակառուցիտ աշտարակ-լաբորատորիան (1950), Ցակորսի երկրորդ շենքը (1948), Մուրիս վաճառատունը (1948) և Գուգենհեյմի թանգարանը (Նյու-Յորք, 1946—59): Այս վերջինը դեպի վեր լայնացող, պարուրաձև շենք է և կառուցվածքն այնպիսին է, որ ամեն մի կետի հորիզոնական փոխադրությունը համապատասխանում է ուղղաձիգ տեղաբաշխման: Նույն հնարքով հորիզոնականուղղաձիգ հակադիմ ուղղությունները միաձուվում են իրար հետ, հետեւար, շենքի ներսում վերանում է ուղղաձիգ տարրը և փոխարինվում պարապու:

Պարապը ստանում է կենտրոնականության իմաստ նաև Շարունի համար, հատկապես Բեռլինի ֆիլմարմանիայի շենքում (1963), ուր նստատեղերով շրջապատված բեմը գտնվում է մոտավորապես դահլիճի կենտրոնում:

Ռայթի ճարտարապետության օրգանական բնույթը բնորոշող կազմաբանական դրությներից կարեռագույնը՝ 30 և 60 աստիճանի անկյան կիրառումն էր:

Հորինվածքային այդ գործունը գեղագիտական նոր լավորոշում հաղորդեց իր ստեղծագործություններին (Թալհենզին Ռւեստ, 1938, Պրայսի աշտարակը, 1953—56):

Գիրիոնը գրում է «Ուր որ Աալտոն զնա, այնտեղ է Ֆինլանդիան: Ֆինլանդիան իր գործերի խորքից հոսող ուժ է», իսկ ուժի աղբյուրը Աալտոն

<sup>6</sup> Պարապը, որպես եռաշափ տարածությունը պատկերացնող միջոց, Ռայթը օգտագործել է: օրինակ վերցնելով Կոստանդնովսկի սուրբ Սոֆիան:

<sup>7</sup> S.: Gledion, նշան աշխ., էջ 543—544.

գտավ իր երկրի գլուղացիական ճարտարապետության մեջ, նրա տնտեսական, հասարակական, աշխարհագրական իրողությունում. և մեկնելով առօրյայի փորձառություններից, հանդեց տեխնիկական, գեղագիտական խընդիրների միասնական լուծումներին<sup>8</sup>:

Նա պատկանում է արդի արվեստի վարպետների «երկրորդ սերունդին», սացիոնալիզմի կերպարագերծ (որու figurativo) ուղղության հասկացությամբ, իրագործում է Վիխպուրիի գլադարանը (1927—35), Պահմիր բուժարանը (1929—33): Նման սահմանումը պայմանական է: Աալտոյի համար առօրյային կապակցվել, նշանակում է զերծ մնալ ձևային նախապաշարումներից, ամեն մի նոր թեմայի հետ անմիջական կապ հաստատել, «պահանձնել թեմայից առաջացած ներշնչումի անմիջականությունը, չհապավել ճարտարապետական խոսքի ընթացքը»<sup>9</sup>:

Ալտոյի ճարտարապետության մեջ միշտ առկա է հուզական պահը, այստեղից էլ հետեւում է իր ստեղծագործությունների տարրեր որակը (Վոլֆ-գրուրդի կենտրոնի ճակատների կոշտությունը, որը հակասում է հովհարածն հատակագծի լուծմանը), բայց մարդու և քննության հանդեպ ունեցած յոր սերու նա կերպավորում է մի նոր աշխարհ, առաջարկում է միջավալը կերպելու այլ մոտեցում, կյանք կազմակերպելու այլ եղանակ, որը գրավող է: Նրա շենքերի արտահայտած գեղագիտական խոսքն անմիջական է, գրավիչ, դաստիարակչական, իմաստով օգտակար: Գործառնության, տեխնիկայի և իմաստային առանձնահատկությունները հարաբերված են սկզբնական մտահղացման հետ: Ներշնչումը մնում է հետագա մշակումների սկզբնաղբյուրը: Այս իմաստով ուսանելի է իրաք համեմատել Աալտոյի նախնական դժգորերը և ավարտուն շենքը:

Ալտոյի դժգորերում ձեմի արտահայտչական բաղադրիչը, սկզբնական դրությամբ, նկարչական է, հետագա մշակումների ընթացքում առարկայանում է և դառնում ճարտարապետություն: Նրա շենքերի ամեն մի հատվածը (Սահինատսալոյի քաղաքապետարանը, 1950—52, Օտանիեմիի պոլիտեխնիկումը, 1955—64)<sup>10</sup> պատերը, առաստաղը, բացվածքները, ծածկերը, կահույքը, ինչպես և շինանյութը, գույնը ստանում են տարածությունը բնորոշող նշանի իմաստ: Այս առումով տարածության ճարտարապետական սահմանումը հարաբերվում է ձևային ստեղծագործության հետ, բացահայտում ճարտարապետի վերաբերմունքը հանդեպ մարդուն և բնությանը:

Գեղեցիկին և օգտավետությանը վերաբերվող անբաժանելիության գաղափարը վիտրուվիոն ստիլում է ճարտարապետությունը դիտել գործառնությունների դասակարգումների և դրանց համապատասխան տիպերի միջցով: Ռայթի, Աալտոյի, Շարունի, Հերինգի համար ձեմ նշանակությունը չունի բազմաշերտ բնույթ, որովհետեւ ճարտարապետական արտահայտչականությունը կորիզանում է կենտրոնում, որտեղից ընդայնվում է, հասնե-

<sup>8</sup> Աալտոն 1927—28-ին իրագործեց Տուրկոյի բնակելի տունը՝ բետոնե նավագովիշ տարրերով: 1935-ին իր տիկնոց՝ Անոյի և Մարիի Գուլիկսենի հետ հիմնում է կահույքի հավաքագրությունը՝ Այդ տարբերը կահույքի ներ հակացությունից անդին, առավել շափով մշակված են որպես ճարտարապետական հորինվածքներ:

<sup>9</sup> L. Benevolo, նշվ., աշխ., էջ 893.

լով մինչև ծավալատարածական իրողության սահմանմանը (Շարունի և Վ. Ֆրանկի<sup>10</sup> «Ռումին և Յուգա բնակելի տները Շտուտգարդում, 1954—59»):

Ռացիոնալիստների համար սահմանումը կարող էր միմիայն երկրաշափական լինել Գրոփիուսը ենիշով գործառնություններից, հանգում էր երկրաշափականին, լը Կորբյուզիեն նախապես էր ընտրում երկրաշափական կերպարը (ապրիորի պայման), ապա տեղադրում (ապստերիորի գործություն) գործառնությունները: Հերինգը մինչդեռ ձգտում էր ճարտարապետական ձևին հաղորդել ոչ թե գործառնությունը, այլ դրանից ստացված միտքը: Նման հասկացությունը հակալուսավորչական է և հեռու է երկրաշափական օրինաշափությունների կարգի<sup>11</sup>:

Սկանդինավյան մասելակերպի համաձայն, Ալտոյն հառած է փորձառական հասկացությանը, որը հակադոգմատիկ է և համախոհ կենարոնական Եվրոպայի «ուսցինալիստների առաջարկներին» (Կ. Լ. Ռագիանտի): Պետք է ասել, որ Ֆինլանդիան պատմական անհրաժեշտության առողջ հասել էր լուսավորչականության Էլիֆիկական-քաղաքական գաղափարախոսությանը, մասնակից դարձել նոր դասականությանը<sup>12</sup>: Ալտոյի ճարտարապետությունը օրգանական լինելով հանդերձ կառուցված է տրամաբանական հիմունքներով: Կյանքի ստեղծագործական էլությանը հավատացող Ալտոյի համար, վերապրելու, վերարտադրելու ձգտում:

Ճարտարապետությունը որպես արարք դիտելը նշանակում է ներգրավել ստեղծագործությունը անհատական արտահայտչականության ոլորտը: Ի՞ր հերթին ճարտարապետության մեջ առարկայացված ֆիզիկական տարածության և տեսականորեն ընկալված տարածության, ինչպես և գեղեցիկի ու օգտավետության, ձևի և պարունակության երկրացությունը ստանում է իր լուծումը ճարտարապետի ստեղծագործ ուժի համաձայն, ուղղված դեպի հասարակական հաղորդակցության իրագործումը: Ուղղվածության գործոնը լուսականության վերաբերմունք, Կորբյուզի մուտ դասնում է բարոյական վերաբերմունք, Կորբյուզի համար՝ ուսցինալ համակարգ, Գրոփիուսի մոտ՝ մեթոդ, իսկ Ռայթի, Ալտոյի, Շարունի համար այդ գործոնը ստանում է օրգանական միասնության նշանակություն:

Երեսնական թվականներին, հասարակական հաղորդակցության նոր միջոցների հայտնաբերումը հետապնդող ֆունկցիոնալիզմը և հիսունական թվականների օրգանական ճարտարապետության ուղղությունը, թվում էին, որ հանգել էին միջոցների և նպատակների պարզաբանմանը, մի նոր կարգի հայտնաբերմանը: Այս պատրանքը բացատրվում է ուսուպիստներից ժառանգված, ֆունկցիոնալիստների հետապնդած հիմնական մի հարցով, ըստ որի ճարտարապետությունը պետք է նկատել որպես «հասարակական հարցերի վճռման, նրա գնումը և առաջարկած միջոց» (Ա. Իկոննիկով): Հատկապես ֆունկցիոնալիստները ճարտարապետությունը դիտում էին որպես հասարակական կարգին մակարդակած համակարգ և ոչ թե որպես հասարակական-

<sup>10</sup> C. Parent, Scharoun ou l'espace dynamiique, «Aujourd'hui», 1957—58, p. 38.

<sup>11</sup> Գրեգորին գոթական մշակութին է կապում Հերինգի հայացքները, որնք հանդիս են բերում դասականից խիստ տարրերակաված գերմանացի ճարտարապետի մոտեցումը (տե՛ս V. Gregotti, L'Architettura dell'Espressionismo, «Casabella», № VIII, 1961, p. 47).

<sup>12</sup> 1813-ից հետո Հերինին վերակառուցվել է Պետերբուրգի օրինակով, ընդհանուր համակացիօք մշակել են Ա. Երենցրեովը և Ժ. Կ. Էնգելը:

տնտեսական համակարգում գործող, նրա էությամբ իրագործվող կառուցվածք Կապիտալիստական երկրներին հասուկ նման միշավայրում գործող առաջադեմ ճարտարապետները գիտակցում են այս դրությունը: Այդքանով հանդերձ, տեսական ու փորձնական առումով, նրանք գեռ չեն հանգել արտահայտչամիջոցների կանոնագրական կարգ հաստատելուն: Վերջին տասնամյակիների ճարտարապետական իրագործումները, մեծ մասամբ, կրում են անձնական փորձառությունների բնույթ, և որքանով էլ դրանց արժեքը կարեռ լինի, նրանց պակասում է համազգային պահանջմունքից բխած լինելու հատկանիշը: Սակայն, ինչպես ցուց են տալիս վերջին տարիների իրագործումները, երեսնական թվականներին մշակված արտահայտչամիջոցների կանոնագրական կարգը պարունակում է հետագա դարգացման ներուժայնությունը:

Վերջին տասնամյակիների արևմտյան ճարտարապետությունը ընդունված կարգի համաձայն, բնութագրվում է հետեւյալ կերպ<sup>13</sup>: ազգային ուղղություններ, տիպերի դասակարգում, իմաստային բնույթի համակարգում:

<sup>13</sup> R. De Fusco, նշվ. աշխ., էջ 377: Ք. Նորբերգ-Շուլցը արգի ճարտարապետության վերջին շրջանը անվանում է բազմակերպություն (pluralism).

Արևատանվորապական ճարտարապետության և քաղաքաշինության ներկա փուլի համար բնորոշ է իրագործումների բազմակերպություն։ Այս երեվույթը ցայտուն կերպով դրսեռովում է կը Կորբյուզիեի, Միթքելուչիի, Սկարպայի, Շարունի, Թանի, Թանգի, Զոնսոնի և այլ ճարտարապետների գործերում։ Միհաժամանակ, սակայն, այսօրվա ճարտարապետությանը պակասում է երեսնական թվականների ճարտարապետությանը հատուկ լեզվական միասնությունը։ Մի շարք գործեր կրում են խիստ անհատականացված բնույթ։ Կերպարի անհատականացումը հանդես է գալիս նաև որպես նախագծման ընթանուր պայման և շատ հաճախ շենքը պատկերում է կառուցվածքային համակարգի սոսկ ձևային արտահայտությունը։ Նման գրվածքի տարածման հետևանքով, խոսվում է արդեն քաղաքային միջավայրում առաջացած «տեսողական քառու»-ի մասին։

Մշակութային այդպիսի խայտարղետության պայմաններում պատմականությունը և ուսուպիան նվաճել են մեծ համակրանք։ Բոլոր դեպքերում երկու երևույթները հանդես են գալիս յուրօրինակ ձեռվ իմաստավորված։

Անցյալ դարի ուսուպիական սոցիալիզմի համեմատությամբ ուսուպիան այսօր կորցրել է կապիտալիստական երկրներում հասարակական-տնտեսական իրադրությունը վերափոխելու հավատքը։ Ճարտարապետական միտքը և քաղաքաշինական ծրագիրն արժեքավորվում են այն դեպքում, եթե դիավեն որպես գոյություն ունեցող իրավիճակը բարելավելու, թեկուզե ուսուպիականորեն հետապնդված ձեռնարկ։ Ուսուպիան ապագան թելադրող ձգուում է։ Այս առումով, նման ձգուումը կարող է նպաստել որպեսզի էմպիրիկ եղանակով տարվող աշխատանքներին հաղորդվի գիտական հիմնավորում և դրանց հիմքում դրված լինի ճարտարապետական միտքն ու քաղաքաշինական ծրագրավորումը։

Ինչ վերաբերում է պատմականին, ապա այդ՝ հասկացությունում էկլիպտիզմը կորցրել է իր վաղեմի իմաստը։ Ճարտարապետներն իրենց ուշադրությունը այլևս շեն ուղղում Ռումանականին, Գոթականին կամ Վերածննդին, անցյալի ճարտարապետությունը դիտում են ոչ թե ոճերի իմաստավորված պատկերավորումներով, այլ որպես միջաղգային մշակույթին պատկանող ամբողջական ունեցվածք։ Այս հարցում համոզվելու համար բավական է համեմատել Վիլլա Հաղորիանի ընդհանուր հատակագիծը և Ֆ. Լ. Ռալթի՝ Ֆլորիդա Սառութեան Կոլեջի հատակագիծը (1938—50), Ալտոյի՝ Կեմբրիջում (ԱՄՆ) իրագործած (1947—48) հանրակացարանի սանդղաձև միջանցքների ճակատային լուծումը և լ. Վանվիտելլիի Կաղերտային պալատի աս-

տիհանատունը կամ Թորոմինիի Սան Վիտուի (Հռոմ) ներքին հորինվածքը և Ռայթի Գուգենհայմ թանգարանի ժավալական լուծումը<sup>1</sup>:

Խնբնին հասկանալի է, որ անցյալի հետ կապված նարտարապետությունը պայմանավորված է երկու ուղղությամբ. մեկը վերաբերում է երկրի անցյալին, մյուսը, ավելի ընդհանուր բնույթ կրելով, հարաբերվում է ճարտարապետության ամբողջական պատմության հետ: Երկու ուղղություններն այսօր գոլություն ունեն զուգահեռաբար: Մշակութային նման դրվագի ամենակարենը արտահայտություններից է Սկանդինավյան երկրներում զարգացում ապրող նոր էմպիրիզմը<sup>2</sup>:

Էմպիրիկ հասկացությամբ զգայականից և փորձից ստացված ճանաչողությունը նշանակում է վերադարձ դեպի ժողովրդական ընազդական արվեստը, նշանակում է նաև հոգեբանական արժեքների կիրառումը գործառնությունների շարքում: Ռացիոնալիզմին հատուկ արտահայտչամիջոցների հետ (Հորիզոնական լուսամուտ, պիլոտի, ապակեպատ) առավել շափով հանդես են գալիս Սկանդինավյային հատուկ թեք տանիքը, ավանդական լուսամուտը, փայտը, աղյուսը, ժողովրդական գեղազարդումները:

Անհերքելի է, որ ճարտարապետության նման թեքումը, և Շվեդիայում տարված քաղաքաշինական առողջ քաղաքականությունը կօժանդակեն, որպեսզի երկիրը դառնա Արևմտյան եվրոպայի ճարտարապետության ավելի հավասարակշռված ընթացքը թելագրող կենարուն: 1930—1950 թթ. տարածում գտած նոր էմպիրիզմի շրջանում նշանակալից են հատկապես էրիք Գուննար Ասպլունդի (1885—1940) և Սվեն Մարքելիուսի (1889) ներդրումները:

Ասպլունդը սկզբում ընթանում էր Շվեդիայում տարածում գտած նոր դասականության հետքերով, իսկ 1930-ին իրագործում է Շվեդական տաղավարը Ստոկհոլմում: Միշազգային ճանաչում գտած այդ շենքում ամեն կարգի շինարարական տարրը, հարդարանք, առանձնակի իրեր, որոշակի կերպով իրագործված են մեծ պարզությամբ ու ներշնչում են նորարարության զգացմունք: Այս հատկանիշը, բայց հատկապես սեղմ միշոցներով արտահայտված թեմատիկ հարստությունը օգնեց ուսցիոնալիստներին որոշ կաշկանդումներ հազմանարելու գործում:

Այնքան մարդամոտ իր ճարտարապետությամբ Ասպլունդը կատարում է անցում նոր դասականից գեպի արդի ճարտարապետություն (Դեռտեմբուրգի քաղաքապետարանի ընդլայնում, 1937) և համագրելով ուսցիոնալիզմը ուղանատիզմին, առաջարկում է ճարտարապետական նոր հասկացություն, որը ազգային լինելով հանդերձ, կրում է համընդհանուր բնույթ<sup>3</sup>:

Ռացիոնալիզմը Շվեդիայում ուներ արդեն իր ավանդը. Ու. Ահրենը (Ֆորդի գործարան, 1929), Պ. Հեդլիվստը (Էսքիլստունայի ծածկած լողավազան, 1931) և հատկապես, Ս. Մարքելիուսը (Հելսիֆինգորդի համերգային դահլիճ, 1932) ու Ն. է. Էրիքսոնը (Գեռուսեբորգի երաժշտական դահլիճ, 1935) նշանակալից գործերով բացահայտ արդյունքի հասան:

Միշազգային համբավի հասած գեղայներ, ճարտարապետ, քաղաքաշի-

1 B. Zevi, Architektura e storiaografia, Torino, 1974.

2 Նոր էմպիրիզմ անվանումը անգլիական է (New Empiricism) և բնորոշում է Սկանդինավյայում առաջացած ֆունկցիոնալ-ազգային ճարտարապետության երևույթը:

3 B. Zevi, E. Gunnar Asplund, Milano, 1948.

նարար Սվեն Մարքելսիուսը ռացիոնալիստ է, առաջին գործից սկսած, նա հավատարիմ մնաց այդ ուղղության գաղափարախոսությանը և նրա էթիկական դրվագին<sup>4</sup>:

Նշենք նաև, որ 1935-ին նիւս էինար էրիքսոնի իրագործած Գետապ-լատսենի մշակութային կենտրոնում (թատրոն, թանգարան, համերգային դաշլիճ) համերգների դաշլիճը խոսում է այն մասին, որ Շվեդիաի հարտարապետական մշակութիթ դեռևս երեսնական թվականներին հասել էր արդեն այնպիսի հասունության, նրբագեղության, որ մինչև օրս այդ շենքերը, նրանց զարդագեղությունները պահպանում են իրենց թարմությունը: Մարքելիուսը իր որոշ իրագործումներով (մենատոնը Քելինգե վայրում, 1945, Նյու-Յորքի Շվեդական տաղավարը, 1939) ցուց տվեց, որ ներկայացնում է միջազգային ավանդ դարձած ռացիոնալիզմի շարունակողությունը:

Կարենոր է ընդգծել, սակայն, ինչպես Շվեդիայում, այնպես էլ Դանիայում և Ֆինլանդիայում, նորարար ուղղությունները ներմուծվում են ազգային բովից անցկացվելուց հետո: Այդ հանգամանքը ընկալվեց և գնահատվեց, չնայած այն բանին, որ ճարտարապետության զարգացման ընթացքում տուրք տրվեց որոշ զավառայնությունների, այդքանով հանդերձ ալանդականի և արդիականի կապակցումը կատարվեց առանց տեղի տալու ծայրահեղ մտածելու ձևերին: Նման շարունակություն և ինչպես ցուց էն տալիք Կոպենհագենի և Ստոկհոլմի ընդհանուր հատակագերը<sup>5</sup>, շառաչարկելով հանդերձ հեղաշրջող մտքեր, սույն իրագործումները ներդրվում են արևմտյան մշակութի ասպարեզում:

Ստոկհոլմի հանրային խորհրդի գործադիր բաժնի կողմից պատրաստված (Standesplankontor) և Ս. Մարքելիուսի ղեկավարությամբ կազմված է երկու ուղեգիծ: Առաջինը՝ մայր քաղաքի շրջակայրում ստեղծել արվարձանային տիպի քաղաքային չորս միավոր (քաղաք արքանյակ), երկրորդը՝ հին քաղաքի ներսում կառուցել նոր կենտրոն (city): Երկու տարրեր ուղղություններով գործող քաղաքային նոր միավորները դառնալու են որպես քաղաքը վերակենդանացնող գործուներ, նպատակ ունենալով Ստոկհոլմի միակենարուն համակարգը վերափոխել բազմակենտրոն համակարգի և շրջակայրում տեղափոխելով արդյունաբերության ու շուկայի կենտրոնները, նոր ծավալայնություն: Հաղորդել օրգանիզմին<sup>6</sup>:

Աշխատել-բնակել երկդորժունենության վրա հիմնված այդ ծրագիրը նպատակ ուներ նոր հարաբերություն առաջացնել ստեղծ լուծում չգտնող այդ խնդրի մեջ: Եվ, սակայն, քաղաքային միավորների միջոցով քաղաքի մայր կենտրոնից անկախ մնալու նպատակը չգտավ իր ճիշտ լուծումը: Քաղաքարքանյակները վերածվեցին քաղաք-հատվածների (town-section) և մայր քաղաքը ընդլայնվեց դեպի շրջապատը: Քաղաք-այգիներին հատուկ օրդանական անկատարությունը հայտնվեց և մի անգամ և այնպես, ինչպես պատճել էր անգլիական արքանյակների հետ (Վիլինգթոն, Ֆարստա):

Քաղաքային միավորների դերի հարցերը քննարկելիս անհրաժեշտ է

<sup>4</sup> G. Johansson, Sven Markelius architetto svedese e internazionale, in „Casabella“, № 201, 1954, Milano, p. V.

<sup>5</sup> Կոպենհագենի ընդհանուր նախագծի ծրագիրը իրագործվել է 1951—54 թթ., Ստոկհոլմինը սկիզբ է առել 1952-ին, որի իրագործումը տևել է տասնամյակից ավելի:

<sup>6</sup> G. Gentili, Le città satelliti di Stoccolma, in „Urbanistica“, № 24—25, 1958, p. 134.

Հիշել, որ դրանց գոյության հիմնական սկզբունքներից է ծավալատարածական ամբողջության, արտաքին տեսքի բնորոշումը և ուրուցնությունը: Քաղաքային միավորների որակական տարբերակում նշանակում է ոչ միայն առանձնահատկությունների նանաշում, այլև ամեն մի միավորի ձևաչին բնորոշում:

Անցյալի քաղաքներից ծանոթ է, որ բնակավայրի նարտարապետական ամբողջականությունը պահպանվում է, եթե տվյալ վայրի համանգալին-տընտեսական կարգը մնում է հավասարակշռված, մինչդեռ խախտվում է, եթե քաղաքային միավորի վրա աղողող ներքին և արտաքին ուժերի ոլորտում հայտնարերվում են էապես տարբերվող հատկանիշներ: Անգիտայում իրադիմած արբանյակները, Ստոկհոլմի ընդհանուր նախագիծը դրսերում են (սպառմարանների և տեսարանների կողմից իդեալացված) միջնադարյան քաղաքի օրգանական միաւնության հանգելու ձգուում: Հոռուարտյան տեսության բովից անցած, ոռմանտիկ-ռացիոնալիստ շրջանակներում զարդացում գոռած այս հասկացության արդյունքն այն էր, ինչ անգիտացիները անվանում են սուբրապիխա (subtopia):<sup>7</sup>

Սուբրապիխան նշանակում է նոր կառուցապատումներից հետևած բնական պայմանների, քաղաքային արտաքին միջավայրի և կենտրոնի աստիճանարար ընթացող անկում, մինչև գոների աստիճանին հասած միջակության համընդհանրացում՝ նշանակում է նաև ցածրանիշ բնակչախտությամբ կենտրոնների, միջակորեն ստանդարտացված, ֆոլկլորիկ գումավորում ունեցող տարրերի ընդարձակումը երկրի ամբողջ տարածության վրա:

Այնքանով, որքանսվ հնարավոր է քաղաքի մայր կենտրոնի ծրագրման գործում կիրառել քաղաքային նոր հարցերին հատուկ մասշտարք, ալյուստով էլ ծրագիրը կենսունակ է և որոշակիորեն տարբերվում է քաղաք-արքանյակների համակարգից: Եթեև կության տիպերի ընտրասերումը, փողոցների դասավորումը տարրեր քարձրությունների վրա, գործառնությունների նիշտ բնորոշումը, շենքերի տիպային ընտրությունը, միջակությունը հաղթահարելու նախադրյալներ են, որոնք կիրառում են գտել Ստոկհոլմում կառուցվող նորմալ կենտրոնի (գեռ շավարտված) նախագծում: Այսօր հատուկ արժեք ներկայացնող նորմալի փորձից հետևում է, որ քաղաքաշինության ծրագիրը ծավալատարածական նոր հարաբերությունների միջոցով պետք է վերագտնի գոյություն ունեցող քաղաքի ուրումն արժեքները և այդ՝ առանց դիմելու քաղաքային իրադրության վերացարկված պատկերին: Իսկ այս վերջինը, որպես իդեալացված մոդել, արտահայտվում է նախագրծման գործում: Արդ, եթե իրականության և նախագծի հարաբերություններում առկա է դառնում ոռմանտիկ գործոնը, ճարտարապետական թեման ձևալինի ներդարձությամբ (involuzione) ստանում է փոխզիջական լուծում: Այս առումով շինարարական տեխնիկայի և նախագծման միջև գոյություն ունեցող հեռավորությունը հնարավոր է կրամատել, առաջնությունը տալով տեխնիկային: Սկանդինավյան երկրներում, հատկապես Դանիայի, արդիւ

<sup>7</sup> Սուբրապիխա, subtopia, հունարեն ս� նշանակում է ցածր, հասարակ, հույնիսկ գուենիկ, toplia արտաքին տեսքի ներգործություն: Սուբրապիխա անվանումը առաջին ընթերցվել է „Architectural Review“-ի 1955 հունիսի և 1956 դեկտեմբերի հատուկ համարներում: Վերահասարակված հոդվածներից առաջինը կրում է հետեւյալ վերնագիրը՝ Jan Naln, Outrage London, 1955. Jan Naln, Counter-attack Against Subtopia, London, 1957.

Հարտարապետությանը հատուկ այս խնդիրը ամբողջ ուժգնությամբ դրսկորված է Արևել Յակոբսենի (1902-ին ծնված) ստեղծագործություններում<sup>8</sup>:

Ազգայինի և միջազգայինի յուրահատկություններին կապակցված, հատուկ նշանակություն է ստանում այն հարցը, թե ինչ չափով Ա. Յակոբսենը օգտվում է ազգայինից: Անժխտելի փաստ է, որ դանիացի ճարտարապետը (այդպես էլ Ասալտոն) երբեք չի հրաժարվել իր երկրի համբարության տվյալներից՝ ձգտելով միշտ իրար համագրել արդյունաբերացված համայնքի պահանջներն ու ազգայինը: Փոքր ազգերին յուրահատուկ այս ձգտումը զարգանում է միջազգային բնույթի ճարտարապետական համակարգերին (Բառւճառուզ, Դէ Ստիլ) զուգահեռ: Սովորությունների և բնապատկերի հետ կապը, ինչպես և պարզ առարկաների գեղագիտական հասկացությունը մերենայացված իրականության մեջ զգայականը ներդնելու պահանջ է, ինչպես և ապրելավայրում միջավայր ստեղծելու միջոց:

Ավանդականի կապը հաստատելու նպատակով Յակոբսենը հետապնդում է երկու ուղղություն. մեկի համաձայն ձգտում է ներդաշնակել շնորհը բնության հետ, մյուսի առումով իրագործում է մտային մողելը ու այդպիսով ստեղծում բնակելի նոր միջավայր: Եթենք մի քանի օրինակ, Գենտոֆտեյի թելլավիստա (Կոպենհագեն) թաղամասի (1932—35) նույնատիպ տները, ատամնաձև շարրով միահյուսվում են ծովափնյա, անտառապատ շրջապատի հետ: Մայրաքաղաքի նույն շրջանի Սոհոլմ թաղամասի հորինվածքը (1950—1955) չի հարաբերվում տեղական ավանդին, այլ հիշեցնում է Հարավային Եվրոպայի գյուղական ճարտարապետությունը՝ երկհարկանի, դեպի վեր ձգված, ասիմետրիկ տանիքով, մեկը մյուսի հանդեպ տեղաշարժված բնակելի ծավալներ: Այլ երկրների ճարտարապետության պատկերացին մողելի յուրացումը ավանդական լինելու մի այլ ձև է, որը երկի գալիս է նկարչությունից: Կարև Կրիստենսեն Ալբրոդ Վայրի արդյունաբերական կենտրոնը (1957) իր ճարտարապետությամբ միջազգային է: Գործարանային այդ համալիրի գործառնորեն բնութագրված ծավալների պարզ արտահայտչականությունը, կառուցվածքային հատվածների նրբագեղ մշակումը, տնտեսավետ միջոցների օգտագործումը ուսանելի հատկանիշներ են ու ցույց են տալիս, որ հնարավոր է ամենապարզ միջոցները կիրառելով հանդերձ ձևին հաղորդել համընդհանուր արժեք ունեցող ուրույն կերպար (սա է Մ. վան դեր Ռոեի թողած պատգամներից մեկը)<sup>9</sup>:

Ինչպես նշեցինք միջազգայինի և ազգայինի հասկացություններն առկա են սկանդինավյան արվեստի բոլոր բնագավառներում՝ գեղայն, համբարություն, կահավորում, ճարտարապետություն, քաղաքաշինություն: Օրինակ, աշտարակաձև, բազմահարկ բնակելի տունը (punkthus, կետային տուն), առաջին անգամ իրագործվեց Շվեդիայում (Ստոկհոլմի մոտակայքի Դանվիթսբլիւպպան, ճարտարապետներ՝ Բակֆըրեն և Ռեինուս, 1945—48): Մ. վան դեր Ռոեի կամաց պատճենը արվեստի միջազգային մեծ մրցանակ:

<sup>8</sup> Գծագրիչ և նկարիչ Ա. Յակոբսենը հոր ցանկությամբ հետեւ է ճարտարապետությանը Կոպենհագենի Արվեստի ակադեմիայի ֆակուլտետում: Նրա զասախոսներն են եղել՝ Ք. Ֆիսկերը, Ի. Թենտեսենը և Ք. Գուլորը, որոնց հետ այցելել է Խոտալիս և Ֆրանսիա: 1961-ին ստացել է ճարտարապետության և արվեստի միջազգային մեծ մրցանակ:

<sup>9</sup> T. Faber, Arne Jacobsen, Milano, 1964. S. Ray, L'Architettura moderna nei paesi Scandinaavi, Bologna, 1965.

մնալու էին «գծագրական սեղանին ամրացած ճարտարապետական երազներ» (Ն. Պելզներ), մինչդեռ «Պունկտայում» անվանումով աշտարակածն տունը կիրառվելու էր բոլոր երկրներում՝ «շվեյցարական բնույթի հաղորդելով» նորակառույց թաղամասերին (Անդիալյում՝ Ռենիմպանի, Կովենտրի, Հարլուու):

Ծվեդիան, Դանիան և Ֆինլանդիան արտասահման ներմուծեցին հատկապես աղջային գունավորում կրող կիրառական արվեստների արտադրանքներ (Դանիայի ճարտարապետներ՝ Քարք Քլինտի և Քեփ Ֆիսքերի նախագծած կահույքը): Սակայն արևմտաեվրոպական արվեստների ավելի լայն շրջանակներում այդ արտադրանքները մեծ հետաքրքրություն առաջացնելով հանդերձ, ապացուցեցին «աղջային»-ի սահմանափակ լինելը: Հետեաբար, նոր էմպիրիզմի շրջանի արվեստը (ինչպես Խտալիայում՝ նոր ռեալիզմը և նոր կիրետին) անշատվեց նորարար ուղղություններից և մեկուսացած մնաց Ականդինալյան երկրների սահմաններում:

### ՆՈՐ ԼԻԲԵՐՏԻ

Հիսունական թվականների շրջանում Խտալիայում առաջացած նոր լիբերարի (Neoliberty) ճարտարապետական ուղղության նպատակն էր հակադրության Անգլիայում, Ֆրանսիայում, Ֆրանցիայում, Սկանդինավյան երկրներում տարածում գտած ուսցիոնալիզմի ծայրահեղ ուղղությանը, հատկապես ԱՄՆ-ում դարպացում գտած «ԱՄիշազգային» ոճու-ի ձգուումներին:

Կերպարի պահանջը ցայտուն կերպով արտահայտում է նոր լիբերարի առաջացնող ամենագործուն ուժը: Ռացիոնալիզմը հանգելով որոշ ընդհանրացումների, չեղորացրել էր կերպարի նշանակությունը և նպաստել այն կարծիքի տարածմանը, ըստ որի հնարավոր է գործառնությունների կազմակերպություն կատարել համընդհանուր նշանակություն ստացած կառուցվածքային մողելների միջոցով: Այսպիսով, մարդկային գործունեության բաղմակում հարցերը լուծվում էին ապրիորի սահմանված կառուցվածքային համակարգի միջոցով և այս վերջինին ենթարկում նախագծման գործը:

Ճարտարապետական խնդիրը հարաբերվում էր ձերին, այսինքն կառուցվածքը և կերպարը միաձուղող հիմնական գործոնին: Եվ քանի որ կառուցվածքի զարգացումը պայմանավորված է պատմական անհրաժեշտությամբ, այդպիս էլ կերպարն ունի պատմական իր ընթացքը Արդ, նոր լիբերարի հետեւորների կարծիքով, ուսցիոնալիզմը ընդհատել էր կերպարի զարգացման շարունակությունն ու ընկել անորոշակայան ոլորտը: Հետեաբար, հարկ համարեցին վերականգնել այդ կապը, վերադառնալով արդի ճարտարապետության վերջին արաահայտությանը՝ Ար նուվոյին (այս ուղղությունը Խտականական կողմեց՝ լիբերատի) և նպաստել նրա զարգացմանը:

Նոր ուղղությունը ծնունդ առավ Հյուսիսային Խտալիայում: Տորինոյի ճարտարապետներ Ռ. Գարբետին և Ա. Դիզոլան իրագործեցին նոր լիբերատի լավագույն գործը՝ Բոտտեգա Դ'երազմոն (1953—56)<sup>10</sup>: Այս և այլ ճարտարապետների ստեղծագործությունները (Վ. Գրեգորտի, Զ. Մտոպակին և այլք) ուրույն արժեք ներկայացնելուց վատ, նպաստել են արդի ճարտարա-

<sup>10</sup> P. Portoghesi, Dal neo-realismo al neo-liberty, „Continuità“, 1958, № 68, p. 65 sgg.

պետությունը վերաբննության ենթարկելու, որոշ տեսակետների վերահաստատումը ճշտելու գործին: Նման դիրքորոշումն ընդհանրացում է գտել և կոչվում է «պատմականության ձգում»: Այն ստացել է հետեւյալ սահմանումները. Սպանիայում՝ Գառութիզմ, Հոլանդիայում՝ Նոր դէ Ստիլ, Ավստրիայում՝ Նոր Սեցեսիոն, Անգլիայում՝ Էնգլիշնես<sup>11</sup>:

Հարցը ինքնին չի վերաբերում պատմական լինելուն, այլ կապված է երկրաշափական-ձեւաբանական որոշակի հասկացությունների հետ: Պատմության ժամանակագրական խախտումներով կատարված ընտրություններ, որոնք նպատակ ունեն լրացնելու ճարտարապետական այն արտահայտչակերը, որոնց ներուժությունը մնացել էր պահպանված: Այսպես, Նոր լիքրերի հետևողներն իրենց ուշադրությունը ուղղեցին Մեկինտոշի գործերի, որոշ շափով Ռայթի, ինչպես և Ամստերդամի դպրոցի շուրջը: Նրանք փորձեցին պատմական կապակցությունների միջոցով հարստացնել ճարտարապետության արդի լնումն:

Կերպարը ստեղծ ճաշակից պայմանավորված երևությ է, այդ առումով անցողիկ է և չի շոշափում ճարտարապետական խնդիրների իսկությունը (գործառնություն, կառուցվածք, ձև): Հետեւաբար, հիսունական թվականներին առաջացած նորարարություններն անցողիկ բնությ կրեցին, չնայած այն բանին, որ կերպար ստեղծելու պահանջը մինչ օրս պահպանում է իր նշանակությունը:

Ինչպես տեսանք, Սկանդինավյան երկրներում պատմականը ստացել էր որոշ շափով գավառային բնորոշում, Եվրոպայի այլ երկրներում՝ բաղմապիսի մեկնաբանություններ: Ավելի ընդհանուր առմամբ, սակայն, ռապատմություն բաղադրիչը ստացել է այսօր անկախ լինելու համբնդհանրացման ձգող երևութիւն նշանակություն<sup>12</sup>:

Քննարկվող Հարցի վերաբերյալ կարևոր ենք համարում հիշատակել մի քանի ճարտարապետների մոտեցումների և դրանց հատկանշող առանձնահատկությունների մասին:

Պատմությանը գիմելու ամենաընդհանուր եղանակը եղավ ուացիոնալիզմի հաշողություններից ընդհատված ուղղությունների հետ նոր կապեր հաստատելը, ինչպես և մեր դարի սկզբից մինչև երեսնական թվականները զարգացում գտած ճարտարապետական լեզվի արտահայտամիջոցների կիրառումը: Օրինակ՝ ուրույն ճանապարհով ընթացող Շարունը էքսպրեսիոնիստական ոգով իրադրում է Շտուտգարդում՝ Ռումեն և Ֆուլիետա բնակելի տները (1954 և 1955), Բելյինով՝ Ֆիլչարմոնիան (1963): Այդպիսին է Ստիրլինգի և Գոուանի՝ ճարտարագիտության ֆակուլտետը Լեիչստերում (1963), որը բացահայտորեն կապվում է 1923-ին Մոսկվայում կառուցված Ք. Ս. Մելնիկովի՝ աշխատավորների ակումբի ճարտարապետության հետ: Լը Կորրյուգիեն իր Ռունշանի մատուռով (1950—55) վերաբանում է պյուրիզմին, մինչդեռ «միջերկարական» է ժառանգության 1954: Լ. Կորրյուգիեի լա Տուրետ մենաստանի ճարտարապետությունը, ինչպես նշել ենք,

<sup>11</sup> Այդ անվանումն առաջարկել է Ռենատո դէ Ֆուակոն (տե՛ս նշվ. աշխ., էջ 383—95):

<sup>12</sup> «Գծագրական սեղանի թեկնուրաֆին կից դրված ճարտարապետության պատմության գիրը քննապատճերի կողմէց հնարած փալուն պատկեր չէ, այլ ճշգրիտ բնորոշում է մշակությ նոր ծագմանալության և նախագծման գիտահետազոտական պահանջները բացատրող պայմանները» (տե՛ս C. Dardt, Il gioco sapiente, Padova, 1971, p. 28).

կապված է XII—XIII դարերի նույնատիպ շենքներին, բնությանը, ունի քառանկյունի մեջ շրջափակված հատկագիծ, նաև կատուների կերպարաննագծված մշակում: Պլուրիզմին հակադրվող դրույթներ, որոնք ներշնչում են ձեւաստեղծման աղատություն և ոգերորդ աղդեցություն թողեցին այլ ճարտարապետների գործերում (Պ. Ռուդոլֆի՝ Արվեստի և ճարտարապետության շենքը Յալ Համալսարանում, 1963, Քալմանի՝ Սիսի Հոլլ Բոստոնում):

— Ճարտարապետության ավելի վաղ շրջաններին դիմելը հանդիսանում է պատմական լինելու երկրորդ մոտեցումը: Էնրո Սաարինենի դիրքորոշումն այս հարցում ավելի աղոտ է: Միջնադարի բնակավայրի ոճականությամբ է նախադժված Յալ Համալսարանի հանրակացարանը (1960), ոռմանականին է հառում ՄԻՏ-ի մատուրը, Նոր-շիորշիան է ԱՄՆ-ի դեսպանության շենքը Լոնդոնում, միջնադարյան ողի ոմնի նաև ԲԲՊՌ ճարտարապետների խմբի իրազործած Վելասկա աշտարակը Միլանում (1958):

Պատմականության արդի ուղղության ուահվիրան կուիզ Քանը Սան Ջեմինիանոյի աշտարակներն էր մտաբերում, երբ նախագծում էր Ռիչարդի լարորատորիաները (1957—1961), Կարկասսոնին՝ Ֆիլադելֆիայի կենտրոնի նախագծում, Հաղորիանի Հռոմին՝ Յոնուս Սալքի ինստիտուտի նախագծում (1959): Այլ գործերում (Ռուշետերի եկեղեցին, Աղաթ Յեսհուրում՝ սինագոգը) նա դիմում է լուսավորչականության շրջանի ճարտարապետներին՝ Բուլիէ, Լուու<sup>13</sup>:

— Այլ ձգուումի համաձայն, դասականությունը հաղորդակից է դառնում ուցիչնալիզմին: Այս հասկացության մեծագույն ներկայացուցիչներն են Գ. Ասպլունդը (Ստոկհոլմի Կրեմատորիան, 1935), Մին վան դեր Ռուեն (Բեռլինի Պոտսդամերշտասեի արվեստի ցուցասրանը, 1968), Վ. Գրոփիուսը (ԱՄՆ-ի դեսպանատունը Աթենքում, 1961), Ա. Յակոբսունը (Սաս Երկնաքերը Կոպենհագենում, 1961) և Զոնսոնը գրեթե իր բոլոր գործերում:

\* \* \*

Մեծ տաղանդով նախագծված այդ շենքերը պատմահասարակական իրավիճակը մասնակիորեն պատկերող բազմակերպար իրագործումներ են. Արդ, ֆունկցիոնալ-ուացիոնալիզմը մերժեց անցյալը, բայց ստեղծեց ճարտարապետական գործը ղեկավարող ուացիոնալ հիմքը: Պատմականության արդի ձգուումը ուացիոնալիզմի պակասը լրացնելուց զատ, առավել շափով բխում է տեսությանը ուացիոնալ կառուցվածք հաղորդելու անհրաժեշտությունից:

Երկրաշափական քաղաքի մոդելը ուացիոնալիզմը հակադրեց օրդանական քաղաքի մոդելին (ձգտեց հասարակական-տնտեսական իրագրությունը տեղակորել ենթադրված համակարգի մեջ) և փոխանակ ձեզ հետևցնելու կառուցիչ շինարարական և գործառնային նախադրյալներից, հարեց ձեւադարձառնությանը: Այս դեպքում պատմականությունը հանդես եկավ լրացուցիչ գործակցի գերում, որոշ շափով նպաստեց քաղաքային իրավիճակից, էմպիրիկ միջոցներով արտածված փաստերը ձեւակերպել ավանդականի օրինաշափություններով, դրանց ճշտումը կատարել «գեղագիտության» արդեն վերանայված դրույթների հիման վրա:

<sup>13</sup> M. Angrisini, Louis Kahn e la storia, „Edilizia Moderna“, 1965, № 86.

Արդի ճարտարապետության ձգնաժամի հատկանիշներից է՝ կերպարի արտահայտչականության կորուսը: Ի տարբերություն ոռմանտիկ և էլեկտրիկ հակացությունների, օրինակ, լ. Քանր լրացնում է կերպարի պակասը, դիմելով պատմական աղբյուրներին՝ դեղայնի ձանապարհով: Այդ ուղղությամբ նա վերագտնում է կերպարը, մերժում, սակայն, ձեր համաձայնության, ոճերի հորինվածքային բացարձակության գաղափարը (Մ. Տափուրի): Քանի համար նոր թեման նոր առիթ է անցյալի հետ հաղորդակցվելու, և անկախ այն բանից, թե որ շրջանի կամ որ ժողովրդի արվեստի հետ է հաստատելու այդ կազմը: Այդ իսկ պատճառով նա շրջում է ձեւ-գործունեություն կապակցությունը և հաստատում հետեւյալը՝ «ձեզ» անվանակոչում է «գործառնություն»: Նման հասկացությամբ Քանը «Կարտեզյան ռացիոնալիզմի» (Ֆ. Տենտորի) տրամաբանական պարզությամբ հանդում է ձեր տարրականությունը վերագտնելու արդյունքին, բայց ձեր և ոչ թե գործառնության հանապարհով: Սա էլ ձեւապաշտ լինելու մի նոր եղանակ է:

Այլ է լը Կորբյուզիեի մոտեցումը: Նա պատմականի հարցում դիմում է արդի կերպարվեստի միջոցներին, ընտրությունը կատարում է իր մտքերի ուղեգիծ հանդիսացող կուբիզմի և նկարչական իր կենսափորձում ակնառու դարձած ձևային փնտրումների սահմաններում: Այդ հիմունքներով նա կերտում է ծավալատարածական նոր կառուցվածքը:

Լը Կորբյուզիեի ստեղծագործություններում նկարչականը և քանդակայինը միաձուլված են ճարտարապետական ձեր հետ միասին: Երկրաչափական հայեցողությունը և կերպարանադժված ձեզ որոշակիություն են հաղորդում նրա մտահղացումներին: Առաջին շրջանում նա հարեց երկրաչափականին, Ռոնշանի մատուով նախընարություն տվեց երկրորդին, իսկ Զանդիգարի Արդարադատության պալատում կերպարանագծված ձեզ պարփակեց երկրաչափականի սահմաններում ու այդպիսով հանգեց ձևամշակման երկու եղանակների համադրության: Հետեւարար, պատմականության կորբյուզյան գաղափարը, արտաքին գործոններից զատ (հոմական դասական արվեստ, Միշերկրականի ափերի ժողովրդական տների ճարտարապետություն, իտալական և ֆրանսիական միջնադարի և վաղ Վերածննդի արվեստներ) արմատավորվում է արդի արվեստում, ժամանակագրականորեն բնորոշված ապրած շրջանի մշակությունով:

Այսպիսով, էմպիրիզմի, ուսցիոնալիզմի, լիբերտիի և հարակից ուղղությունների «նոր» դիրքորոշումները, Քանի պատմականությունը, լը Կորբյուզիեի անհատապաշտությունը մասմար պատճառ եղան ճարտարապետության կղզիացմանը:

Արևմտյան Եվրոպայում արվեստի տեսությունը դեռևս շունի իր գիտական ամուր հիմքը: «Պատմականը», «ազգայինը» հիմնական թեմայից խուսափելու պատրանք է միայն: Եվ քանի վեռ ճարտարապետությունը չի խորացել քաղաքաշինական իրականության մեջ, հանդես կան «նոր» ուղղություններ և երկրի քաղաքաշինությունը կընթանա հատվածաբար, էմպիրիկ անորոշությամբ:

Կապիտալիստական մեծ քաղաքներին բնորոշ երևութներից է հասարակարգերի կազմալուծումը, քաղաքացուն տանջող մենակության զգացմունքն իր բոլոր բացասական հետևանքներով: Հասարակական այդպիսի երևությունների կրողը, միջավայրի ու ժամանակի առումով կենսափորձվածը՝ մարդն է: Անշուշտ, քաղաքն ունի անհատական կյանքը կոլեկտիվ կյանքին հարաբերելու ուրույն հատկություն: Հետևաբար, քաղաքաշինության բարձրագույն նպատակն է՝ ելք գտնել տվյալ վիճակից: Ճարտարապետական այժմհական ըմբռնումով ասված, շենքը պետք է ունենա համայնքային հաղորդակցության հատկանիշը, համապատասխան է լինելու քաղաքացու անհատականությանը, նպաստելու է հարաբերությունների հաստատմանը և քաղաքացու հասարակական դաստիարակմանը:

Այնպես, ինչպես շենքն ունի իմաստային նշանակությունը, արտացոլում է պարունակած գործառնությունը, հաղորդակից դարձնում իր իմաստին, իսկ կերպարի առումով պատկերում է մշակութային դրվագքը, երբեմն հիշեցնում իր ձեին հարակցվող իմաստների բազմազանությունը, այդպես էլ հրապարակը, թաղամասը, բայց հատկապես փողոցը, միապալաղ չի լինում, երբ միասնական լինելով հանդերձ բազմազան է: Հետևաբար, կյանքի աշխուժացումը կապված չէ այնքան մասշտաբային հարցին, որքան կյանքը կազմակերպող կառուցվածքին: Մարդկանց հաստատությունները ստանում են քաղաքային բնորոշում այն դեպքում, երբ հարաբերված են կառուցվածքին և ոչ թե բնակավայրի ընդարձակությանը: Այս առումով, եթե փոքր շափերի բնակավայրը տնտեսապես լինի գործոն, հասարակական առումով միահմուռ, կարող է քաղաքային մակարդակի կենցաղով ապրել: Մի պայմանով, սակայն, որ ներդրված լինի ավելի մեծ կառուցվածքի համակարգում: Պարզ է, որ հիշյալ երևութը պատմականորեն պայմանավորված է արևմտաեվրոպական կապիտալիստական համակարգով, ուր առաջադեմ ուժերի անհախիքաց զարգացումով հանդերձ, աեղի չեն ունեցել հասարակական և տնտեսական լուրջ տեղաշարժեր:

Անգլիացի ճարտարապետների փորձը ցուց տվեց, որ արբանյակատիս համակարգը կարող է կիրառվել այն դեպքում, եթե պահպանվի հասարակական-տնտեսական հաղորդակցումների փոխադրձորեն կապակցված համակարգը (Դ. Շիլդի), և կառուցապատվեն միավորների գասալորումը կարգավորող միջանկյալ տարածությունները: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Անգլիայում սկիզբ դրվեց կառուցապատման մեծածավալ գործունեության: Առաջին տասնամյակի արդյունքը, սակայն, գոհացու-

ցիշ շեղավ։ Պատճառը շահադիտական նկատառումներն էին, մակերսորեն մշակված ծրագրերը, առկա վիճակը կարգավորելու թույլ միջոցառումները, որոնց հետևանքով քաղաքների և պահանջմանափակ զարգացումը ոչնչացրել էր շրջապատի ազատ տարածությունները, համարթել հողամասերի տեղադրական առանձնահատկությունները։ Միօրինակությունն այլափոխել էր մինչև այդ հոգատարությամբ պահպանված բնակավայրերի ուրույն պատճերը։ Այդ իրադրությունը մտահոգեց մի խումբ անգլիացի մտավորականների։ Զ. Ներինը հստորեն քննադատում էր նոր կառուցապատճենների, ինչպես և նախագծերի շափականցորեն ստանդարտված առաջարկները, տիպային շենքերի միօրինակությունը և այն, որ սույն գրությունը սպառնում էր կարճատև ժամանակով անգլիական բնապատկերը վերափոխել անշուրք պատճերի։ Եվ հեղինակը հանդում էր հետեւյալին։ Եթե XIX դարի ուսուպիստներն ապագա քաղաքը պատճերում էին իդեալական լուծումներով, ապա ներկա կառուցապատճեններն ու բարեկարգումներն այդ լուծումների հետ համեմատած, նման են երևակայությունից ու ձևաստեղծման ունակությունից զուրկ սատորադաս-ուսուպիանների։

Այսօր ականատես ենք այն ճգնաժամին, որը գոյություն ունի մի շարք հին քաղաքներում։ Արդի կյանքի պահանջները վերափոխում են այդ քաղաքների ուրույն դեմքը, նրա հնագույն կորիզը չի կապվում զարգացման ընթացքում առաջացող նոր կերպարին և կառուցվող նոր շրջապատճեն մնում է կղզիացածի։ Քաղաքի կազմի և նրա կերպարի հեղաշրջման այդ ընթացքում հետզհետե որոշակի կերպարանք է առնում ապագա քաղաքը։ Շարունակ զարգացող քաղաքն իր առանձին մասերում երեսն կառուցապատճում է այնպես, որ այդ մասերին տրված քաղաքաշինական լուծումները որոշ շափով կարող են քաղաքային ապագա կերպարը թելադրող փաստեր դառնալ։ Հեղաշրջվում է քաղաքների անցյալի կազմը, վերափոխվում կերպարը, բայց միաժամանակ պատրաստվում է ապագա քաղաքը, մի երկույթ, որը անսանձահարելի է, բազմակողմանի և գալիս է այն գործուներից, որոնք բնորոշում են այսօրվա կյանքը։

Հարգէ է նշել նաև, որ որոշ նախագծերի իրագործումը նպաստում է հին կորիզի աշխուժացմանը (Ստոկհոլմի կենտրոնում կառուցված բազմահարկ շենքերը, Ռոտերդամում՝ Լինբանը, Բոլոնիայի կենտրոնի բարեկարգությունը), պատմական արժեքների առկայությանը ու նորը շարունակ իրար գումարվելով առաջացնում են կերպարների բազմաշերտ իմաստավորում և գործառնությունների այլազանություն։ Դոյություն ունեցող քաղաքների կենտրոնում ստեղծված մասնագիտացված կենտրոնները՝ առևտրական, վարչական, կենցաղային, մշակութային, ներդրման և արդեն գոյություն ունեցող թաղանթի համակարգում։ Նոր միավորների հորինվածքը սովորաբար հիմնված է խանութների ցածր և շարունակական ծավալի ու բնակելի կամ վարչական բազմահարկ, շերտավոր շենքերի հակասության վրա։ Վարչական

<sup>1</sup> Հին քաղաքներում ստեղծված առևտրական նոր միավորներում խանութները Ստոկհոլմի օրինակում տեղադրված են բնակելի շենքերին կից (ճարտ. Պետքն, Տենգրում, Մարքելիուս, Բակշտում, Ռեինուա, Բաուեր, Լաբերցանդ, 1962—65), Ռոտերդամում կցված են վարչական առևտրական շենքերին (Բաֆեմա և Վան զեն Բրեոր, 1949—53), Բոլոնիայի հին շենքերում, մինչեն, ստեղծվել են համբարության կենտրոններ։ Լինբանի համար տե՛ս Architektur und Städtebau. Ստոկհոլմի համար՝ „Architektur Wettbewerbe“.

գործունեությունը կազմակերպվում է հասարակական բնույթի աշխատասեն-յակիներով (Լելլի Մարտինի նախագիծը՝ Ուայտհոլի համար, 1965), մինչդեռ սնվական և համայնքային գործունեությունը կազմակերպվում է իրար խըմ-բակցված համակարգերի միջոցով։ Երկրորդ պարագայում հարկ է կառուց-ված ծավալը անկախ պահել հետիւան ու մեքենաների մուտքերից։ Այս կարգի շենքերի նշանակալիք օրինակներից են Մ. վան գեր Ռոնի՝ Սիդրամը Նյու-Յորքում, Ֆեղերալ Ֆենթրը՝ Զիկագոյում։ Երկու գեպքում էլ Միզը նո-րակառուց ծավալը անշատում է հողամասի ավանդարար լնդոնված կա-պերից, սահմանում հողամասը երթևեկության ցանցի միջոցով և բարձրաց-նում շենքը որպես կապակցություններից անկախ ծավալ (ապակեպատ, բրոնզպատին նակատները շեշտում են այդ հատկանիշը)։

Կենցաղային կենտրոնները՝ թատրոն, կինո, ցուցարան և այլն, կու-վում են նաև շիպինգ-կենտրոն (shopping center) և լինում են հանրակա-հառաջին տիպի (Համբուրգի օրինակը)։ Կամ ավելի բարդ, կոչվում են՝ գնում-ների քաղաք (Shopping Town) և տեղադրվում են արվարձաններում կամ քաղաքից դուրս որպես առևտություններից անկախ ծավալ (ապակեպատ, բրոնզպատին նակատներ)։

Գործունեությունների ալլագանությունն ավելի դիպուկ է հին քաղաք-ներում։ Այդ գործունեությունները հին քաղաքներում, ինչպես և նորերում խմբակցվում են իրար, համակարգվում որպես խառը տիպի միավորներ։ Նման միավորներում խանութի շարքերը, ծածկված սյունաշար ճեմուղիները նպաստում են շենքերի ծավալատարածական միանությանը։ Կոմբինու-դի օրինակում երթեկնեկությունը բաժանված է երկու հարթությունների վրա՝ ներքեմնը՝ ավտոմեքենաների համար, վերեկնը՝ հետիւտների համար։ Այդ-պիսով, խառն գործունեությունները ներքնդրվելում են քաղաքի օրգանիզ-մում և առաջացնում գործառնությունների ու ծավալների միասնացում։ Այս հանգամանքը ոչ միայն կարևոր է հարստարապետական առումով, այլ հատ-կապես այն բանի համար, որ մեծապես նպաստում է փոխհարարերություն-ների առաջացմանը<sup>2</sup>։

Գործառնությունների խիստ բաժանումն իրարից և քաղաքաշինական որոշ օրենքների կույր կիրառումը նախագծման գործում նպաստել են քա-ղաքի ստանդարտացման բացասական երևույթի առաջացմանը։ Այսօր միօ-րինակությունը մտահոգիչ տարածում է գտել հատկապես Անգլիայում, ուր հարց է բարձրացվում քաղաքների անապատային տեսքի անմիտիքը դրու-թյան մասին։

Ճարտարապետն առաջարկելով գոյություն ունեցող քաղաքային հատ-վածների կարգավորումը, գործում է նախապես գոյություն ունեցող իրա-դրության սահմաններում, իսկ նախագծելով նորը, նա ելնում է որոշ փոր-ձառություններից։ Պարզ է, որ ճարտարապետաց չի կարող ստեղծել քաղա-քային իրականություն, դա կախում ունի բնակչիներից և այդ կենտրոնի վրա ազդող, նրա ներսում գործող առընթերաշակերից։

Ճարտարապետի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է՝ ստեղ-

<sup>2</sup> V. Gruen, Shopping Towns for America.

<sup>3</sup> H. Bruckmann, D. L. Lewis, Esempi di pianificazione edilizia in Inghilterra, Mi-  
lano, 1962.

ծել քաղաքի նոր կերպարը<sup>1</sup>: Քաղաքակրթությունը ձգում է միշտ ավելի լիարժեք դարձնել ձեզ: Քաղաքային միավորների ձեակերպման հարցում այդ բարձրագույն նպատակին հակասում է մեծ զանգվածների աճը: Այսօր կորել է այն չափանիշը, որի միջոցով անցյալում սահման էր դրված գյուղի կամ ավելի մեծ կենտրոնների միջև: Անցյալի սահմանները հետզհետեւ վերանում են: Դինամիկ զարգացումն անսահմանափակ է, իսկ ձեզ բնորոշվում է այն դեպքում, եթե գտնվում է ուրույն սահմանը: Նման սահմանումը, սակայն, տարածությունը կայականորեն բնորոշելու ավանդաբար հաղորդված հասկցություն է և չի համապատասխանում շարժունակ տարածության զաղափարին: Եվ, սակայն, փորձառությունը ցուց է տալիս, որ նախագծումը որպես մշակման և ծրագրման մոդել, կիրառելի է դարձնում երկու գրույթները ոչ թե ամբողջությամբ վերցրած, այլ նախընտրություն է տալիս մեկին կամ մյուսին: Իսկ այն հարցը, թե երկու գրույթներից որն է գերիշխելու նախագծման գործում, հարկ է պատասխանը փնտրել անցյալի իրագործումների առարկայական բովանդակության կամ ավելի հանգամանորեն բնազդային ձարտարապետությունը պահպանում է շարժականը՝ կայական համակարգում ներդնելու գաղտնիքը (հունական կղզիների, հտալիայի և Խսպանիայի ծովափնյա տները):

Արդի արվեստի շարժունակության գործոնը հատկանշում է էքսպրեսիոնիստ, ֆուտուրիստ և օրգանական արվեստները, որոնք ուրույն մեկնաբանությամբ կիրառում են գտել ֆինանսական ձարտարապետության արդյուղությունում: Քաղաքի համակարգում շարժունակության բաղադրիչը գործոն դարձնելու հասկացությանը հարող Ա. Ավալոն ստեղծում է երեք հարթություններով կառուցված Հելսինկիի հրապարակը (1961): Ավալոն նախագծել էր արդեն Խմատրայի շրջանը (1947), Սահինատասալոն (1949—52) և Օտանինեմին (1942—55): Հելսինկիի հրապարակին տրված լուծման համաձայն, հրապարակը փակ չէ, ոչ էլ կենտրոնաձիգ, այլ զարգանում է ազատ և երեք հարթությամբ միանում է շրջապատին:

Զեր, որպես ազատ զարգացում ընկալելն այսօրվա քաղաքաշինության հասկացություններից է, դինամիզմը ծավալատարածական կազմավորման ընթացքում ներդրավելու, ձևի բնորոշման մասնակից դարձնելու հնարք:

Նման հասկացությանը հարազատ, նշանակալից իրագործումներից է՝ Դիպոլի ուսանողական կենտրոնը (Հելսինկի, 1965—67): Ճարտարապետ Ռիհիմա Փիետիլայի այդ համալիրն ունի մերթ կոր, մերթ ուղիղ ընթացող ծավալային սահմանումներ: Անտառապատ ընության միջավայրում կենտրոնացած բազմաթիվ գործառնություններն իրար են շաղկապված այդ կառուցում, լուսամուտների բաժնումները կատարված են, կարծես կրկնելով ծառերի շարքը, քարապատ հատակները երկարում են մինչև շրջապատի ժայռերը, իսկ ազատ տարածությունները խորշածե ներթափանցում են մինչև շենքերի սահմանը, տարրեր բարձրություններով տանիքը երկարում է դեպի գուրս, ընդգրկում է շրջապատը, առաստաղային լուսավորությունը լուսամուտայինի հետ միասին ստեղծում են բնության հետ ձուլվող արհեստական միջավայրը:

<sup>1</sup> Th. Crosby, Il senso della città, Bologna, 1971, p. 23.

Կարծես բնապաշտական մտքի<sup>5</sup> առարկայացում դարձած Դիպոլիում գործառնությունները կազմակերպված են ազատ, բայց ուսցիունալ դասավորությամբ։ Անկյունագծի երկարությամբ ընթանում է միջանցքը, նրա լայնությունը փոխվում է համաձայն անցորդների կազմած խմբավորումների, որն իր հերթին կախում ունի կից սենյակների տարրողությունից։ Նկարագրոված հատկանիշները ունեցող շենքը կորցնում է խիստ սահմանված ծավալի իմաստը, բաժանվում է իրար հետ հյուպատ ծավալային միավորների, միանում ազատ տարածություններին և ամբողջականանում շրջապատի հետ։

Ուսցիունալ տրամաբանությամբ հորինված ազատ զարգացումով ձեզ նույն դինամիկ օրինաշափություններին է ենթարկում ծավալը և տարածությունը։ Նման ընկալումով մշակված ձեզ ստանում է քաղաքաշինական իմաստ, թելագրում քաղաքային միավորներ հորինելու սկզբունքը։

Օրգանականին հարակից հասկացությամբ Շարունը իրագործել է թեոլինի Ֆիլհարմոնիան, մի տարրերությամբ սակայն, որ ֆինլանդացու ճարտարապետական ոլորտը բնապատճերային է, մինչդեռ Շարունին՝ քաղաքային։ Հոլանդացի Բակեման տեսնելով Ֆիլհարմոնիան, բացականչել է՝ «այդպես պետք է կառուցենք քաղաքը»<sup>6</sup>։ Սույն հասկացության հետևանքով վերանում է ներքին և արտաքին տարածություններն իրարից քաժանելու դասական գաղափարը, և իրար շաղկապելով շենք-քաղաքը, առաջանում է քաղաքաշինացված ճարտարապետության (Մբատետտուրա) հասկացությունը։

30-ական թվականներին պուրիզմի առաջարկած երկրաշափական հստակ ծավալը պատճեց է հանդիսանում արտաքին և ներքին տարածությունների միջև և այդ հանգամանքից ելնելով, մարդը զգում է իրեն շենքից արտաքրաված։ Կոլեկտիվ կապակցությունները մինչդեռ առաջանում են, երբ մարդը տարիակված է արտածության մեջ։ Հենվելով տարիակվածության գաղափարի վրա, մարդ-շրջապատ շաղկապը դիտվում է որպես ամենապարզ միավոր և գործառնությունների հիմքում ընկած պատճառական կապի տրամաբանական շաղկապներով հանգում ևնք ծավալատարածական ավելի բարդ կառուցվածքների։ Բազմակերպար ճարտարապետության (եթե գործառնությունները շունենան ուրույն բնորոշում) բազմակերպարայնությունն առաջանում է խառնաշփություն, կորցնում իր իմաստը<sup>7</sup>։ Այստեղից էլ առաջանում է ամեն մի գործառնությունը կամ նույն դասի մեջ մտնող գործառնություններին ուրույն կերպար հաղորդելու պահանջը։ Այս առումով և, ինչպես նշում է Ռ. Վենտուրին, բազմակերպար հարտարապետությունը չի «գծագրվում», այլ «ծնվում» է, այսինքն՝ սկիզբ առնելով առարկայական իրողությունից, կազմակերպվում է օրգանապես։

Դասական գարձած հասկացությամբ, նախագիծը մշակվում է հերթականությամբ՝ հատակագիծ, կտրվածք, ճակատ, հեռանկար։ Այս առումով

5 Ռ. Պիետելան գրում է, «Գոյություն ունեն երկու տիպի քարանձավներ՝ գարե և փայտեա Փայտեա քարանձավը անտառաբնակ մարդու երազն է, նրա պաշտամունքը, Պաշտամունքը գործառնություն է, իսկ պաշտամունքի նպատակը տեղանքի բնութը վերարտադրելն է» (ահ՛ս R. Pielila, Dipoli „Arkkitekti“, № 9, 1967).

6 Շարուն, նշվ. աշխ., էջ 7։

7 R. Venturi, D. Scott Brown, S. Izenour, Learning from Las Vegas, Cambridge Mass. 1972.

8 C. Norberg-Schulz, Existence, Space and Architecture, London, 1971, p. 13.

Հատակագիծն ունեցել է ծավալը թելադրելու նշանակություն։ Օրգանակերտ (Հ. Հերինգ) ընկալումը շնչի կտրվածքի մշակումը ստանում է առաջնահերթ նշանակություն և որպես հորիղոնական և ուղղաձիգ դասավորումներն իրար հաղորդակից դարձնող հնար, օժտված է երկափի հորինվածքը եռաշափությամբ։

Ա. Լոռողի առաջարկած՝ Ռաուպլան (Raumplan) տեսության համաձայն ամեն մի ծավալային միավոր (սենյակ, միջանցք, սանդղատուն) ունի իր գործառնությունը համապատասխանուղ շափայինություն, խախտելով հարկերի բարձրությունների միօրինակ կրկնողությունը, հնարավոր է դառնում ստեղծել մեկ, երկու կամ նոյնիսկ երեք հարթություններով կազմակերպված բնակարաններ։ Հարթությունների բազմակի լինելը հնարավորություն է ստեղծում շնչի նույն ծավալում տեղադրել կոլեկտիվ սպասարկումները՝ ներհարկային անցումներ, կը Կորրյուպիկեի տված անվանումով՝ ներթին փողոցներ և, վերջապես, շնչի ծածկի վրա կառուցել մենատան տիպի բնակարաններ՝ իրենց փողոցով։ Քաղաքի մի հատվածը շնչի ծածկի վրա տեղափոխելու ուժանտիզմ չէ, այլ քաղաքային միջավայրում ապրելու պահանջ (Լոնդոնի Լիլինգտոն փողոցում կառուցված բնակելի շնչները, ճարտ. Դարրորդ և Դերք, 1971)<sup>9</sup>։ Ավելին, այս տեսակեափի համաձայն խախտվում է շնչի ծավալի կերպարը և ստեղծվում, ավելի փոքր ծավալների միջոցով, ուժեղ շեշտավորումներով հորինված շնչի կերպարը (Լ. Քանի՝ Ռիշարդ Մեդիկալ Ուսերլ Բյուլինգը, Ֆիլադելֆիա, 1958—60)։

Բազմակերպարայնությունը հատվածակազմ օրգանիզմի վերածելը բնորոշ է Կանգիլիս, Ցուուի և Վուու ճարտարապետների խմբին (Տուզուզ-լը-Միուայի քաղաքային միավորը, 1963)։ Օրգանական միասնության հասնելու համար դիտվում են երկու ուղղություն. առաջինի համաձայն նախագծումը կատարվում է հատվածելով, ապա վերակազմելով օրգանիզմը, երկրորդը՝ մեկնում է բնակելի բջջից և առանձին-առանձին սահմանումներով, պատճառական կարգով հանգում ամբողջությանը երկուրդ հասկացությամբ իրագործված բնակելի զանգվածներից հետաքրքիր են ճարտ. Փ. Ուտցոնի՝ «Թիրքենին» (1960), կիվերպովի «Համանգային նոր կենտրոնը» (ճարտ. Կոլին Ուիլսն, 1960)։

Այս տիպի բոլոր լուծումներում նկատելի է հետևյալը. ծավալային և տարածական միասնությունները համադրվում են իրար կերպարային տարբերակումներով և բաց համակարգի օրինաշափությունների համաձայն։ Նման տեսությամբ իրագործված քաղաքային միավորը արմատների նման երկարում է հողամասի տեղադրական պայմանների սահմաններում ու այդպիսով շաղկապվում բնությանը։ Բնությունը ևս մի անգամ դառնում է կոլեկտիվ կյանքին միասնություն հաղորդող գլխավոր գործոն։

Հետաքրքիր է մինչդեռ սույն տեսությանը հակադրվող մի այլ ձգտում, ըստ որի հարկ է ելնել կոլեկտիվ իրողությունից և հանգել ծավալատարածական բնորոշմանը։ Սույն տեսակետն առաջարկում են Սպանիայի մի քանի մասնագետներ՝ Տալլեր դէ արկիտեկտուրա խումբը<sup>10</sup>, Նրանց զաղագարը

<sup>9</sup> „Architecture d'aujourd'hui“, 1972, № 161.

<sup>10</sup> «Տալլեր դէ արկիտեկտուրա» („Taller de Arquitectura“) խումբը հիմնել է ճարտ. Ռիկարդ Բոֆիլը 1964-ին, Բարսելոնայում։ Խմբի մեջ են մտնում՝ ճարտարապետներ, ճարտարագետներ, սոցիոլոգներ, մաթեմատիկոսներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ։

կապված է իզոմորֆիզմի հասկացության<sup>11</sup> հետ: Ճարտարապետական լեզվով ասված իզոմորֆիզմը կունենա հետեւալ բանաձեռ՝ ստեղծել տարածությունը կազմակերպող մոդելավորված մի համակարգ, որը կունեկտիվի և անհատականի, արտաքին տարածության և ներքինի, հոծ ծավալի և սնամեջի հարաբերությունները համապատասխան լինեն ստեղծված համակարգին: Ճանաչողական արարքում սահմանված առարկան իր հատկություններով և հարաբերություններով է համընդհանուր կառուցվածքին մասնակից լինելու նշանակությանը:

Նախագծման դորժում իզոմորֆիզմը որպես մեթոդ նպաստում է թե՛ ճարտարապետական, թե՛ քաղաքաշինական խնդիրների լուծմանը: Նպաստում է նաև լուծումները հասարակական-սնամեսական հիմնական կառուցվածքին կապելու գործին, այդ հիմքից մեկնելու ու հանգելու կառուցվածքին արտահայտող ծավալատարածական հաշկումներին:

Արդ, նընելով օրգանական ճարտարապետության մինչ օրս կատարված իրագործումներից, պետք է նկատել, որ այդ իրագործումները որոշ չափով նախագծողի և ներակայական ապրումների արգասից են: Այդ շենքերը կառուցելիս ստեղծ հնարավոր չէ օպտագործել շինարարական այնպիսի միջոցներ, որոնք դրական փորձառությունների հիման վրա համընդհանուր կիրառում գտնեն: Այդպիսով, օրգանական ընկալումով ստեղծված ամեն մի նոր շենք դառնում է տեխնիկական հանդիպություն, դրական-արտադրական գործունեությունը բացառություն կազմող տեխնիկական հնարամտություն:

Յունկցիոնալիստ-ուսցիոնալիստների դրվագը այլ էր: Ինչպես տեսանք, նրանք սկսելով բնակելի քջից, հասան բնակելի տանը և տնից զիդունդներին, իսկ անցումները կատարվեցին շինարարական միջոցների զարգացման տրամաբանության համաձայն: Այս առումով 30-ական թվականների ճարտարապետներն առաջարկեցին մեթոդը, իսկ ձեր փոխարեն՝ կարգը: Նրանց մշակած համակարգերի տեսությունը, տարածության կառուցվածքն իր ամբողջությամբ որոշագրելու ձգուումը քաղաքաշինության բնագավառում կիրառում գտած սկզբունքներ են:

Այսքանից հետևում է՝ ծավալատարածական կառուցվածքը չպետք է ինքնանպատակ լինի, այլ նպաստելու է տեղանքը, կապակցությունները, գործառնական գոտիները սահմանելու գործին: Եթենքնության բազմահարթակ դասավորումը, բնակիչների քանակը, եռակարգ սպասարկումները պետք է ստանան ամբողջությանը վերաբերված որոշակի լուծում (Հուր, Պետերի, Կումբերնոլդ՝ քաղաքային միավորները Անգլիայում): Քանակական սահմանումի առումով անզիհական նոր քաղաքներում բնակիչների քանակը պետքանիվում է 50.000—100.000-ի սահմաններում: Նոր մայրաքաղաքների նախագծերում բնակչության սկզբանական քանակը նախատեսվում է 100.000-ի շուրջ (Բրազիլիա, Չանգիզար, Խուլամաբատ): Քանակական նույն չափանիշով են նախագծված Վուլֆեն արքանյակը Ֆեդերատիվ Գերմանիայում, Ֆրանսիայում՝ մեծ միասնությունները (grands ensembles): Օլնեի-սուրուա, Տուլուլ-լը-Միրահ, Իտալիայում՝ Սեկոնդիլանոն, Պոնտիչելին, Հուլանդիայում՝ Վլասարդիգեն նորդ<sup>12</sup>:

<sup>11</sup> «Փիլիսոփայական բառարան», Երևան, 1975:

<sup>12</sup> L. Benevolo, T. Glura, Longo, C. Melograni, I modelli di progettazione della città moderna, Venezia, 1969, p. 125—129.

Նշենք նաև, որ քանակական սահմանումները բացառիկ դեպքերում խախտվում են<sup>13</sup>: Դրանով հանդերձ, նախագծելու մեթոդը, հիմնված պատշաճ շափի միավորների<sup>14</sup> և նրանցից բաղկացած խմբերի հաջորդականության վրա, տեսական առումով պահպանում է իր վավերականությունը Այդ մեթոդի օգտագործումը ապահովում է բնակավայրը սպասարկումներին կապելու, եռակարգ գործունեությունները հանգամանորեն բաշխելու գործին: Բայց այն չի լուծում բնակավայր-արդյունաբերություն փոխադարձ կապի խնդիրը: Նոր քաղաքների փորձառությունները ցույց տվին, որ փոքր միավորների դեպքում, երբ բնակավայրը, առևտրական կենտրոնը և արդյունաբերությունն ընդգրկված են ոչ մեծ հեռավորությունների վրա և շրջապատված են կանաչ տարածություններով, նշված զժվարությունները նվազում են: Մինչդեռ, եթե կենտրոնները ավելի մեծ են և բազմաթիվ, այդ դեպքում նրանց տեղադրումը պահետք է մի օրենքից հետևի, որը բնորոշում է քաղաքի ընդհանուր ձևը (Լ. Թենեվոլո):

Այսպես, օրենքներից մեկի համաձայն առաջարկվում է եռակարգ գործունեությունները կենտրոնացնել ու դրանց շուրջը կազմակերպել բնակելի շրջանը (Կոնկորդի օրինակը): Այդ դեպքում անհրաժեշտ է, որ կենտրոնացված գործունեությունը լինի մի տիպի, իսկ նման սահմանումը ընդհանուրի դեպքում չի կարող բազմաթիվ համարվել:

Հակասական նման դրվագիքը արտացոլվում է նախագծման, ինչպես և քաղաքաշինական ծրագրերում: Ճարտարապետը առաջարկում է ծավալատարածական մոդելը, քաղաքաշինարարն իր հերթին կուտակում է տնտեսական, հասարակագիտական, տեղագրական և էկոլոգիայում ընդգրկվող տրվյալներ: Ճարտարապետը քննում է բաշխումների մեքենականությունը, որոշագրում հաստատությունների ներքին հորինվածքը, իսկ ձեռի ճշգրտումը մնում է անորոշ: Քաղաքաշինարարի հետաքրքրությունը վերաբերում է քաղաքի կամ հաստատությունների տարածքային համակարգին, բայց չի բնորոշելու ներքին կազմակերպության կերպարը: Եղրակացությունների միջև գեռես չի հաստատվել հասկացության հիմքը: Ճարտարապետները շարունակում են առաջարկել նախագծման, իսկ քաղաքաշինարարներ՝ կառուցվածքային մոդելներ: Կապիտալիստական երկրներում չի գտնվել, և դա անհնար է, երկու մոդելներն իրար հարաբերելու կապը:

Վերեւում նշված միակենտրոն հաստատությունը որպես առանձին վաստ գեռ ինքնուրույն երեւութ է և չի կարելի դրան վերագրել համընդհանուր ճշմարտություն: Արդյունաբերական համակարգերի մասնագիտացված բնույթը, տեխնիկայի առաջընթացն անհնար է դարձնում ընդունել քաղաքի մի տիպը և նկատել այդ տիպը մեկընդիշաւ գտնված լուծում:

Տարրերակված լուծումներում առանձնահատուկ նշանակություն է ստանում այն ենթադրությունը, որի դեպքում հաստատությունների ընդհանուր

<sup>13</sup> Լոնդոնի հարավ-արևմտյան շրջանում առաջարկվել է (1964) կառուցել 250,000 բնակիչ ունեցող նոր քաղաք, 150,000-ի նյութը և թեսլլեի շրջաններում, իսկ թարեման և վանդեն թրեքը նախատեսել են նորդ Քենսեմեներլանդում՝ 190,000 բնակիչ, Ամստերդամի արևելյան նոր շրջանում՝ 350,000 բնակիչ (տե՛ս P. Hall, Le città mondiali, Milano, 1966, p. 57—58).

<sup>14</sup> Այդ քանաձեզ որպես բնակելի միավոր (Habitation de grandeur conforme) առաջարկել է լը Կորբյուզիեն, Մարսելի բնակելի տան նախագծով:

δικαριανοι θητοινερ կախում ունենա բնակավայր-աշխատավայր կապակցությունից և ճարտարապետական առարկային հաղորդի ձևաբանորեն օրդանական արտահայտչականություն, լեզվական միասնություն:

Սակայն, ինչպես և ցուց են տալիս մեծ քաղաքների արվարձաններում կառուցված բնակելի թաղամասերը, կան բոլորովին նոր ստեղծված քաղաքներ (Հուր և Կոմբրնոլդ), ուր բնակելի շրջանը և եռակարգ գործունեությունները տեղադրված են առևտրական, արտադրական հաստատությունների միջև ազատ մնացած հողամասերում: Այս դեպքում քաղաքը կորցնում է իր էությունը:

Լուսավորչականության շրջանից սկիզբ առած, ֆունկցիոնալիստ-ռացիոնալիստների կողմից հետեւղականորեն մշակված հիմնական դրույթն այն է, որ բնակելու գործառնությունը քաղաքաշինության բնագավառում ստանում է առավել գործածական նախադրություն նշանակություն: Ավելին, քաղաքային կառուցվածքը հարկ է սահմանել՝ գերադասություն աւալով բնակելի շրջաններին: Նշենք նաև, որ վերջին հարյուր տարիների ընթացքում գոյացած նոր-պահպանողական քաղաքները ազդում են նախագծումների վրա, նախ, որովհետև մի շարք նոր թաղամասեր կառուցվում են գոյություն ունեցող քաղաքային ցանցի սահմաններում և ապա, գոյություն ունեցող հաստատությունները, սովորությունները կրկնում են անցյալի քաղաքաշինության դրվածքը և վերջապես՝ դժվար է քաղաքաշինարարի համար կապիտալիզմի պայմաններում արմատախիլ անել անտեսական-հասարակական ավանդարար արմատացած իրադրությունը: Արդ, այնպես, ինչպես տեխնիկայի առաջընթացը հարկ է տանել մարդու պահանջների սահմաններով, այդպես էլ նոր քաղաքների նախագծումը հարկ է հիմնել բնակավայր-աշխատավայր և եռակարգ սպասարկումների ռացիոնալ կառուցվածքի վրա և հասնել ճարտարապետական արտահայտչականության օրգանական միասնության:

Բերենք Զանդիգարի օրինակը. Լը Կորբյուզիեի քաղաքաշինական հիմնական դրույթն է<sup>15</sup> քաղաքային տարածքը բաժանել հատվածների: (secteur) 800 . 1200 մ. շափով<sup>16</sup>: Լը Կորբյուզիեն այս սկզբունքով սահմանեց Փենցարի նոր մայրաքաղաքին հատուկ գործառնությունների տեղադրումը, քաղաքական, վարչական կենտրոնը՝ Կամպիդոլը, առևտրական ու արդյունաբերական կենտրոնները և բնակելի շրջանները, ուր բնակվելու են Հնդկաստանի հասարակարգին հատուկ 13 խավերը: Արդ, լը Կորբյուզիեն հետապնդելով բնակիչների գասակարգումը վերացնելու նպատակը, նախատեսում է բնակիչների համար բնակարանային և սպասարկումների նույն պայմանները, տիպարային խստությամբ<sup>17</sup>:

Երթեսկությունը դասավորված է V 7 համակարգի համաձայն<sup>18</sup>, հաղոր-

<sup>15</sup> Նույն սկզբունքով լը Կորբյուզիեն կազմել է Բուենոս-Այրեսի նախագիծը (1929) և Բոզուայի ընդհանուր նախագիծը (1959):

<sup>16</sup> Նույն սկզբունքով լը Կորբյուզիեն կազմել է Բուենոս Այրեսի նախագիծը (1928) և Բոզուայի ընդհանուր նախագիծը (1959) (տե՛ս Le Corbusier, Modulor, II, Paris, 1955, pp. 222–37).

<sup>17</sup> F. Tentori, Le Corbusier, In „Protagonisti della storia Universale“, № 4, Milano, pp. 77–79.

<sup>18</sup> Ճանապարհների և փողոցների գասակարգումը կատարվում է հետևյալ կերպ՝ յոթ արագություն, երթեսկության յոթ տիպ և դրանց համապատասխանող յոթ ճանապարհ: Առաջինը է ավելացնել ութերորդ տիպը (V 8)՝ հեծանվորդների համար (տե՛ս Le Corbusier, I tre insedamenti umani, „Continuità“, Milano, 1966).

դակցությունների արագընթաց ճանապարհներ (*V1, V2, V3*), ավտոմեքենա-ների երթևեկության փողոցներ (*V4*), հետիւն փողոցներ (*V5, V6*) և շաղաբի բոլոր հատվածները հատող կանաչ լայն գոտիներ (*V7*), ուր տեղադրված են դպրոցները, մարմնամարզությամբ սարքավորումները:

Ֆունկցիոնալիստ-ռացիոնալիստների հնտապնդած գործառնային և երթևեկության սահմանումը բերեց պատշաճ շափի քաղաքաշինական միավորների ստեղծմանը և դրանք նոր քաղաքների գեպբում ցանցակերպ դասավորելու եղանակին<sup>19</sup>: Լը Կորրյուպիեն նշում է, որ գծագրական կարգը ստեղծում է հնարամիտ և ներդաշնակ կապակցություններ, զգայականացնում ժամեմատիկական (քանակական համաշափություններ) և զգալի դարձնում կարգը (տե՛ս «Vers une Architecture», 1923): Ավելացնենք, որ գծագրային կարգը հարաբերակցության մեջ է դնում քաղաքը և աշխարհագրական տարածքը, երկրաշափական համակարգին է ենթարկում քաղաք-բնության կապը, որոշ շափով սահմանագատում է քաղաքի ընդայնումը, ռացիոնալ կարգին ենթարկում քաղաքային իրադրությունը<sup>20</sup>:

Կարգն արտահայտում է՝ քաղաքական, հասարակական, տնտեսական կառուցվածքը, մայրաքաղաքը Զանդիքարի գեպբում՝ ամբողջ երկրի գրվածքը Ավելին, հատակագծային ցանցակերպ կազմն արտահայտում է հասարակարգի դեմոկրատիկ համակարգը: Այս բանում համոզվելու համար (մի կողմ թողնելով անցյալը) բավարար է բերել Բրազիլիայի օրինակը:

Լ. Կոստայի նախագծով Բրազիլիայի<sup>21</sup> գծապատկերը կառուցված է արեվելքից-արևմուտք ձգվող զիխավոր առանցքի ու աղեղնաձև դրան ուղղանկյունի հատող երկրորդ առանցքի կարգով: Գլխավոր առանցքի արևելյան ուղղությամբ տեղադրված է երեք իշխանությունների ենանկյունի հրապարակը (շենքերը կառուցված են 0. Նիմայերի նախագծերով), մյուս ծայրում՝ երկաթուղու կայարանը, նույն ուղղությամբ դասավորված են վարչատիեսական հաստատությունների շենքերը: Հորիզոնական առանցքով (12,5 կմ երկարության) տեղադրված են բնակելի գոտիները՝ կազմված ինքնարավ բնակելի շրու ծավալներով (սուրբ քածրաց): Նույն առանցքի մի ծայրում գանվում է կենտրանարանական այգին, մյուսում՝ բուսաբանական:

Այսքանից հետևում է, որ կերպարային իմաստով Բրազիլիան ունի բյուրոկրատական-պետական բնույթ: Արդանի ինսքերով ասած, այդ քաղաքի կերպարում սահմանված պատմական մի իրադրությունը մոնումենտալ առարկայացման հետևանքով, հասարակական իրադրությունը իր առաջնությունը

<sup>19</sup> Ցանցակերտ հատակագծով (gridiron cities) քաղաքներ են՝ Նյու-Յորք Սիտի, Չիկագո, Սան Ֆրանցիսկո Այդ տիպի քաղաքներ են ունեցեն նախկին և ետքբողեմյան քաղաքները, նույն համակարգին է ենթարկվել ծավալյին սահմանումը: Տարածությունը ռացիոնալութեականիքին ոյլըրենկալիքի դարձնելու և հեռանկարյալն պատկերմանը նպաստելու համար և. Բ. Ալբրտին ստեղծեց ծավալատարածական ցանցակերպ քանանումը՝ «ալբրտյան ցանցը» (տե՛ս E. Panowasky, La prospettiva come forma simbolica, Milano, 1966). Ծավալատարածական հարաբերությունների վրա է հիմնվում քաղաքաշինության օրինագործությունը:

<sup>20</sup> Քաղաքային միավորների գաղափարն առաջարկել էին արդեն ուսուպիստ-սոցիալիստները (տե՛ս Օսեն, Ներդաշնակության և համագործակցության ավանը, նախագծված 1817 թ. և կերպարա ավանի՝ գծագրական պատկերը, 1845):

<sup>21</sup> G. C. Argan, Progetto e destino, Milano, 1965, p. 59. 1960-ին տեղի ունեցած Բրազիլիայի քննարկումը հանգեց հետեւյալ եղբակացությունների: 1. Քաղաքն ունի բյուրոկրատական-պետական բնույթ: 2. Տեղադրված է անապատում, առանց ունենալու շր-

դիշել է պետականության վերացարկված գաղափարին»<sup>22</sup>: Այս է Բրազիլիան, ուր պետականության գաղափարի բացարձակացումը փոխարինում է երկրի հասարակական-տնտեսական իրադրությանը, ուր քաղաքաշինական մտաշղացումը չի նպաստում գենուրատական կարգերի հաստատմանը, այլ ներշնչում է «պետականության համընդհանրականություն» (Ձ. Կ. Արգան):

Զանդիգարում բացահայտորեն առկա է ամեն մի քաղաքային տարրին ուրույնություն հաղորդելու, կոլեկտիվ կյանքի պահանջները որոշադրելու, դրանց ձև տալու ձգուումը: Քաղաքի ամբողջ երկայնքով հյուսիսից հարավ ձգվում է կանաչապատ «հանգստյան ձորը», իսկ դրան հատում է երկրորդ ուղղանկյուն առանցքը: Երկուսի հատման վայրում տեղադրված է առևտորական կենտրոնը: Գլխավոր առանցքի հյուսիսում՝ քաղաքի և բնության սահմանում՝ Կամպիդոլի Հեռվում, հյուսիսի ուղղությամբ իշխում է Հիմալայի հսկա լեռնաշղթան: Կամպիդոլի ժայռամասում, փոսից վեր է բարձրանում «բաց ձեռքը»՝ աշխատանք, բարեկամություն, արվեստ խորհրդանշող բանդակը<sup>23</sup>:

Զանդիգարը կառուցված է բաց տարածության սկզբունքով, որի հետևանքով քաղաքին պակասում է անցյալի քաղաքներին հատուկ մտերմիկ միջավայրը:

Այսօր մասնագետները ձգուում են իրար հակադրվող գործուների՝ քաղաքային միջավայր և բաց տարածություն, հաղորդակից դարձնել ու ներդրավել քաղաքի ամբողջական կառուցվածքում: Վերանում է, այդպիսով, կործանությունները իրարից խստորեն բաժանելու կարգը, թաղամասերը շենքերի տիպերով սահմանազատելը և կիրավում են ծավալատարածական ավելի ճկուն լուծումներ՝ հատկածավորված տիպի շենքեր, քաղաքային միջավայր ստեղծող փոքր ձեռք: Այսքանից հետևում է քաղաքաշինական նախադման գործի բաժանումը երեքի և այդ բաժանումից հետեւած երեք մասնագիտաթյունների առաջացում՝ գործարանային արտադրության գեղայներ (տիպային տարրերի մշակում), ճարտարապետ և քաղաքի ղեղայներ (town designer): Երեքի մասնակցությամբ հնարավոր է վերադառնալ հորինվածքի տեղադրական սկզբունքներին՝ գործանությունների խմբավորում, էկոլոգիային կապված ծավալատարածական լուծումների ձևաբանական միասնություն:<sup>24</sup>

շանների ծրագրային նախագիծ: Յ. Նախագծման ընթացքում նկատի չեն առնվել ետնազավակությունը, երկրագործության բարեփոխությունը: 4. Ընդհանուր հատակդիր շունի ապագա ընդարձակումին հարմարվելու ճկունությունը: Քաղաքաշինական առումով Բրազիլիայի ընդհանուր հատակդիր փակ տիպի է, այդ առումով նման է XIX դարի բաղադրերին (տե՛ս B. Zevi, Sei nell' una nuova capitale sudamericana, «L'Architettura» 1960, № 51, pp. 608—619):

22. G. C. Argan, նշվ. աշխ., էջ 62,

23. Աշխատող և ստեղծագործող «ձեռք»-ի մասին նշանակալից էշեր է գրել Հ. Ֆույյոնը, ուժանական և գոթական արվեստներին նվիրված աշխատության մեջ և հատկապես «Ձեռքի կյանքը» գրքի «Ձեռքի գովասանք» զիմում: Լը Կորրյուգիեն նույնպես հետևում էր Ֆույյոնի արվեստի փիլիսոփայությանը (տե՛ս H. Focillon, La vie des Formes, Paris, 1934).

24. Էլիսոն և Պետեր Սմիթսոնը հիսունական թվականներին առաջարկեցին հետեւալ անհանումները՝ նույնականություն (identità), զարգացման ուրվագծերը (schemi di sviluppo), խմբավորում (raggruppamento) և ենթակառուցվածք (infrastruttura), (տե՛ս Alison and Peter Smithson, in „Uppercase“, London, №3, 1960).

Էլիսնի և Պետեր Սմիթոնի մշակած «Մայրաքաղաք Բելվին» նախագծում (1958) առկա են ֆունկցիոնալիստների դրույթները՝ կրթական բաժանում, գործառնությունների դասավորում: Բայց նրանց առաջարկած «Հետիոտների ցանցը» և «քաղաքային տարածություններ» գաղափարները նոր են և հուզում են քաղաքային հատվածներին տարածական նույնություն տալու միտքը<sup>25</sup>:

Այսօր, ուսուպիստների ամբողջ մի շարք, հիմնված քաղաքի բաց զարգացման գաղափարի վրա, հանգել են այդ մտքի ծայրահեղություններին: Վերջին տասնամյակում լույս տեսած ուսուպիստական նախագծերում քաղաքը պատկերված է եռաչափ ենթակառուցի կերպարով և այն նախադրյալի վրա, որ այն կարող է զարդանալ երեք ուղղություններով, որ կառուցվելու է հավաքովի տարրերով՝ կամ սովորական եղանակով, իսկ այդ տարրերը, երբ հնանում են, հնարավոր է փոխարինել նորերով: Այդպիսով, քաղաքը գտնվում է շարունակ կառուցման, ինքնաբնորշման ընթացքում: Թեև լադրող մարդկանց աճն է, նրանց ապրելակերպի փոփոխումը, տեխնիկայի առաջընթացը, գործառնությունների տեղաշարժը, տարածության մեջ շարունակ ձգվելու պահանջը: Դրույթներ, որոնք ամբողջությամբ պարտադրում են քաղաքային նոր միջավայրի ստեղծումը շարունակական ընթացքով (Պետեր Կուքի՝ Պլուդին Սիտի նախագիծը, 1964)<sup>26</sup>:

Ուսուպիստների մի այլ խումբ առաջարկում է աշխատավայր-բնակավայր և եռակարգ սպասարկումները խիթավորել ևմեծ չափի» կուռ ծավալների կամ, ինչպես ասվում է, «սկա պարունակիչների մեջ: Նրանց միջանկյալ, Հորիզոնական դասալորումով տեղադրվում են արդյունաբերության կենտրոններ: Եղթեկեկության ուղիները քաղաքը հատում են սպարունակիչների համակարգի երկայնքով, դասավորված են ստորգետնյա ուղիներից դեպի վերևի հաղորդակցության գծերը պահասող արագությունների հզորության աստիճանավորումով»: Դա Հիլբերսայմերի «մեծ քաղաք»-ի գաղափարն է, որը իրագործվելու է հսկա պարունակիչների միջոցով (Պ. Սոլարիի առաջարկած թարել քաղաք-պարունակիչը շրջանակածն է և ունի 1700 մ տրամագիծ): Լ. Քանի՝ «քաղաքի գաղափարը», Ժ. Կ. Բերնարի՝ «ամբողջական քաղաքը», Վ. Ցոնասի կամ Պ. Սելյմոնի՝ «կոնաձև քաղաքը», Ա. Խոսցարիի՝ «օդային քաղաքը» հարցերի արմատական լուծումը ներկայացնող առաջարկներ են, անշուշտ, ուսուպիկ, բայց բոլոր մանրամասնությունների լուծումը կատարված է այսօրվա տեխնիկայի հնարավորությունների համաձայն: Կան իրողություններ, որոնք անժմտելի են, ինչպես՝ «ծովային քաղաքը» (Sea-City), որու ապրում են մինչև 30.000 մարդ, այն տեղակրված է ափից 24 կմ հեռավորությամբ: Այդ քաղաքներում մարդիկ զբաղվում են ձկամշակման արդյունաբերությամբ, ծովային հանույթների մշակմամբ (մագնեզ, ոփիդ և այլն): Քաղաքն ինքնարակ է, որովհետև արտադրում է էներգիա և մշակում է խմելու ջուրը<sup>27</sup>:

1960-ին Քենցո Տանգ վերջացրեց Տոկիոյի ապագա զարգացման ընդհանուր նախագիծը: Զարգացումը Տանգի առաջարկով կատարվելու է մայ-

<sup>25</sup> Alison e Peter Smithson, Struttura urbana, Bologna, 1971.

<sup>26</sup> Peter Cook, Architettura; azione e progetto, Bologna, 1971.

<sup>27</sup> G. Simoncini, նշ. աշխ. էջ 48.

<sup>28</sup> K. Tange, „The Japan Architect“, april, 1961.

բարաղաքի ծովախորշը հատող, ձգված առանցքի երկայնքով: Քաղաքաշինական միտքը հնատելալն է: Երթևեկության ներկառուցվածքային համակարգը շրջանակածէ իրար է կապելու հասովածարար ծովի վրա կառուցվելիք քաղաքը: Նոր կառուցապատմները կասարվելու են երթևեկության ցանցին հազորդակից տարրեր բարձրությունների վրա: Տանգեի նախագիծը ետուացինալիքատ շրջանի ստոռապիտ է, պատճառաբարնված է հիմնովին և այն աստիճան, որ ստացել է մեծ չափանիշի նարարապետության խնդրականը պարզելու միջազգային նշանակություն:

Քաղաքային միավորներից անցում կատարվեց մեծ պարունակիչներին: Դրանք Ս. Գերմանի խոսքերով ասած տարածքային նշանակություն ունեն և դործում են որպես «քաղաքային տարրեր»<sup>22</sup>: Այդ տարրերը կարող են ամրացված լինել հողին, նավարկել ափեղերքում, ծածանել ջրի երեսին կամ շարժվել հողի վրա: Տեխնոլոգիայի կարելիություններն անսահման են, մարդկանց աճը մղում է մեծ չափի իրագործումների: Եվ, սակայն, վիճելի է, որ նման քաղաքները կարողանան մարդուն հազորդել իր գոյությունը հաստատող հիմքը: Քաղաքը կարող է, անշատ, պարունակել շարժական տարրեր, ունենալ ստորգետնյա և վերգետնյա ներկառուցվածք, լինել ճկուն և զարգանալու ենթակա, բայց չի կարող իր ամբողջությամբ շարժական լինել:

Կյանքը զարդանում է օրինաշափ, հասարակական և տնտեսական կառուցվածքը նույնպես: Մարդու ինքնավատահությունը զարրնվում է կայուն կարգերի ուսակ պայմանների միջավայրում: Մեքենայացված տունը կամ քաղաքը անցողականը հավերժացնելու պատրանք է:

Կառուցվածքը ձև առաջացնող գործոն է և արմատավորված է հասարական-տնտեսական կարգերի խորքը, կառուցը իրականությանը կապող օրգանական համակարգ է:

Մարդը պահանջ ունի իր շրջապատը ձևակերպելու, կերպար ստեղծելու նա զգում է իրեն ազատ, երբ արածությունը սահմանված է, ճարտարապետականորեն բնորոշված: Իսկ ճարտարապետությունը որոշակի երևութ է և ընթեռնելի ձևի լեզվի միջոցով, լեզու, որն ունի գեղագիտական և գիտական կերտվածք:

<sup>22</sup> S. Chermayeff, Advanced Studies in Urban Environment: Toward a Urban Model, Yale, U. S. A., 1967, p. 4.

Դասական արվեստի հասկացությունը հիմնված է հակադիր երկու գրույթների վրա՝ գեղեցիկը պատկերող անփոփոխ մոգելը և շարունակ փոփոխվող զգայական ճանաչողությունը։ Մողելը համարվնէ գերիշխող սկզբունք, իրողությունը կազմակերպող բացարձակ կարգ։ Այդ կարգը պատկերվել է երկրաշահական հարաբերությունների միջոցով սահմանված եռաշափ տարածություն, որը դիտվել է որպես արվեստի գործը որոշադրող կառուցվածք, այն բացարձակ կարգին հանգեցնելու տրամարանական հնարավորություն։ Նման հասկացության հարազատ սահմանումը եղավ հեռանկարը, այսինքն ինքնուրուցնության աստիճանի հասած արվեստի, ինչպես և շինարարական գործունեությանը մտավոր բնորոշում հակորդելու տարածական համակարգը։

Արդի արվեստի նպատակներից է առարկայի ձևակերտումն անջատել տարածության բացարձակված դրանակից և պատճառակցորեն կապել որոշակի իրականությանը։ Լուսավորչականությունը սկիզբ դրեց գործանային մտածողությանը (Լոգոլի), բայց պահպանեց այն համոզմունքը, ըստ որի հնարավոր է տարածության մեջ շարժվող նյութը պարփակել երկրաշահական ձեր սահմաններում։ Սույն հասկացությանը համաձայն հեռանկարային ընկալումը կորցրեց սկզբնական նշանակությունը, իսկ պարզ ծավալը ստացավ տարածությունը խորհրդանշելու իմաստ (Լուս, Թուլէ)։ Լը Կորրյուզիին ժառանգելու էր այս միաքը, այն տարբերությամբ սակայն, որ հստակ ծավալը ունենալու է զուտ գեղագիտական նշանակություն։ Նոր հասկացությունների առաջացման տեսակետից Ծինքելը առաջինն էր, որ առաջարկեց ոճի համապատասխանության խնդիրը հարաբերել շենքի գործնական իրականությանը։ Սեմպերը բնորոշեց արվեստի գործը, հիմք ընդունելով պատմականը, տեխնիկայի դրույթները և ուստի դասական հասկացությունը։ Պաքստոնը շենքի կառուցվածքը կապեց գործարանային արդյունաբերությանը, իսկ Վիոլէ-լը-Դյուն տեսության հիմնական նախադրյալները հիմնվում են գոթականի կառուցվածքային ուստի դասական շենքերի և գոթական նշանակության վրա։

Այս մտքերը տարրեր ձեւերով արտահայտում են անցյալ դարի և դարասկզբի արվեստի հասկացությունների բնույթը։ Հարկ է ճշտել սակայն, որ դրանք հիմնված են ձեւի և գործառնության զուգորդման վրա ու համապատասխան լինելով տեխնիկայի առաջընթացին, զիջում են քենացնության (ձեւ և գործառնություն, գաղափար և նյութ) դասական հասկացությանը։ Արդի ճարտարապետությունը զարգացավ հակադրվելով պատմական անհրաժեշտությամբ բացատրվող նման հասկացություններին։ Այս հարցում եղա-

կի տեղ է գրավում Ա. Լոռզը: Նա տեխնո-գործառնալին նախադրույթների հիմունքներով սահմանում էր շենքի կառուցվածքը, իսկ շենքի ծավալային, բացվածքների և խուզ պատերի հարաբերակցումը ենթարկում էր, այսպես կոչված, ազատ հեռանկարի տեսողական օրենքներին: Նույն եղանակով աշխատում էին Օլբրիխն ու Հոփմանը: Անմիջական տեսողության օրենքները մշակվեցին կուրիստների կողմից, իսկ 1918-ից հետո կիրառում գտան Դէ Մարիի և Լը Կորրյուղիկի նախագծերում:

Արվեստի հաստատում սկզբունքների հեղաշրջման այդ փուլում ուացիոնալիստները խոչեցին ձևային արտահայտչականության պատճական կապը և դրանային վերլուծության արտաժական մտահանգումներից ելնելով նպատակադրվեցին ճարտարապետական լեզվի նոր «կանոնագիր» ստեղծել: Գործնականում, սակայն, ձևային նոր պատկերումները մշակվեցին մի կողմից՝ հանգելով էվկլիպտան երկրաչափությանը (պուրիզմ), մյուս կողմից՝ սպարզեցման հնարկելով անցյալի ճարտարապետության ոճերը (վիեննական Սեցսսիոն, Ամսաթրդամի դպրոց) կամ դիմելով ժողովրդական բնադրական ճարտարապետությանը (նեոռեալիզմ, նոր էմպիրիզմ, էնդիշնես):

Ճարտարապետական ալգափիսի պայմաններում որոշակի իմաստ է ստանում հետևյալը: ուացիոնալիզմը հրաժարվեց ձևը ձևից բիեցնելու սկզբունքից, այդպիսով, շենքի բնորոշումը կատարվելու էր մարդու պահանջները իրադեմու սկզբունքով: Ավանդաբար ժառանգված մտապատկերը (մոդելը) կորցրեց իր նշանակությունը և իմաստ ստացավ նախագծման վերլուծական մեթոդը իմաստադրկվեցին գեղազարդումները և ձևի ներկայանալիության նշանակությունը: Անցումը արաւիքին իմաստավարումից ներքինին նպաստեց, որպեսզի ճարտարապետական միտքը խարսխվի մարդկային հասարակական կառուցվածքի հենքի վրա: Այս իմաստով ճարտարապետությունը դիտվեց իրականությունից բխող, նրա առաջընթացին նպաստող գործունեություն:

Էքսպրեսիոնիզմը և նրան կապվող օրգանականը ներկայացնում են արդի ճարտարապետության մյուս գեմքը: Ուացիոնալիզմի խստապահանջ երկրաշափությանը հակադրվող, շենքի պարունակությունը անմիջականորեն մարդու հետ հաղորդակցության մեջ դնող ձևը դիմամիկ կերպարանագծման գործում:

Նախագծումն այսօր կաարարվում է ոճ-կանոնագրի սահմանումներից անկախ, կյանքի առաջընթացում բացահայտված տվյալների հիման վրա, որոնք տրամարանորեն կազմում են ճարտարապետական նախագծման և քաղաքաշինական ծրագրման կառուցվածքը: Կենցաղային պայմանները, մարդ-բնություն կապակցությունը, շինարարական տեխնիկան զարգացման փուլերում կրում են արմատական փոփոխություններ, որոնք ազդում են շենքի և քաղաքի կառուցվածքային համակարգի վրա, հետեւարար, արդեն իրազործվածը փորձարկման դաշտ է դառնում հաջորդ իրագործումի նախագծման գործում:

Առարկայական իրականության ուսումնասիրությունից է, որ առաջանաւու է կառուցվածքային մանրակերտը և հանգեցնելու է այսօրվա քաղաքները վերափոխելու, նորը կերտելու արդյունքին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՆՈՐ ԳԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- J. J. Winckelmann, Geschichte der Kunst des Altertums, Dresden, 1764.  
C.-N. Ledoux, L'architecture considérée sous le rapport des arts, des moeurs et de la législation, Paris, 1804.  
F. Algarotti, Lettere sopra l'architettura 1742—63, in Opere, Livorno, 1764—65.  
J. F. Blondel, Cours d'architecture, Paris, 1771—77.  
R. Blomfield, A History of Renaissance Architecture in England 1500—1800, London, 1897.  
E. Lavagnino, L'arte moderna dai neoclassici ai contemporanei, Torino, 1956.  
F. Stahl, K. F. Schinkel, Berlin, 1911.

### ԱՌԱՋԱՆՈՒԹՅՈՒՆ

- A. W. Pugin, Contrast or Parallel between the Architecture of the 15th. and 19th. centuries, London, 1826.  
A. W. Pugin, An Apology for the Revival of Gothic Architecture in England, London 1843.  
William Morris, Collected works, v. 20, London, 1913.  
John Ruskin, The Seven Lamps of Architecture, London, 1907.  
H. Cole, Journal of Design, London, 1849—52.  
J. Fergusson, History of Modern Styles of Architecture, London, 1862.  
C. Bricarelli, Eugenio Violet-le-Duc e il rifiorimento degli studi medioevali nel secolo XIX, Roma, 1915.  
R. De Fusco, L'idea di Architettura, Milano, 1968.  
H. R. Hitchcock jr. Modern Architecture. Romanticism and Reintegration, New York, 1929.

### ԱՊԳԵՑԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

- E. Viollet-le-Duc, Dictionnaire raisonné de l'architecture française, Paris, 1854—68.  
G. Semper, Der Stil in den technischen und tektonischen Kunsten, Frankfurt am Main, 1860.  
A. Riegl, Spätromische Kunstdustrie, Wien, 1901.  
T. S. Ashton, Iron and Steel in the Industrial Revolution, London, 1924.  
S. Giedion, Bauen in Frankreich: Eisen, Eisenbeton, Leipzig, 1928.  
J. de Baudot, L'architecture et le béton armé, Paris, 1916.  
J. Vischer, L. Hilberseimer, Beton als Gestalten, Stuttgart, 1928.  
P. Francastel, Art et Technique, Paris, 1956.

### ԴԻՎԱՆԻԳՄԻ ՀԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- H. Read, Histoire de la peinture moderne, Paris, 1960.  
A. Dorner, The Way beyond „Art“, New York, 1947.  
K. Wachsmann, una svolta nelle costruzioni, Milano, 1960.  
I. Cremona, Il tempo dell'Art Nouveau, Firenze, 1964.  
R. Schantzler, Art Nouveau, Milano, 1966.  
S. Tschudi Madsen, Sources of Art Nouveau, Oslo, 1956.  
H. Van de Velde, Die Renaissance in modernen Kunstgewerbe, Berlin, 1901.  
H. Van de Velde, Vom neuen Stil, Leipzig, 1907.  
H. Van de Velde, Essays, Leipzig, 1910.  
H. Muthesius, Die englische Baukunst der Gegenwart, Leipzig, Berlin, 1901.  
H. Muthesius, Das Englische Haus, Berlin, v. I, 1904, v. II, 1905, v. III, 1908.  
J. E. Cirlot, El Arte de Gaudí, Barcellona, 1950.  
G. R. Collins, A. Gaudí, Milano, 1961.

- O. Wagner, Die Baukunst unserer Zeit, Wien, 1914.  
J. M. Olbrich, Ideen, Wien, 1900.  
E. Bayard, Le style moderne, Paris, 1922.  
L. Heves, Acht Jahre Sezession, Wien, 1907.  
W. C. Behrendt, Der Kampf um den Stil im Kunstgewerbe und in der Architektur  
Stuttgart, 1920.  
L. Kleiner, J. Hoffman, Berlin, 1927.  
Th. Howarth, Charles Rennie Mackintosh and the Modern Movement, London, 1952.  
A. Perret, Contribution à une théorie de l'architecture, Paris, 1952.  
P. Jamot, A.-G. Perret et l'architecture du béton armé, Paris, 1927.  
T. Garnier, Une cité industrielle. Etude pour la construction des villes, Paris, 1917  
J. Badovici, A. Morancé, L'oeuvre de Tony Garnier, Paris, 1938.  
C. Sitte, Der Städtebau nach seinen Künstlerischen Grundsätzen, Wien, 1889.  
E. Howard, Tomorrow: A Peaceful Path to Social Reform, London, 1898.  
R. Unwin, Nothing gained by Overcrowding, London, 1918.  
R. Unwin, Town Planning in Practice, London, 1909.  
F. Engels, Die Lage der arbeitenden Klasse in England, Leipzig, 1845.  
F. Engels, Zur Wohnungsfrage, Leipzig, 1887.  
K. Marks, Der historische Materialismus. Die Frühschriften, Leipzig, 1932.

Ա Ա Ց Ի Ա Մ Ա Յ Ա Ր Ե Ր Ա Կ Ա Ն Ե Ր Ա Վ Ո Ւ Թ Ա Ն

- N. Pevsner, Pioneers of Modern Design, London, 1960.  
J. Posener, Anfänge des Funktionalismus, Berlin, 1964.  
H. van de Velde, Werkbund Diskussion, 1914.  
H. Muthesius, Die Werkbund-Arbeit der Zukunft, Jena, 1914.  
W. C. Behrendt, Alfred Messel, Berlin, 1913.  
„Jahrbücher des Deutschen Werkbundes“, Jena, 1912—14.  
P. Behrens, Das Ethos und die Umlagerung der Künstlerischen Probleme, Darmstadt,  
1920.  
T. Heuss, Hans Poelzig, Berlin, 1939.  
A. Loos, Ins Leere gesprochen 1897—1900, Berlin, 1925.  
A. Loos Trotzdem. Gesammelte Aufsätze 1900—1930. Innsbruck, 1931.  
H. Kulka, Adolf Loos: Das Werk des Architekten, Wien, 1931.  
„Le Corbusier, Vers une Architektur“, Paris, 1923.  
    Urbanisme, Paris, 1925.  
    La Ville Radieuse, Paris, 1935.  
    Quand les Cathédrales étaient blanches, Paris, 1937.  
    La Chartre d'Atènes, Paris, 1943.  
    Les Trois Etablissements Humanistes, Paris, 1944.  
    Manière de penser l'Urbanisme, Paris, 1946.  
Le Corbusier et P. Jeanneret, Oeuvres complètes, v. I, 1937. v. II. 1947. v. III, 1947.  
    Zürich.  
Le Corbusier, Oeuvres complètes, v. IV, 1946. v. V, 1953.  
Le Corbusier, Le Modulor, Paris, 1950.  
W. Gropius, Idee und Aufbau des Staatlichen Bauhauses, Weimar, 1923.  
W. Gropius, Internationale Architektur, „Bauhausbücher“, № 1, 1925.  
W. Gropius, The New Architecture and the Bauhaus, London, 1935.  
W. Gropius, Rebuilding our Communities, Chicago, 1945.  
W. Gropius, Scope on the Total Architecture, New York, 1955.  
S. Giedion, Walter Gropius, l'uomo e l'opera, Milano, 1954.  
G. C. Argan, Walter Gropius e la Bauhaus, Torino, 1950.  
Mies van der Rohe, Das Schöne ist der Glanz des Wahre, Die Neue Zeitung, Berlin,  
1950.  
B. Zevi, Mies van der Rohe e F. L. Wright, poeti dello spazio, „Metron“, 1950, 37.  
    p. 6—18.

- L. Hilberseimer*, Mies van der Rohe, Chicago, 1956.  
*A. Drexler*, Mies van der Rohe, Milano, 1960.  
*G. C. Argan*, Architettura dell'Espressionismo, in „Progetto e Destino”, Milano, 1965.  
*G. König*, Architettura dell'Espressionismo, Firenze, 1967.  
*U. Apollonio*, Die Brücke e la cultura dell'Espressionismo, Venezia, 1952.  
*P. Scheerbart*, Architettura di vetro, Berlino, 1914.  
*B. Taut*, Ruf zum Bauen, Berlin, 1919.  
*B. Taut*, Alpine Architektur, Hagen, 1920.  
*E. Mendelsohn*, Considerazioni sull'architettura contemporanea, „Domus”, 1958, № 7.  
*U. Conrads, G. Sperlich*, Phantastische Architektur, Stuttgart, 1960.  
  
*V. Scully*, Storia dell'Architettura Moderna, Milano, 1963.  
*B. Zevi*, Poetica dell'Architettura neoplastica, Torino, 1974.  
*Th. M. Brown*, The work of Gerrit Rietveld, architect, Utrecht, 1958.  
*J. J. P. Oud*, Mein Weg in „De Stijl”, Rotterdam, 1960.  
*H. L. C. Jaffé*, De Stijl 1917—1931, The Dutch Contribution to Modern Art, Amsterdam, 1956.  
*H. M. Wingler*, Das Bauhaus 1919—1933, Köln, 1962.  
*J. Itten*, Design and Form, the Basic Course et the Bauhaus, New-York, 1964.  
  
*C. A. Sfaellos*, Le fonctionnalisme dans l'architecture contemporaine, Paris, 1952.  
*E. R. De Zurko*, Origins of Functionalist Theory, New York, 1957.  
*AA. VV.* Environment for Man, Indiana Univ. Press, 1966 (I. 20, 3b).  
*AA. VV.* Planning for Diversity and Choice, Cambridge, 1967 (4, 2a).  
  
*S. Ray*, L'architettura moderna nei paesi Scandinavi, Bologna, 1965.  
*R. De Fusco*, Storia della architettura contemporanea, Bari, 1974.  
*B. Zevi*, Storia dell'architettura moderna, Torino, 1955.  
*L. Benevolo*, Storia dell'architettura moderna, Bari, 1960.  
*R. Bianchi Bandinelli*, Organicità ed astrazione, Milano, 1956.  
*S. K. Langer*, Sentimento e Forma, Milano, 1965.  
*A. Aalto*, Oeuvres complètes 1922—1960, Zürich, 1963.  
  
 «РУЧНОЕ ПРОИЗВОДСТВО КАПИТАЛА»  
  
*L. Quaroni*, La Torre di Babele, Bologna, 1967.  
*G. Grassi*, La costruzione logica dell'architettura, Padova, 1967.  
*L. Benevolo*, Le origini dell'urbanistica moderna, Bari, 1963.  
*C. Aymonino*, Le origini dell'urbanistica moderna, „Critica marxista”, № 2, 1964.  
*V. Gregotti*, Il territorio dell'architettura, Milano, 1966.  
*M. Tafuri*, Teorie e storia dell'architettura, Bari, 1968.  
*G. Samonà*, L'urbanistica e l'avvenire della città, Bari, 1967.  
*L. Rodwin*, Le città nuove inglesi, Padova, 1964.  
*G. Simoncini*, Il futuro della città, Bologna, 1970.  
*E. T. Hall*, La dimensione nascosta, Milano, 1968.  
*G. Simoncini*, Storia del territorio, Firenze, 1974.  
*S. Chermayeff, C. Alexander*, Spazio di relazione e spazio privato, Milano, 1968.  
*M. M. Webber, J. W. Dyckman, D. L. Foley, A. Z. Guttenberg, W. L. C. Wheaton, C. B. Wurster*, Indagini sulla struttura urbana, Milano, 1968.  
*L. Hilberseimer*, Un'idea di piano, Padova, 1967.  
*P. Cook*, Architettura: azione e progetto, Bologna, 1970.  
*Alison e Peter Smithson*, Struttura urbana, Bologna, 1970.  
*Th. Crosby*, Il senso della città, Bologna, 1970.  
*A. Rossi*, L'architettura della città, Padova, 1970.  
*H. B. Reichow*, Die autogerechte Stadt, Ravensburg, 1959.  
*C. Norberg-Schulz*, Esistenza, Spazio e Architettura, Roma, 1975.  
*C. Norberg-Schulz*, Significato nell'architettura occidentale, Milano, 1974.

S U. H S U. K N E C



### S U և S U Կ 1

1. Մեմեների պալատ, Փարիզ, 1889, ճարտ. Դյուտեր և կանստրուկտոր Կոտտանսեն:
2. Վերկրունդի քատրոնը, Քյոն, 1914, ճարտ. Հ. վան դե Վելիք:
3. Ազգային գրադարան, Փարիզ, 1858—68, ճարտ. Հ. Լարուան:
4. Կիբեռաուզ, Համբուրգ, 1922—23, ճարտ. Յ. Հեռզեր:
5. Մեծ քատրոնը, Թեոլին, 1919, ճարտ. Հ. Պելցիզ:
6. Արվեստի դպրոց, Գլասգու, 1898—1909, ճարտ. Ռ. Ռ. Մեկինսոն:
7. Ժողովրդական տուն, Թրյուֆել, 1896—99, Մեծ դանիին ճերմին տեսքը, ճարտ. Վ. Հորտա:

### S U և S U Կ 2

- 1—2. Կիֆենով քաղաքասր, Ռոտտերդամ, 1925, ճարտ. Յ. Յ. Օսոյ:
3. Ամստելլան, Ամստերդամ, 1923, ճարտ. Մ. դէ Քիերֆ:
- 4—7. Տուշենդիկին քաղաքաս, Ռոտտերդամ, 1919, ճարտ. Յ. Յ. Պ. Օսոյ:
- 5—6. Օուգ Մարենսս քաղաքաս, Ռոտտերդամ, 1922, ճարտ. Յ. Յ. Պ. Օսոյ:

### S U և S U Կ 3

1. Այգեն Հարդ, բնակելի տներ, Ամստերդամ, 1921, ճարտ. Մ. դէ Քիերֆ:
- 2—4. Քաղաքապետարան Հիլվերսում, 1928—1930, ճարտ. Վ. Դումբրի:
3. Ռոտտերդամ, բաղադրի կենտրոնը, 1955, ճարտ. Բաթեմա և վան դեն Թենի:
5. Հեռէ վան Հոլանդ, բնակելի տների շարժ, 1924, ճարտ. Յ. Յ. Օուգ:

### S U և S U Կ 4

1. Պ. Քի, Անտառում կառուցվելիք դրյակ, 1926:
2. Պ. Քի, Քաղաքային քաղաքասի մեխանիկան, 1928:
- 3—4. Ֆազուալերի, Ալֆելդ ան դեր Լայն, 1911, ճարտ. Վ. Գրոյյուս և Ա. Մայեր:
5. Շենքերի ծավալատարածական հարաբերություններ, ճարտ. Վ. Գրոյյուս, 1930:
6. Բանմաուզ, դիրեկտորի աշխատասենյակը (նախագիծ), Վայմար, 1923, ճարտ. Վ. Գրոյյուս:

### S U և S U Կ 5

1. Փորձնական քաղաքաս, Սպանաու-Հազելինգտոն, 1929, 11 բնակելի տուն (նախագիծ), ճարտ. Վ. Գրոյյուս:
2. «Զիկադ» Դրիբուն»-ի վարչական շենք (նախագիծ), 1922, ճարտ. Վ. Գրոյյուս և Ա. Մայեր:
3. Բազմանարկ բնակելի տներ (նախագիծ), Վանզ (Թեոլին), 1931, ճարտ. Վ. Գրոյյուս:
4. Բնակելի քաղաքաս, Թեոլին-Զիմենշտադ, 1929, ճարտ. Վ. Գրոյյուս:
5. Բնակելի քաղաքաս, Դամերշտակ (Կարլսրուե), 1927—1928, ճարտ. Վ. Գրոյյուս:
6. Բնակելի քաղաքաս, Տելենբեն, 1926—1927, ճարտ. Վ. Գրոյյուս:

### S U և S U Կ 6

- 1—2. Բառմաուզ, Թեսաուր, 1926, ճարտ. Վ. Գրոյյուս:
- 3—4. Տուալ քատրոն (նախագիծ), 1927, ճարտ. Վ. Գրոյյուս:

- Քառուն—կենուրն, (մանրակերտ), 1953, նախագիծ «համագործակից նարտապեսների», ղեկավար Վ. Գրոյքոս:
- Քաղաքի առաջարկ, Շտուտգարտ, 1930, նարտ. Վ. Հիլբերտայմեր:
- Եյու-թենինգանի քաղամա, Պենսիլվանիա, ԱՄՆ, 1941, նարտ. Վ. Գրոյքոս, նամագործակից՝ Մ. Բրոյեր:

#### S U և S U Կ 7

- Քաղաքի նոր նամակարգը, Կոնկորդ, ԱՄՆ, 1946, նարտ. Վ. Գրոյքոս:

#### S U և S U Կ 8

- Տուն-արվեստանոց նկարչի համար, 1923, նարտ. Թեր վան Դոնգուրգ և Կոր վան Էստեն-րին:
- Երեսդերի մենատուն, Ուտրեխտ, 1924, նարտ. Գ. Թ. Ոփալիլիդ:
- «Երեսկուրյան քաղաքը», նախագիծ, 1929, նարտ. Թ. վան Դոնգուրգ:
- «Երեսկուրյան քաղաքը», նախագիծ, 1929, նարտ. Թ. վան Դոնգուրգ:
- Կույների համակարգը շենքում, 1922, նարտ. Թ. վան Դոնգուրգ:
1. Առաջնարդության մենատունը (մանրակերտ), 1923, նարտ. Թ. վան Դոնգուրգ և Կոր վան Էստեն-րին:

#### S U և S U Կ 9

- Բնակարանը ուղիս քաղաքը կազմակերպող տարր, 1933, նարտ. Լը Կորյուոգին:
- Մարզու երեք հաստատուրյանները, նարտ. Լը Կորյուոգին:
- Խաշած վարչական բազմահարկ շենք, նարտ. Լը Կորյուոգին:
- 4—5. Բնակելի տան ենթին ծավալների լուծումներ, նարտ. Լը Կորյուոգին:
- Քաղաքի նախագիծ 3 միլիոն բնակիչների համար, 1922, նարտ. Լը Կորյուոգին:

#### S U և S U Կ 10

- Ժապավենած քաղաք, Մարդիդ, 1882, նարտ. Սորիխ ի Մատա:
- Ժապավենած քաղաք, նարտ. Միլիուախին:
- Ժապավենած քաղաք, նարտ. Լը Կորյուոգին:
- Բնակելի շենքների 3 տիպեր, Լը Կորյուոգին:
- Հին և նոր քաղաքների երեսկուրյան ցանցերի քաղատուրյուն, Լը Կորյուոգին:
- Մոդուլոր, Լը Կորյուոգին:

#### S U և S U Կ 11

- Արդի քաղաքի հատակագիծ, (նախագիծ), նարտ. Լը Կորյուոգին:
- «Պահանջապես», Փարիզ, 1922—25—29, նարտ. Լը Կորյուոգին:
- Նվեյցարական հանրակացարան, Փարիզ, 1930, նարտ. Լը Կորյուոգին և Պ. Ժաններ:
- Նոր քաղաքի տեսքը, Անվեր, 1933, նարտ. Լը Կորյուոգին:
- Ալժի, նոր քաղաքի տեսքը, 1930, նախագիծ, նարտ. Լը Կորյուոգին:

#### S U և S U Կ 12

- Նոր քաղաքի նախագիծ, 1934, նարտ. Լը Կորյուոգին:
- Ռիխ դը Ժանեյրո, քաղաքաշինարարական առաջարկ, 1929, նարտ. Լը Կորյուոգին:
- Սան Պաուլ, քաղաքաշինական առաջարկ, 1929, նարտ. Լը Կորյուոգին: Բազմահարկ շենքների տիպեր, նարտ. Լը Կորյուոգին:
- Փարիզի № 5 քաղամասի նոր կառուցապատում, 1936, նարտ. Լը Կորյուոգին:
- Ստոկհոլմ, նախագիծ, 1933, նարտ. Լը Կորյուոգին:
- Յար Լ'Ամստերդամ, Ալժի, 1931, նարտ. Լը Կորյուոգին:
- Մոնտելիյե, քաղաքաշինական առաջարկ, 1929, նարտ. Լը Կորյուոգին:

- Աղյուսաշեն տաճ նախագիծ, 1923, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Տեխնիկայի Իինոփ ինստիտուտ, 1939, Զիկազոն, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Երևանքերի նախագիծ, 1919, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Երևար բառոն վարչական շենքի նախագիծ, 1922, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Տուպենաս մենատուն, Բրյուս, 1930, ճարտ. Միս վան դեր Ռոբ:

## ՏԱԽՏԱԿ 14

- Կրաուն Հոլ, Տեխնիկայի իինոփ ինստիտուտ, Զիկազոն, 1952—1956, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Տանհայիր բաւրոնի նախագիծ, 1953, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Գերմանական առաջար միջազգային ցուցանախառնում, Բարսելոնա, 1929, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Բարձիլ տուն, Թեոլին, 1931, ճարտ. Միս վան դեր Ռոբ:
- Ապակեպատ երկնաքեր, նախագիծ, 1920—21, ճարտ. Միս վան դեր Ռոբ:

## ՏԱԽՏԱԿ 15

- Տաղալար, Թթվալու, 1912—13, ճարտ. Ա. Թերգ:
- Վաճառատուն Շոկեն, Շուտլարտ, 1926, նախագիծ, ճարտ. Է. Մենդելսոն:
- Եկեղեցու նախագիծ (Ճանակերտ), 1922, ճարտ. Օ. Բարտեհնագ:
- Տաղալար, Տորին, 1948—49, ճարտ. Պ. Լ. Ներդի:

## ՏԱԽՏԱԿ 16

- «Եղյ Վար» բնակելի տներ, ուրվագիծ, 1959—62, ճարտ. Ա. Ասլան:
- Թեոլինի ֆիխարմենիայի համերգերի դահլիճ, Թեոլին, 1956, ճարտ. Հ. Չարոն:
- «Եղյ Վար» երկնամերի նախագիծ, Թեոլին, 1959—62, ճարտ. Ա. Ասլան:
- Ուսանողական կենտրոն, Օստանինի, Պիպոլի, 1965—67, ճարտ. Ռ. Պիստիլի:
- Հանրակացարան, Մեսչիուստ, ԱՄՆ, ճարտ. Ա. Ասլան:

## ՏԱԽՏԱԿ 17

- Ալոս, Գու Գարբու (Լիուրեկ), 1923, ճարտ. Հ. Հերինգ:
- Եկեղեցի նախագիծ, Սիրակուա, 1957, ճարտ. Է. Կաստիլիոնի:
- Արդարադատուրյան պալատ, Զանդկար, 1951—1956, ճարտ. Լը Կորյունիկի:
- Ռոնչան, Եկեղեցի, 1950—1955, ճարտ. Լը Կորյունիկի:
- Գյումի մատուր, Բարսելոնա, 1894—14, ճարտ. Ա. Գաույի:

## ՏԱԽՏԱԿ 18

- Քաղաքի աճը, դիագրամ, 1902, Է. Հռուարդ:
- Վեցանիստ բշիջ մասի, Վ. Կրիստալիեր:
- Քաղաքը և արքանակեների մորի, Ռ. Պիլստ:
- Քաղաքի մորի արքանակեներով:
- Բջիջային բաղադրի մորի, Վ. Կրիստալիեր:

## ՏԱԽՏԱԿ 19

- Անգլիական նոր բաղադրերի նախագծեր:
- Հոկ (մեմնաների երթեկուրյան ցանց), 2. Սախլնիչ, 3. Ռոնինսկան, 4. Կաուկի,
  - Կորի, 6. Կումբինոլի, 7. Հոկ (նեախուն երթեկուրյան ցանց):

## ՏԱԽՏԱԿ 20

- Լը Միրահ (Ճանակերտ), ճարտ. Կանդիլիս, Յոսիշ, Վույտ:
- Տուպուզ—Լը Միրահ, նետիուն անցումների ցանց:

3. Բրագիլիա, ընդհանուր հատակագիծ, նարտ. Լ. Կոստա  
4-5. Զանդիզար, ընդհանուր հատակագիծ, 1952, նարտ. Լ. Կորյալզին:

S U և S U Կ 21

1. Ընդհանուր երթևեկուրյան ցանց, Ավերկուգին-Շտայերյանին, 1959, նարտ. Հ. Բ. Ռաֆիխով:
2. Քաղաք, նարտ. Հ. Հոլլայն:
3. Բարձրադիր ճամփառ երթևեկուրյան ցանց, Թեոլին, 1953, նարտ. Ա. և Պ. Ամիրսի:
4. Ֆիլադելֆիա, երթևեկուրյան ցանց, 1956, նարտ. Լ. Քան:

S U և S U Կ 22

1. Բումբարսի (Խոնդն), նարտ. Պ. Հոդգինսին:
- 2-3. Հետիոտն և մեժենաների ցանցերի երկնարկանի լուծում և նրանց կապերը, Թեոլին,  
նարտ. Ա. և Պ. Ամիրսի:
4. Քաղաքի կազմը, նարտ. Ա. և Պ. Մացուլենի:

S U և S U Կ 23

1. Բնակելի աշտարակ, նարտ. Ու. Զալբ:
2. Կակսման, մետաղի կառույց:
3. Հոսոս դի Սանա' Անիեզե, Տերմ-քազար, Հռոմ, նարտ. Բ. Ադրոնին և Զ. Ջիամպաոլի:
4. Բարսելոնայի ինքնավար համալսարանի նախագիծ, 1969, նարտ. Լ. Պելլեգրին:
5. «Քաղաք կրատեր», նարտ. Շանեակ:

S U և S U Կ 24



1. Մեծենայի ճաղքանակին նվիրված աշտարակ, 1930, նարտ. Ն. Դյուզերով: Պլաստիկ միավաճառերից կազմված աշտարակ, նարտ. Ա. Կուարմբի: Ավտոմեխնաների աշտարակ,  
նարտ. Վ. Տուսե:
2. Հավաքովի տարերակ կառուցվելիք աշտարակաձև տուն, 1970, նարտ. Պ. Պուտուզի, Վ.  
Զիլիստարի, Կ. Կենմինիչին:
3. Խորդումի (Եզիպոսո) օդանավակայանի նախագիծ (մանրակերտ), 1971, նարտ. Պ. Պորտագի, Վ. Զիլիստարի, Ռ. Ռայլստի, և այլք:
4. Գերմանական տաղավարի ծածկը, Մոնթել, 1967, Օ. Ֆրահի:
5. Քաղաքի ճամակառույց, 1964, նարտ. Ա. Խոցաքի:

S U և S U Կ 25

1. Տոկոյի վերակազմավորման նախագիծ, 1960, նարտ. Ք. Տաճիք:
2. Հասարակական կենտրոն, նարտ. Յ. Ֆրիդման:
3. Ամբողջական բարաք, նարտ. Ժ. Կ. Բերնար:
4. Բարել, նարտ. Պ. Սոլերի:

S U և S U Կ 26


1. Քաղաքի նախագիծ, Լ. Քան:
2. Օդային բաղաք, նարտ. Ա. Խոցաքի:
3. Ապագա բաղաքը, նախագիծ Մետամրսություն խմբի:



7




2



6




4




5




1



7




2




6








3















4





5











































1



6




2




5







3





4















1 6  
2 5  
3 4



















1


II




5




4




2





3








4



2 3





**Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ց Ա Ի Ն**

Բաստիոնակի կողմից	5
Նախարան	7
Էմպիրիկ հասկացությունից անցումը գիտականին	9
Հարտարակետական ձևի ջլատումը	10
Նոր դասականություն	14
Խոմանտիզմ (Նոր գորականը)	21
Արվեստը և տեխնիկան	39
Դինամիզմի հասկացության մասին	43
Ար Նուվո	52
Առաջին մոտեցում	57
Երկրորդ մոտեցում	68
Վիեննական Սեցեսիոն	75
Ռացիոնալիզմ և էքսպրեսիոնիզմ (1900—1914)	90
Դև Ստիլ և Բաումանուզ	103
Յունկցիոնալիզմ	116
Շենք	118
Բաղամաս	127
Քաղաք	135
Ռացիոնալիզմի տարածումը և անցումը դեպի օրգանական նարտարապետություն	146
Մեծ Լոնդոնը	157
«Նոր բաղամաս»	162
Օրգանական նարտարապետություն	169
Նոր էմպիրիզմ	176
Լիբերտի	181
«Քաղաքային» կառուցվածքը	185
Վեշարանի փոխարեն	198
Դրականություն	200



ԱԿՏԵՐԸ ԱՅ

ԱՐՄԵՆ ԿՈՍՏԱՆԻ ԶԱՐՅԱՆ  
ԱՐՄԵՆ ԿՈՍՏԱՆՈՎԻ ԶԱՐՅԱՆ

ԱՐԵՎԱՐԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՐԴԻ  
ԾԱՐՑԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Ա. Հ. ՀԱՂԱՄՅԱՆ  
Նկարիչ Լ. Ս. ԽԳԻՋՅԱՆ  
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՅԵՍՆ  
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ԶԱՔՐՅԱՆ  
Սորագրիչ Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՃ 05306

Պատվեր 534

Հրատ. 4793

Տպարանակ 2000

Հանձնված է շարվածքի 9.06.1978 թ.: Առորագրված է տպագրության 19.01.1979 թ.: Տպագրական 13,0 մամուլ+13 ներդիր, պայման. 20,65 մամուլ, 15,2+26 տախտակ: Հրատ. 17.02 մամուլ թուղթ № 1, 70×108<sup>1/16</sup> Գինը 3 ռ. 35 կ.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան 19, Բարեկամության 24 գ.

Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակության Էջմիածնի տպարան

Типография Издательства АН Армянской ССР, г. Эчмиадзин





ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գուստ.



FL007287?

A III  
4817